Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17154
17155
17156
17157
17158

891.99
U-39

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՇԻՐԱԿ“ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ.

№ 3

ԱՇԸՂ ՋԻՒԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՀԱՒԱՔԵԱԾՈՒ ՀԵՂԻՆԱԿԻ ՏՊՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԵՐԳԵՐԻՑ.

Իմացողին՝ ձայնս էլ սիրուն երգիչ է,
Չիմացողին՝ Թմբուկ, սրինգ դեռ քիչ է.

Ժողովրդական առած.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի.
Типографія К. С. Саноянца, Бебутовск. ул., с. д.
1893

Ա.ՇԸՂ-ՋԻՒԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՇԻՐԱԿ" ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ.

№ 3

ԱՇԸՂ ՋԻՒԱՆՈՒ
ԵՐԳԵՐԸ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՒԱՔԱԾՈՒ ՀԵՂԻՆԱԿԻ ՏՊՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԵՐԳԵՐԻՑ.

Խմացողին՝ ճանճն էլ սիրուն երգիչ է,
Չխմացողին՝ Թմբուկ, սրինգ դեռ քիչ է.

Ժողովրդական առած.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի.
Типографія К. С. Саноянца, Бебутовск. ул., с. д.
1893

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Октября 1892 года.

3700
47

1

ՀԱՅԻ ՃՈՒՏ.

Դու այն երկրէն մի՛ հեռանար, Հայի՛ ճուտ,
Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան,
Մրսած ժամանակդ կը քաղես օգուտ,
Դեռ մոխրի մէջ թաղուած հին կրակներ կան։

Բնակուած երկիրդ սուրբ է, հայ եղբար,
Հայի արնով ներկուած է ամեն քար,
Զոհուել են հաւատի և ազգի համար,
Պարկած հազարաւոր նահատակներ կան։

Ջիւան, ազգիդ հաւատարիմ ծառայէ,
Տեղը եկաւ մինչև կեանքդ ընծայէ,
Հայրենիքիդ վերայ լաւ աչքով նայէ,
Իւր մէջը հոգեբուղխ աւերակներ կան։

2

ՅՈՅՍ.

Առաւօտը շատ մօտ է, լոյսը շողալուն քիչ մնաց,
Խաւարը ընկաւ գետին, արևը դալուն քիչ մնաց,
Համբերանքդ ծով արա, յոյս ու հաւատդ պինդ պահիր,
Ո՜վ գիշերից ձանձրացող, բաղդիդ խաղալուն քիչ մնաց։

Լուսինի պաղ երեսից շուտով կ՚ազատուիս, մթնակեաց,
Ջերմ ու կարմիր արեւնուն կայծը եռալուն քիչ մնաց,
Ցերեկը եկաւ տիրեց գիշերային ամրոցներուն,
Խաւարը հոգուն հետէ, իւր կեանքը տալուն քիչ մնաց։

Լուսաբերը մթութեան թագուհու տեղ գահ բարձրացաւ,
Ցնծութեան երգեհոնների որոտալուն քիչ մնաց.
Մարտի տօնն է, Ջիւանի, սխտոր ունիս շուտ վերջացուր,
Գարուն է արդէն, գիտենք, ամպը գոռալուն քիչ մնաց։

3

ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ.

Ո՞ւր գնաց արդեօք համեղաբան սիրելին յետ չեկաւ,
Ուշացաւ կանանչ բերող Նոյեան աղաւնին յետ չեկաւ,
Կեանք տուող, հոգի տուող սառածներուն տաքացնող,
Հեռացաւ բոլորովին սուրբ տան նազելին յետ չեկաւ։

Երբ հեռացաւ մեզանից, արտասուալի նամակ թողեց,
Այդ նամակով հէնց գիտես մեզ այրուելու կրակ թողեց,
Անապատ քաղաքի պէս սրտերս աւերակ թողեց,
Սրբութեան, պարկեշտութեան պատուական հոգին յետ չեկաւ։

Նա մեռած չէ, հեռու է, ման է գալիս աստանդական,
Իւր վիրաւոր գառներուն ուզում է գտնել պահապան,
Մեզ բոլորիս հարազատ, ընտանի, ծանօթ, ազգական,
Գովելու և պատուելու արժան թագուհին յետ չեկաւ։

Ես, Ջիւանս, յօգնեցայ միշտ ձայն տալով՝ քոյր ասելով,
Ընկճուայ, տկարացայ, օգնութիւնս պակասելով,
Առագաստում խղճալի փեսան մնաց սպասելով,
Կոյս անարատ, հոտաւէտ շուշան փարելին յետ չեկաւ։

4

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

Մարմինդ մերկ, երեսդ պաղ, խեղճ պառաւ աղքատութիւն,
Ման ես գալիս աշխարհի մէջ անհալաւ, աղքատութիւն,
Հայր Ադամը երբ դրախտից զրկուեցաւ՝ դու ծնար,
Խելացիները կոչեցին քեզի ցաւ, աղքատութիւն։

Մայրդ մեռնէր երկունքի մէջ՝ քեզ չ՚ծնէր երանի,
Կեանքի ցեց, կեանքի կերիչ, ժանգ, մարդադաւ աղքատութիւն,
Շատ շատերին քաղցած ու մերկ ղրկում ես այն աշխարհը,
Շատերին էլ դու թաղում ես անկտաւ, աղքատութիւն։

Ամենաազնիւ բարի մարդիկ քո ձեռքից, գարշելի,
Դառնում են ստոր ետընկած, անիրաւ աղքատութիւն։
Մարդիկ խորշում են քեզանից, պատիւ չունիս ոչ մի տեղ,
Ես քո ո՞ր արարքդ գովեմ, ինչդ է լաւ, աղքատութիւն։

Հայրդ չիքն է, մայրդ սովը, մեծ պապդ ծուլութիւնը,
Զախորդութեան տաք սիրահար, դու ծարաւ աղքատութիւն,
Վերջապէս Ջիւանուն էլ աշխատեցար առար մէջդ,
Խորասուզուած, անառագաստ, կոտրած նաւ աղքատութիւն,

5

ՍԻՐՈՒՆ ՀԱՅ.

Քաջ արծուի ճուտերը մինչև չօգնեն քեզ,
Դու ուրուրից ազատուիլ չես, սիրուն Հաւ,
Դեռ շատ կ՚տրորեն անձդ կով ու եզ,
Քանի որ դու խրատուիլ չես, սիրուն Հաւ։

Խորամանկ աղուէսին դու մի հաւատալ,
Կուզէ խլել բունդ և քեզի կուլ տալ,
Կռունկներու թևով թռչելով սխալ,
Նրանց շարքում հաստատուիլ չես, սիրուն Հաւ։

Մի թռչիլ, վար կընկնիս, թևեր չ՚ճարած,
Կ՚մտնես վանդակը ոտքիդ չանդ կարած,
Ճուտերուդ թևերուն աստեղ չ՚շարած,
Իբրև թռչուն նկատուիլ չես, սիրուն Հաւ։

Ուրուրը կ՚կորչի, բայց դու կ՚մնաս,
Լաւ քուռնիդ կ՚կապես, շատ կ՚գիրանաս,
Հաւկիտ կածես ձագերով կ՚բազմանաս,
Թէ քու բնից անջատուիլ չես, սիրուն Հաւ։

Զիւան, ցուրտը կանցնի, գարուն կուգայ նոր,
Կը ծաղկին սարերը, ամբողջ դաշտ ու ձոր,
Կուգայ ժամանակ կ՚լինիս դու էլ բազդաւոր,
Էլ քո բաղդից գանգատուիլ չես, սիրուն Հաւ։

6

ԳԱՆԳԱՏ.

Քսան տարի քեզի համար երգ ասելով ձանձրացայ,
Անգութ սիրուն, քո կողմից ոչ մի յարգանք չ՚ստացայ,
Զարչարանքդ ես քաշեցի վաստակդ օտարք կերան,
Անխիղճ, ապերախտ լինելդ ափսոս որ ուշ հասկացայ։

Ինձի նման քանի՜ մարդիկ սիրոյդ մասին զոհ եղան,
Եւ քանիսն էլ երկրէ երկիր ընկած են թափառական,
Ամենևին քո հոգսդ չէ, անիրաւ թշուառական,
Մտածում էլ չես թէ վաղը գլխիդ ինչ փորձանք կուգայ։

Ես հասկացայ, դուն խաւարես, ինձ նման լոյսի կարօտ,
Այսուհետև էլ քեզանից չեմ սպասում առաւօտ.
Սուտդ ինձի հետէ եղել, զորդդ ուրիշներու մօտ,
Վա՜յ, հազար վայ իմ արևուն, որ յոյս դրի քեզ վերայ։

Խեղճ Ջիւանս քեզի համար ուժերս սպառեցի,
Կեղծ սիրովդ կրակուեցայ, սիրտս ու հոգիս վառեցի,
Քո մասովդ մինչ համայնքին վիշտ ու ցաւ պատճառեցի,
Բայց դու անգութ անողորմած դուրս եկար, կեղծ խաբեբայ։

7

ՏԽՈՒՐ ՍՐՏԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ.

Լոյս նուազել է գիշերի նման,
Ցերեկ ժամանակս խաւար եմ դարձել,
Դադարել է սրտիս ձայնը անխափան,
Անլար կուրծքը կոտրած քնար եմ դարձել։

Ես սրտիս սփոփանք չեմ կարող ճարել,
Որքան աշխատում եմ ինձ մխիթարել.
Մահը գայլի նման գառնուկս է տարել,
Անլեզու բառաչող ոչխար եմ դարձել։

Ո՜հ դու աներևոյթ, անզգայ փարձանք,
Դու մահի առաջնորդ, դու անխղճմտանք,
Ինձ տուել ես սգաւորի կերպարանք,
Աւերուած, եղծուած նկար եմ դարձել։

Նեղեալ Ջիւանին եմ հեռու պաշտպանից,
Հեռու ընտանիքից և հարևանից,
Հոգս ու ցաւը չեն հեռանալ ինձանից,
Բքոտ, մշուշապատ մէկ սար եմ դարձել։

8

Լ Ո Ւ Ս Ի Ն

Հիւսիսից փչեց սառն հով,
Պարզ երկինքը պատեց ամպով,
Սիրտս տխուր հոգիս խռով,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

Խաւար գիշերը ախերիմ
Փակել է ճանապահս իմ,
Քեզի տալու գանգատ ունիմ,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

Անխիղճ մութը սև միգապատ
Գլորեց ինձի խորխորատ,
Լոյս տուր չ'մնամ յուսահատ,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

Գիշերային կառավարիչ
Գեղանի հարս ես նկարիչ,
Թշուառ մարդկանց մխիթարիչ,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

Քո շուրջդ էլ իմիս նման
Մեգով պատած է մշտական,
Ինչ և իցէ լեր օգնական,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

Մաքուր կաթից սպիտակ ես,
Պսպղուն փայլուն շողակ ես,
Աստուածային աշտանակ ես,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վեճակից։

Հորիզոնում լայնատարած
Եղել ես խաւարահալած,
Դու անյաղթ ես, ես յաղթուած,
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,
Ազատէ ինձ այս վիճակից։

9

ՄԱՃԿԱԼԻ ԵՐԳԸ.

Իմ գութանիս խոփը դէմ առաւ քարին.
Թուրը կոտրաւ, արտս մնաց առանց վար.
Համարեայ ձախ անցաւ այս յաջող տարին,
Հաւատարիմ մօտկամ չեղաւ ինձ համար։

Վախկոտ հօտաղներս փախան գնացին,
Առոյգ լծկաններս պարապ մնացին,

Դրացիներս ինձ վրայ խնդացին,
Համարեցին իբր խենդ ու խելագար։

Դիպուածը սկսեց ինձ ոտնահարել,
Ապառաժ քարերով գործս խանգարել,
Նոր էի գործ դրել, մի ակոս վարել,
Գլուխը չ'հասած մնաց անկատար։

Տապեցան բանուորներս վազվախկոտ,
Ակամայ այդ տեղում ինքս դրի ոտ,
Չէի կարծում հողը այդքան քար քարոտ,
Ցիմարացայ, սխալուեցայ չարաչար։

Քաջ մշակիս մէկը քարից վայր ընկաւ,
Դեռ մի արտ չը վարած զուր տեղը մեռաւ,
Որտեղին ձեռք դրի՝ քարոտ դուրս եկաւ,
Հերկ անելն այս անգամ եղաւ անհնար։

Ամառը չ'յաջողուեց, գործս ձախ գնաց,
Եզ ու գոմէշներս պարապ թողի բաց,
Հօտաղ մշակներուս վաղ արի իմաց,
Աշնան սկիզբներուն ձեզ կանեմ խաբար։

Ես էլ սկսեցի ման գալ սար և անդ,
Բժշկել եզներս թուլացած հիւանդ,
Ժիր ու ճարպիկ նախրապանս մանաւանդ
Գործի յաջողուելու մասին կեանք կուտար։

Աշունք մտանք՝ արդէն սարքի էր բանս,
Շարժման մէջ էր բոլոր իմ գերդաստանս,
Նորոգեցի, սայլին դրի գութանս,

Եզ ու գոմէշ լծած ընկայ ճանապարհ։

Տեսայ դաշտում լինելու չէ իմ վարը,
Քանի որ համ չի տալ ապառաժ քարը,
Վերջապէս գութանս հանեցի սարը,
Մի արտի տեղ գտայ կակուղ, առանց քար։

Գործը դրինք, սկսեցին գնալ գալ,
Հետնից էլ աշխուժով հոռովել կարդալ,
Մէկ էլ յանկարծ մի մարդ ասաւ, չեմ թող տալ,
Այս ո՞ւմ հողն է, որ կըվարես անարդար։

Քեզ ո՞վ է իրաւունք տուել, անզգամ,
Գութան լծած արտ կ'վարես ինքնակամ,
Քեզ այլ տեղ կ'տեսնես չի քաշիլ չորս ժամ,
Կ'խրատուիս, այնտեղ կենալով երկար։

Այս արտը տէր ունի, քեզի ով կուտայ,
Վերջդ չես մտածում որպէս երեխայ,
Չ'գիտես որ քու մեծդ կ'նեղանայ,
Դու քու գլխիդ գործ կըբռնես անյարմար։

Այդ մարդը մեծ մարդ էր, չէր հասարակ անձ,
Կարդապահ, իւր գործին հմուտ չափազանց,
Հրամայեց մեզ պաշարել իւր մարդկանց,
Նա ունէր ծառաներ մի քանի հազար։

Ես նորան ասացի. խնդրեմ ինձ թոյլ տաս,
Որ իմ արտը հերկեմ, աւարտեմ մաս մաս,
Այս գործը մազի չափ քեզի չէ վնաս,
Իզուր տեղը դու եղել ես անդադար։

Արտը իմ պապինս է, ո՛չ մի մարդի չէ,
Միայն ես չեմ ասում, ողջ աշխարհք գիտէ,
Ինչ արած որ հիմայ ուրիշի ձեռք է,
Բռնի խլել են մեզանից կոպտաբար։

Վեց եղբայր ենք, մինթէ մեզի չէ արժան
Առանձին մեզ համար լծենք մի գութան,
Մանաւանդ այս հողը մեզի է պատկան,
Սրանից մենք պիտի հայթհայթենք պաշար։

Ձեր շնորհիւ մենք մեծացանք—մարդ եղանք,
Ձեզ պէտք գալու չենք խնայել ոչ մի ջանք,
Թողէք մենք էլ անենք մի քիչ վար ու ցանք,
Որ եղել էք խեղճերուն միշտ բարերար։

Այնուհետեւ էլ չգիտեմ ինչ անցաւ,
Զգացի որ ինձ պատահեց հոգս ու ցաւ,
Եղաւ տեղս խոնաւ մի նեղ քարանձաւ
Առանց արեւ, շուրջս անլոյս, մութ, խաւար։

Զրկուեցայ իմ յաջողակ գութանից,
Աշխատաւէր առոյգ ու թարմ լծկանից,
Մշակներս չ'հեռացան ինձանից,
Աշխատեցան հոգով ինձ հետ հաւասար։

Աչքս բացի ինձ ծուղակի մէջ տեսայ,
Ինչ կըմտածէի, այժմ ուր ընկայ,
Աստծուն է յայտնի վերջս ուր կերթայ,
Ես իմ մասին լուր չեմ լսում օգտակար։

Ջիւանս տեսնելով այս անցքը թշուառ,

Սրտիս մէջ մարեցան իմ յոյսերս վառ,
Հողագործութիւնից հեռացայ խոպառ,
Գութանի մաճի տեղ ձեռք առայ քնար։

10

ՍԻՐՏՍ.

Ամպերով պատած է մտքիս երկինքը,
Խաւար է երեւում լուսնեակ սիրտս,
Նախանձոտ թշնամու սեւ նախատինքը
Մրոտեց պարզ, մաքուր, սպիտակ սիրտս։

Հոգիս խղճիս մօտը դրկեցի գանգատ,
Վերք ստացայ անբուժելի, անփարատ,
Աղտեղի խօսքերից ստացայ արատ
Զգայուն ու փափուկ, անապակ սիրտս։

Ջիւանին եմ, մինչ ց'վախճան շարունակ
Տէրութեանդ հլու ծառայ հպատակ,
Բայց քեզնից, արարչապէտ հեղինակ,
Ո՞վ պիտի նորոգէ աւերակ սիրտս։

11

ԱՐԵԳՆԱԶ.

Սուք պահելով դու մեր մուխը մարեցիր,

Մի հագնիր, Արեգնազ, մի հաքնիր սեւը,
Մեր սրտերում ծալ ծալ վէրքեր շարեցիր,
Մի՛ հագնիր, Արեգնազ, մի հագնիր սեւը։

Թզենին կանաչեց, գարունն է շատ մերձ,
Սաստիկ ցուրտ ու բքից քեզ կ'պահէ զերծ,
Հագի՛ր կանանչ, կարմիր ծիրանի հանդերձ,
Մի հագնիր, Արեգնազ, մի հագնիր սեւը։

Բեհեզն ու ծիրանին փայլուն արեւ են,
Թուխ գոյները տխրադէմ են, տձեւ են,
Աչք ու ունքդ, թերթիչներդ քո սեւ են,
Մի՛ հագնիր, Արեգնազ, մի հագնիր սեւը։

12

ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ.

Մտերիմ բարեկամին իմոյ պ. Շահէն Տամնագարանցին ձօն.

Ձախորդ օրերը ձմրայ նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան,
Դառն ցաւերը մարդու վրայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ՝ շարուէ շարան կուգան ու կերթան։

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից
Ինչպէս ճանապարհի կարաւան—կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքան մանիշակ վարդ, բալասան կուգան ու կերթան,

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,
Փոփոխակի անցքեր զանազան կուգան ու կերթան.
Արեւը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան։

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական կուգան ու կերթան,
Աշխարհը հիւրանոց է, Ջիւան, ազգերը հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան։

ԺԳ

ՏԻԿԻՆ.

Ով դու ամբարտաւան, դու անգութ տիկին,
Մինչեւ ե՞րբ անմեղի մարդկանց բեռ բառնաս,
Այդ ուժդ տեւողը յետ կառնէ կրկին,
Թոյլ չի տալ որ դու խեղճերուն սպառնաս։

Միշտ երազ կը մնայ տեսած երազդ,
Միայն քեզ պէտք կուգայ ձեւած տարազդ,
Վերեւից ցած կիջնես, կը հասնի գազդ
Օդապարիկի պէս, որքան համբառնաս։

Ջիւանի, ջրերը գիտեն ցածրանալ,
Նաւը ծովում միշտ յաջող չի ընթանալ,
Կայծ լինելուդ մասին մի հպարտանալ,
Բոցդ կը սպառուի, մոխիր կը դառնաս։

ԺԴ

ԻՄ ԱՅԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Մի քանի ամիս է գարբին եմ դարձել,
Իմ ծառը կարելու ալոց կ՚շինեմ.
Ոտքեր շղթայելու մարդիկ եմ վարձել,
Երկաթ տաքացնող հնոց կ՚շինեմ։

Սրտին կ՚հաւատամ, շատ միամիտ եմ,
Զափազանց պարզ սրտով ջրից վճիտ եմ,
Մոլորուած եմ, արածներս չը գիտեմ,
Իմ ձեռքով իմ կեանքին խարտոց կ՚շինեմ։

Հայրս տունը հիւանդ պարկած, չեմ տեսնում.
Ազգականս թշուառ ընկած, չեմ տեսնում.
Եղբայրս իմ մօտը քաղցած, չեմ տեսնում,
Հեռու տեղ օդի մէջ ամրոց կ՚շինեմ։

Թողեր եմ տնային գործս խափանած,
Քամու դէմ բամբակից կ՚ոլորեմ մանած,
Սատիկ կը պարծենամ մի մուկ չը սպանած,
Իզուր ինձ օտարաց ծամոց կ՚շինեմ։

Սկսել է միտքս իմ խանգարուելու,
Սգոյ տունը կերթամ մխիթարուելու,
Ինձ համար տուն, չունիմ պատսպարուելու,
Պատերազմի դաշտում մարտկոց կ՚շինեմ։

3700
47

Իզուր կ'վրդովեմ օրերս խաղաղ,
Սկսել եմ աւիւծի հետ անել խաղ.
Կորատելով ծառիս տունկերը մատաղ,
Գետից ջուր կրելու քթոց կ'շինեմ։

Ջիւա՛ն, թէ չ'փոխուի այս ժամանակը,
Շատ կ'դառնանայ իմ բաղդիս վիճակը.
Ոսկէ թելով բանուած նուրբ թաշկինակը
Կեղտոտելով՝ վերջը ջնջոց կ'շինեմ։

15

ԽԵՂՃ ՄԱՐԴ.

Եռանդը կ'սառի, սիրտը կ'կոտրի
Հոգսերով ճնշուած աղքատ խեղճ մարդուն,
Խօսքը անց չի՛ կենալ, հոգին կ'տրտմի,
Ուժը կը նուազի հաստատ խեղճ մարդուն։

Աշխուժը հարուստի նման չի վառիլ,
Չի կարող նեղութեան դէմը մաքառիլ.
Սէրը ամեն բանից կսկսէ սառիլ,
Էլ չի մնալ յոյս ու հաւատ խեղճ մարդուն։

Մարդիկը, կարծում ես, չեն տեսնում նրան,
Կամ թէ դիտմամբ տուել են մոռացութեան.
Ո՛չ նիւթական ուժ կայ, ոչ բարոյական,
Դուք կ'տեսնէք միշտ յուսահատ խեղճ մարդուն։

Ջիւա՛ն, խեղճի համար ինչ խաղ ու խնդում,
Թէկուզ լինի բարեկենդան կամ խթում.
Ճակատը ամպամած երեսը տրտում,
Սիրտն է աւեր և անապատ խեղճ մարդուն։

16

ՕՁԻ-ՁԱԳԸ.

Օձի ձագը ընտանենալ չի գիտէ,
Հարիւր տարի կրթես, նա ձուկ չի դառնալ.
Երբէք բնութիւնը թող տալ չի գիտէ,
Ժառանգաբար ոխակալ է, ոխակալ։

Քանի սառն է, փոքրէ, խեղճ է երևում,
Երբ տաքացաւ, մեծցաւ, անում է ցնցում.
Յանկարծ տեսար մի վէրք բացեց քո սրտում,
Սկսեց կրծքիցդ արիւնը շռալ։

Օձին մի հաւատալ, միամիտ արդար,
Գլուխը ջախջախէ ուրտեղ որ տեսար.
Անպիտան սղունը թող չապրի երկար,
Քանի որ դաժան է, գիտէ վնաս տալ։

Ջիւան, չ'լինի օձին լաւութիւն անես,
Սառած տեսնես տունդ տանես, պահպանես,
Թունաւոր ատամը մինչև չ'հանես,
Նա այնպէս ցեղ է, որ չի սորկանալ։

17

ՄԱՐԴՈՒ ԾԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ.

Աստուած չանէ մարդուն ապիկար ծեր ժամանակը,
Իսկոյն կ'լինի նա ցաւագար, ծեր ժամանակը,
Թէ չունի զաւակ, կամ թէ սատար ծեր ժամանակը,
Պէտք է դեգերի անմխիթար ծեր ժամանակը.
Տքնի պիտի ապրուստի համար ծեր ժամանակը,
Ընկնի ախամայից սար ու քար ծեր ժամանակը:

Դժուար է ծերին ճանապարհը՝ եթէ մոլորուեց,
Գտնել չի կարող ուղղութիւնը, միտքը ցնորուեց.
Ազգատ ծերունին սայթաքելով ոտքը խոտորուեց,
Գայթակղութեան վիհը մտաւ, խիղճը խմորուեց,
Երջանկութիւնից թշուառութեան մէջ թէ գլորուեց,
Կը դառնայ յատակ կաթուածահար ծեր ժամանակը:

Մարդը քանի որ պատանի է, փոքրահասակ է,
Եռանդը շատ է, արիւնը շատ, սիրտը կրակ է,
Պատուով թէ ուժով երիտասարդ անձը դանակ է,
Սիրով կը տանի որքան էլ ծանր բեռի տակ է,
Հասակն առածի կարծում ես բաղդի դուռը փակ է,
Պէտք է գթացող և բարերար՝ ծեր ժամանակը:

Երբ ծերանում է գլուխը, դառնում է խաղաղ ծով,
Փոքրիկ նաւակը իւր վրայից կանցնի ապահով,
Թէ ունի բարեկամ իրան, դառնում է ջատագով,

Թէ չունի, ընական է՝ տանը պէտք է տիրէ սով,
Էլ նա չի կարող բան յօրինել վառվռուն հոգով,
Նրա գլուխը կառնի դադար ծեր ժամանակը:

Մարդը միակերպ չի մնայ, փոխւում է շարունակ,
Յաջողը ձախորդ կ'լինի, ձախորդն յաջողակ,
Մշակը տանուտէր կ'լինի, տանուտէրը մշակ,
Կեանքը խաբուսիկ պատկեր է, ծաղր է ու նշաւակ,
Թէ պիտի ունենայ Ջիւանը եղկելի վիճակ,
Աստուած իմ տայ համբերատար ծեր ժամանակը:

18

ՍԻՐՈՒՆ ԲԱՂԴ.

Դեռ ինքս չ'ծերացած, դուն ծերացար, սիրուն բաղդ,
Ձախորդ մարդկանց բաղդի հետ ընկերացար, սիրուն բաղդ,
Մի քանի տարի առաջ գոհ էր երկիր քեզանից,
Յաջողութեան թագուհին օգնում էր գանձարանից.
Բոլոր բարեկամներս հեռացրիր ինձանից,
Իբր, տգեղ պառաւ կին, պատկերացար, սիրուն բաղդ:

Պատկերդ գրաւիչ էր, ինքդ համեստ և շքեղ,
Բայց շուտով թառամեցաւ կերպարանքդ փառահեղ,
Դասակիցներուդ մէջը էիր ամենաուժեղ,
Վիճակդ նախանձելի, բնութիւնդ շատ համեղ,
Մէկ ժամանակ, իբր լոյս, փայլում էիր ամէն տեղ,
Այժմ խաւարի նման ստուերացար, սիրուն բաղդ:

Երբ դու ինքդ հնացար, ինձի թողիր խիստ տխուր,
Քո ծերութեան պատճառով մնացի յուսակտուր.
Ո՞ւր են քո հանդերձներդ քու ձևերդ պարզ մաքուր,
Աննման տատրակ էիր գեղեցիկ ոսկեփետուր,
Մի փոքրիկ տաքութիւնը քեզի հալեց, արաւ ջուր.
Դու մարտ ամսի ձեան նման շուտ վերացար, սիրուն բաղդ։

Ի՞նչու ինձի խաբեցիր, ով երկիմի անիրաւ,
Երևեցար մանկամարդ, յետոյ դուրս եկար պառաւ.
Հազիւ մի տասը տարի քու երեսդ տեսայ լաւ,
Այնուհետև քու դէմքիդ դու քաշեցիր սև կտաւ.
Արևդ մայրը մտաւ, ցերեկդ անհետացաւ,
Աղջամուղջը քեզ պատեց, գիշերացար, սիրուն բաղդ։

Ե՛կ, տուր ձեռդ Ջիւանուն, ստացիր, առ նոր փափագ,
Տեսնո՞ւմ ես, ժամանակը վազում է արագ արագ.
Ծոյլ ու դանդաղ լինողը, ուտում է հացը ցամաք,
Ժրաջանը շարունակ կըճարէ մեղր ու կարագ.
Ափեղցփեղ երգեցիկ խմբերը անցան աղաք,
Դու քու համեստութիւնով կրտսերացար, սիրուն բաղդ։

19

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔ.

Մեր նահանգի թագուհին ես, պարծանքն ես,
Բարիքներով լեցուն Երևան քաղաք,
Համարեայ Կովկասի հոգին ես, կեանքն ես,
Ունիս բարձր անուն, Երևան քաղաք։

Արարատեան աշխարհի մէջ մէկ հատ ես.
Բազմատեսակ պտուղներով առատ ես.
Շատ դարերից ի վեր շէն ու ապատ ես,
Մնացել ես կանգուն, Երևա՛ն քաղաք։

Գաւառիդ մէջ հազար տեսակ բարիք կայ,
Մինչև անգամ քեզ կարօտ է Եւրոպա,
Ոսկին ու արծաթը ինքն իրան կուգայ,
Առուտուրդ գեղուն, Երևա՛ն քաղաք։

Միջիդ ժողովուրդը թէ հայ թէ պարսիկ.
Ապահովուած, կեանք կըվարեն երջանիկ.
Երկու սեռն էլ աշխոյժ, տղայ ու աղջիկ,
Հագած կապած սիրուն, Երևա՛ն քաղաք։

Ձմեռը օրերդ ուրախ է անցնում,
Որդիքդ Բագոսին շատ են ուխտ գնում.
Հարսանիք ու հանդէս, խնջոյք կեր ու խում
Լինում է ամեն տուն, Երևա՛ն քաղաք։

Մարտի տասին ստանում ես նոր հոգի,
Կը վերջանայ ցուրտ ձմեռդ ամեհի;
Սկսում են ծաղկել պարտէզ ու այգի,
Երբ բացւում է գարուն, Երևան քաղաք։

Յունիսի քամնից համըդ կը փախնի,
Ծոդերը կսկսեն, օդըդ կը փոխուի,
Տենդի մայր վարունգը, սեխը կը հասնի,
Կը դառնաս դողի բուն, Երևա՛ն քաղաք։

Ցերեկը մոծակն է տիրում քեզ վերայ,

Ժողովրդիդ վիրաւորում անխնայ,
Գիշերն էլ մլակը խփելով ցնծղայ,
Քեզ թողնում է անքուն, Երևան քաղաք։

Հարուստներդ երջանիկ են ամեն ժամ,
Գնում են Ծաղկաձոր ամառն ամէն ամ,
Վայելում են ընտիր գինիդ քաղցրահամ,
Քո օդիդ փոփրուն, Երևան քաղաք։

Ջիւանին խնդրում է, որ խաղաղ մնան
Մարդիկ, քրիստոնեայ թէ մահմեդական,
Իրարու հետ սիրով վարուին մշտական,
Լինին խելքով հասուն, Երևան քաղաք։

20

ԱՌԱԿ.

Ամբոխի սուտ փայփայանքը,
Երես սեւցնող մածիր է.
Նրա տուած գովասանքը,
Սառուցի վրայի գիր է։

Փսխալթը նուրբ կտաւ է,
Վայրենի մարդկանց հալաւ է,
Էշը նժոյգ ձիուց լաւ է
Քանի որ անմեղ երկիր է։

Փայլողը համանի կինն է,

Աւազակը ամուսինն է.
Դարը լիրբ անամօթինն է,
Խեղճ մարդը հող ու մոխիր է։

Վաղանցուկ փառքը խաբեբայ,
Շատի գլխին խաղ կ'խաղայ,
Որքան կուզէ մեծ օդուտ տայ,
Յուսը վերջը գգիր է։

Ճաշակով մարդ ուր ամեն տեղ,
Որ չուկէ անհամ ու համեղ,
Երեխան կը սիրէ պղպեղ,
Ըստորում գոյնը կարմիր է։

21

ՆՈՐ ՏԱՐԻ.

Դու մեր ժողովրդին նոր օր նոր կեանք բեր,
Եւ գործերին կենդանութիւն, նոր տարի,
Վանէ դաժան թանգութիւնը տնաւեր,
Տուր արմանեայ էժանութիւն, նոր տարի։

Աշխատիր, որ խաղաղ պահպանես աշխարհ,
Բոլոր մարդկութիւնը միահաւասար.
Փառք ու պատուով քեզ կըձգենք ճանապարհ,
Եթէ տուինք հաւանութիւն, նոր տարի։

Լաւ եղար, խնկալէս կըպատուենք, այո,

Պարգևներ կ՚ստանաս, միշտ նոր 'ի նորոյ,
Այնքան բարի եղիր, անցմանէդ յետոյ
Որ քեզի տանք երանութիւն, նոր տարի։

Հազար ութն հարիւր իննսուն լրիւ
Հին տարին վերջացաւ, էլ չունի հաշիւ.
Այս յունուարի մէկից քեզ պէտք է պատիւ,
Քանզի քո է իշխանութիւն, նոր տարի։

Զիւանս կաղաչեմ կրկին ու կրկին,
Երջանիկ օրեր բեր մարդկային ազգին,
(* Հազար ութն հարիւր քառասուն եօթին
Մի ունենալ նմանութիւն, նոր տարի։

22

ԳԱԶԷԼ.

Նազելոյս ամպ է իջել արևի պէս վառ երեսին,
Սգուորի պէս, սև շղարշ է ծածկել պայծառ երեսին.
Աչքերի և ունքերի սևութիւնը չէ՞ր բաւական,
Որ նորից մութ քօղ է առել կոյսը կայտառ երեսին։

Կաթնաբուխ բերանը փակ, աչքերն արդէն դալկացած,
Խաւարը գիշերի պէս, պատել է պատկառ երեսին,
Մէկ տարի կայ, չեմ գիտեր, հիւանդ է, ինչ է, տիրուհիս,
Կորել է, վերացել է ժպիտը խպառ երեսին։

*) 1847 թուին սաստիկ խօլերայ է եղել.

Մարտը գարուն գիտնալով զգուշ չ՝ պահեց ինքն իրան,
Գոյնը որ թօթափել է, ցուրտն է պատճառ երեսին,
Տապալեց յոյսդ օդապարիկի նման Զիւանի,
Հարաւից յանկարծ փչեց ահռելի թալթառ երեսին։

23

ԿՈՐՈՒՍՏ.

Մէկ գեղեցիկ տեսայ և կորուցի շուտ,
Սրտիս մէջը կրակ մնաց, ցաւում եմ.
Մտքումս տպուեցաւ կերպարանքը զուտ,
Մէկ քաղցր յիշատակ մնաց, ցաւում եմ։

Թագուհի էր տեսայ շարժումից ձևից,
Կարծես լոյս էր, ծնունդ առած արևից,
Միտքս վազեց այն սիրունի ետևից,
Իբր սուզուած նաւակ մնաց, ցաւում եմ։

Զիւան, կը գալարի կեանքիս ծաղիկը,
Եթէ մէկ էլ տեսնեմ այն գեղեցիկը.
Ծնունդ առաւ, սակայն բաղդիս աստղիկը
Ամպի ստուերի տակ մնաց, ցաւում եմ։

24

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ.

Ո՞ր մի դաշտի ծաղիկը սիրուն է հոգեակիս նման,
Ո՞ր մի վարդը, յասմիկը սիրուն է հոգեակիս նման,
Ո՞ր մի մայրը կարող է սրա նման զաւակ ծնել,
Ո՞ր մի ցեղի մանկիկը սիրուն է հոգեակիս նման։

Ո՞ր մի երկրի մէջը Եւային ստեղծեց Տէրը,
Ո՞ր մի ազգի աղջիկը սիրուն է հոգեակիս նման.
Ո՞ր մի հովուի փարախը գեղեցիկ է մերինի պէս,
Ո՞ր մի հօտի գառնիկը սիրուն է հոգեակիս նման։

Ո՞ր մի որսորդը չէ գալիս պտռելու իմ անձկալին,
Ո՞ր մի սարի եղնիկը սիրուն է հոգեակիս նման,
Ո՞ր մի երաժիշտն է կարող նմանիլ իմ սոխակին,
Ո՞ր մի խօսուն թռչնիկը սիրուն է հոգեակիս նման։

Ո՞ր մի Չինացին պիտի պարծենայ գեղանուս մօտը,
Ո՞ր մի սեւ-հնդիկը սիրուն է հոգեակիս նման,
Ո՞ր մի մոլորակն է լուսով, քո արեւդ պէս Ջիւան,
Ո՞ր մի փայլուն աստղիկը սիրուն է հոգեակիս նման։

25

ԿՈՇՏԸ.

Խղճալի՛ կոշտ, քեզի՛ լաց, քարի մասին իզուր մի լայ,
«Ինչ կլինի խեղճ քարը, անշուշտ վաղը անձրեւ կուգայ.»
Շատ սխալ է կարծիքդ, ինքդ շուտով ցեխ կլինիս,
Ջրհեղեղ էլ պատահի, քարը էլի քար կմնայ։

Ձմեռը քիչ սառելով, մի՛թէ քարին հաստատար,
Գարունը շատ մօտիկ է, տեսնենք, քո ուժդ կերեւայ,
Սպիտակ տաք վերմակդ յանկարծ մէկէն կ'դառնայ ջուր,
Տաքութիւնից քեզ համար, բնաւ յաւիտեան յոյս չկայ։

Հանապազ երաշտութիւն ո՞րտեղից է ամեն տարի,
Անպակաս է անձրեւը, երկինքը առատ միշտ կուտայ,
Իմ ցաւս խօմ կոշտը չէ, ակար Ջիւանի, քեզ հետ եմ,
Ընկերդ միշտ ուժեղ է, լաւ է մտածես քեզ վերայ։

26

ՀԱՐԱՒԻ ՄՐՄՈՒՆՋԸ.

Քոյրերիս մէջ միշտ սգազգեաց, ինձ նման ախուր չկայ.
Դժոխքումն էլ իմ ունեցած կրակիս պէս հուր չկայ,
Ծարաւ, պապակ այրւում եմ, ո՜հ, մի կաթիլ ջուր չկայ,
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չկայ։

Իմ տարիքս անցնում են շուտ, գլորւում են հանապազ,
Ա՜խ իմ յոյսս, իմ փափագս, կ'համարուի միշտ երազ,
Որտեղ ձայն ու շարժում լսեմ, կ'վազեմ այնտեղ վռազ,
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չ'կայ։

Զէ քո խղճալի Հարսն եմ, ինձի օգնէ, քաջ Հիւսիս,
Ինձ էլ օգնէ, ինչպէս կայրի այժմ հանգիստ մեծ Մասիս.
Ե՞րբ կլսեմ աւետեաց լուր, ուրախութեան աւետիս,
Սպասում եմ այցելութեան ոչ մի տեղից լուր չկայ։

27

ԹՈՂ ՄՆԱՅ.

Թող մնայ մէկ ժամանակ, առիւծը թմրած թող մնա՛յ
Խաժամուժ կենդանիների մէջը ընկած թող մնայ.
Մեռածը չի ողջանալ, գլորածը վեր կը կենայ,
Թո՛յլ տուէք, ախոյեանի ժամը չէ, պառկած թող մնայ։

Անտեղի քաջութիւնը վնաս կուտայ իմ կարծիքով,
Երբ լինի կարկուտ քամի, եղեգը ամքած թող մնայ,
Տաք ու պաղ սուլելով մի գրգռեր, խարդախ թովիչ,
Թող մնայ իւր բնի մէջ, վիշապը սառած թող մնա՛յ։

Ջրի շատ գալը՝ խելացի, կարելու նշան է միշտ,
Թող ծովը ծփայ յատակ, գետը վարարած թող մնայ,
Ո՛վ Ջիւան, ամեն հայի սրտի մէջը երկար միջոց
Հնութեան յիշատակը, կայծը բռնկած թող մնայ։

28

ԿՆՓՈՐՁԸ.

Միամիտ ու անփորձ երիտասարդը
Կանանց միջի հաշմ ծերուկին հաւանեց.
Թողեց բալասանը, մեխակը, վարդը,
Ծաղկոց մտաւ իշկաթնուկին հաւանեց։

Միամիտը խաբուեց, օձն առաւ ծոցը,
Թիւնաւորուեց, կրծքում բացուեցաւ խոցը.
Անճաշակը մտաւ բանջարանոցը,
Աղբճպանքին, խրխնտուկին հաւանեց։

Ջիւանի՛, խեղճ քուրդը չտեսած երկիր,
Խնձոր կարծեց, կերաւ պղպեղը կարմիր.
Երեխային տւին միրգ ջոկէ ընտիր,
Հոտած, փտած ձմերուկին հաւանեց։

29

ՀԱՋՈԽԱԳԻՒՏ ՄԱՐԴ.

Խելացի և ուժեղ հարուստ անհատին,
Երկիւղից ամեն ո՛ք կ'լինի ծառայ.
Վայ գլխին ագէտ ու անճար աղքատին,
Իւր զաւակն էլ իրան ոսոխ կ'դառնայ։

Երեք բան կայ աշխարհիս մէջ թանկագին,
Այսինքն, խելքն ու ոյժը և ոսկին.
Այդ երեքը ով որ չունի միասին,
Կիսկատարէ; նա լրիւ դեր չի խաղայ։

Ուժն ու խելքը մարդ թէ ունի բնական,
Հեշտ կարող է հասնել նա հարստութեան,
Անխելք հարուստ թէ լինի էլ խիկական,
Շուտով կըկործանի, երկար չի մնայ։

Խելքով ոսկու աղբիւր թէ գտնես առատ,
Առանց ուժ, գողերից չես մնալ ազատ,
Անխելք, անուժ մարդը կմնայ աղքատ,
Ձեռքից կխլեն ինչ որ ունենայ։

Խելքն է կառավարում ուժին թէ ոսկուն,
Անխելք ուժեղ մարդը է իսկ անասուն,
Առանց խելքի ոչ մի ստակ չի գալ տուն,
Բաղդը մի հոմանի կին է խաբեբայ։

Ջիւան, նախնիք ուժ և ոսկի ունէին,
Թէ խելք լինէր, չէր կործանի խեղճ Անին,
Խելքն ու ուժը մէկ տեղ կուտայ մեր ազգին,
Եթէ Աստուած հարստութիւն կամենայ։

30

Ե Ր Գ.

Մէկ կողմս սաստիկ ցուրտ մէկ կողմս կրակ,
Մէկ կողմս պատել է ծովը ահագին,

Այդ երեքն էլ մէկը մէկին հակառակ,
Ամենքն էլ առնում են ինձանից բաժին։

Զունիմ գրահաւոր բանուկ շոգենաւ,
Ծովի վերայ ման գամ անհոգ առանց ցաւ,
Աննաւ ծովը մտնեմ կըխեղդուիմ իրաւ,
Կուլ կուտայ ալիքը ինձ բոլորովին։

Դէպի ցուրտը գնամ — կ'սառչեմ հաստատ,
Անզուլժ, անզգայ է բնութիւնը վատ.
Հագիս մուշտակ չունիմ, մերկ եմ և աղքատ,
Ցմեռ է, պաղ քամին փչում է ուժգին։

Քաջ մարդը կրակից երբէք չի տալ խոյս,
Թէ վառուեց՝ կծըլի որպէս անմեռ բոյս,
Երեք մանկանց նման պէտք է հաւատ, յոյս,
Որ չայրուի հրոյ մէջ ամենևին։

Մտածում եմ ոչ մէկի մօտ չ'գնամ,
Թէ հարուստ, թէ աղքատ իմ տեղս մնամ,
Ամեքին էլ պատուեմ, բարիք ստանամ,
Երեքիցն էլ յարգ վայելեմ առանձին։

31

ԱԺՄԵԱՆ ԴԱՐԸ.

Համ լաւ է, համ շատ վատ է, իմ կարծիքով, այժմեան դարը,
Բարութեան հետ հաւասար մրցում է անիրաւ չարը,

Մէկը անշարժ կեցած է ծանր ու մեծ իրան տեղը,
Մէկը շատ ծայրայեղ է, անցել է սահմանը-սարը:

Տեսնում ես կռուի մէջ են նոր ու հինը հաստատապէս,
Ամենը պաշտպանում է իր ունեցած գաղափարը.
Մէկը պաշտպան է կեցած իր հաւատոյ հիմունքներուն,
Մի ուրիշը թաւալել կուզէ նորա հիմնաքարը:

Մէկը լոյս է քարոզում իր մտքովը մեր աշխարհին,
Մէկն էլ ամուր գրկել է մառախուղը, մութ խաւարը,
Թող վերայից անցկենան հազարաւոր դարեր նորից,
Յաղթող է հանդիսանում ճշմարիտը և արդարը:

Դանդաղը յետ կ'մնայ, արագը կերթայ անխոտոր,
Պարզ բան է՝ ոտաւորից միշտ յառաջ է ձիավորը,
Այնպէս էլ ստութիւնը պաշտպանողը կ'յոգնի շուտ,
Ճշմարիտը, ով Ջիւան, կերթայ իրան ճանապարհը:

32

ԸՆԿԵՐԱՏԵԱՑ.

Սրտիդ չարութիւնը երեսիդ վերայ
Հոգեբանը միշտ կարդում է, ով նախանձ.
Ասածիս ապացոյց գործերդ ահա,
Կենացդ մէջ միշտ եղել ես մարդախանձ:

Կմախքով լի փայլուն մէկ գերեզման ես,
Անհոգի ման գալող մարդու արձան ես.

Ամեն մի վատութիւն ցածութիւն կանես,
Աշխարհումս միայն թէ տան քեզի գանձ:

Արտաքին տեսքովդ որպէս մի սուրբ մարդ,
Պղտոր ջրում ձուկ կ'որսաս, ունիս կարթ,
Կեղծաւոր, մանկանենգ, խորամանկ, կախարդ,
Լեզուդ երկայրի սուր, կրքերդ անսանձ:

Ջիւանուս յայտնի ես դու վաղուցուանից,
Դուրս ես եկել Սադայէլեան շրջանից.
Բազում մարդիկ ձանձրացել են քեզանից,
Անտեղի շարունակ միշտ ունիս թախանձ:

33

ՀՊԱՐՏ ՀԱՐՈՒՍՏԸ.

Պարոն հարուստ, ինչու՞ այդքան հպարտ ես,
Ունայն աշխարհի մէջ բաղձանքդ ի՞նչ է.
Վերջ 'ի վերջոյ դուն էլ կեանքդ կ'աւարտես,
Իզուր մտածմունքդ, տանջանքդ ի՞նչ է:

Փարթամացիր հին Գարեհին հաւասար,
Որ կ'գայ չես գանիր վերքիդ դեղ ու ճար,
Ոչ հոգւոյդ ես և ոչ մարմնոյդ համար,
Ուրեմն, սիրելիս, զուր ջանքդ ի՞նչ է:

Թէ մեղքի մէջ մեռար՝ մեծ ցաւ է վերջը,
Գիտե՞ս, դատաստան կայ իրաւ է վերջը,

Երկուսիս էլ չորս չափ կտաւ է վերջը,
Քու խնձանից աւել ապրանքդ ինչ է։

Ջիւանս լաւ գիտէ՝ փառքդ մէկ ձև է,
Աշխարհումս շուտ անցաւոր պարգև է,
Հարիւր տարի ապրիս մեծ մասը սև է,
Քու երջանիկ սեպած լաւ կեանքդ ինչ է։

34

ԽՆԴԻՐ ԱՌ ՍԻՐԵԼԻՆ.

Խղճա դրութեանս, խղճա, ով անգութ,
Սիրուն, չէ՞ քո սիրահարդ եմ, ափսոս,
Օրերս մի անցկացնիլ սև ու մութ,
Սրտակոտոր ցաւագարդ եմ, ափսոս։

Սուր նետերուդ ինձ մի՛ անիլ նպատակ,
Մի՛ քանդիր իմ հոգւոյս տունը, հրէշտակ,
Ե՛ս եմ, մի՛ չարչարիր ամէն ժամանակ,
Հին սիրելիդ, քո անճարդ եմ, ափսոս։

Մի՞թէ Ջիւանիս թշնամի դառար,
Ինձի կրակեցիր դու ինքդ սառար.
Խելք ու միտքս գլխիցս չէ՞ դու առար,
Ափսոս, քու խելագարդ եմ, ափսոս։

35

ՍԻՐԱՀԱՐ.

Սիրահար, թէ սիրականիդ սիրում ես,
Նրա տուած նեղութիւնը տար սիրով.
Թէ որ անձդ նրան դու նուիրում ես,
Խփէ գլխիդ փայտ ու երկաթ, քար սիրով։

Թէ մէկին արել ես սրտով սիրեկան,
Պէտք է նրան սիրես ճիշտ հոգւոյդ նման,
Անկեղծ սիրոյն համար, առանց ձանձրութեան,
Ման արի դաշտ ու ձոր, սար է սար սիրով։

Ջիւան, նրա համբաւը՝ քու համբաւդ է,
Սիրուհիդ քու աղաւնիկդ է, կաքաւդ է,
Սիրականիդ ցաւը թէ որ քո ցաւդ է,
Շուտով գտիր եղած վէրքին ճար սիրով։

36

ՄԻԽՍԷՏՏԷՍ ՍԷՄԱՑԻ.

Արի՛, իմ նազելի բամբիշ գեղեցիկ, քաղցրախօս լեզու,
Դրախտից դուրս եկած յաւերժահարսի պէս սիրուն ես դու.
Հոտոտելիս հոտով լցուաւ հատուէտ մուշկ ծծերէդ քու,
Վառած սիրտս զովացուցիր նման պայծառ առաւօտու.

Պռունկներէդ կ'կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,
Յարաժամ ընթերակայ ես, թէ ժամու և տարաժամու։

Ատամներդ քանի որ կան, յակինթ,գոհար էլ ինչ պէտք է,
Աչերդ ինձ արեգակ են, վառած ղամբար էլ ինչ պէտք է.
Գեղեցիկ երգում ես արդէն, ջութակ, քնար էլ ինչ պէտք է.
Բանաստեղծից գովաբանուած գինի, նեկտար էլ ինչ պէտք է.
Պռունկներէդ կ'կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,
Յարաժամ ընթերակայ ես, թէ ժամու և տարաժամու։

Գիտեմ հաստատ որ անգութ չես,սիրելիս, շատ ողորմած ես,
Յամենայն ժամ սիրահարիդ մասին ցաւիս, կ'մտածես,
Բոլոր սիրուններէն ազնիւ,խոհեմ,պարկեշտ,ամօթխած ես.
Բերանդ կենաց աղբիւր կայ, թէ և ինքդ արարած ես,
Պռունկներէդ կ'կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,
Յարաժամ ընթերակայ ես, թէ ժամու և տարաժամու։

Զիւանի երգիչիս ձեռքէն թէ բռնես՝ չեմ մնար դանդաղ,
Կունենամ քեզ նման օգնող կ'լինիմ ես բարեկենցաղ,
Դիեցիկ երեխայի պէս կ'վազեմ դէպ քեզի վաղվաղ,
Ծարաւս քեզանով կանցնի թէ այրիմ, պապակիմ, չքնաղ,
Պռունկներէդ կ'կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,
Յարաժամ ընթերակայ ես, թէ ժամու և տարաժամու։

37

ԿԱՐՆԵՑՈՒ ԵՐԳԸ

Հինգ տարի է որ չեմ տեսեր յերեսդ,
Իմ էղել է հալս եաման, Արզիւրիւմ,

Մէ աշխարքմ կաժէ մէ անգամ տեսդ,
Հողիդ, ջրիդ ըլլիմ ղուրբան, Արզիւրիւմ։

Հըճըպ վառ կ'տեսնէմ ես քու ճրագըդ,
Ես քու յուդ կուզեմ-ըլլելով ձագըդ.
Անդին անդին չէին քօշեր տղաքըդ,
Թէ չ'ըլլէիր դու Տաճկաստան, Արզիւրիւմ։

Տօխզուզ-թիւման ես Կովկասը ժուռ էկայ,
Օվայիդ պէս դիւզմ տնտեղ չ'գտայ,
Հայիդ համը հէչ մէ տեղմ չը առայ,
Տեսայ Գեանջայ, Շաքի, Շիրվան, Արզիւրիւմ։

Կարօտցել եմ ջրին գօչգօչան սարի,
Քեզնէն հեռանալս էղաւ հինգ տարի,
Միջիդ մարդը տնկոզ, քաղաքավարի,
Հագնին, կապեն, կելլեն սէյրան, Արզիւրիւմ։

Նէ Լօնդօն կըհասնի, նէ Փարիզ քեզի,
Նէ Բաղդադ կըհասնի, նէ Բիթլիզ քեզի,
Նէ Ստամբօլ կուգայ, նէ Թիֆլիզ քեզի,
Քաղքըներուն մէջը սուլթան, Արզիւրիւմ։

Ամէն գեղըդ մէկ մէկ ցօրենի ամբար,
Անատօլու մէջը ունիս էհտիպար.
Իլիճէ, Սօխ-ջերմուկ, իլլէ Լալուզար.
Ջրեր ունիս դու պատուական, Արզիւրիւմ։

Խաչափայտ ու Էփրիանոս շատ ու քիչ.
Ըմմը քու Տաճարդ հիւընդի փրկիչ,
Խաչկայ-վանք, Կարմիր-վանք, Սուրբ-Լուսաւորիչ,

Սրբեր ունիս դու պահապան, Արգիւրիւմ։

Աստուած թուրքին խելք տայ չ'քանդէ տունը,
Չ'քամէ Հայերու մաքուր արունը,
Մ'շու սարը նստած Սուրբ Օխան-Անունը,
Խնդրենք ըլլի քեզ օգնական, Արգիւրիւմ։

Հին քաղաք ես բնականէն անահ ես,
Մ'իջիդ մախսուլովը էլին կ'շահես,
Հօրս, պապիս ոսկրները կ'պահես,
Ինձ ալ էղիր դու գերեզման, Արգիւրիւմ։

38

Ա Ր Ծ Ա Թ.

Սխալ է այն մարդը որ քեզի կատէ,
Շատ հարկաւոր բան ես, գեղեցիկ արծաթ.
Բոլոր աշխարհի մէջ յարգողդ շատ է,
Իրաւ յարգելի ես, խատուտիկ արծաթ։

Իմ ազգիս գրպանէն եղիր անպակաս,
Ներկայ թէ ապագայ չես մեզի վնաս,
Թշուառին, տրտումին ցնծութիւն կուտաս,
Քեզմով կլինին երջանիկ, արծաթ։

Շատերը քեզ համար չունին հանգիստ քուն,
Քու սիրոյդ մաս կուգան թողած տեղ ու տուն,
Ինչ մարդու սնտուկը լիքը եղար դուն,

Նա է մարդկանց միջին անդրանիկ, արծաթ։

Երեսդ շատ տաք է, յարգելի մետաղ,
Ա՜խ, թէ ունենայի քեզնից քանիմ մաղ
Մեծ բաղդաւորութիւն կստանայի վաղ,
Կտայի ամենին աւետիք, արծաթ։

Թէև անիրաւ ես գիտեմ, մամոնայ,
Բայց մարդ պէտք է քեզի բարեկամ մնայ,
Իմաստունն էլ թէ քեզանից չունենայ,
Չի կարող ձեռք բերել լոկ հացիկ, արծաթ։

Համդ չառնողներուն լեղի ես, դառն ես,
Աղքատներու համար հեռի ես, սառն ես,
Առանց պատերազմի քաղաք բերդ կառնես,
Որքան էլ որ լինի անառիկ, արծաթ։

Կայ մարդ քեզ կ'սիրէ իր հոգու նման,
Սիրոյդ զոհ լինելով կ'երթայ գերեզման,
Շատերը քեզ համար կ'ելլեն կախաղան,
Ոմանց էլ կ'բերես սև զատիկ, արծաթ։

Կռապաշտները քեզ դրին կարգը դից,
Եղար Արամազդին յատուկ ուխտակից,
Եբրայեցւոց ազգը, բոլոր ազգերից
Քեզ աւել կսիրէ հինգապատիկ, արծաթ։

Հոգին ես ու կեանքն ես ագահ ժլատին,
Ո՜հ, թէ թողիդ թողն էլ երթար աղքատին.
Երկու սեռն էլ քեզի համար կաշխատին,
Թէ տղայ է եղել, թէ աղջիկ, արծաթ։

Յուդան քեզ սիրելով հետեւէ չարին,
Արեան գինը դարձար Սուրբ Կենարարին.
Զինուորէն սկսած մինչ նախարարին,
Դուն ես մշտահաստայթ եւ ուճիկ, արծաթ։

Թէ ճգնաւոր լինի, թէ սրբակեաց կոյս,
Նրանց մէջն էլ քեզի գնող կլնի յոյս,
Համրին լեզու կուտաս, կոյրին աչքի լոյս,
Զօրութիւնդ շատ է, անուշիկ արծաթ։

Կեցցէ քեզի գտնող այն հանճարեղը,
Սիրոյդ կ'գրաւուի ամենագեղը,
Բոլոր պարագայով մարդկային ցեղը՝
Եղել է դիմացդ խաղալիկ, արծաթ։

Նախ ասի, անպէտք չես դու, պատուական ես,
Զօրութիւնդ շատ ու քիչ կ'բաժանես,
Ոմին Անանեանց ու Միրզայեանց կանես,
Ոմին էլ կ'թողնես փերեզիկ, արծաթ։

Այլոց մօտ անհամար, ինձի մօտ սակաւ,
Երբեմն գլխաբաց, բոբիկ անհալաւ,
Ահա երեսունը վեց տարիս լրացաւ,
Չտեսայ մի փոքր արկղիկ արծաթ։

Ունեցել եմ քեզ ճարելու նպատակ,
Շատ ցաւերդ եմ քաշել պատուոյդ փոխանակ.
Ջիւանն եմ, գովեստիս դէմը հակառակ,
Դու ինձի առեցիր շատ սաստիկ, արծաթ։

39

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ.

Անզգամ ու անխիղճ մարդու գրպանից
Երբ պակասեց փողը — կ'դառնայ գազան,
Կուտէ ինքն իրան.
Դուրս կ'գայ գայլի պէս իւր օթեւանից,
Կ'խածէ ամենին կատաղած շան նման,
Պէտք է գաւազան։

Այդ անբարոյական, անգրամ մարդը,
Թշնամի կ'կարծէ բարեկամ մարդը.
Մանաւանդ որ խմեց անզգամ մարդը,
Այլ նա չի ակնարկեր ծանօթ, ազգական,
Կասէ ամեն բան։

Հոգւոյ զգացումից չուզելով բաժին,
Կ'դառնայ անասուն, անհոգի մարմին,
Կ'կողոպտէ իւր ընկերը, դրացին,
Աչքին չի երեւայ սուրբ Աւետարան,
Եւ ոչ դատաստան։

Մերկ դաշոյնը ձեռին դուրս կուգայ փողոց,
Կ'լափէ շատերին որպէս վառ հնոց.
Կ'հարուածէ հանդիպողին կուտայ խոց,
Մէկին էլ կենացը նա տալով վախճան,
Ղրկեց գերեզման։

Տարածուելով ձայնը ամենայն մի տեղ,
Մինչ կ'իմանայ լուրը տեանը ահեղ,
Կալանաւորելու գազանին ուժեղ,
Կառավարութիւնից կգայ ոստիկան,
Կբռնէ նրան։

40

Ա. Ղ. Օ Թ Ք.

Տէր, տո՛ւր նախանձողիս շատ ոսկի, արծաթ,
Որ մոռանայ ինձի, չ'խօսի ծուռ ծուռ,
Տո՛ւր նրան աջող գործ ամենայն շաբաթ,
Չ'բամբասէ ինձի, սքլի, մնայ լուռ։

Բաւական է ծառաղ կրեմ գերութիւն,
Այս քիչ հասակիս մէջ հասնի ծերութիւն,
Տէր, տո՛ւր խելք ու շնորհք և համբերութիւն,
Նախանձողիս մասին չ'զգամ ես մռմուռ։

Ջիւանս Քեզանից կ'խնդրէ այսքան,
Եղիր երբեմնապէս ինձի օգնական,
Հասցրու ապրուստս, հացս օրական,
Այնքան որ չման դամ խղճուկ դռնէ դուռ։

41

ՆՈՒԷՐ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐՈՒՆ.

Սայեաթ-Նովի ասածի պէս ազգի մշակ է երգիչը,
Հազար ցաւով մարտիրոսուած ճիշտ նահատակ է երգիչը,
Սառը մարդկանց տաքացնող, յատուկ կրակ է երգիչը,
Ով ուզում է թող սովորի, տեղով առակ է երգիչը,
Արդարութեան և բարութեան ծարաւ պապակ է երգիչը,
Որովհետև անխարդախ է, սրտով խտակ է երգիչը։

Ով երգիչ լինել է ուզում, պէտք խոնարհ լինի յատուկ,
Ինքը համեստ, խոլհրդապահ, տեսած բանը պահէ ծածուկ,
Այո՛ն այո՛, և ո՛չն ո՛չ, բնութիւնով խոհեմ, փափուկ,
Պէտք է ընտիր խօսքեր խօսի, ինչպէս յակինթ, ոսկի, կնդրուկ,
Չը պէտք է խաբեբայ լինի կամ կախարդող թովիչ, վհուկ,
Ձայնը քաղցր, լեզուն անուշ, քանզի սոխակ է երգիչը։

Նորա համար ամեն մի տուն սուրբ է ինչպէս թէ մի տաճար.
Երգիչ մարդը ամենևին չի ունենալ վատ գաղափար,
Կ'պատահի բացառութիւն ես չեմ ասում թէ չկայ չար,
Այնպէսները երգիչներու վարկը կտրող են և յիմար,
Թմբեալները կ'սթափին երբ առնում է ձեռին քնար,
Քնածները արթնացնող մի կերպ զանգակ է երգիչը...

42

ՄԵՐ ՎԷՐՔԵՐԸ։

Հայը Հային կ'վնասէ,
Օտարք երբէք մեղաւոր չեն,
Հայերու սէրը պակաս է,
Իրար սիրելու սովոր չեն։

Հայերը այս բանով վատ են,
Իրարու ծուռ կ'նկատեն,
Մէկ մէկու այնպէս կ'ատեն,
Կարծես իրար հարկաւոր չեն։

Օտարին կ'գովաբանեն,
Բայց իրար միշտ դաւաճան են,
Պապերէս մնացած բան են
Այս ցաւերը մեզի, նոր չեն։

Ջիւանս կասեմ անկասկած,
Մենք ենք տուել մեզի հարուած,
Օտարին մեզի հասուցած
Բացած վէրքերը շատ խոր չեն։

43

ԻՆՉ ՈՐ ԲՐԴԵՍ, ԷՆ Կ'ԽՐԹԵՍ.

Ինչ կամենաս քու ընկերիդ,
Նա քու գլխիդ կ'կատարուի,
Թէ չար, թէ բարի, պատկերիդ
Վերայ անշուշտ կ'նկարուի։

Ով որ ում ճրագն է մարել,
Ինքն իրան է տնահարել,
Ում որ ուզում ես խանգարել,
Քու անունդ կ'խանգարուի։

Ընկերդ էլ մարդ է քեզ նման,
Նորան մի ասիլ պակաս բան,
Որքան լինիս դու գովական,
Նորան էլ գովող կ'ճարուի։

Դու կցանկաս հանդիստ մնալ,
Երբէք մի լինիր ոխակալ,
Թէ ուզում ես քեզ սիրել տալ,
Ընկերիդ հետ քաղցր վարուի։

Ասել է Դաւիթ թագաւոր,
«Ինքը ընկաւ ով փորեց հոր»,
Գործած դարանդ, կեղծաւոր,
Քեզի համար պիտի լարուի։

Ո՛վ մարդասպան, անխղճմտանք,
Դու չես մնար առանց փորձանք,
Դուն որ այլոց կարես պատանք,
Կարծես քեզ համար չէ՞ կարուի։

Զիւա՛ն, քու խօսքով մի մնայ,
Ընկերիդ կամքովն էլ գնայ,
Տեսար յարմարիլ չի քեզ նա,
Լաւ է դու նրան յարմարուի։

44

Մ Ի Պ Ա Տ Կ Ե Ր.

Սիրուն կնոջ եթէ չեղաւ բարքը լաւ,
Անշունչ պատկեր, գրչով քաշուած նկար է.
Արտաքինը փայլուն, ներքին կողմը սեւ,
Կակաչ ծաղկին շատ նման ու յարմար է։

Գեղեցկութիւնը մի վաղանցուկ բան է,
Շքեղ, շուտ թարշամող վարդի նման է,
Անշնորհք սիրունը դատարկ աման է.
Նորան սիրող, սիրտ տուողն էլ յիմար է։

Զիւա՛ն, ով որ ունի համեստ բարի կին,
Աշխարհի մէջ նա է մարդը առաջին,
Սիրուններից գոհ չես գտնիր ամենին,
Երջանիկը հարիւր՝ թշուառն հազար է։

45

ԱԶԱՊՆ ՈՒ ԿԱՐԳԱԾԸ.

Ազապն ու կարգածը նստած մի անգամ,
Խօսում էին իրարու հետ այս տեսակ.
Կարգածն ազապին ասաւ, բարեկամ,
Հերիք մնաս խեղճ ու մոլոր միայնակ։

Ազապն ասաւ, ինձ մի կարծեր խեղճ, մոլոր,
Ազատ, անհոգ, ես եմ յատուկ բաղդաւոր,
Խմբով սիրունները իմըս են բոլոր,
Կ'նայեմ ամենին ազատ համարձակ։

Կարգածն ասաւ, քեզի կուտամ մի պատուէր,
Դու սուրբ ամուսնութեան, էկ, ունեցիր սէր.
Սիրուններու ամեն մէկն էլ ունին տէր,
Կ'մորթեն թշուառիդ անսուր, անդանակ։

Ազապն ասաւ, ես եմ առոյգ, գեղեցիկ,
Ուրախ, զուարթ, բաղդով, անհոգ, երջանիկ,
Որտեղ որ տեսնում եմ մէկ սիրուն աղջիկ,
Ինձ կ'կարծեմ նրան յարմար, ընդունակ։

Կարգածն ասաւ, երջանիկ չես, թշուառ ես,
Մարդկութեան անօգուտ, անպտուղ ծառ ես.
Դու կ'աշխատիս, այլոց թոնիր կ'վառես,
Թողնում ես քու տունդ անծուխ, անկրակ։

Ազատն ասաւ, մարդ չի խօսիր ինձ վերայ,
Ես եմ անկախ, ինքնագլուխ մէկ տղայ,
Ինձանից ո՛չ Հալաւ, ո՛չ Հաց ուզող կայ,
Կուտեմ, խմեմ, ուրախ կապրիմ շարունակ։

Կարգածն ասաւ, ունիմ Համեստ ամուսին,
Տիրոջ փառքը փայլելում ենք միասին,
Աստուած պարգևել է ինձի թանգագին,
Ունիմ երկու—երեք պաշտելի զաւակ։

Ազատն ասաւ, լա՛ւ է այսպէս մնալը,
Քան թէ՝ ամուսնանալ, վերջը զղջալը.
Շատ դժուար է զաւակներու Հոգալը,
Իմ ի՞նչ պէտքս է ընկնիլ մեծ ցաւերու տակ։

Կարգածն ասաւ, սա է քո պատասխանը,
Չի՛ զղջալ, ով գիտէ իւր արած բանը,
Հեշտ կ'կառավարէ նա գերդաստանը,
Ինչ մարդ գիտէ ապրուստի լաւ եղանակ։

Ազատն ասաւ, կուզեմ միշտ ազատ ման գալ,
Տնական Հոգսերով չեմ ուզիլ տքալ,
Շատերը կ'ցանկան աղջիկն ինձի տալ,
Օրը Հազար տեղից գալիս է խնդրակ։

Կարգածն ասաւ, ազատ մարդը ջանք չունի,
Օրերը զուր կանցնին աշխատանք չունի.
Չ'գիտե՞ս կին չունեցողը կեանք չունի,
Աբեղայ էլ լինի է ցաւոց ճարակ։

Ազատն ասաւ, չեմ Համոզուիր յաւիտեան,
Կամ թէ՝ ոտս կապել խեղճ Հաւի նման.

Ման կուգամ ամեն տեղ, որպէս ինքնիշխան,
Բեռի տակ մտնելու չունիմ նպատակ։

Կարգածն ասաւ, երբ որ կ'երթամ դէպի տուն,
Կ'բացուի իմ սիրտս ինչպէս նոր գարուն,
Կինս, զաւակներս ուրախ զուարթուն
Դէմ կ'վազեն, իրար տալով աղաղակ։

Ազատն ասաւ, ունիմ ես շատ օթևան,
Ամեն օր կունենամ նոր նոր սիրեկան.
Իմ գիշերուայ ընկերներս ողջ մնան,
Ինձ Համար կեանք կուտան ամեն ժամանակ։

Կարգածն ասաւ, ես եմ միշտ բարեՀամբաւ,
Տանս կեանքը խաղաղ, կեցութիւնս լաւ.
Կ'մոռանամ բոլորովին Հոգս ու ցաւ,
Երբ կը երգեն զաւակներս ներդաշնակ։

Ազատն ասաւ, խնդրեմ բա՛ւ է, բարեկամ,
Ինձ մի անիլ քեզի նման կաղանդամ.
Թևս բռնող չկայ ուր ուզեմ կ'երթամ,
Չեմ ձգեր իմ վիզս երկաթէ օղակ։

Կարգածն ասաւ, քանի փոքր է Հասակդ,
Պարծանքով կ'փայլէ քու դրօշակդ,
Երբ մեծանաս, կ'մարի այդ կրակդ,
Կ'մեռնիս անսերունդ և անյիշատակ։

Ազատն ասաւ, այդ խօսքիդ դէմ չունիմ փաստ,
Իրաւ, որ ազատը խեղճ է ու նուաստ.
Ասա՛, Հրամանիդ կանգնած եմ պատրաստ,

Եղէր տառապելոյս բարի օրինակ։

Կորզածն տուր, հիմա եղիր երջանիկ,
Կ՚լինիս անունով բարի, գեղեցիկ,
Կանչէ Աստուած, տուր մի համեստ աղջիկ,
Թող իջնի քո գլխին անթառամ պսակ։

Կորզածը ագահի գործերը սարքեց,
Եղաւ խաչքաւորը, պսակեց, կարգեց,
Ապայն էլ կարգածի խորհուրդը յարգեց,
Աշխարհի օրէնքին դարձաւ հպատակ։

Ջիւան, բան է մարդուն առողջ կին մէկ հատ,
Անօրէն է, ով որ կին կ՚պահէ շատ,
Պիտի վարուի իւր ծագումին համեմատ,
Մարդ ո՛չ անասուն է և ոչ հրեշտակ։

46

ԱՇԽԱՐՀԸ.

Ո՜հ, ո՛հ, Արարիչ, աշխարհը խաբեբայ է դարձել,
Ուխտը ուրացող, Տէրը ատող՝ Յուդայ է դարձել.
Կարծես, վերացել է հողային գնդից ամբողջ
Ճշմարտութիւնը, կեղծ ստութեան ծառայ է դարձել։

Ինչպէս Սողոմոն յիշել է իւր առակի մէջով,
«Խղճուկ քաղաքիս դատաւորը տղայ է դարձել»,
Լսուել է գիւղի տանուտիրոջ վերայի լոյսը,
Եւ հաստատել է իւր մշակը, վկայ է դարձել։

Երէկ-միւս օր սարերում ոչխար արածողը,
Մարդկանց քարոզիչ ծայրագոյն աբեղայ է դարձել,
Դատաստանի տակ ընկնողը՝ հնար մտածելով,
Իսկոյն անունը փոխել է, քահանայ է դարձել։

Տե՛ս, բարոյախօս, առաքինի ողջախոհը, տե՛ս,
Հռչակ ունեցող հոմանիին փեսայ է դարձել,
Չէ, չէ, Ջիւանի, բաւական է խաբուեցար այդքան,
Գիտցածդ հրեշտակն հիմայ սատանայ է դարձել։

47

ՑԵՑԵՐ.

Ցեցերը, թրթուրները չ՚լինէին պարտէզը,
Ծառերու արմատները չ՚լիզէր յարալէզը,
Բաղդախնդիր, հացկատակ, փոքրոգի մարդիկները,
Երանի չ՚մտնէին գիտութեան ասպարէզը։

Աղտեղի բնութիւնով մեղրի համը փոխելով,
Քանդում է մեղուի տունը անպիտան մէկ բզէզը.
Խելօք թզուկը լաւ է թեթեւամիտ հսկայից,
Ինչո՞ւ է պէտք անօգուտ բլուրը-մասդէզը։

Շատացել են գայլախեղդ, իշու նահատակները,
Յարգը կորսնցուցել է ճշմարիտ ողջակէզը.
Բարձրամիտ իմաստակը մի գրօ էլ չէ այնտեղ,
Եթէ գիտնայ քննել նա գիտութեան քարտէզը։

Նոր հաւերը մի տեսակ խատուտիկ հաւկիթ կ'ածեն,
Կարծես, ամեն մէկի մէջ բուն է դրել մողէզը.
Անհմուտ խոհարարի կերակուրը ուտելուց,
Զիւմն, լաւ է ամէն ժամ փայելել փայլի սէգը։

48

ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈՎՈՒԱՊԵՏ.

Նախախնամութիւնը քեզ տայ առողջ կեանք,
Բարձր պաշտօնդ փայլելես, Վեհափառ.
Ընտրեալդ յԱստուծոյ, այս է մեր բաղձանք,
Քեզ և եկեղեցուն դու պահես պայծառ։

Էջմիածնի Սուրբ Աթոռը Քեզ աւանդ
Տալով, ազգը Քեզնից խնդրում է եռանդ.
Վեհութեանդ մէջը տեսնելով տաղանդ,
Քեզ ձայնեց Հայրապետ, ամենայն գաւառ։

Րաբունապետի առար աստիճան,
Կարգըուար հաւատի շահերուն պաշտպան,
Կ'յուսանք որ լինիս Հոգևոր իշխան՝
Գործդ արդար, դատաստանդ անաչառ։

Սիրտդ տաք լինի սուրբ աթոռի համար,
Կառավարես նրան խղճով, հայրաբար,
Երբէք ասպարէզդ չ'պատէ խաւար,
Նեցուկ լինի քեզի Լոյսը մշտավառ։

Էութիւնը գործին ինքդ քաջ գիտես,
Արթուն, օրէնսգէտ և սրամիտ ես,
Թէ խօսքով, թէ գործով դու ճշմարիտ ես,
Տէրը օգնէ Քեզի, չ'լինիս թշուառ։

Սուրբ Սինօդն է, Տէր իմ, ատեանդ ահեղ,
Անդամներ ունենաս շնորհքով-ուժեղ,
Ողջ միաբաններդ քեզի հետ մէկտեղ,
Կազմէք 'ի միասին մի երկնակածառ։

49

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԷԿԸ.

Բանաստեղծի մէկը այսպէս սիրուն ասած ունի մէկ բան,
Թէ յանկարծ պարսաքարը դիպչելով՝ կոտրեց մի կարկեհան.
Սակայն, ոչ պարսաքարի արժէքը աւելացաւ այնքան,
Ո՛չ էլ կարեհանի արժէքը ընկնելով՝ եղաւ խոտան։

Սրանով ես կուզեմ ասել, խելահաս պատուաւոր անձին
Չի կարող պախարակել փայրահաչի խօսքերը չնչին,
Մի և նոյնն է առաջուայ պէս, իմացողների մէջ անգին,
Ամեն առաքինի մարդու հոգւոյ մէջ նա ունի արձան։

Անզգամ, լիրբ, ափեղցփեղ, խենէշը, ես գիտեմ հաստատ,
Խօսելով ուրիշի վերայ՝ իրան կանէ աւելի վատ,
Յարաժամ պատուաւորը պատուի մէջ է, բարեկամը շատ,
Տգէտ բամբասողը՝ երբէք չի լինի պարգևի արժան։

Ձիւմն, անզօր է անմիտ նախանձողի լարած կարթը,
Նրանից չի վնասուի քաջ, առաքինի խոհեմ մարդը,
Խելացուն կ'աւելանայ օր աւուր գոյքը, փառաց զարդը,
Օտարին աչքը անկողը, կ'մնայ խեղճ կիսակենդան։

50

ԱՆՍԿԶԲՈՒՆՔ ՄԱՐԴԸ.

Գետնաուիծին նմանութիւն շատ ունի
Անսկզբունք մարդը, դիւրահաւանը,
Որովհետև հաստատ համոզմունք չունի,
Մարդ չի գիտեր, ո՛րն է աղօթարանը։

Անսկզբունք մարդը անապահով է,
Որովհետև ինքն իրանից խռով է,
Ում սայլին որ նստաւ, նորան կ'գովէ,
Ամենին գործիք է նորա բերանը։

Դիւրահաւան մարդը, ինչպէս երեխայ,
Նորա սիրելին է, ով տուեց կակայ,
Դեղ կերած ձկի պէս ջրից դուրս կ'գայ,
Տուտով կ'նկնի իւր թշնամու ուռկանը։

Քանի որ ճանաչում չունի ընական,
Հաստատ գործի՝ խելքը չի պարկի նորան,
Հողմավար, անարմատ, չոր ցախի նման։
Կ'չափչփէ հողագնդի շրջանը։

Կատարած գործերն է թերի, ակամայ,
Ինչու որ սրտումը հաւատ, յոյս չկայ,
Հոմանու պէս հազար մարդու խօսք կուտայ,
Ո՛չ մէկին էլ չի լինի սիրեկանը։

Խղճիցը տանջուած, ցաւը շատ կապուտ,
Սուտերի պէս կանցնին օրերն անօգուտ.
Տապկի պէս փոխում է հաւատը շուտ շուտ,
Կորուցել է հոգւոյ նշանաբանը։

Մի բան կորուցածի նման՝ անդադար
Ման կուգայ աստ և անդ մոլոր ու շուար,
Իւր ունեցած վէրքին չ'գտնելով ճար,
Քիչ կ'մնայ բուկը ձգէ չուանը։

Ուղիղ ճանապարհից շեղուած, մոլորուած,
Հոգին հիւանդ, տխուր, սիրտը տոչորուած.
Խելքը քիչ, կարճատես, մտքով պղտորուած,
Մոռացել է նախնեաց չափ-սահմանը։

Այդպէս մարդուն՝ մտքէն հանել է Աստուած,
Պատւոյ աստիճանից գլորել է ցած,
Ջարդուած նաւի պէս ծովումն ընկղմուած,
Խաղալիք է դարձել ալեկոծմանը։

Սուրբ գիրքը չի կարդար, միտքն է անմաքուր,
Ղուռանից չի յուսար երբէք բարի լուր,
Փրկչի լուսից զրկուած, հոգւոյ աչքը կուր,
Ոչ Բուդդան*) ճանաչէ, ոչ Բրահմանը։

*) Հնդկաստանում երևելի կուռքեր են. Ծանօթ. Հեղ.

Ունի կեղծ ու պատիր շողոքորթ լեզու,
Խօսքերը անկապ են, չի խօսիլ ազդու,
Դրական օրէնքը կարծելով շինծու,
Նորա հետ ջրում է և բնականը։

Այսպէս մարդը գայթակղութեան քար է,
Բարութիւն չի զգայ, խորհուրդը չար է,
Որովհետև չի հասկանայ յիմար է,
Իւր դէմ կ'գրգռէ իւր հարևանը։

Վերևն ասինք թէ՝ նա չունի սկզբունք,
Ով ինչ ասաւ, նորան կուտայ իրաւունք.
Տարին նոր՝ կստանայ մի նոր համոզմունք,
Սկսում է ատել անցեալ տարուանը։

Այսպէս մարդոց թիւը շատացել է շատ,
Ոչ մի բանի, սրտով չեն կպչի հաստատ,
Փոփոխակի ծառ են, չեն ձգեր արմատ,
Ջուր տալով՝ զզուել է խեղճ պարտիզպանը։

Ջիւան, ով էր տեսել այսպէս ժամանակ,
Մարդիկ առանց գոյնի և տարօրինակ,
Այնպէսներուն նա կ'վիժէ անգիտակ,
Անհոգ, աներկիւղած ուսումնարանը։

51

Ա Ն Հ Ա Ւ Ա Ն Ը.

Անկիրթ մարդը՝ իւր բանը չգիտնալով
Կատարեալի լաւ վիճակին չի հասնի.

Իրան մէջը մէկ գիտութեան յուսալով՝
Վարժապետի օրինակին չի հասնի։

Կատուից կ'խնայէ մէկ կտոր չոր հաց,
Ամեն օր ծեծ, կնոջ աչքերումը լաց.
Մէկ նոր հագուստ չունի՝ ողջ մարմինը բաց,
Մեծատանը ժամանակին չի հասնի։

Մէկ տուն ունի անլոյս, խաւար, կեանք մաշող,
Խնդութիւնից զրկող, ստամոքս խաշող,
Զորթանէ ապուրի միշտ կարօտ քաշող՝
Արքայի մաքուր խորակին չի հասնի։

Բոլորովին թողած իւր գործը, բանը,
Փորն անօթի, բաց մնացած բերանը,
Հինգ հատ պղինձ դրամ չունի գրպանը,
Ոսկով լեցուն գանձանակին չի հասնի։

Ամեն մարդ երեսին կուտայ արատը,
Չի մաքրուիլ, թէ լողանայ Եփրատը,
Արճճէ մատանիք չունի իւր մատը՝
Սողոմոնի մատնու ակին չի հասնի։

Երեսը՝ թարշամած վարդի տերև է,
Շրթունքներն անշնորհ, քիթը անձև է,
Գոյնը գործելից հինգպատիկ սև է,
Անշամանդաղ նոր լուսնակին չի հասնի։

Հարիւր կարկատանէ վերարկուն ճերմակ,
Մկի նման որոնում է գաղտնի ծակ.
Գլխին խոտ կ'փաթթէ, չունի մէկ դտակ՝

Հին պապի արտախուրակին չի՛ հանի:

Վիզը ծուռ՝ կ'նայէ ծեր ուղտի նման,
Իսկ Մարաց հովուի պէս հանդերձն անարժան,
Ամեն մի ատամը մի մուրճ խսկական,
Մարգարիտ-բուստ-շարուննակին չի հանի:

Երկու հիւր շահելու մէկ սեղան չունի,
Թափառական մարդ է, օթևան չունի,
Կէս կոպեկ ցանելու անդաստան չունի,
Մեծ իշխանի ագարակին չի՛ հանի:

Որ տեսնի սուտերը, քարերից կ'գայ,
Երկնքից կ'լինի նա տակն ու վերայ,
Հաւի ագից տասը պտոյտ կ'դառնայ,
Նժոյգ նստող շահատակին չի հանի:

Կեանքը առողջ տարին բոլոր չի՛ գտնի,
Հնութեան մէջ ղրաղուած՝ նոր չի՛ գտնի՝
Հիւանդանայ՝ թթու խնձոր չի՛ գտնի,
Կայսերապատկան կամակին չի՛ հանի:

Մէկ ուղիղ խրատիչ բարեկամ չունի,
Միշտ օրերը տխուր, ուրախ ժամ չունի,
Իր տանը վառելու մարխ անգամ չունի,
Ուրիշների աշտանակին չի հանի:

Գլուխը ազատ չէ ցաւից, վտանգից,
Ողջ մարմնոյ վերայ հագած պատանքից՝
Նոր մէկ սխալ բան է հաներ իւր հանգից,
Հազարամեայ յիշատակին չի հանի:

Զի՛ գիտեր կրօնը քրիստոնութեան,
Զի՛ գիտեր անուշիկ լեզուն Հայկական;
Այլ և այլ չար ոսոխ թշնամեաց նման;
Հայկ և Արամ, Արմենակին չի հանի:

Իւր տգիտութեանը աշխարհն է վկայ,
Կ'ձևանայ բարձր, մեծ փիլիսոփայ,
Իւր փորիցը այբի կտոր դուրս չի գայ,
«Մեղուին», «Փորձին» և «Մշակին»*) չի՛ հանի:

Թող չ'ձանձրանայ իմ քաջ բարեկամը,
Որ ես շատ յիշեցի այս անգգամը,
Վնաս չունի, թող քիչ վաճառէ ժամը,
Ջիւան, ով քու նպատակին չի հանի:

52

ԱՔԼՈՐ ԵՂԲԱՅՐԸ.

Աքլոր եղբա՛յր, ձանձրացուցիր դու մեզի,
Անտեղի ամեն օր միշտ ճվալով սուր,
Հիմա ժամացոյց կայ, կարօտ չենք քեզի,
Գնա՛, այսուհետև ուրիշ տեղ ձայն տո՛ւր:

Վերայից գոյները շատ այլանդակ են,
Մինչ՝ Նոյից մնացած հին օրինակ են,
Թևից բմբուլները մէկ մէկ նիզակ են,
Ո՛չ մի թռչուն չունի քեզ նման փետուր:

*Ժամանակակից լրագրներու անուներ են.

Ե՛հ շատ անճոռնի է ձայնդ, աքլո՛ր ջնա,
Դու չես կարող լինիլ երգիչ, երգարան,
Քեզի պէտք է մի գեղեցիկ հաւարան,
Պատրաստել մինչ 'ի մահ քեզի կուտ ու ջուր։

Տեսակդ շատ հին է, նման չունիս, ո՛չ,
Մտել ու ելել ես ամեն մի խառոչ,
Ո՛չ մի թռչուն չունի պոչիդ նման պոչ,
Կատարիդ պէս կարմիր փունջ հերագանգուր։

Իմացայ, ուզում ես, որ լինիս կաքաւ,
Քայլերդ կ'շինեն քեզի սև ագռաւ,
Դու մեր հին աքլորն ես, թէ վատ, թէզուզ լաւ,
Պահել պէտք է քեզի, տալ հին կերակուր։

Սանտր ունիս գլխիդ վերայ ահագին,
Յովնան Մարգարէի հնացած գելլին,
Ջիւանս քաջ գիտէ, դու ես հաւածին,
Երբեմն էլ կ'լինիս հաւագող ուրուր։

53

ԻՄ ԶԿԱՐԾԱԾԸ.

Աշխարհումս ում որ բարեկամ գիտցայ,
Նա փոխանակ՝ ինձի հակառակ դարձաւ.
Ում որ հաւատարիմ ուղիղ հասկացայ,
Ինձ ատող, վնասող և ներհակ դարձաւ։

Ինձ չը օգնեց իմ սիրած բարեկամս,
Մինչ ուրախ էր՝ տխուր դարձաւ իմ ժամս,

Զ'հասկացայ, զուր կորուցի դրամս;
Նժոյգ ձի կարծածս աւանակ դարձաւ։

Ջիւանին եմ, 'ի զուր թառամեց վարդս,
Աւար գնաց կայքս, կալուածքս, զարդս,
Արդար ու խելամուտ ճանաչած մարդս,
Տե՛ս, ընդհակառակն, աւազակ դարձաւ։

54

Ս Է Ր.

Ազգաւ հայ-կաթոլիկ՝ բողոքականին՝
Լուսաւորչեաններու ատելն 'ի զուր է.
Հարազատ որդիքն են հին Հայաստանին,
Սրտերը պաղեցնել-զատելն 'ի զուր է։

Ինչպէս որ մենք հայ ենք, նորանք էլ հայ են,
Ազգաւ, լեզուաւ ճիշտ մի տոհմի տղայ են,
Պէտք է մերոնք ներող լինին, խնայեն,
Եղբայրն իր եղբօրը դատելն 'ի զուր է։

Ջիւա՛ն, նա կիմանայ՝ ինչ մարդ որ նոր է,
Ամեն խիղճ իւր սրտի մէջ թագաւոր է,
Սիրով եղած բանը օրինաւոր է,
Աննպատակ դառն աշխատելն 'ի զուր է։

55

ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ.

Անպակաս շողշողում է սրտիս վերայ սուր ամեն օր,
Լսում են ականջներս բօթալի վատ լուր ամեն օր,
Օր չեղաւ, որ ննջէի հանգիստ, խաղաղ, առանց ցաւի,
Տո՛ւչական է ինձ մնալ տրտում ու տխուր ամեն օր։

Կարճամիտ, նախանձայոյզ, չար մարդիկը գրգռուելով՝
Խօսում են ուղղութեանս հակառակ 'ի զուր ամեն օր,
Ա՜խ, պիտի ես շա՛տ մնամ այսպիսի վատ շրջանի մէջ,
Պարզութեանս պատճառաւ կրեմ թուք ու մուր ամեն օր։

Հազար ու մէկ որոգայթ, հազար տեսակ մեքենաներ
Լարում են թշնամիքս երկաթից ամուր ամեն օր,
Պաշտպանող Արարիչը պաշտպանում է իւր Ջիւանին,
Պարզերես դուրս կբերէ անմեղը մաքուր ամեն օր։

56

Ս Է Մ Մ Ա Յ Ի.

Առանց ցաւ աշխարհը երբեք չի՛ լինի այնպիսի մէկ մարդ,
Ամենայն մարդ ունի մէկ ցաւ, թէ ծերուկ թէ երիտասարդ.
Սա աշխարհն է ցաւերու, զլաղանքի, հոգսի գանձարան,
Սորա ընծաներուն անշուշտ կ'հանդիպի ամենայն լեարդ։

Աւա՛ղ կրկնեմ քանի անգամ, աւա՛ղ մեր անցաւոր կեանքին,
Հարուստ, աղքատ միասին կ'թառամին որպիսի մէկ վարդ.
Ադամորդին օդին մէջը կ'շրջի որպիսի մէկ ձուկ,
Իհարկէ ձկնապանը մահն է, կ'ձգէ ամենիս կարթ։

Ուրեմն, աշխարհի մէջ երջանիկ որչափ լինիս, ընկեր,
Վերատին երջանիկ չես, ըստ որում չունիս սեպական զարդ.
Ջիւա՛ն, հարիւր տարի ապրիս՝ նորից մէկ զօր ու գիշեր մ'է
Էլ ինչո՞վ կարող ես լինիլ դու աշխարհում ուրախ զուարթ։

57

ԻՄ ՋՈՒԹԱԿԸ.

Առանց քեզ կեանք չունիմ, սիրելի՛ ջութակ.
Դո՛ւն ես սրտիս մխիթարիչ, սփոփանք,
Քեզանո՛վ եմ բարձրացնում աղաղակ,
Դո՛ւն ես ամեն միջոց ինձի համար կեանք։

Տրամեալ երեսներուն դու կուտաս ծիծաղ,
Քեզանով օրերս անցնում է խաղաղ,
Քաղցրանուագ երգող լարե՛րիդ մատաղ,
Դէպ 'ի քեզ ամեն սիրտ կ'նծայէ բաղձանք։

Որփեան յիշատա՛կն ես, ո՛վ մեծահանճար,
Կամ թէ՝ Ապողոնն է տուեր քեզի լար,
Այնքան ազդեցութիւն ունիս, ո՛վ քնար,
Որ քեզնով կ'արթննայ սիրտ ու խղճմտանք։

Քեզ չ՚սիրող մարդն է նախանձ, ժանտաժուտ,
Կեանքի պայմաններից երբէք չէ հմուտ,
Հիւանդն անգամ քեզնից կ՚քաղէ օգուտ,
Մեղմ ձայնդ լսելով չի զգայ տանջանք։

Ուրախութեան փայլիչ, ով սիրուն Հերմէս,
Քեզանով է ամեն ցնծութիւն, կրկէս,
Առանց քեզ չի լինի հարսանիք, հանդէս,
Ինքդ ես զուարճութեան ուսում, հրահանգ,

Սուրբ գրքերից ես բերում եմ օրինակ,
Յօբալիցն ես դու մնացել յիշատակ,
Երբ Ջիւանուս ձեռքում կ՚հնչես, ջութակ,
Սրտիս խորքերիցը կ՚բղխէ մաղթանք։

58

ԳՈՎԵՍՏ ՆՈՐԱՑԻՆ ՕՐԻՈՐԴԻ.

Այսուհետև ինձի յոյս չէ հարկաւոր,
Քանի որ քեզ ունիմ, իմ ազնիւ հոգեակ,
Աչերդ արեգակ։
Թէ ունիմ ցնծութիւն, քեզ եմ պարտաւոր,
Դուն ես ինձի համար ամեն ժամանակ
Կենդանի ջութակ։

Բախ լինելոյս պատճառ քեզ եմ համարում,
Որ տալիս ես սրտիս լարին ընդհարում.
Քիչ կ՚ճարուի քեզի նման այս դարում,

Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,
Սիրուն աղաւնեակ։

Աչերդ անթառամ պարտիզի ծաղիկ,
Շրթունքդ շաքարից, մեղրից անուշիկ,
Վերջապէս ինձ համար, ով իմ գեղեցիկ,
Չ՚կայ ողջ աշխարհը քեզի նմանակ,
Դու ես միայնակ։

Քաղցրախօս թռչնիկներ անհամար անթիւ
Անոյշ ձայնիդ համար քեզ կուտան պատիւ,
Պատկերդ գրաւիչ, արիւնդ ազնիւ,
Դուն ես առաւօտեան պայծառ Արուսեակ,
Ուշիմ, ընդունակ։

Սէրդ սուրբ է միշտ, անարատ ինձ համար,
Դուն համեստ ես, աւո՛ղ, ես եմ անկատար,
Քեզ կ՚սիրեմ բոլոր կեանքիս հաւասար,
Համոզմունքս է որպէս մաքուր պարզ վտակ,
Վճիտ, անապակ։

Ե՞ր եմ տխուր արդեօք, քանի որ դու կաս,
Քեզ ունեցող մարդը ի՞նչ ունի պակաս,
Յուսամ Աստուած պիտի ապրիս անվնաս,
Ջիւանիիս համար բաղդով յաջողակ,
Սիրելի տատրակ։

59

ՆՐԳ ԱՌԱՔԻՆՈՒՀԻՈՅ.

Ամենագեղեցիկ ընտիր սիրուհի,
Տեսնողը կ'լինի հպատակ քեզի,
Օրինապահ, օրէնադիր սիրուհի,
Կ'կարծեն մէկ բարի հեղինակ քեզի։

Քաջ անունդ յաղթութեանդ պսակն է,
Բարի սիրտդ կենդանութեան մուրհակն է,
Պաշտպանողդ Գոյացուցիչ Էակն է,
Ո՞վ կարող է լինել հակառակ քեզի։

Լեր Զիւանոյս, տիկին, լեր դու բարեկամ,
Անուանդ համար կեանք կ'զոհէ մինչ անգամ,
Սիրոյդ շաղկապ լինողները յարաժամ
Կ'սիրեն, կ'պատուեն շարունակ քեզի։

60

Ա Ն Մ Ի Տ Ը.

Սխալուեցայ տեղիք տուի անմտին,
Երես առաւ, ելաւ նստաւ իմ ուսին.
Ես նրան իմ բարև տալս զղջացի,
Որովհետև շատ ու շատ ցաւ զգացի։

Յետոյ դարձայ ես ինձ ու ինձ ասացի,
Անմիտ մարդուն պատիւ զուր է գլխովին։

«Իւր չափը չ'ճանաչողից հեռու կաց»,
Ինձի ասաւ մի պատուելի բանիմաց,
Անմիտ մարդը թէ լինի էլ սրբակեաց,
'Ի բաց-վանէ դու քեզանից միշտ 'ի բաց,
Նեղը ընկաւ մօտդ կանէ լաց ու թաց,
Միտքը այլ է, մի խղճար ամենևին։

Անմիտ մէկին եթէ տուիր գովասան,
Մեծ մարդու տեղ նա կ'դնէ ինքն իրան,
Կըսկսէ հպարտանալ բաւական,
Ուռիլ, փքուիլ հնդու-աքլորի նման,
Կեղծ գովեստը համարելով իսկական,
Կ'մոռանայ դրութիւնը առաջին։

Նա սիրում է ակումբներում լինել շատ,
Այլոց գինին անչափ խմել միշտ առատ,
Խօսելու մէջ չի որոշեր լաւ ու վատ,
Անմտածել վեր կ'վարէ անընդհատ,
Փեթակի մէջ իշամեղուին համեմատ,
Կ'վնասէ բջիջները թանկագին։

Զիւան, չ'մտածող մարդն է անզգայ,
Կարծես մէջը ամօթ, պատկառանք չկայ,
Թէ որ մէկի տունը խնճոյքի գնայ,
Անպատճառ այն տանը մէկ վնաս կուտայ,
Ով որ նրան հրաւիրեց, կ'զղջայ,
Ուրտեղ մտաւ, վէճ կ'բանայ ահագին։

61

ՀԱՄԲԵՐԷ.

Մի այլայլուիր 'ի զուր տեղը,
Համբերէ, սիրտս, համբերէ.
Համբերանքն է վերքիդ դեղը,
Համբերէ, սիրտս, համբերէ.

Մի նախանձուիլ բաղդաւորին,
Նախանձները շուտ կ'կորին,
Նայէ քեզանից ստորին,
Համբերէ, սիրտս, համբերէ։

Աշխարհը մեծ լայնատարած
Ստեղծեց մեզ համար Աստուած.
Ոչ մի մարդ չի մնալ քաղցած,
Համբերէ, սիրտս, համբերէ։

Յուսով եղիր միշտ աներկբայ,
Տէրը յաջող դուռ կ'բանայ,
Շրջանը այսպէս չի մնայ,
Համբերէ, սիրտս, համբերէ։

Քեզանից պատուով ու պայծառ
Մարդիկ՝ շատ են եղել թշուառ.
Մեծ մարդկանցից օրինակ առ,
Համբերէ, սիրտս, համբերէ։

Փչելով մէկ քամի թեթև,
Կ'վանէ ողջ ամպ ու անձրև,
Շուտ կ'ծագէ պայծառ արև,
Համբերէ, սիրտս, համբերէ։

62

ԵՐԳ.

Մթնեց երկինքը, օդը վատացաւ,
Սև սև ամպերը դուրս եկան հանդէս.
Երկնից անձրևի գալը շատացաւ,
Գետեր, առուակներ բացին ասպարէզ։

Հողմը կ'փչէ սառն հիւսիսից,
Հաստ կաղնի ծառեր կ'ձգէ գետին,
Որոտմունք, կայծակ ծերուկ Մասիսից,
Զոհ են պահանջում կրկին ու կրկին։

Մարդ թէ անասուն, թռչուն թէ գազան,
Փախել, պահուել են իրանց խորշերում,
Երկակենցաղը անվախ, անսասան,
Երկդիմի մտքով միշտ խաղ է կանչում։

Երջանիկ գորտը անձրևոտ տարին
Անվնաս կապրի չորում թէ ջրում,
Վայ գայ միամիտ ձկների գլխին,
Ջրից դուրս ելաւ՝ մահ է սպառնում։

63

Ս Ի Ր Ո Ւ Հ Ի.

Խնդա՛, սիրուհիս, քեզ բարի վիճակ պիտի հասնի,
Մեծ Բարերարից պարգև ու պսակ պիտի հասնի,
Սրտիդ սիրածը՝ հոգ մի՛ անիր, յետ կ'գայ անշուշտ,
Մօտիկ օրերս բաղձալի նամակ պիտի հասնի։

Փափուկ քնարի ձայնովը հոգիդ պիտի հրճուի,
Գողթան մուսաներէն սիրոյ երգակ պիտի հասնի.
Աներկբայ եղի՛ր փեսայի գալուն, սիրելի կոյս,
Երկնից ուղիով օդի սուրհանդակ պիտի հասնի։

Քո տխրութիւնդ ձմրայ նման փոխուելով յանկարծ,
Զուարճալի օր, քաղցր եղանակ պիտի հասնի.
Ինչպէս Սառային, Աբրահամին խնդացուց Աստուած,
Քոյր իմ, քեզի էլ այնպիսի նամակ պիտի հասնի։

Մեծ Բարերարը արծուի թևերու վրայ նստած,
Եղբայրներովդ քեզի օժանդակ պիտի հասնի,
Դժոխքը Ջիւանի էլի դրախտ պիտի դառնայ,
Զար դևի տեղակ բարի հրշտակ պիտի հասնի։

64

Գ Ա Զ Ե Լ.

Ա՜խ պիտի շա՜տ սպասեմ իմ սիրելւոյս գալստեանը,
Խնդրում եմ, ոչ ոք չի՛ տալ այս խօսքերիս պատասխանը,
Երբ կուգայ, ինձ ասացէք, վազեմ յառա՛ջ երթամ նորան,
Ընդունելութեան համար պատրաստել եմ օթևանը։

Ես հաւատալով նորա գալստեանը, սպասում եմ,
Ուշ թէ շուտ արժան պիտի լինիմ նորա սուրբ տեսլեանը.
Շատ տարի յառաջ մեռած համարեցին չար մարդիկը,
Երբ տեսան պապանձուեցաւ ամեն մէկի վատ բերանը։

Իմ սիրելոյս մահ չ'կայ, յաւիտեանս յաւիտենից,
Երկնաւոր Հայրն է նորա պահպանողը, օգնականը,
Խնդրում եմ, ով Արարիչ, ցոյց տուր սիրելոյս պատկերը,
Այնուհետև հոգ չէ Ջիւանուս թող դնեն գերեզմանը։

65

Դ Ի Ի Բ Է Ի Թ.

Ազգ իմ, որքան նկուն մնաս,
Սիրտս քեզանից չի զատուի.
Հազար տեսակ չարչարանք տաս,
Սիրտս քեզանից չի զատուի։

Քեզ չեմ մոռնայ յաւիտեան,
Հարազատ մայր իմ Հայաստան,
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,
Սիրտս քեզանից չի զատուի։

Քեզանով եմ ես երջանիկ,
Ի՛մ սիրելի՛ իմ անուշիկ.
Ծոցիդ մէջը հանգչիմ, մայրիկ,
Սիրտս քեզանից չի զատուի։

Ձիւանին եմ քեզ բարեկամ,
Քանի ողջ եմ ամենայն ժամ,
Հնդկաստանին էլ տէր դառնամ,
Սիրտս քեզանից չի՛ զատուի։

66

ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ.

Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար քաշում է փափագ,
ո՛վ սիրուն սիրուն,
Չի լինիլ քեզ պէս ամենայն երկիր փայլուն Արուսեակ,
ո՛վ սիրուն սիրուն,
Կ'ստանաս համբաւ, քիչ էլ սպասէ, կուգայ ժամանակ,
ո՛վ սիրուն սիրուն,
Փառք ու պատիւդ քեզի կ'յանձնեն քոյրերդ նմանակ,
ո՛վ սիրուն սիրուն,
Եղեմեան ծաղիկ, հայրենի հոգով սնուած մանիշակ,
ո՛վ սիրուն սիրուն,

Հոգիդ անարատ, տեսքդ գերազանց, մէկ հատ օրինակ,
ո՛վ սիրուն սիրուն։

Սրտիս ու հոգուս մխիթարութիւն քեզանով է միշտ,
ո՛վ դեղատու կին,
Յոյսս դրած եմ ես բոլորովին սիրելոյդ վերայ, Աշխարհատիկին,
Ազնիւ Թագուհի շնորաք լեցուն, այցելութիւնդ է մեզ
կաթոգին,
Զարգացած մտքով Եւրոպացու պէս, թէև ասում են քեզ
ախածին,
Փնտռում են քեզի շատ սիրահարներ աշխարհիս մէջը
սրտով լալագին,
Բացի քեզանից թէ լոյս էլ լինի, չէ մեզ ընդունակ,
ո՛վ սիրուն սիրուն,

Ի՞նչ կըլնի արդեօք արժան համարես դէպի մեր կողմը
դաս այցելութեան,
Փափագդ քաշող տեսնում ես շատ կայ, պատկերդ ցոյց
տուր լինինք բաւական,
Քեզ սիրողներուն դու մի չարչարիր, քիչ խնամք արա՛,
անոյշ սիրական,
Նո՛ւր պաշտանքս, ո՛վ իմ սիրուհի, վիրաւոր սրտիս տուր,
դեղ ու դարման,
Ո՛չ դու մեզի պէս կարող ես գտնել և ո՛չ մենք քեզի մէկ
համանման,
Դու մեզ Թագուհի մինչև յաւիտեան, մենք քեզ հպատակ,
ո՛վ սիրուն սիրուն։

Ա՜խ պիտի տեսնե՞մ ես քո երեսդ, թէ պիտի մեռնիմ
թերի փափագով,

Այրում ես դու ինձ ամենայն միջոց անարատ սիրոյդ անշէջ կրակով,
Գոնէ ամիսը լուր տուր մի անգամ տեղդ իմանանք փոքր նամակով,
Քեզի է կապուած մի մեծ ընտանիք հաստատուն յոյսով, բաղձով, վիճակով,
Հասկացիր միտքս, թէ ինչ եմ ասում, քեզի խնդրում եմ ինչ նպատակով,
Խօսքիս համեմատ շարժուիր գեղեցիկ, գործ շարունակէ, ով սիրուն սիրուն։

Իշխանուհիներ աշխարհիս շատ կան, բայց մեզ անօգուտ, իմացիր հաստատ,
Նոքա օտարին չեն սիրիր, սրտով կեղծ ու պատիր են արտաքին և վատ,
Ուրեմն մօտ եկ, դու իմ սիրելի, իմ արենակից տիկին հարազատ,
Քո սէրդ սուրբ է, ով սիրուն անմեղ, բարքով ու վարքով, սրտով անարատ,
Տասցէ Արարիչ մնաս անխափան միշտ անունով վեհ, անկախ ու ազատ,
Խղճալի եգիչ Ջիւանուս համար մնաս յաջողակ, ով սիրուն սիրուն։

67

ՔԵՕՐՕՂԼԻ.

Գնաց, վրէժ առաւ Հռչէ արքայից,
Հայոց արքայ քաջ Տրդատը ո՞ւր տեղ է,
Քսան երկու կանգուն գետի վերայից
Մէկէն թռչող Վարազդատը ո՞ւր տեղ է։

Գայլ Վահանը պարսից զօրքին կրակեց,
Հնարներ բանցրուց ու խայտառակեց,
Տաք շամբուրով Մեհրուժանին պսակեց
Բագրատունի քաջ Սմբատը ո՞ւրտեղ է։

Նա այլոց զօրքերից առնում էր գրաւ,
Այլոց գրաւում էր, ինքն էր անգրաւ.
Քանի անգամ Հռովմայեցւոց դէմ դրաւ
Այն Տիգրանեան Միհրդատը ո՞ւր տեղ է։

68

ԱՅԳԻՆ.

Վերջացաւ մեր Այգին վերջ եղաւ ու վերջ,
Անտէրութեան ձեռքից աւերակ մնաց.
Երբ տունկերն սկսան մնալու ստերջ,

Միանգամայն անջուր, անվտակ մնաց։

Հինգ հարիւր տարուայ չափ չ՚գալով անձրև,
Ծառերը չորացան ծծելով արև.
Ինքը բոլորովին ընաջինջ եղև,
Միայն լոկ անունը յիշատակ մնաց։

Ջիւան, խնդրէ նա քաշէ պատուհասը,
Ով ու հասուց այս մեր այգուն վնասը,
Աստ և անդ ցրուելով ամեն մի մասը,
Մնացածն է այլոց ձեռի տակ մնաց։

69

ՏԳԷՏ ԳԼՈՒԽ.

Տգէտ գլուխ, պատիւդ չ՚պահելով,
Ոտքերդ քեզ վերայ բաց արին գանգատ.
Անգամներդ կատարեալ չ՚շահելով,
Խռովեցան նոքա քեզանից հաստատ։

Լուսատու, հեռատես աչքերդ մաքուր,
Քեզ համար կ՚չափեն աշխարհն ընդհանուր.
Նրանց վերայ դու քաշում ես վարագուր,
Բռնի կ՚խափանես լոյսը յորդառատ։

Արթուն, զգաստ ականջներդ անդադար,
Դեսպանի պէս կ՚չարչարուին քեզ համար.
Նրանց դուռը փակում ես անխղճաբար,

Որ չ՚լսեն բաներ դարին համեմատ։

Հոտոտելիքդ կարօտ են լաւ բանի,
Բալասանի, վարդի, նարգոս, շուշանի.
Քթախոտը համարում ես պիտանի,
Կ՚կորչի խեղճերու ճաշակը ազատ։

Ճարտար լեզուդ մունջ կ՚պահես մշտական,
Կ՚փակես շրթունքդ չես բանայ բերան,
Այդ վարմունքով շուտ կ՚գնաս գերեզման,
Վէհ անուանդ վերայ թողնելով արատ։

Ամօթ քեզի համար, ամօթ, ով հերոս,
Անդամներուդ համար պատրաստում եմ փոս.
Թանկագին գործունեայ ձեռքերդ ափսոս,
Պահում ես անօգուտ, ծոյլ ու անաշխատ։

Ջիւանին խնդրելով քեզի կ՚աղաչէ,
Սթափուէ, քանի որ քո գոծդ աջ է,
Արթնացի՛ր դու, պատիւդ լաւ ճանաչէ,
Եղունկիցդ քեզի չի հանիր խրատ։

70

ԹՕՓԽԱՆԱՑ ԴԻԽԱՆԻ.

Քո փափագով վառվում եմ, արի սիրական, ուր տեղ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան ուրտեղ ես,
Ճանապարհդ նայելով աչքերումս լոյս չ՚մնաց.

Ե՛կ երևոյթ տեսանեմ ազնիւ սիրաբան ուրտեղ ես։

Ի՞նչ պատահաւ, անուշիկ, որ դուն հեռացար ինձանից,
Քաղցրախօս, անոյշ լեզու, անուամբ գովական ուրտեղ ես.
Քանի՛ մէկ քանի՛ չարաչար տանջուիմ այլոց ձեռով,
Ո՛վ վեհապանծ անուանի, կեանքիս պահապան ուրտեղ ես։

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան,
Դուն արի 'ի միասին գնանք դատարան ուրտեղ ես,
Թող միայն առէն, Ջիւան, այսօր սիրեկանդ կուգայ,
Թող տառանիմ քո սիրով մինչև յաւիտեան ուրտեղ ես։

71

Չ Ի Լ Ի Ն Ի.

Եթէ մեղաւորը մնայ անպատիժ,
Աշխարհը կեցութիւն չի լինի երբէք,
Մարդիկը կ'դառնան իրար խայթող իժ,
Բարի հայեցութիւն չի լինի երբէք։

Թէ չ'լինի օրէնք, կրթութիւն, ուսում,
Ուժեղը անուժին կուլ կուտայ հում հում,
Նեռ հարստահարիչ գուփողի սրտում
Խղճի ազդեցութիւն չի լինի երբէք։

Ջիւան, մարդիկ ցոփցել՞են առհասարակ,
Շռայլութեամբ ողջն ընկել են պարտքի տակ,

Աշխարհը քիչ կ'ուղղուի այն ժամանակ՝
Երբ որ արբեցութիւն չի լինի երբէք։

72

ԽՐԱՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԳՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ.

Անմտածել վեր մարէ խօսքերդ, ճարտար եղիր,
Քեզ ճառամախօս կասեն, ուզում ես յիմար եղիր.
Քանիմ Նախադասութիւն գրքերից բերան արա,
Միշտ ռամիկ դասի մէջ գիտնական հանճար եղիր։

Ծանր կողմը կշռաքի աչքի առաջ ունեցիր,
Ճշմարտութիւնը սուտ համ նորից արդար եղիր,
Առիւծասիրտ անձի մօտ կզկթիր, եղիր կատու,
Եթէ տեսար ակար մարդ, արիացիր՝ չար եղիր։

Ժամանակի պահանջն է անուժին կողոպտելը,
Թէ խիղճդ քեզ խայթում է արտաքուստ արդար եղիր.
Ջիւան, քեզ ով կիմանայ դու գիտես քո հաշիւը,
Խօսքերով սուտ աղգասէր, փողի սիրահար եղիր։

73

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԻԿ.

Խաղաղ, առանց ցաւի երջանիկ մարդիկ
Գտնել կուզես՝ գերեզմանոցը գնայ,

Մարդիկը թշուառ են, չ՚կայ երջանիկ,
Կուզես քաղաք, կուզես ամրոցը գնայ։

Մարդիկ առհասարակ թշուառական են,
Լոկ ապրուստի համար ինչ ասես կանեն,
Մէկ ծայր հացի համար իրար կսպանեն,
Տանից դուրս էլ դու մէկ փողոցը գնայ։

Ո՛վ Ջիւանի, դու մի ամիս գարուն ես,
Զգա՛, շուտով կանցնիս թէ ոք արթուն ես,
Կ՚յարգեն, կ՚պատուեն քանի սիրուն ես,
Երբ մեծանաս գրողի ծոցը գնայ։

74

ԾԱՂԻԿ.

Գարունդ անցել է, աշնան պտուղ ես,
Բայց նոր ես երևում, դեռ լաւ ես, ծաղիկ,
Միամիտ հենց գիտէ գարնան պտուղ ես,
Չէ հասկացել ներկած կտաւ ես ծաղիկ։

Պարտիզպանը միշտ մօտդ հարկաւոր է,
Որ քեզ հսկէ, բնութեանդ սովոր է.
Թէև գոյնդ լաւ է, տերևդ չոր է,
Ձեռք դիպաւ, կ՚փշերիս, պառաւ ես, ծաղիկ։

Թարմութիւնդ վաճառել ես սև երես,
Ինչպէս քեզի առնեմ սրտով սիրեմ ես,

Ինձ ասում ես վարդն եմ, բայց դու վարդը չես
Հոտ չունիս, առնողիդ մեծ ցաւ ես ծաղիկ։

75

ԿԵԱՆՔԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ.

Թէ քո աչք ու ունքդ սև են, ո՛վ չքնաղ,
Ես էլ դորանց դէմը բաղդ ունիմ շատ սև.
Թերթիչներդ թէ լըսիդ տան շամանդաղ,
Իմ արևս ամպամած է, հաստատ սև։

Եթէ դու սիրում ես միշտ ուրախութիւն,
Ես էլ կուզեմ առանձնանալ մի անկիւն,
Թէ որ դու կուրծք ունիս որպէս ճերմակ ձիւն,
Իմ էլ մազերուս մէջ չկայ մէկ հատ սև։

Դու քայլում ես ոսկոյ արծաթի նման,
Իմ էլ կեանքս է ժանգոտ երկաթի նման,
Թէ դու մազեր ունիս սև սաթի նման,
Ես էլ օրեր ունիմ անցնելու վատ, սև։

76

ԼԵԶՈՒ.

Այս ցաւերը քո երեսից գտայ ես,
Անզգոյշ անխոհեմ, անզգամ լեզու,

Նրանց մօտը ինձի արիր սև երես,
Որտեղ որ ունէի բարեկամ՝ լեզու:

Քեզ չ'վերաբերեալ խօսքերու վերայ
Մէջ մտար, խօսեցար որպէս երեխայ,
Քո պատճառով ոմանց աչքերից ընկայ,
Անարգանք լսեցի շատ անգամ՝ լեզու:

Ե'կ Ջիւանուս լսէ, ուղղէ քո կարգդ,
Իցցէ թէ շիտկըռւի քո ծռւած բարքդ,
Տուա կ'իմանաս որ սխալ է արարքդ,
Թէ մտածել գիտնաս գէթ մի ժամ՝ լեզու:

77

ՄԱՅՐԱԿԱՆ ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ.

Դեռ գիշեր է, առաւօտ չէ, հանգիստ քնիր, իմ գաւակ,
Ահա ծիծս, առ բերանդ, եթէ ունիս դու փափագ,
Թէև դրսից քո ականջիդ դիպչում է սուր աղաղակ,
Քնի'ր, քնի'ր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են՝ ոչինչ չունին քեզ տալու:

Դու քոյրերիդ մի մտիկ տար, նրանք մեծ են, գառնուկս,
Օրօր ասեմ դեռ դու քնիր, որ մեծանաս, մանուկս.
Ահա դրի գլխիդ տակը բարձի տեղեակ բազուկս,
Հանգիստ քնի'ր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Դրացու չար երեխայքը քեզ գոչում են դուրս արի,
Բայց չեմ թողալ որ դու գնաս հանդիպիս պատահարի.
Ոչ ոտք ունիս և ոչ լեզու, պարկի տեղդ, դադարի,
Անհոգ քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Օրօցքիդ մէջ քեզ պինդ կապեմ չ'լինի թէ գլորիս,
Կամ թէ ընկնիս գետնի վերայ քեզ վնասես մոլորիս,
Մտիր Մօրփէոսի գիրկը մինչև լեզու սովորիս,
Այժմ շուտ է սիրուն մանկիկ ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Բացի կաթը դու չես կարող չոկ բան ուտել, քաջ տղայ,
Բերանումդ ատամ չկայ, երեխայ ես, երեխայ,
Ինքս կասեմ քեզի զարթիր, երբ բարով տանը գայ,
Դեռ հիմայ լոյսը չէ բացուել, ժամանակ չէ զարթելու,
Մի հաւատար որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Օրօցքիցդ ձի կ'նստես, երբ մեծանաս, պատուական,
Սիրուն մէջքդ թուր կ'կապեմ, ուսիդ կառնես հրացան,
Մեծ եղբայրս, ազնիւ քեռիդ՝ երբ որ կուտայ հրաման,
Ինքս կասեմ, վեր կաց, մանուկ, ժամանակ է զարթելու,
Կարելի է մի բան յուսալ ուրիշներուց քեզ տալու:

78

ՏԻԿԻՆ.

Պիտի գովեմ քեզ, տիկին, գովելու արժանի ես,
Բարիք գործելուր համա իսկապէս պիտանի ես,
Քաղաքիդ մէջ յարգուած յատուկ ես, անուանի ես,
Անուանդ հետ միասին սիրուն ես, գեղանի ես.
Առատասիրտ մարդասէր մեծ անձի ընտանի ես,
Արժես մայր հասարակաց խելօք ես, գովանի ես։

Սպիտակ պարզ ճակատդ նորած լուսնեակի պէս,
Կամարաձև ունքերդ յատուկ աղեղնակի պէս,
Թերթիչներդ գրչահատ աչքերդ կրակի պէս,
Մաքուր փոքրիկ բերանդ ոսկեայ ըմպանակի պէս,
Խօսքերդ թանգ մարգարիտ, լեզուդ էլ սոխակի պէս,
Բառերդ կշռադատող ընդունակ լեզուանի ես։

Բաղդ է ու մեծ պատիւ է, որ քեզ ունի Շիրակը,
Հազիւ մէկ հատ ծնուել է քեզ պէս մեր ժամանակը,
Զքաւոր մանուկներու պահապան հրեշտակը,
Դու նրանց ուղղեցոյց ես մտքերու աշտանակը,
Տասնս որ որբուհիներ ապրում են շքիդ տակը,
Տերևախիտ պտղատու մէկ ծառ ես, հովանի ես։

Մտքիցդ դուրս չի գնալ քաղաքդ, հայրենիքդ,
Հասցրել ես միշտ նորան օգնութիւնդ, բարիքդ,
Կ'յուսամ քեզ նմանին քաջ սիրասուն որդիքդ,

Հետևին ճանապարհիդ, պաշտպանեն քո կարծիքդ,
Յաւիտեան չի կորսուիլ գործերդ, երախտիքդ,
Թէ մարմնով էլ մեռանիս անունով կենդանի ես։

Զիւանին քեզ լաւ գիտէ, ունիս գութ ու գորովանք,
Քեզ վերայ վատ խօսողը Յուդա է անխղճմտանք,
Դու դեռ էլի շատ կարժես, քիչ է այս իմ գովասանք,
Այսքան կուգայ ձեռիցս չունիմ աւել պաշարանք,
Յուսահատին սիրտ տուող, նեղեալներին սփոփանք,
Հիւանդներին դեղ ու ճար, խատակ սպեղանի ես։

79

ԵՂԱԾՆ ԵՂԵԼ Է.

Անցած բանի համար ցաւելն 'ի զուր է,
Օգուտ չի տալ քեզի, եղածն եղել է,
Վնասը մէկ քեզի չէ, ընդհանուր է,
Ափսոս ես, մի տրտմիլ, եղածն եղել է։

Երէկը որքան որ անցուցիր պայծառ,
Չի արժիլ մէկ այսօր լինիս էլ թշուառ,
Աշխատիր դու գալոց ցաւի առաջն առ,
Կոտրածը չի շինուիլ, եղածն եղել է։

Անցեալը քեզ համար խրատ է ընտիր,
Ներկայումս եթէ լինիս քաջ ու ժիր,
Շնորհք ունիս նորը ձեռք բեր տեղը դիր,
Հինը ձեռք չի անցնիլ, եղածն եղել է։

Անցած օրը կրկին յետ չի գար բնաւ,
Համարեայ ձեռիցդ թռչուն էր թռաւ,
Ամեն կորուստ հեշտ չի գտնուիլ դիւրաւ,
Իզուր մի՛ աշխատիլ, եղածն եղել է։

Հիմայ ոչ Սառայ կայ և ոչ Աբրահամ,
Որ Տէրը նրանց հետ լինի բարեկամ,
Չի գտնուիլ Եղիսաբէթ ամեն ժամ,
Պառաւը չի ծնի, եղածն եղել է։

Ծերը երբէք չի մանկանայ, խե՛ղճ տխմար,
Ունայն մի տառապիր, չես գտնիլ հնար,
Թող առաջուց լայիր վատ գործի համար,
Հի՛մայ չա՛ր թէ բարի, եղածն եղել է։

Ժամանակը փախչող մէկ երիվար է,
Յետ ընկար՝ հասնելը նրան դժուար է,
Օրհնեալ է այս օրս տա՛մ, դադարէ,
Բաղդիդ հետ հաշտուի, եղածն եղել է։

Ջուրը ջուր կ՚դառնայ, հողը կրկին հող,
Քո էլ վերջդ այս է, ի՞նչ ես եղել դող,
Քո ցաւդ լաց, ննջեցեալին հանգիստ թող,
Չես կարող տալ հոգի, եղածն եղել է։

Պիտոյ է յանցանքը չ՚գործած ցաւել,
Զուր է վերջը զղջալ և տալաշխարել,
Որդին իւր հօր մեղքը չի կարող քաւել
Հարիւր տարի ճգնի, եղածն եղել է։

Անփոփոխ, միակերպ Արարիչն է մին,
Մարդոյ ելևէջն շատ փաղուց է, հին,

Առաջին արթուն կաց դու չընկնիս գետին,
Ընկար՝ շուտով կանգնիր, եղածն եղել է։

Յանցանքդ քեզ վերայ հաստատուն դրուան,
Վկաներդ փախան, փաստերդ ջրուան,
Մեղքդ դատաստանում արձանագրուան,
Լացով չես սրբնիլ, եղածն եղել է։

Ջիւանի, մտածէ գործը յետադայ,
Երջանիկ անցեալը էլ յետ չի դառնայ,
Տայ Աստուած նոր ծառը որդունք չունենայ,
Փթածը չի ծաղկիլ, եղածն եղել է։

80

ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿ։

Հարազատ զաւակը, լաւ կաթնակերը,
Ծնողների անունը չի մոռանալ,
Ասուերոսի պալատի մէջ, Եսթերը
Իրան ազգը և տունը չի մոռանալ։

Քաղաքը դուր չի գալ գիւղի զաւակին,
Կուզէ մէջը մնալ իրա վիճակին,
Ոսկէ վանդակի մէջ պահես սոխակին,
Փշով պատած իւր բունը չի մոռանալ։

Ջիւան, ազգութիւնը սուրբ համ ունի,
Ազգութեան մէջ մարդս բարեկամ ունի,

Ամեն մի կենդանի ջոկ երամ ունի,
Եւ ոչ մէկը տունը չի մոռանալ։

81

ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿ.

Ո՞ր տեղ ես, ով յաջողութեան հրեշտակ,
Աղաչում եմ, կրկին դարձիր դէպի ինձ,
Շինած տունդ դու մի անիլ աւերակ,
Բարեկամն ես իմ հին, դարձիր դէպի ինձ։

Դարձիր հոգիս բաւ է անճար մնալս,
Առաջ ուժեղ հիմայ տկար մնալս.
Կարծեմ քեզի ցաւ է խաւար մնալս,
Անարատ լուսածին, դարձիր դէպի ինձ։

Տուիր դուն Ջիւանուս մասնաւոր տաղանդ,
Մի թողնիլ, որ լինիմ հոգեպէս հիւանդ,
Վերանորոգէ ինձ, տուր սէր ու եռանդ,
Ահեղ ոգի ուժգին դարձիր դէպի ինձ։

82

Բ Ա Ր Ե Կ Ա Մ.

Անմտածել վէր վարող սուտ խելագար բարեկամ,
Ափեղցփեղ խօսքերու թունդ սիրահար բարեկամ,

Աջ ու ահեակ չես նայում, խփում ես քար, բարեկամ,
Սրտեր է, որ կոտրում ես յիմարաբար, բարեկամ,
Բերնիդ մողոտը քաշէ, խօսէ դադար, բարեկամ,
Անտեղի մի բառանչիր, որպէս տաւար, բարեկամ։

Ասած է՝ թէ ամեն ձի չեն վարել մէկ մտրակով,
Դու փոխանակ խփելու՝ վէրք կ'բանաս դանակով,
Երեխան չի կրթուիլ հայոյանքով, ապտակով,
Կծողին են խփում երբ որ հաչէ՝ մահակով,
Անունդ ախտոտալով խօսում են քեզ առակով,
Վարքդ պատիւ չի բերել քեզի համար, բարեկամ։

Վերջապէս քու հասակին չեմ կարող ձեւել շապիկ,
Երբեմն մարդ ես լինում, երբեմն էլ պուպպատիկ,
Մարտ ամիսն ես իսկապէս փոփոխակի, շրջմոլիկ,
Մերթ ուռչում ես քեզուքեզ լոկ քամիով, ինչպէս տիկ,
Մերթ խելացի ես լինում, մերթ վայրենի դռեհիկ,
Մերթ լինում ես հողերուն դու հաւասար, բարեկամ։

Սովորել ես անտեղի այլոց դռները քարել,
Որովհետեւ անառակ մարդոց հետ ես կեանք վարել,
Քո գործդ է ամբոխի խաղաղ կեանքը խանգարել,
Կենացդ մէջ բարի գործ երբէք դու չես կատարել,
Դու չես կարող ինձ նման անկեղծ մէկ հատը ճարել,
Ես կ'ճարեմ քեզի պէս մինչի հազար, բարեկամ։

83

ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ.

Տէր Կռոնոսը սրեց գերանդին,
Եկաւ կանգնեցաւ մեր արտի գլխին,
Նա քաղեց երկու ծաղիկ թանկագին,
Մէկը Տերենցն էր և միւս Րաֆֆին,
Քանի մտիկ տանք նրանց երկերին,
Միշտ պիտի յիշենք մենք այդ երկուսին:

Ո՞վքեր են դրանք, հարուստ թէ իշխան,
Որ ժողովուրդը ցաւում է այդքան,
Բայց ոչ հարուստ են, ոչ ազնուական,
Գրչով աշխատող մէկ մէկ վիպասան,
Հարազատ մշակ, աշխոյժ պատմաբան,
Հոգով ծառայող խղճուկ հայ ազգին:

Հայոց երկնքից պակասեց երկու
Փայլուն ու պայծառ աստղեր լուսատու.
Երկուսն էլ գրչով խօսքերով ազդու,
Ծաղիկ հաւաքող ժրաջան մեղու,
Կրթիչ մարմնու և կրթիչ հոգու,
Մարդկանց նորոգող, կեանք տուող կրկին:

Տերենցը պայծառ որպէս Արուսեակ,
Եղաւ շատերին բարի օրինակ,
Թողեց հայ-ազգին նա մեծ յիշատակ,

Զունեցաւ Րաֆֆու նման շատ հռչակ.
Րաֆֆու գրչից դուրս գալով կրակ,
Աշխուժի բերեց շատ սառը մարմին:

Տերենցն ինքնուրոյն գրող էր հաստատ,
Սեթևեթներից հեռու և ազատ,
Անմահ Րաֆֆին գովուած բազմաշխատ,
Համարեայ չ'կայ նրան համեմատ,
Մեռնելով ծնաւ Րաֆֆիներ շատ,
Իջնի մեզ վերայ կենդանի հոգին:

Տերենցն համեստ էր, մաքուր, խուփ բերան,
Համեստ կերպով էլ թաղեցին նրան,
Բայց Րաֆֆիին խումբը գիտնական,
Շատ փառք ու պատուով տարին գերեզման,
Մինչ ութսուն պսակ մարդիկ զանազան,
Բերին շարեցին դագաղի չորս դին:

Ջիւան, ազգային հին առած է սա,
«Խաչին իւր տէրը գօրութիւն կուտայ»,
Մարդը մարդով է, ուր կուզէ գնայ,
Միայնակ մարդը շատ դեր չի խաղայ,
Մեծ Րաֆֆին այնքան փայլուն չէր դառնայ,
Թէ նորան չօգնէր Գրիգոր Արծրունին:

84

ՀՈԳԻ ՈՐՍԱՑՈՂՆԵՐ.

Մարդու և կնոջ մէջ որոմ ցանողը,
Երկնքից աքսորուած Բէլիարն է մոլոր,
Մարդ ունեցող կնոջ ճամբից հանողը,
Եւային հանդիպող օձն է թունաւոր։

Սուրբ գրոց խօսքերով ամեն այր ու կին
Ասուած է որ պիտի լինին մէկ մարմին,
Սրբացած միութեան մէջ մտնող անձին,
Ինձ հարցանեն, կախաղան է հարկաւոր։

Համայնք ցեց է մարդն անբարոյական,
Պէտք է ընտանիքից վանել դուրս նրան,
Գնդակով սպանել որպէս մի գազան,
Եւ դիակը անել մինչ հազար կտոր։

Ձիւանի, վատ հոգին վատ է լուր ցեղից,
Մաքրութիւն դուրս չի գալ անասնամեղից,
Այդպէս մարդը պիտի վերնայ մէջ տեղից,
Շատին կ՚վարակէ որպէս կեղտոտ բոր։

85

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

Ես մի համեստ կին տեսայ, ունէր հարիւր հազար փեսայ,
Այդ փեսաներու մէջը աղքատ, հարուստ, ամենը կայ,
Քիչ աւուր մէջ յղացաւ՝ ծնանելու ժամը մօտ էր,
Որքան որ փեսայ ունէր՝ այնքան ծնաւ աղջիկ տղայ։

Մանկաբարձը տղայոց ամեն մէկին բոլուլ շինեց,
Իսկ մկրտութեան համար պատրաստ է այնտեղ քահանայ.
Բայց ցաւալի բանն այն էր, որ երեխայք մունջ էին,
Անցնելով շատ տարիներ համր մնացին յարակայ։

Ամպ ու գիշեր ժամանակ շատ տրտում է խղճուկ կինը,
Անձրևը սաստիկ եղաւ նրան կատարեալ մահ կուտայ,
Իմ պահուստս դպրատան երեխայոց բերանն է միշտ,
Ասածս ճշմարիտ է, շատ պարզ բան է, երկինք վկայ*)։

86

Ժ Ա Մ Ե Ր.

Ա՜խ, ժամեր, ժամեր, թանգագին ժամեր,
Անցաք գնացիք ՚ի զուր, անօգուտ,

*) Լուսանկար։

Գնալով թողիք իմ սիրտս աւեր,
Ինձ այցելեցին օրեր ժանտաժուտ։

Ուղիղ է ասուած՝ մէկի ճրագը
Մինչեւ առաւօտ վառուած չի մնայ,
Կուզես ման արի ծովը, ցամաքը,
Մարդն այսպէս է եկել, այսպէս կ՚գնայ։

Տեսայ մի Հարուստ, անուանի մեծ տուն,
Կապրի երջանիկ ուրախ ու փարթամ.
Դեռ չանցած կէս դար, թշուառ երերուն
Ման դուգայ մոլոր, աղքատ, անդրամ։

Հապա մարդն ինչու չարութիւն կանէ,
Անցաւոր, խաբող սուտ փառքի Համար,
Քանի որ ինքը վաղանցուկ բան է,
Շուտ պիտի լինի Հողին Հաւասար։

Փոփոխական է ամեն առարկայ,
Աշխարհի մէջը բան չ՚կայ կայուն,
Ուզում ես եղիր անյաղթ մեծ Հսկայ,
Ապերախտ բաղդը քեզ կանէ նկուն։

Առաքինի վարք թէ ունենայ մարդ,
Խաբուսիկ փառքով նա չի շլանայ,
Գիտէ որ կանցնի, կ՚երթայ որպէս վարդ,
Տեղը յայտնի չէ եւ ինքը չ՚կայ։

Թանկագին ժամեր, դուք էլ սոյն տեսակ
Թռաք, Հեռացաք, կրկին չէք դառնալ,
Ուրիշի գլխին դրէք դուք պսակ,
Հիմայ էլ թող նա սկսէ խնդալ։

87

ՆՈՒԷՐ ԻՄ ՈՐԴՈՒՆ.

Պաղպաղակ ես, մանուկ, փարելի գառնուկ,
Իբր ոսկի կնդրուկ թանկ ես ինձ Համար.
Բաղդդ սուր է կտրուկ, տկարիս նեցուկ,
Ձայնդ մեղմ ու փափուկ, զերդ անոյշ քնար։

Իրանդ սպիտակ մարմար է խտակ,
Ունքերդ աղեղնակ, աչքերդ կրակ.
Ժիր աշխոյժ պատանեակ, անմեղ Հրեշտակ,
Ծառ ես նորաՀասակ կանանչ ու գալար։

Մանկիկ կայտառ, զուարթ, դու իմ կենաց զարդ,
Թշներէդ կարմիր վարդ թափում ես բարդ-բարդ.
Փայլուն երիտասարդ դու լինէիր արդ,
Քեզ տեսնէի մեծ մարդ, ապրէի երկար։

88

ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ.

Շատ քնեցար, սիրելի, լոյսը կտուրից անցկացաւ,
Մայրը մտաւ լուսինը, դէմի բլուրից անցկացաւ,
Քթոցը այսուՀետեւ էլ չի կարող պատսպարել,
Մի աՀագին այծ դառաւ ուլը մսուրից անցկացաւ։

Այրի անբուն խեղճ հաւի ձագերը մէկ մէկ որսալով,
Կեղծաւոր նենգ աղուէսը հաստատ ուրուրից անցկացաւ.
Դէպի ծովը հասնելու շտապով արագ վազելով,
Մայր Արաքսը խենդացաւ, ահռելի Կուրից անցկացաւ։

Լուսաւոր ժամանակ է, փոքրը մեծին չի հաւանում,
Տէր, Ջիւան, զարգացումով հարսը կեսուրից անցկացաւ։

89

ԱՆԳՈՒԹ ՍԻՐՈՒՆ.

Անգութ սիրուն, ես քու ձեռքդ տկար եմ,
Հարուածելով նորից տկար մի անիլ,
Ես ոչ բերդ եմ և ոչ ապառաժ քար եմ,
Ամէն անգամ գնդակահար մի անիլ։

Արի, սիրուն, ինձ հետ սիրուն կեանք վարէ,
Բայց այժմեան արարքդ շատ անյարմար է,
Քո մէկ տուած ցաւդ տանիլ դժուար է,
Իզուր տեղը ցաւս հազար մի անիլ։

Թոքերուս մէջ մտաւ լեզուիդ սլաքը,
Նսեմացաւ մտքիս փայլուն ճրագը,
Ցաւը կողոպտել է սրտիս քաղաքը,
Մնացածն էլ ինքդ աւար մի անիլ։

Ջիւանս քանի մի կտորածդ չինեմ,
Ցաւած զգացումով երգեր յօրինեմ,

Մէկ օր բարկանալով կ'փոխարինեմ,
Ինձ էլ քեզի նման յիմար մի անիլ։

90

Ն Ր Գ.

Դժնիկ փուշը վարդը խլեց սոխակից,
Տարաբաղդ սոխակը տխրեց, լուռ մնաց,
Չի կարող ազատուել, դուրս գալ վանդակից,
Խեղճ թռչունին ոչ ելք և ոչ դուռ մնաց։

Թշուառ սիրահարը ձեռքերը ծալում,
Տրտում, տխուր մահ է գալիս փողոցում
Լոյսը փակեցին ապակեայ ամրոցում,
Խղճալի թիթեռի վիզը ծուռ մնաց։

Ջիւանի, ցամաքեց գանձիս ծովակը,
Կորաւ յաջողութեան վճիտ առուակը,
Բաղդիս դուռը փակեց նեռ ժամանակը,
Փականքը կարծրացաւ, ամրակուռ մնաց։

91

ՊԱՏԻՒ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ.

Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն,
Եւրոպայի ձևով հալաւ ունեցիր.

Թէ կ'ցանկաս պատիւդ լաւ պահպանեն,
Շինծու դիպլոմ, շինծու համբաւ ունեցիր։

Ժողովրդի կամքը, բերանը շինէ,
Չի հասկանայ, նորա համար գիփ մին է,
Այն որ հիմայ հաստ ու բարակ մէկ գին է,
Անվնաս է, խելք էլ սակաւ ունեցիր։

Այնքան որ ունեցիր մի վկայական,
Կասեն, որ մտել ես դու համալսարան,
Վախենաս թէ՝ հազարներով քեզ չ'տան,
Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր։

92

ՊԱՐՏԷԶ.

Ա՜խ իմ պարտէզ պաղատու, վարդերդ թառամեցան,
Որմները, փշերը քեզ հետ բարեկամացան,
Սոխակները լռեցին երգելուց, կարկամեցան,
Ագռաւները տեղ գտան, բարձրացան, վսեմացան։

Քո հարազատ ծառերդ սնունդի, ջրի կարօտ,
Դու դարձել ես վայրենի անասունների արօտ,
Քո վատ արարմունքներդ քեզի պատմեն համառօտ,
Շուտափոյթ չ'բացուելով ծաղիկներդ յամեցան։

Նորաբողբոջ տունկերդ կտրատեցին, հանեցին,
Պահապանդ տեսուչդ երկրէ երկիր փոնեցին,

Գռեհիկները մէջդ դառը սերմեր ցանեցին,
Կանաչազարդ մարգերդ չորացան, նսեմացան։

Կարկուտը, ջրհեղեղը քեզ դարձուցին աւերակ,
Մի կենդանի չ'մնաց որ քեզ չառնէր ոտքի տակ.
Ամեն օր մուկ ու մօրեխ, երաշտութիւն, սով, կրակ,
Վիթխարի կաղնիներդ էլ, վայր ընկան, չ'դիմացան։

Թէև ունիս դու հիմայ մի քանի ծառ ու ծաղիկ,
Լաւ բուսաբանի կարօտ ապրում են ապերջանիկ,
Զիւանուս պատերիցը մնացած հին պարտիզնիկ,
Խելացի ջրպետներդ ծուլացան-տարտամեցան։

93

ԽՆԴՐՈՒԱԾՔ ԱՐԱՐՉԻՑ.

Ո՛վ Արարիչ, օգնէ ինձ, օգնէ, Տէր, օգնական չ'կայ,
Ուզում եմ աղօթք անել, սիրտս տխուր՝ բերան չկայ,
Դու ուժեղից ուժեղ ես, հզօրներից Հզօր, Տէր իմ,
Թագաւորաց Թագաւոր, մեծ Քեզանից իշխան չկայ։

Ես մի վարկեան չեմ կարող ապրել առանց Քեզ, Արարիչ,
Դու միայն ես կեանք տւող, սուրբ անաչառ Կառավարիչ.
Ով կոտրած սրտերը շինող Հոգի Մխիթարիչ,
Քո առատ ողորմութեանդ էլ չափ ու սահման չկայ։

Ես մի չնչին արարած՝ մեղքով շաղախուած, խղճալի,
Դիմում եմ Քեզ, ո՛վ Տէր իմ, առ խնդիրս արտասուալի,

Մի խնայիլ ինձանից, Հայր իմ, Հոգիդ-Սուրբ տենչալի,
Աշխարհը ջոկ ինձ համար ուրիշ ապաստարան չկայ։

94

ԱՅԾԵԱՄ.

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին,
Պտրտւում են քո խեղճ անձի վնասին,
Գամբռներով բարակներով միասին.
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձագիկներդ տխուր լալիս են, լալիս։

Որսկանը ճրագով քեզի մօտ կուգայ,
Կուզէ ձեռքերը քո արիւնով լուայ,
Խղճալի՛ քո տեղեակ սար ու ձոր կուլայ.
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձագիկներդ տխուր լալիս են, լալիս։

Որսկանը գութ չունի, կանէ կրակը,
Կամ քեզի կսպանէ, կամ քո գառակը,
Զուր չի անցնիլ հրացանի գնդակը.
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձակիկներդ տխուր լալիս են, լալիս։

Դաշտումը չես մնա գոր, թէ մտածես լաւ,
Քեզ կ՚վիրաւորեն, կ՚առնես մեծ ցաւ,
Դուրս մի՛ ելներ խիտ անտառից դու բնաւ.

Փախիր այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձագիկներդ տխուր լալիս են, լալիս։

Ձորերը մի մտնիր, վտանգաւոր է,
Որսկանը մօտ կուգայ՝ այնտեղ սովոր է,
Քարայրից խփելով քեզ կ՚գլորէ,
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Ձագիկներդ տխուր լալիս են, լալիս։

95

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ.

Յօժար եմ, ինչ որ կուզէ թող անէ իմ սիրականս,
Մարմինս սուր սուսերով թող կտրատէ աննմանս,
Ինձի սպաննելու կամք է ունեցել գովականս,
Գնալով կապաչեմ, վիզս ձգելով պատանս։

Դու միայն քո ծամերդ, սիրո՛ւն, արա ինձ կախաղան,
Ես կ՚քաշեմ, թագո՛ւհի, իմ ձեռքերով իմ պարանս,
Աչքիս արտասուքի նման աչքէս ելաւ աշխարհը,
Բայց Աստուած չէ կարող ոչ ոք լինիլ օգնականս։

Չի իմանալ եթէ մտնիմ մրջիւնի աչքումը ես,
Այնքան որ բարկացել, նիհարացել է իրանս,
Ես գինետան անկիւնը չեմ փոխել աշխարհի հետ,
Ծլատի շինծու դրախտից լաւ է իմ կեցարանս։

96

Ա Ր Ո Ւ Ս Ե Ա Կ

Ա՜խ, իմ քաղցրախօս Արուսեակ,
Խօսալդ է թութակի նման,
Սեւ ունքերդ բաց համարձակ,
Երկնից աղեղնակի նման։

Լուսնիակի նման նորող,
Սիրուններուն թագաւորող,
Խաւար միտքս լուսաւորող
Ես դու արեգակի նման։

Ծոցդ է հոտով բուրաստան,
Այտերդ որպէս պալատան,
Աշխարհիս մէջ, ո՛վ սիրական,
Թանկագին ես ակի նման,

97

ՍԵՒԻԿ ԱՉԵՐ.

Վրդովեցիր խաղաղ կեանքս սիրա՛կան,
Անցուդարձիդ ինձ նայելով մշտական,
Չէր տեսել մէկ հոգեհան քեզ նման.

Սեւիկ-մեւիկ աչեր, դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս, ստէպ-ստէպ աշեցիր։

Ի՞նչպէս մնամ ես առանց քեզ միայնակ,
Դուն ձգել ես սրտիս մէջը վառ կրակ,
Ակնարկելով գաղտնի ամեն ժամանակ.
Սեւիկ-մեւիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս, ստէպ-ստէպ աշեցիր։

Անուշ անուշ խօսելովդ, սիրուն կոյս,
Մաշուած սրտիս նորից տուիր կեանք եւ յոյս.
Առանց գինու արբեցուցիր խղճալոյս.
Սեւիկ-մեւիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ-ստէպ աշեցիր։

Սիրոյդ սուր սուր նետերովը խոցուեցայ,
Իբրեւ ծաղիկ դեռ չբացուած գոցուեցայ,
Երբ քեզ տեսայ կրակովդ լցուեցայ,
Սեւիկ-մեւիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ-ստէպ աշեցիր։

Սիրոյդ լարը պարանոցէս տուիր կախ,
Օր ու արեւ չունիմ, գործս է ա՜խ ու վա՜խ,
Կրկին խօսէ, գոնէ լինիմ ես ուրախ.
Սեւիկ-մեւիկ աչեր դու իմ կեանքս մաշեցիր,
Կանգնար դէմս ստէպ-ստէպ աշեցիր։

98

Մ Ո Ւ Խ Է Ն Մ Է Ջ.

Այս բոլոր աշխարհի միջին չ'կայ քեզ յարմար, սիրելի,
Աչքերդ ղամբար, սիրելի,
Յօնքերդ կամար, սիրելի,
Բերանդ շաքար, սիրելի,
Լեզուդ մխիթար, սիրելի,
Իմաստուն ես և խելամուտ, ամենաճարտար, սիրելի։

Շուշանի պէս շատ գեղեցիկ զարդարուելուդ դարձայ ապուշ,
Պռունկներդ մեղրից անուշ,
Այտերդ կարմիր ու քնքուշ,
Տուտ շուտ արի ոչ թէ ուշ-ուշ
Քաղցրութիւնդ է յատուկ նուշ,
Ինձ վառվռուն աչերովդ արիր սիրահար, սիրելի։

Խորհուրդդ ամէն մէկի մօտ մի բանար, ասեմ, սիրական,
Մի գնար այլոց օթևան,
Խօսքիր մի լսեր զանազան,
Սանձ դիր լեզուիդ, մի բաց բերան,
Լաւ անունը չունի փոխճան,
Աշխատիր որ քեզի չասեն ադէտ, անկատար, սիրելի։

Էր քո նման մէկ գեղեցիկ, բայց չ'պահեց իւր անունը,
Քանդեց իւր ձեռով իւր տունը,
Զմռայ փոխարկուեց գարունը,

Դեռ չ'լրացած արբունը,
Կորուեց աչքերի քունը,
Կրակապաշտ թիթեռի պէս եղաւ շանթահար, սիրելի,

Նորա անունը լսեցիր, հիմայ քեզ լաւ պահիր, աղջիկ,
Որ մնաս դու միշտ գեղեցիկ,
Լինիս թանկագին մեղեսիկ,
Մի լինիր անդէտ ու ռամիկ,
Լեր ինչպէս պալասան ծաղիկ,
Ջիւանույս լսես, կ'մնաս դու մշտադալար, սիրելի։

99

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ.

Անգործ, պարապ, ման եկողը
Անմիտ խելագար չէ՝ ինչ է,
Միշտ մոլութեան հետևողը,
Բնութեամբ տկար չէ՝ ինչ է։

Օրէնքներէն պատառուածը,
Իրան խօսքով յամառուածը,
Անօթևան թափառուածը,
Բուին հաւասար չէ՝ ինչ է։

Գլխին առնողը մութ քողը,
Չ'տեսնող բարեբեր ցողը,
Անկիրթ անուսում մեծցողը
Անտաշ կոպիտ քար չէ՝ ինչ է։

Իրան արդար մարդ դասողը,
Աստիճանի սպասողը,
Իսկ ճշմարտին սուտ ասողը .
Միշտ հոգւոյ խաւար չէ՝ ի՞նչ է։

Բնական բարքից ելնողը,
Սրբազան վարքից ելնողը,
Մարդկութեան շարքից ելնողը
Անասուն յիմար չէ՝ ի՞նչ է։

Չ՚պահող իւր բերնի սանձը,
Ծուռ մտքով նայող կանանցը,
Միշտ պղծութիւն սիրող անձը
Գազանից վատթար չէ՝ ի՞նչ է։

Կենդանութեան կաթն ու կոգին
Թողած՝ սիրէ աննիւթ շոգին,
Պատուիրանազանցի հոգին
Բելիարին աւար չէ՝ ի՞նչ է։

Անունը թանկ չունեցողին,
Բարութեան ջանք չունեցողին,
Երջանիկ կեանք չունեցողին
Աշխարհը օտար չէ՝ ի՞նչ է։

Գործը շատ ցրիւ է թոյլին,
Հաստագլուխ մտքով գոյլին,
Տեղիցը չ՚շարժուող ծոյլին
Դիւրինը դժուար չէ՝ ի՞նչ է։

Ո՞ւմ տայ իւր ընծայ նուէրը,
Ո՞ւմով աւելանայ սէրը,
Անզաւակ դրամատէրը
Իսկ անմխիթար չէ՝ ի՞նչ է։

Չի՛ սիրուիր թառամած վարդը,
Քամուն ճաշակ կ՚լինի յարդը,
Փթած ծառի նման մարդը
Կրակի պաշար չէ՝ ի՞նչ է։

Սառել է սրտի եռանդը,
Չունի ողջութեան աւանդը,
Անբժշկելի հիւանդը
Մեռնելուն յօժար չէ՝ ի՞նչ է։

Յուսահատն է արմատախիլ,
Նորա բոյսը չունի՛ նոր ծիլ,
Անյուսալի բանը գտնիլ
Բերելը անկար չէ՝ ի՞նչ է։

Բարկացող յուսահատներուն,
Վէրքերը անփարատներուն,
Երկմիտ թերահաւատներուն
Խելքերն անկատար չէ՝ ի՞նչ է։

Չունեցող վարժապետ ազգը,
Սէր չունի իրա հետ ազգը,
Անօգնական անպետ ազգը
Անհովիւ ոչխար չէ՝ ի՞նչ է։

Ջիւանի, հանճար չ'գիտցող,
Ապրելու հնար չ'գիտցող,
Պանդուխտ, ճանապարհ չ'գիտցող
Զինուորը շուար չէ՞ ինչ է։

100

Մ Ե Ր Ն Ե Ր Կ Ա Ն.

Այս ինչ դարի հասանք, ինչ օրեր գտանք,
Ամենեւին հաւատարմութիւն չ'կայ,
Ի՞նչ օրեր կորուսինք, ինչ կեանք ստացանք,
Հազարից մէկի մէջ լաւ արիւն չ'կայ։

Ասում են՝ թէ լուսաւոր է այս դարը,
Լաւութեան փոխարէն կ'երթանք վատթարը.
Կարծես՝ թէ ծռուել է ամբողջ աշխարհը,
Իսկ ուղիղ մնացած մէկ անկիւն չ'կայ։

Պարզակրօն կ'ասուինք վերին Բաբունով,
Ափսոս, խառնուած ենք այլ և այլ գունով,
Մէկ տուն ունինք ճշմարտութիւն անունով՝
Նրա մէջն էլ անծուռ հաստատ սիւն չ'կայ։

Պէտք է միշտ ճշմարիտ մտքով վերանաս,
Աշխատիր ուղղութեամբ մինչև ծերանաս,
Ջիւան, լաւ հասկացիր, չ'ընկերանաս
Խաբեբայ խմբերից քեզ արդիւն չ'կայ։

101

Դ Օ Շ Մ Ա Ց.

Այլոց տունը քեզ օթեւան չի լինի,
Աշխատի՛ր՝ քեզ համար օթեւան ճարէ,
Օտարը շատ ունի հաց, անուշ գինի,
Քեզ ինչ օգուտ, որ քո բանը դժուար է։

Մոլիներու կեանքին աչք մի ունենայ,
Նրանց ճիգ ու ջանքին աչք մի ունենայ,
Այլոց աշխատանքին աչք մի ունենայ,
Ճակատիդ քրտինքով քեզ կառավարէ։

Ուսում սովրի՛ր, անվարժապետ մի մնար,
Գործի գործով բռնուած գետ մի մնար,
Միշտ աշխատիր՝ ընկերից յետ մի մնար,
Այլոց նման դու ևս բան հնարէ։

Ջիւա՛ն, անուսումին յիմար կ'անուանեն,
Անօգուտ մարդ, խելքից տկար կ'անուանեն,
Ապրուստ չ'ճարողին խաւար կ'անուանեն,
Ասելով՝ այս դարը լուսաւոր դար է։

102

Դ Օ Շ Մ Ա Ց.

Աննման ծնունդ ես, ազնիւ գեղեցիկ,
Հայրդ ընտիր, մայրդ ընտիր, դու ընտիր,

Մէկ ձեռքումդ գինի, միւսդ վարդ ծաղիկ,
Վարդը կարմիր՝ գինին կարմիր, դու կարմիր։

Տիկինդ լիաձիր, քաղցրախօս թուլթակ,
Ամէն բարի գործերի մէջ ընդունակ.
Երգում ես միասին, համեղ ներդաշնակ,
Այրդ դպիր, որդիդ դպիր, դու դպիր։

Նմանդ չի՛ ճարուի ամենայն մի տեղ,
Բարձր է գիտութիւնդ, անունդ շքեղ.
Վէրքը բուժէ Ջիւանիս, արա դեղ,
Ազգդ դեղդիր, ցեղդ դեղդիր, դու դեղդիր,

103

ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԸ.

Աշխարհն ինչ կայ շատ, միշտ ու չարչարանք,
Ջուր կ'լցնէ կեանքի վառած կրակին,
Կ'կրէ հազար կերպ դառն հալածանք,
Մինչ որ մարդ կ'հասնի իւր նպատակին։

Ի՞նչու մարդու կեանքը չ'լինէր ազատ,
Որ մտածէր խորհէր բարւոյն համեմատ,
Աշխարհի խոչնդոտ ճանապարհը վատ
Համ չի տար մտաւոր սայլի անուակին։

Ջիւանի, մի քիչ մտածես խորը,
Դեռ այնքան յառաջ չէ գնացել նորը,

Որովհետեւ՝ ամպեր ունի բոլորը,
Լոյսը կ'խաբանուի պարզ արեգակին։

104

ՔԻԻՆԻԱԹ ԴԻԻԱՆԻ.

Աշխատի՛ր, կեանքիս հատոր, աշխարհի մէջ պայծառ լինիս,
Պայծառ արփի, արփի արեւ, արեւի պէս վառ լինիս,
Սրբութեան, պարկեշտութեան կեանքին հետեւի՛ր, պատուելի,
Պատուելի մարդ, մարդ կատակեալ, կատարեալ ու գառ լինիս։

Աստուծոյ տուած բանը-պատուէրները պինդ պահպանէ.
Պահպանէ միշտ, միշտ դու կանաչ, կանաչ ու թարմ ծառ լինիս,
Ով սիրելի՛, կարդայ բարի խղճով գրուած գրքերը,
Գրքերը սուրբ՝ սուրբ դու սրտով՝ սրտով անաչառ լինիս։

Մաքուր ձեւէ, չափէ, եղի՛ր բանիմաց, զգայուն,
Զգայուն սիրտ, սիրտ բարութեան, բարութեան պատճառ լինիս
Ուղղութեան ճանապարհը բռնէ հետեւի՛ր, ո՛վ Ջիւան,
Ո՛վ Ջիւան դու, դու պատկերով, պատկերով կայտառ լինիս։

105

ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻ.

Ամէն մարդ մի բանով մխիթարւում է,
Պանդուխտ, անմխիթար մենակ ես եմ, ես.

Ամեն երգիչ՝ բանիմ սիրահարուում է,
Առանց վարդի երգող սոխակ ես եմ, ես։

Զունիմ մէկ սիրուհի ինձի մեծարող,
Միայնակ, խղճալի ես եմ շուարող.
Ո՛չ փիւնիկը, ո՛չ թիթեռը չէ կարող,
Միշտ այրըուող առանց կրակ ես եմ, ես։

Ջիւանին եմ, շատերն ինձի ատում են,
Շատերն էլ գիտնական անձ հաստատում են,
Շատերն էլ Մուսային համեմատում են,
Անխօս երգիչ, անլար ջութակ ես եմ, ես։

106

Գ Ա Ս Ի Թ Ա Ն.

Առակախօս նախնի հեղինակները
Ինչ ասել են՝ իրաւ արդար են ասել,
Քննելով մարդկանց նպատակները՝
Որին խելօք, որին յիմար են ասել։

Ճշմարտութիւնը միշտ յառաջ են տարել,
Ստութիւնով երբէք բան չեն հնարել.
Իմաստունին արեգակ են համարել,
Բայց տգէտին անլոյս խաւար են ասել։

Միշտ հայեցող եղել են բոլորներուն,
Օրէնք ուսուցել են թագաւորներուն,

Գուշակել են այժմեան լուսաւորներուն,
Կատարեալ խելահաս ճարտար են ասել։

Լաւը վատից որոշելով՝ զատել են,
Հասուն մտքով ամենայն բան դատել են.
Բարկացողին, յուսահատին ատել են,
Խոհեմ մարդու կեանքը երկար են ասել։

Որոնել են գործի հիմը հաստատը,
Ընդունել են սէրը, յոյսը, հաւատը,
Ճանաչել են բարոյական խրատը,
Քաղցրութեանը մեղր ու շաքար են ասել։

Պահել են բարեպաշտ մարդկանց պատիւը,
Սիրել են բնութեամբ բարին, ազնիւը,
Անարգել են պատերազմը, կռիւը,
Թագաւորաց խաղաղ դադար են ասել։

Լաւ զննել են ամեն բանը մաքուր, ճիշդ,
Չեն ուզեցել երբէք մի մարդ տանի վիշտ,
Զարութիւնը, նախանձը հերքել են միշտ,
Բարի գործը հոգւոյ պաշար են ասել։

Շատ սիրել են առաքինի եղողին,
Չեն ըմպել չափազանց կաթիլն խաղողին,
Շնացողին, ստախօսին և գողին,
Մարդասպանին, անխիղճ վաթար են ասել։

Մարգարիտը խոզերուն չեն արկանել,
Ուղղութիւնը միշտ բարձր են պահպանել,

Խաբեբային երբէք մարդ չեն անուանել,
Խաբուողին էլ անմիտ, տխմար են ասել։

Ամեն մարդու գովել են ըստ արժանին
Հետևելով քաղաքական պայմանին.
Շուտով գրաւողին, դիւրահաւանին
Մարդահաճոյ խելքից տկար են ասել։

Խոնարհելով Տիրոջ հրամաններուն՝
Հետևել են նորա պատուիրաններուն,
Բարի խղճով գրուած սուրբ մատեաններուն
Զքնաղ շքեղապանծ քանքար են ասել։

Մինչ ընական գիտութեանը հասել են,
Անքննելին գերընական դասել են,
Ինչ որ խրատել են, ինչ որ ասել են՝
Մարդկային ընութեան յարմար են ասել։

Անզգամ են կարծեր անխիղճ մեղելոց,
Բայց օգնել են խեղճ աղքատաց, նեղելոց,
Մաքուր սրտի առաքինի եղելոց
Ընտիր Աստուածային տաճար են ասել։

Հաւանել են հոգւով գեղեցիկներուն,
Գովել են հոգեզգօն երգեցիկներուն,
Հաստագլուխ ցանցառ ռամիկներուն
Մարդկութիւնից հեռու օտար են ասել։

Ստացական խելքը կարծել են օժիտ,
Բնականը համարել են մարգարիտ,

Ջանասէր գործունեայ մարդուն ճշմարիտ,
Վստահ խելօք գործակատար են ասել։

Միշտ եղել են նրանք ցաւեր փարատող,
Աշխարհային կարգ կանոնը հաստատող.
Վատ դէպքերէ, վտանգներէ ազատող
Համբերանքը կեանքի ասպար են ասել։

Այն օրուանից երբ մտել են օրօրոց,
Ճանաչել են համալսարան և դպրոց,
Անմահ Հեղինակին ողջ արարածոց
Ամենաիմաստուն հանճար են ասել։

Լոկ մարմինը կ'գերէ գերեզմանը,
Հոգին անմահ է, չէ գրած վախճանը,
Բարի յիշատակին բարի անուանը,
Տևողութիւնը բիւր հազար են ասել։

Ջիւան, նրանց խօսքերըն է բարի ծէս,
Ոչ թէ կատակերգութիւն է կամ կրկէս,
Պարսաւել են թէ գովել են վերջապէս
Ինչ ասել են մեզի համար են ասել։

107

ԱՌ ՍԻՐԵԼԻՆ

Արի, սիրակա՛ն, ինձ կառավարէ,
Կեանքս՝ սիրելիս, քեզի համար է,

Սիրտս վիրաւոր, անդեղ ու ճար է,
Հասի՛ր, գո՛վական, ինձ մխիթարէ։

Գթա՛, սիրա՛կան, ինձ սիրահարիս,
Լե՛ր մխիթարիչ անմխիթարիս,
Օգնեա՛, գո՛նէ, պանդուխտ ջրատարիս,
Վաղուց արևս, գիտցի՛ր, խաւար է։

Ե՛կ, եկ, սիրուհի՛, իմ անուշիկս,
Իմ աննմանս, իմ աղունիկս,
Հաստատ իմացի՛ր, ո՛վ գեղեցիկս,
Ջոկ սէր ունենալ ինձ անհնար է։

Ես մնացի տխուր, հոգեհատոր,
Խղճա՛, գոնէ յոյս տո՛ւր, հոգեհատոր,
Ինձ մորթել ես անսո՛ւր, հոգեհատոր,
Միթէ, գեղանի՛, սիրտդ յօժա՛ր է։

Ո՞ր աշխահից որ աշխարհն ընկայ,
Սիրոյդ ձեռիցը, ո՛չ թէ ակամայ,
Պանդուխտ, օտար եմ երկրի վերայ,
Խեղճ եմ Ջիւանս, կեանքս աւար է։

108

ԱՆՑԱԾ ՕՐԵՐ.

Աւա՜ղ ձեզ, իմ անցած օրեր,
Չ'գիտնալով ուր կորուսի,

Արի՛ք, տեսնեմ, ու՛ր էք կորեր,
Ձեզանով շատ լաւ կորուսի։

Ցաւս որի՞ն ասեմ, կամ ո՞ւմ,
Որ այժմայս եմ ես անուսում,
Մէկ օր ուրախ հինգ օր տրտում,
Ողջ կեանքս տխուր կորուսի։

Ցաւերս անթիւ նման դէզի,
Արմատացեալ մէջ սրտէզի,
Իմ մանկութեան օրեր, ձեզի,
Ո՜հ, չեմ գիտէր, ու՛ր կորուսի։

Բոլոր սրտով հայցեմ 'ի քէն,
Խնայէ Ջիւանույս որդէն,
Կորած օրերուս փոխարէն
Տէր իմ, խնդրեմ, տո՛ւր, կորուսի։

109

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՒ.

Արդարութեան Արև, արդարութեան Լո՛յս,
Շնորհաց Հեղինա՛կ, ո՛վ անմահ Փրկիչ,
Միշտ Քո ընտրեալներուն կուտաս խրախոյս,
Կնդանի Բարեխօս և մեղաց Քաւիչ։

Պատմութիւնդ ճշմարիտ է, ո՛չ թէ վէպ.
Չկայ Քո խօսքերուդ նման և հանդէպ,

Ամենայն մի կերպով ուղիղ անվրէպ,
Ազբիւր բարեաց, ճշմարտութեան Ուսուցիչ։

Խղճուկ Սերովբէն եմ, մականուամբ Ջիւան,
Հոգիս սէրդ չի մոռանայ յաւիտեան.
Ոչ ծնել է ոչ կ'ծնի Քեզ նման,
Աստուածեղէն ծնունդ ինքդ Արարիչ,

ՃԺ

Դ Ի Ի Ա Ն Ի

Ամենասաստիկ ցաւերը ինձ վերայ խնդիր տուին,
Տխրութեանը թագաւորին ողջը ձեռագիր տուին,
Խումբերով բողոք բացին՝ գնալ դէպի իրաւարան,
Փաստաբան, տրամեցուցիչ կարգացողը դպիր տուին։

Ինձ վերայ մեղքեր գտան երբ՝ ցաւոց իշխանները,
Ամենը վրայ կրկնելով, գլխիս հող ու մոխիր տուին,
Լսելով իմ կողմնապահ ուրախակից... եղբայրներս՝
Խաբեբայ ցաւալեաի խորհուրդը 'ի նանիր տուին,

Կանգնելով տէր Ջիւանուս ուրախութեան դիւցազները,
Վերջն ազատութեան վճիռս արդար ու ընտիր տուին։

ՃԺԱ

ԲԱՂԴԻ ՇՐՋԱՆԸ.

Ականիւ բարեկամ, անուենդ ակ չի մնար այդպէս,
Մէկ օր կ'պատահի հակառակ, չի մնար այդպէս,
Միշտ օրը ցերեկ, խաւարը փակ չի մնար այդպէս,
Յանկարծ բաղդի մութը կ'գայ, արեգակ չի մնար այդպէս,
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

Շատին քեզի պէս բարձրացուցել, խաբել է բաղդը,
Քանի քանիսին վառ կրակով լափ'ել է բաղդը,
Որչափ քաջերու խելքերը միշտ չափել է բաղդը,
Նախ երկինք է հաներ, յետոյ վար թափել է բաղդը,
Բաղդին մի յուսար միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

Ո՞ւր է Ադամը և Նոյը, ո՞ւր է Մաթուսաղան,
Ո՞ւր է Սողոմոն մեծն իմաստուն, Դաւիթ իշխան,
Ողջին մահը վաղճան տուել տարել է գերեզման,
Քեզ էլ պիտի մէկ օր մահը հասնի ու տայ վաղճան,
Բաղդին մի յուսար միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

Ջարթիր քնիցդ չորս բոլորդ նկատէ, ո՛վ մարդ,
Խիղճդ դադարեցուր, ցաւդ փարատէ, ո՛վ մարդ,
Մինչ կենդանի ես, քեզ դժոխից ազատէ, ո՛վ մարդ,

Աշխարհն, իմացիր, թերի է, անհաստատ է, ով մարդ,
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

Ճշմարտութիւնը միշտ յարաժամ յառաջ է, յետ չէ,
Նրան հետեւիր, ով բարեկամ, նա չար աղէտ չէ,
Հաստատ ամենեւին մի թագաւոր՝ գահապետ չէ,
Բաղդը ապերախտ է, որովհետեւ յարահետ չէ։
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

Ո՞ւր տեղ է Աղէքսանդրի նման աշխարհակալը,
Ո՞ւր տեղ է Դարեհ քաջ Սասանեան աշխարհակալը,
Ո՞ւր է Արտաշէս Արշկունեան աշխարհակալը,
Անբաղդ է մեռել, դիտցի՛, Ջիւա՛ն, աշխարհակալը,
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,
Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս։

ՃԺԲ

Հ Ո Վ Ի Կ.

Առաւօտեան քաղցր հովի՛կ,
Գնա դէպ երկիրն Ջաւախ,
Ունիմ մէկ ծերունի մայրիկ,
Գնա, տես, 'ի գիւղն Կարծախ։

Այնտեղ է ազգս, երամս,
Բոյր ու եղբայր, բարեկամս.

Այնտեղ մեռած պապ ու մամս,
Գերեզմանք մատծ են փող։

Ինձանից շատ բարեւ տուր,
Երբ դու մօրս լինիս ներկայ.
Գնա յատկապէս Կիլերթայ,
Որ է մեր գիւղի մէջ մէկ թաղ։

Այն թաղի մէջն է մեր տունը,
Քերովբ է եղբօրս անունը.
Ինձ համար կարել է քունը,
Մայրս տրտում ու անծխծաղ։

Հովի՛կ, Ջիւանույս լուր տար,
Թէ հարցանեն ինձի համար՝
Ասա թէ միշտ ձեւլին քնար,
Ազգի համար կանչում է խաղ։

ՃԺԳ

ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ.

Հ ա ր ց

Այն ով էր որ թողեց Երկնային Գահը,
Աշխարհն իջանելով դարձաւ մեզ նման։
Դարձեալ ով հասկացուց մարդկային շահը,
Եւ կեանքը իմացուց յաւիտենական։

Պ ա տ ա ս խ ա ն

Քրիստոսն էր թողեց Երկնային Գահը,
Կոյսէն ծնանելով դարձաւ մեզ նման,
Հոգին-Սուրբ իմացուց մարդկային շահը
Եւ Հասկացուց կեանքը յաւիտենական։

Հ ա ր ց

Աստուած ո՞ւմ ստեղծեց նախ, տուեց բարև,
Ուրտե՞ց յառաջ եկաւ այն ազգը պարթև,
Ի՞նչ տեղ է մէկ անգամ դիպել է արև,
Խնդրեմ այս խօսքերիս շուտ տաս պատասխան։

Պ ա տ ա ս խ ա ն

Նախ Ադա՛մն ստեղծեց ու տուեց բարև,
Քեթերից սերուեցաւ այն ազգը պարթև,
Կարմիր ծովն էր դիպաւ մէկ անգամ արև,
Ահա՛ քո խօսքերիդ ընտիր պատասխան։

Հ ա ր ց

Ի՞նչն է, որ չի լինի ճշտութեամբ հաշիւ,
Ո՞վ է, չի ճանաչեր անարգանք, պատիւ,
Ումնե՞ց մեզի մնաց Հայ անունն ազնիւ,
Ինչո՞վ մեր երկիրը կասուէր Հայաստան։

Պ ա տ ա ս խ ա ն

Երկնից աստղե՛րն են անհամար անթիւ,
Մէկ է անզգամին անարգանք, պատիւ,
Հայկի՛ց մեզ է հասել Հայ անուն ազնիւ,
Նորանով մեր երկիրը կասուէր Հայաստան։

114

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ.

Բարոյական ճանապարհից շեղուողին,
Զրկող, տուն աւերող սրիկայ տեսայ,
Քննեցի իւր խղճիցը նեղուողին,
Պատժի ու վնասի ենթակայ տեսայ։

Նկատեցի անպարկեշտը անխրաւ,
Խեղճ անձը ցափութեան արել է գրաւ,
Ով որ իզուր տեղը շատ երդում կերաւ,
Ստախօս, անազնիւ, խաբեբայ տեսայ։

Ուշք դարձուցի անզգամի պատկերին,
Ո՛չ իրան համար է և ոչ ընկերին.
Օրերը անօգուտ անցուցած ծերին,
Նկատելով խելքին, երեխայ տեսայ։

Խենէշ ու պորտաբոյծ երիտասարդը
Զոյգ ոտքով ընկել է մահուան թակարդը.
Ցեռնունայն անարհեստ խղճալի մարդը,
Հարուստներու դուռը միշտ ծառայ տեսայ։

Մէկը ելաւ կեղծ մուրհակներ հնարեց,
Իւր դրացու դէմը որոգայթ լարեց,
Ով որ իրան իրաւախոհ համարեց,
Ցանցաւորին պաշտպան՝ սուտ վկայ տեսայ։

Ով իրան հռչակեց հասկացող արթուն,
Թմրած գտայ նրան ոչ թէ զուարթուն,
Այլոց ձրի եղիք քարոզող մարդուն,
Ժլատ ու անողորմ հրէայ տեսայ։

Բաղդաւոր չի լինի ամեն երեխայ,
Ունենալ լաւ ծնող բարի ապագայ,
Լաւ կրթութիւն չառնողներուն համարեայ,
Մեծ մասը անպատկառ անզգայ տեսայ,

Ի՞նչ օգուտ ունենալ վիթխարի մարմին,
Հոգին պստիկ լինի, գործերը չնչին.
Մոլի ուժեղ երիտասարդ կտրիճին,
Բանդը պարկած՝ ոտքերում շղթայ տեսայ։

Երկինքը ամպամած արեւը խաւար,
Մշուշով պատած էր բլուր դաշտ ու սար,
Գայլի ահից հօտը ընկած սար ու քար,
Բայց հովիւը քնած բացակայ տեսայ։

Իզուր կ'փչանայ ազէտի ձիրքը,
Հոգւոյ վերայ տիրանալով չար կիրքը,
Խաժամուժ ամբոխի կարդալով գիրքը,
Անկապ առանց մտքի խօրաթայ տեսայ։

Շռայլները իրանց անձը մատնել են,
Իզուր տեղը քսակները հատնել են,
Խելառները ինչ աշխատել վատնել են,
Խելացիներու մօտ մամոնայ տեսայ։

Յուսամոլ նմանող անձն է շատ ճկուն,
Ինչ տեսաւ կ'յարի, կարծելով սիրուն,
Հագուստով ու ձեւով մեր Եւրոպացուն
Զարգացումով միջին-Ասիայ տեսայ։

Դառն վիշտ է ճախարակի արածը,
Մանողի վերայ է խօսում մանածը,
Սկզբէն մինչ այսօր չ'տեսնուածը,
Իմ անըմպզութիւնես հիմայ տեսայ։

Բաղդը կարճատես է թէ քննես մօտիկ,
Կաղ մարդուն կընծայէ սիգաճեմ աղջիկ,
Արժանաւորը՝ խեղճ, միշտ ապերջանիկ,
Անարժանը հարուստ Ամիրայ տեսայ,

Մարդ կայ ծառայում է օտարի շահին,
Քամիով իւր անձը տալիս է մահին,
Մաքրութիւն պահանջող առողջապահին
Ամիսներով աղտոտ անլուայ տեսայ։

Ջիւան բարութիւնը կը յաղթէ չարին,
Ինչպէս լոյսը հակառակ է խաւարին,
Նա էր տարել յաղթանակը աշխարհին,
Ում որ արիասիրտ գործունեայ տեսայ։

ՃԺԵ

ԼՐԱԳԻՐ.

Ինչ ազգ չունի իրան համար լրագի՛ր,
Ոչ թէ մեծ մարդ՝ չի ունենար մէկ գգիր,
Անլրագիր ազգն է քնած մշտական,
Մ՛ինչ կոկորդն է հասել փոշին հնութեան,
Որովհետև նա չի լսել ոչ մի բան,
Խելքը թմրած մնացել է երկնաձիր։

Լրագիրն է մի ազգի պայծառութիւն,
Նա չի սիրեր երբէք անափառութիւն,
Հեռատես է և ունի հոտառութիւն,
Տալու կ՚հասնի ուրտեղ կայ թշուառութիւն.
Ամենևին չի գիտէր աչառութիւն,
Նա վատերին կ՚հարուածէ անխտիր։

Ով ուզում է ծանօթանալ աշխարհին,
Թող լրագիր կարդայ ուշով սրտագին,
Հաւատի եմ, որ կունենայ մեծ բաժին
Յօգուածներից թէ ներքին թէ արտաքին,
Հաւատացէք կ՚զարգանայ գլխովին,
Թէ կարդալը նորան լինի պարտադիր։

Լրագիրը հայելին է մարդկութեան,
Կարդացողը այնտեղ կ՚տեսնի իրան,
Ամեն ազգի պատկերը կայ ճիշտ նման,

Իրա ցեղի յատկութիւնով իսկական.
Ժողովուրդը թէ չ՚հասնի օգնութեան,
Խմբագրին վաստակելն է ՚ի նանիր։

Լրագրին հարկաւոր է մեծ գումար,
Իւր ունեցած ծախսը ծածկելու համար,
Բաժանորդներ քչից երեք հազար
Պէտք է նրան, որ գործ չինէ օգտակար.
Զիւան, անփող նա կ՚մնայ ապիկար,
Գովք, համարում չի ունենար լիալիր։

ՃԺԶ

ԻՄ ԽՆԴՐՈՒԱԾԸ.

Խնդրում եմ, Տէր Աստուած, իմ դատաստանս
Անամօթ, անպիտան մարդուն մի՛ յանձներ.
Դու քանդէ իմ տունս, իմ կեցարանս,
Մարդատեաց դաւաճան մարդուն մի յանձներ։

Հոգիս առ, թող լինիմ հողին հաւասար,
Խաղալիք մի՛ անել մարդոցը յիմար,
Արատաւոր, անխիղճ, աներկիւղ, խաւար,
Անլոյս կիսակենդան մարդուն մի յանձներ։

Ով արքայից Արքայ, Տէր Կառավարիչ,
Անմխիթար սրտիս լեր մխիթարիչ,
Պահէ անմեղ գառդ, Անմա՛հ Արարիչ,
Անհոգի, չար գազան մարդուն մի՛ յանձներ։

Նախանձում են խեղճ Զիւանուս համբաւին,
Տէր, տուր կարողութիւն, դիմանամ ցաւին,
Ծովումն ալեկոծեալ գժբաղդ իմ նաւին
Ղեկը անպարտաւան մարդուն մի յանձներ։

117

ԶՐՊԱՐՏԻՉԸ.

Անդադար վատ վատ լուրեր հնարում է զրպարտիչը,
Մշտական շատացնելով տարածում է լսած քիչը,
Լաւ բանի համար ամենևին չի շարժուիլ տեղիցը,
Երբ լսեց մի վատութիւն ձեռք կառնէ աղտոտ գրիչը։

Քանի որ օգուտ չունինք, մնասներուն ինչ ենք տալիք,
Վերցնէ թող մեր միջից այդպէսները Տէր Փրկիչը,
Ժողովուրդը քաջ գիտէ լաւն ու վատը, չարն ու բարին,
Յուդայի դասն է դասում նա նենգաւոր գէշ մատնիչը։

Ծառի պէս մեր որդերը մեր միջից են, ում ինչ ասենք,
Մեր տանից է դուրս եկել մեր կեանքի ցեցը-կերիչը,
Այդպիսաց խրատ տալը քահանայից պարտքն է յատուկ,
Ի՞նչ կարող է բան շինել Զիւանու պէս խեղճ երգիչը։

118

ՊԱՏԱՀՄՈՒՆՔ.

Արջն անտառից խռով է,
Անտառի համար ոչինչ,

Ովչ աշխարհը փնովէ,
Ցանցառի համար ոչինչ։

Խելացին լաւ կ'մնայ,
Բայց յիմարին չափ չ'կայ,
Էշը անպայտ ման կուգայ,
Պայտառի համար ոչինչ։

Այնպէս մարդ կայ ասածը
Չի հասկանար խօսածը,
Վատ օր տեսած-լսածը,
Թշուառի համար ոչինչ։

Մարդիկ կան որ գիրանան
Կ'ցնդին եզի նման,
Իրանց գլխին հող կուտան,
Խելարի համար ոչինչ։

119

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ.

Անհարազատ ընկերից հաւատարիմ շունն է լաւ,
Խռովայոյզ պալատից – խաղաղ գեղջուկ տունն է լաւ.
Սողոմոն իմաստունը գիտենալով է ասել,
«Հազարաւոր գանձերից մէկ բարի անունն է լաւ։»

Նենգաւոր նախանձոտը բարի համոզմունք չունի,
Նորա սրտից, բերանից խայթող օձի բունն է լաւ,

Քանիպատիկ անխաղաղ, տպերջանիկ ապրելուց,
Հանգիստ յաւիտենական քաղցր անուշ քունն է լաւ:

Երկրագործ դասի համար վեց ամիս ձմեռուանից,
Հով, բացօթեայ դաշտի մէջ մի ամիս գարունն է լաւ,
Գիտութիւնն է աշխարհի կամարակապ մեծ սիւնը,
Տասը հազար չիմարից մի հատ իմաստունն է լաւ:

Ասում են գետնի տակը չ'մշակուած գանձ կայ շատ,
Ներկայիս գործածական երեւցող փայլունն է լաւ,
Կարծիքովս գեղեցիկ դէմքի մէջ լաւ հոգի կայ,
Օժիտաւոր ազգից անօժիտ սիրունն է լաւ:

Ոսկի ապարանջանը ուրիշին քեզ ի՞նչ օգուտ,
Քեզ համար քո սեփհական հասարակ հլունն է լաւ,
Օտարի քաղցրեղէնով քո փորը չի կշտանալ,
Ամենօրեայ գտնուած քո տանդ մածունն է լաւ:

Թեթեւ ցաւից ընկճուող վհատողը հում է դեռ,
Աշխարհի փորձանքներուն դիմացող տոկունն է լաւ.
Ջիւան, ինչպէս արեւը աստղերի թագուհին է,
Այնպէս էլ ազէտներից փորձուած գիտունն է լաւ:

120

ԳՈՎԵՍՏ ԴԵՂԵՑԻԿ ՄԱԶԵՐՈՒ.

Տիրուհի, ակնարկող մարդկանց շրջակայ
Ցնծում կուտան ակնավայել մազերդ,

Լուսնիակի նման ճակատիդ վերայ,
Կ'փայլփլին ոսկիաթել մազերդ:

Հոտով շահսպրամ է քո բուրմունքդ,
Երկու արեգակ են երկու ակունքդ,
Ցրուած զորքի նման՝ դէպի թիկունքդ
Արշաւում են միշտ անարդել մազերդ:

Եղիր Ջիւանիիս օգնող շուտահաս,
Ծպտեալ իշխանուհի, որպէս Աթենաս,
Գեղեցկութեանդ մէջ կազմելով մի մաս,
Նոր շուք կուտան ես առաւել մազերդ:

121

ՄՈՒԽԷՄՄԷԶ.

Ո՛վ անիրաւ անխղճմտանք, մաքիս քնարը քանդեցիր,
Փափուկ սրտիս նուրբ ապակին, քցելով քարը՝ քանդեցիր,
Սիրտս կոտրելով, լա՛ւ իմացիր, Տիրոջ տաճարը քանդեցիր,
Տնաքանդ ես, մէկ իմս չէ, որքա՜ն հազարը քանդեցիր,
Ուրտեղ մի հին կո՜թող, տեսար ելար կատարը քանդեցիր,
Գաղտնի ականներ փորելով, համայնեայ սարը քանդեցիր:

Իշխան էի՝ հովիւ դառայ, մի քանի ոչխար ճարեցի,
Թողի բէհէզն ու ծիրանին, թաղիքէ հանդերձ կարեցի,
Գեղջուկ հովուի բիրդ մահակը ինձ գաւազան համարեցի,
Փափկութիւնից ձեռք վերուցի, շինականի կեանք վարեցի,
Տալակովս քար կրելով ձեռքովս պարիսպ շարեցի,
Հօտս մնաց բաց օդի մէջ, փարախ պատուարը քանդեցիր:

Վաճառատունս փակեցիր, ես մնացի անմխիթար,
Ման եմ գալիս դժուածի մէջ ձեռս ծոցս, խեղճ ու շուար,
Քեզանից քեզ գանգատ ունիմ, կարծուած անգին բարեբար,
Խլեցիր Հայս ձեռիցս, վարուեցար խիստ անխղճաբար,
Բանալով պապիս կապոցը միջից անգին ակը տարար,
Անձեռնմխելի պահուած կնքած ծրարը քանդեցիր։

Օր չի լինի որ քեզանից մի նոր հրաման չ՚ստանամ,
Ազատուելու տեղ չ՚գիտեմ որքան էլ փախչելու ջանամ,
Այսպիսի գառն վիճակից, ասացէք, ես ի՞նչ իմանամ,
Յոյս դնեմ ո՞ր բարեկամիս գոնէ մասամբ ուրախանամ,
Որդիքս դուրսը մնացին, չ՚գիտեմ ում դուռը դնամ,
Տուն շինեցի ներս չ՚մտած տուիր կամարը քանդեցիր։

Ստացուցիր վառ եռանդս, աշխատելու ջանք չ՚թողիր,
Ո՜հ, մեռուցիր յոյս ու սէրս, հաւատ ու բաղձանք չ՚թողիր
Դու մարդկային սրտերու մէջ ցնծութիւն բերկրանք չ՚թողիր,
Խանգարեցիր բոլորովին, հին մնացած ցանք չ՚թողիր,
Ջիւանս քեզ էլ ինչ ասեմ, դու ինձանում կեանք չ՚թողիր,
Խորտակելով սրտիս սիւնը հոգուս աշխարհը քանդեցիր։

122

ՄԱՐՏ ԱՄԻՍ.

Այս տարի դու ինձ դուր չեկար, ով բօթաբեր մարտ ամիս,
Դարձուցիր մեր սրտերը ցրտից աւեր, մարտ ամիս,
Սառուցով վեր շարեցիր սուրը դուռը մեր, մարտ ամիս,
Մանուկներին թշնամի, թառամած, ծեր մարտ ամիս.

Թէև գարնան մօտիկ ես երբեմն ջեր մարտ ամիս,
Ունիս դաժան սաստկալի ձմրան պատկեր, մարտ ամիս։

Եօթն աւուր գալած էիր, գնացիր ցուրտ դրսալու,
Մատաղահաս գառները որ չ՚թողաս ման գալու,
Այն օրուանից երեխայք չ՚գնացին կարդալու,
Տաչորուած ծնողները սկսեցին ողբալու,
Ցրտի, բուքի երկիւղից մանուկները խաղալու
Տանից դուրս չեն կարող գալ ցերեկ գիշեր, մարտ ամիս։

Փոխանակ պարզ տաք օրեր, բերիր նոր ձիւն, ցուրտ ու բուք,
Ինչ ունէիր թափեցիր մեզի վերայ գայլացուք,
Հորիզոնդ ամպամած, առանց արև, չարաշուք,
Լացուցիր ժողովուրդը թափել տուիր արտասուք,
Գարնան էլ յոյս չ՚թողիր, քո երեսին լինի թուք,
Որ չ՚ներկայացնես այսպիսի դեր, մարտ ամիս։

Փետրուարը տիկ եղաւ, խենթ, քեզի շնեց բերան,
Վատ անունը դու եղար, նա յետ քաշեց ինքն իրան,
Ես քո լաւութեանդ դէմ ինչ անուն տամ ածական,
Որ հովանայ սիրտս իմ գէթ մի վայրկեան, ով դաժան,
Անտերունջ խեղճ գառները գիշատող գայլ իսկական,
Բոլոր ամիսների մէջ չունիս ընկեր, մարտ ամիս։

Խնդրում եմ եկող տարի էլ չ՚գաս, ով անիրաւ,
Թէ պիտի հետդ բերես մեզի համար հոգս ու ցաւ,
Քեզի դարուն դիտնալով մենք չ՚հոգանք տաք հալաւ,
Ցրտից վէրք ստացանք, սրտերս կապեց շարաւ,
Կորեցիր աղբիւրներս, մնացինք վառուած ծարաւ,
Նոր բըքաբեր հոլմայրդ դու ստանաւիրա մարտ ամիս։

Այս տարի մեզ խեղճերուս սրտերուն դրիր դանակ,
Զատիկներս սև արիր, պասերս անընդունակ,
Քսանը չորս օր ունիս, կարճ է կեանքդ, չար մշակ,
Ապրիլին մեծ յոյս ունիմ որ լինի պարզ արեգակ,
Կուգայ մայիս—յունիսը, յուլիսին կասես շիտակ,
Պիտի լսես ամաչես մինչ սեպտեմբեր, մարտ ամիս,

123

Գ Ա Ր Ո Ւ Ն.

Գարուն դու գարուն, սիրուն եղանակ,
Շտապիր արի, քո հոտիդ մատաղ,
Թող այգում բացուին վարդ և մանիշակ,
Սոխակը երգէ գարնանային տաղ։

Արի, ով գարուն, յժմրած բնութեան
Զարդեցուր քնից նորից տուր հոգի,
Ամեն դաշտ ու ձոր, սար, բլուր ցնծան,
Թող մեր աշխարհը վերատին ծաղկի։

Պառաւ ձմեռը մեզ ձանձրացրուց
Երկար մնալով մեր երկրում հիւր,
Փչելով ցուրտը, նա սառեցրուց,
Ծով, լճեր, գետեր, առուակ ու աղբիւր։

Սպիտակ սառն վերմակի տակից,
Գլուխդ ցոյց տուր սիրուն ձնծաղիկ,

Քաղցր զեփիւռը թող քո քամակից,
Մեզ բերէ նոր լուր, գարնան աւետիք։

Դու արքայութեան տիպար ես, գարուն,
Ձմեռն է դժոխք և կենաց տանջանք,
Ուրեմն բացուիր ուրախ զուարթուն,
Տուր հողին, ջրին նոր հոգի, նոր կեանք։

124

Ք Ի Չ-Ք Ի Չ.

Կաղաչեմ, ով սիրտս, մի մնալ յամառ,
Ժամանակի հոգոյն յարմարիր քիչ-քիչ,
Եթէ ոչ կ՚ցամաքիս, կ՚լինիս չոր ծառ,
Ժողովրդի իղձը կատարիր քիչ-քիչ։

Հին փողոցում ծախիր հնացածներդ,
Պահիր քեզի համար իմացածներդ,
Դիր սնդուկը փակիր քո գիտցածներդ,
Նոր տեսակ ապրանքներ դու ճարիր քիչ-քիչ։

Մի՛ վհատել, քանի որ կաս կենդանի,
Ունիս երեխաներ, ունիս ընտանի,
Աշխարհութեան բանը բուսաւ, Ջիւանի,
Քեզ համար մի նոր բան հնարիր քիչ-քիչ։

125

ՏԽՈՒՐ ՕՐ.

Էլի սեւ սեւ ամպերն եկան պատեցին
Իմ մտքիս երկինքը, մտքիս աշխարհը,
Խեղճ սրտիս արեւը լոյսից զատեցին,
Հոգոյս վերայ տիրեց թանձր խաւարը։

Խիղճս ձիւարուած խիթանը ձեռքին
Անգթաբար չարչարում է իմ հոգին,
Սրտիս ծովը ալեկոծուած դառնագին,
Օգնութիւն է հայցում խեղճ նաւավարը։

Յոյս է աղաղակում խեղճ նաւապետը,
Խանգարուել է նաւի փարոսը, դէտը,
Թալթառ ու փոթորիկ վատ հողմը հետը,
Միտքս կորուսել է իւր ճանապարհը։

126

ԿԵՂԾ ԸՆԿԵՐ.

Լայն օրերուս ուրախացող կեղծ ընկեր,
Այժմ նեղն եմ ընկել, արի, ո՞ւրտեղ ես,
Պատառներուս կտորներու շատակեր,
Մեծը քեզ եմ տուել, արի՛, ո՞ւրտեղ ես։

Երբ ունէի փայլուն մետաղ բաւական,
Ինձ կասէիր չ'կայ մարդ քեզի նման,
Քու ձեռքովդ կազմում էիր ճոխ սեղան,
Ո՞ր անկիւնն ես մտել, արի՛, ո՞ւրտեղ ես։

Քանի տունս հաց կար, չէիր պակասի,
Կուգայիր՝ կանչելու չէիր սպասի,
Իմ ունեցած կարողութեանս մասի
Տա՛րը դու ես խլել, արի՛, ո՞ւրտեղ ես։

Ասում էիր՝ մի վախենալ փորձանքից,
Քեզ աւել կ'սիրեմ իմ բոլոր կեանքից…,
Եթէ հնար ունիս փրկէ վտանգից,
Վերջին օրս է հասել, արի, ո՞ւրտեղ ես։

Ջիւանը հասկացաւ քո կեցութիւնը,
Հեռացրեց սրտից ամեն անկիւնը,
Տղոքարթելով ծծում ես արիւնը,
Արդեօք ո՞ւմ ես գտել, արի՛, ո՞ւր տեղ ես։

127

* * *

Բարձրացիր, ո՛վ լուսաբեր սառղ առաւօտեան, բարձրացիր,
Տապիր, առաջ արի, լոյս բարէնշան, բարձրացիր,
Մթնոլորտում քանի որ ամպի կտոր չի երեւում,
Ճանապարհդ դուրան է, արի երեւան, բարձրացիր,

Տես Լուսնթագը, Զօհալը, Երևակը բարձրացան,
Դու ևս ցոյց տուր քեզ. աստղ իմ դուրական, բարձրացի՛ր։

Քո տեսիլքդ մեզ համար կեանքի գոյութեան խնդիր է
Լեր միւս աստղերի պէս փայլող ժրաջան, բարձրացիր,
Բաւական է յետ մնաս ընկերներդ քեզ նախատեն,
Խառնուէ լաւ աստղերուն, մտիր, կարաւան, բարձրացիր,
Հասարակ լուսատուներու մէջը երկար մնացիր,
Կաղաչէ Ջիւանը քեզ՝ դէպ վերնախորան բարձրացիր։

128

Ե Ր Գ.

Աշխատիր քո հօրդ տունը շէնացուր,
Որ ամէն քեզ լաւ զաւակ ես, սիրելի,
Նպաստ ունիս՝ առաջ եղբայրներուդ տուր,
Երբ որ ստակ կ'վաստակես, սիրելի։

Արթուն եղիր ձեր տան ծուխը չ'մարես,
Սրբագործուած իրաւունքդ խանգարես,
Ծնողացդ անշուշտ պէտք է վճարես,
Բարոյապէս պարտքի տակ ես, սիրելի։

Բանիդ գործիդ նրանք շարժում են տուել,
Հագցրել են քեզ, կեր ու խում են տուել,
Մեծացրել, կրթել, ուսում են տուել,
Որ դու այդպէս փայլուն ակ ես, սիրելի։

Հօրդ ու մօրդ սիրած կրօնն ու լեզուն;
Խոստացիր, որ կեանքիդ նման պաշտես դուն,
Մի թողնել հեռանալ հայրենիք տեղ, տուն,
Չ'լինի թէ քեզ խորտակես, սիրելի։

129

Ս Ո Խ Ա Կ,

Ձայնդ ինձ գրաւեց, ինձ վերայ տիրեց,
Մի՛ թռնիր, մի՛ գնար, կա՛ց այստեղ, սոխակ,
Մի թռնիր իմ մօտից, սիրտս քեզ սիրեց,
Թէև չունիմ պարտէզ փառահեղ, սոխակ,

Սիրէ քու հին վարդդ, կեանքդ տո՛ւր նորան,
Հին թշնամին քեզ չի լիներ սիրեկան,
Հեռացի՛ր, մի՛ անել փուշն ապաստան,
Նա ճանկ ունի ո՛րպէս մեծ ասեղ, սոխակ։

Դու վարդից էլ գոհ չես, գիտեմ, ով սոխակ,
Բայց չես կարող գտնել նորա պէս ծաղիկ,
Էլի նա է ծաղկանց միջին անդրանիկ,
Բնութնանդ յարմար ու անմեղ, սոխակ։

Ջիւա՛ն, բացի Աստուած, ամէն առարկայ
Բնական օրէնքով կանցնի կընթանայ,
Ինչ բան սկիզբ ունի՝ վերջ էլ կունենայ,
Ոչ ո՛ք մնալու չէ միշտ շքեղ, սոխակ։

130

* * *

Սև հօրից սև մօրից ծնուել ես հաստատ,
Սիրտդ սև է, բաղդդ սև է, գունդ սև.
Վիշապազուն ես ծագումից հարազատ,
Փոփոխուելով ստացել ես հայի ձև։

Քու լեզուդ հայի է, սիրտդ օտարի,
Միամիտները քեզ կարծում են բարի,
Ինքդ գայլ ես, մորթիդ նման ոչխարի,
Քեզ չ'ճանաչողը կոյր է կամ թէ խև։

Դու մինչև երբ մեր փարախի մէջ մնաս,
Մեր հօտը պառակտես, հասցնես վնաս,
Գայլի հետ կ'խնդաս, հովուի հետ կուլաս,
Գիշատիչ թռչուն ես խօսուն առանց թև։

Արամազդի սիրելին ես առաջին,
Պատիւդ կ'աւելնայ կրկին ու կրկին,
Քեզ չ'դիպաւ դաժան մահի գերանդին,
Մեր բաղդից ունեցար շատ երկար արև։

Սև ես՝ էլ սևնաս դու դատաստանին,
Հոգիդ պիտի սատանաները տանին,
Ինչ խօսք որ քու մասին ասաց Ջիւանին՝
Սխալ չ'կայ, դու այնպէս ես արդարև։

113

МОИСТЕЧЕТ

Երբ որ կ'լսեմ իմ նայելուս երգելը մեղմիկ,
Ինձ թւում է բամբիռ,
Ձայնը գրաւիչ, հրեշտակային, խօսքերը քաղցրիկ,
Սրտիս կուտայ գրգիռ։

Երբ որ կ'հեռանամ նայելուս մօտիցը մէկ ժամ,
Մէկ տարի կ'դառնայ,
Հոգս ու ցաւերս կաւելանայ այն օրը սաստիկ,
Մտքիս կուգայ կնճիռ։

Իմ սիրեկանս ինչ ժամանակ խօսում է ինձ հետ,
Նորոգւում է կեանքս,
Երբ որ կ'բանայ սուրբ բերանը, հանում է ձայնիկ,
Ես նայում եմ յակճիռ։

Պռունկները գինւոյ բաժակից կարմիր ու նուրբ են,
Կարծես ադամանդ են,
Ատամները մարգարտանման մանր ու փոքրիկ,
Ոսկուց գերակշիռ։

Սրտի սիրածը սիրահարի ամենագեղն է,
Թէկուզ լինի ագեղ,
Փորձով Ջիւանս գիտենալով, ես ահաւասիկ
Այսպէս տուի վճիռ։

132

ՅԻՄԱՐԻ ԼՌԵԼՆ Է ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ՝ ԻՄԱՍՏՈՒՆԻՆ ԽՕՍԵԼԸ.

Մարդ կայ, որ միշտ խօսում է սուտ,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ,
Մարդ կայ խօսի ունի օգուտ,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ խօսելու ժամանակ
Կարծես սրտից խփէ գնտակ,
Այնպէս մարդը կուզե՞ս շիտակ,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ։

Մարդ կայ խելօք սրամիտ է,
Լեզուով գործով ճշմարիտ է,
Խօսքը անգին մարգարիտ է,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ խօսում է ակամայ,
Մէջը խօսելու ձիրք չկայ,
Երբ որ խօսի գանըդ կուգայ,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ։

Մարդ կայ կրթեալ քաղաքավար,
Շտեմարանը լի գոհար,
Խօսքը վսեմ, լեզուն ճարտար,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ գաղափարը խառն է
Բարքը կոպիտ, ինքը սառն է,
Լեզուն դիպչող, խօսքը դառն է,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ։

Մարդ կայ տեղովը հոգի է,
Լաւ քարոզիչ՝ սուրբ ռաբբի է,
Խօսքը գին ունի, յարգի է,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ, նենգ է, օձափոր է,
Սիրտը խարդախ կըպրի հոր է,
Խօսաւ՝ կռիւ կ՚յորդորէ,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ։

Մարդ կայ ծագումովը բարի,
Լաւանում է տարեց տարի,
Խրատող է շատ հազարի,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ բնութիւնը ժանտ է,
Սիրտը խեռ, անհնազանդ է,
Երբ որ խօսի, գործ կ՚քանդէ,
Խօսելուց՝ չ՚խօսելն է լաւ։

Մարդ կայ բարի, երկիւղած է,
Կարծես երկնուց ընտրուած է,
Խօսելիս միշտ կ՚մտածէ,
Չ՚խօսելուց՝ խօսելն է լաւ։

Մարդ կայ կարծես խելքից թեթև,
Վեր կ՚վարէ խօսքը խև-խև,

Լաւ խօսելու չի գիտեր ձև,
Խօսելուց՝ չ'խօսելն է լաւ։

Մարդ կայ, որ խօսքը կրթիչ է,
Ինքը խոհեմ ուսուցիչ է,
Դէպի բարին համոզիչ է,
Չ'խօսելուց՝ խօսելն է լաւ։

Ջիւան, խելին մի՛ տեղիք տալ,
Նրանից քեզ օգուտ չի գալ,
Պիտի դուրս տայ սուտ ու սխալ,
Խօսելուց՝ չ'խօսելն է լաւ։

133

Ը Ն Կ Ե Ր.

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
Փայլեցնում է արևի պէս պատիւը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն։

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
Ընկեր եմ ասում, Աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը,
Կտրիճ հարազատ ընկերն է սուսերը մարդուն.

Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Ջիւան-Աշըղ,
Չի՛ սպիտակիր ամենևին մէկ հերը մարդուն։

134

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն.

Բնական ձիրքերը մարդկանց անուսում,
Կ'մնան ծածկուած մետաղի նման,
Նորանց միտքը զարգացած չէ, ըստ որում
Չեն ճանաչել լուսոյ ճաճանչը ուսման։

Մարդը անասունից ջոկողն ուսումն է,
Ծառը արմատից պոկողն ուսումն է.
Նորան գործիք շինող, կոկողն ուսումն է,
Առանց ուսման նա կ'մնար անպիտան։

Գիտութիւնից մարդ չէ տեսել վնասը,
Բայց շատ վնասուել է խելքից պակասը,
Աշխատի՛ր, սովորէ գոնեայ քիչ մասը,
Դու ինքդ էլ անուսում տգէտ ես, Ջիւա՛ն։

135

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ.

Բացի քեզնէն բաժին չունիմ աշխարհիս մէջ, ո՛վ սիրուհի,
Բայց ինչէն է որ քո սէրդ է ինձանից հով, սիրուհի՛,

Ի՞նչ եմ տեսեր, որ կ'մնաս խօսքիցս խռով, սիրուհի՛,
Իմ խղճալի կեանքիս համար դարձել ես մի բոց, սիրուհի՛։

Այս ինչէ՞ն է, օտարներու համար լաւ եմ, քեզ համար վատ,
Ինձանի՞ց է թէ՞ քեզանից, արի՛ պարզը խօսի՛ ազատ,
Դէմդ կանգնած աղաչում եմ որպէս մի խղճալի աղքատ,
Ողորմանալ չէ՞ս դու երբէք ինձի, անգորով սիրուհի՛։

Խնդրում եմ, լա՛ւ տեղեկացիր, ինձի մի նախատեր 'իզուր,
Քո այրուած երիտասարդ երգչին մի թողներ տխուր,
Բերանիցդ ելածներն սրտիս բանում են ինչպէս սուր,
Քաղցր խօսալն քեզ համար դարձրել ես սով, սիրուհի՛։

Միշտ տոչորուած ման եմ գալիս վիզս ծռած խղճուկի պէս,
Սիրոյդ նետերից ընկած եմ թեւը կոտրած ճնճղուկի պէս.
Լացով օրերս անցնում է որբ մնացած մանուկի պէս,
Դառուցել ես իմ աչքերուս արտասուքը ծով, սիրուհի՛։

Քեզի համար հաւատարիմ մնում է Աշըգ-Ջիւանը,
Ով որ լինի մեզի ջոկող, Աստուած անէ դատաստանը,
Բնականից կրակոտ է, գիտացի՛ր, երգչի բերանը,
Վարուէ՛ր խոհեմ կերպով հետը, մի՛ առներ նզով, սիրուհի՛։

136

Տ Գ Է Տ Ը.

Գիշերի պէս կ'անկացնէ իւր տիւը,
Տգէտ մարդը շատ պգալուն չի՛ լինի,

Անզգամը չի՛ գիտեր իւր պատիւը,
Նորա մօտը բարի անուն չի՛ լինի։

Սարերում մեծացած Մարալ իշխանը,
Չի՛ հասկանայ քաղաքական պայմանը.
Հարիւր տարի կրթես անխելք անբանը,
Չ'սպասես, նա իմաստուն չի՛ լինի։

Անզամանդ չի՛ լինիլ սեւ քարն անարժան,
Հազար գոյն տաս՝ դարձեալ նա է անպիտան.
Գեղեցիկը գեղեցիկ է բնական,
Տգեղը հանդերձով սիրուն չի՛ լինի։

Երբէք խորհուրդ մի՛ տար մարդուն խաբեբայ,
Միշտ որոնէ ճշմարտօրէն տառակայ,
Ջիւան, հիմ մի՛ ձգեր աւազի վերայ,
Կասէ Տէրը թէ այնտեղ տուն չի՛ լինի։

137

Գ Ի Տ Ո Ի Ն.

Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ,
Տգէտի՛ հետ մեղր ուտելը դժուար է,
Գիտունը կ'ճարէ վերջն իրան հանգիստ,
Բայց տգէտը նորէն էլի յիմար է։

Ո՞վ կասէ բնական իմաստուն ծնայ,
Ուսում չ'գիտցողը անկիրթ կը մնայ,

Խողը ցեխը տեսաւ անշուշտ կ'գնայ,
Թէկուզ վիզը հարիւր մարգարիտ շարէ։

Գիտութիւնը մէկ արև է անխաւար,
Ծովից առավ կերթայ աւանց նաւավար,
Բայց տգէտը չունի ուղիղ գաղափար,
Որովհետև հոգւոյ աչքը խաւար է։

Ջիւան, մարդկութեան մէջ խեղճ է յիմարը,
Յառաջադէմ է լեզուագէտ ճարտարը,
Թէ կուզես որոնէ ամբողջ աշխարհը,
Իմաստունի մօտ տգէտը տկար է։

138

ԱՌ ՍՈՒՔԻԱՍ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՊԱՐԶԵԱՆՑ.

Գերյարգոյ հայր սրբազան, մեզ համար փայլակ մնաս,
Անանցնելի մշտավառ իբրև արեգակ մնաս,
Մեր Շիրակուան գաւառին բարի օրինակ մնաս,
Քրիստոսէն նուիրուած հօտիդ օժանդակ մնաս,
Կամենալովն Աստուծոյ միշտ լուսաւոր ակ մնաս,
Մինչ ց'վախճան եաւնդիդ մէջը շարունակ մնաս։

Քեզ չյարգող չի լինիլ ամենևին, սրբազան,
Առ հասարակ ամենքս ես դու հոգւով սիրական,
Վարք ու բարքդ գեղեցիկ, բնութիւնդ գուրեկան,
Ո՞վ չի սիրել քեզպէսին արդեօք իւր հոգւոյ նման.
Սուրբ ախոռի գործերուն աշխատակից օգնական,
Նորա մասին միշտ լուսով փայլուն աշտանակ մնաս։

Եպիսկոպոս, վարդապետ տեսել ենք մի քանի հատ,
Բայց ոչ մինը քեզ նման չէ եղել մեզ համեմատ,
Ամենայն մի գործի մէջ ճշմարտախօս և ազատ,
Յուսամ Աստուած, կ'պահես միշտ քո հօտդ անարատ,
Քեզպէսներուն կ'սպասէ ծերունին մեծ Արարատ,
Գործովդ նորա համար անմահ յիշատակ մնաս։

Քեզխպէսներու թիւը աւելանայ ամէ ամ,
Մնաս դու միշտ հայերուն հաւատարիմ բարեկամ,
Քեզ շատ օրեր նուիրէ Արարիչը ինքնակամ,
Բանական հօտիդ համար լինիս բարձր մեծ անգամ,
Ո՛վ Սուքիաս սրբազան ցեղդ Պարզեանց անթառամ,
Յարաժամ գործ կատարող ազգին ընդունակ մնաս։

Փափագիդ, բաղձանացդ Աստուծով արժան լինիս,
Հոգևոր գործերի մէջ միշտ բարի իշխան լինիս,
Մովսիսի, Եղիշէի նման պատմաբան լինիս,
Եզնիկի պէս աղանդայ հերքող փաստաբան լինիս,
Աւետարան քարոզող Մեսրովպայ նման լինիս,
Մեծին Պարթևի պէս դու երկրորդ Սահակ մնաս։

Նախ Աստուած քեզի բաշխէ Վեհափառ Սրբազանին,
Որ նստած է աթոռը Էջմիածնի ատեանին,
Լինիս դու աջ բազուկը հոգևոր մեծ Իշխանին,
Վիճակը լաւ պահպանես մեր Շիրակայ սահմանին,
Միշտ Արարչէն խնդրում է քո խեղճ նուաստ Ջիւանին,
Համբաւաւոր քարոզիչ, միշտ բարեհռչակ մնաս։

139

Դ Օ Շ Մ Ա.

Գիտունը տգէտի բանից չի ցաւիր,
Խելագարի գործը հաշիւ չի լինիր.
Սիրահարը սիրականից չի ցաւիր,
Սիրոյ ասպարէզը կռիւ չի լինիր։

Գիտութեան ճրագը յարաժամ վառ է,
Տգիտութեան վերջը մահ կ'պատճառէ,
Անդամանդը հասկացողին վաճառէ,
Տգէտներու մօտը պատիւ չը լինիր։

Ամէն մարդ չի՛ կարող լինիլ բաղդաւոր,
Թէկուզ լինի ճիշտ գահակալ թագաւոր,
Պայազատը բնական է հարկաւոր,
Յիմարը կարդալով՝ ազնիւ չի՛ լինիր։

Ջիւա՛ն, զուր է ցուցամոլներու ջանքը,
Իրանց օգուտ չի՛ տար զուր գովասանքը,
Մօտն է ձայնը, քայլքը, իր կերպարանքը,
Ագռաւը գովելով՝ արծիւ չի՛ լինիր։

140

Ս Ո Խ Ա Կ.

Դուն էլ ինձի նման սիրահարուած ես,
Միշտ կ'լսեմ աղաղակդ, ո՛վ սոխակ,
Արդէն սիրոյդ մէջը խելագարուած ես,
Նորից վարդն է նպատակդ, ո՛վ սոխակ։

Թէթեւից եռանդոտ, լաւ չ'լինիս դու
Քո սէրդ նրա պէս չէ իսկ ահարկու,
Դուն հպարտ, քո սիրականդ շատ քաւ,
Էլ ինչ լաւ է օրինակդ, ո՛վ սոխակ։

Անհիմ սէր քաշելու է իսկ վերջը փուտ,
Անխիղճ սիրականը հոգի չունի՛ զուտ,
Դուն էլ ինձի նման չես քաղեր օգուտ,
Զուր կանցընես ժամանակդ, ո՛վ սոխակ։

Վերջդ Ջիւանուս պէս կ'մնաս տխուր,
Հազար կանչես՝ այնտից չես լսել մէկ լո՛ւր,
Որքան երգես՝ աշխատանքդ կերթայ զուր,
Անօգուտ է շարունակդ, ո՛վ սոխակ։

141

ԱԳԱՀ ՀԱՐՈՒՍՏ.

Դու այս աշխարհիցը ինչ պէտք է տանիս,
Ագահ հարուստ, ժլատ հարուստ, չար հարուստ,
Որպէս դաշտի ծաղիկ շուտով կ'անցանիս,
Վատ անունդ միշտ կ'մնայ անկորուստ։

Թէ այսպէս մէկ Կրեսոս կար Հայաստան,
Ագահ, անկուշտ, նախանձ իժ օձի նման,
Ո՛չ աղքատ կ'սիրեր, ո՛չ ուսումնարան,
Ո՛չ տանը մէջ ունէր կատարեալ ապրուստ։

Թէ խելք ունիս՝ տուր, խեղճերուն սիրէ,
Առատասիրտ լինելը մեծ խնդիր է,
Ուսումնարաններուն գումար նուիրէ,
Խեղճ սաներուն նոյնպէս մշտական հագուստ։

Այդ քո տուած գանձդ ազգին որ կուտաս,
Կը աճի միշտ և կ'մնայ անվնաս,
Ժողովուրդը քեզ կ'տօնէ անպակաս,
Գովասանք կ'լսես անթիւ ամենուստ։

Թէ Ջիւանուս լսես, ով մեծ Ամիրայ,
Շատ պատիւ կունենաս աշխարհի վերայ,
Հոգիդ արքայութեան ժառանգ կ'դառնայ,
Օրհնութիւններ դու կ'ստանաս միշտ յերկնուստ։

142

ԱՌ ՍԻՐԵԼԻՆ

Երբ տեսնեմ պատկերդ սիրուն օրէորդ,
Սիրտս կուրախանայ, կստանամ ցնծում,
Եղջերու աչերդ որպէս մի որսորդ՝
Զ'տեսած վայրկեանս կ'մնամ տրտում։

Մինչև երբ քեզանից հեռու մնամ ես,
Գթա ինձի, հոգեակ, մի անել անտես,
Կանգնիր, խօսի դէմս երես առ երես,
Թէ ես սխալուած եմ՝ կ'խնդեմ ներում։

Ջիւանին եմ, երբ կ'լսեմ խօսալդ,
Կաքաւի պէս սիրուն քնքուշ մանգալդ,
Քո աննշան մի շարժումդ, խնդալդ,
Իմ սրտի լարերուն կուտայ ընդհարում։

143

ԻՄ ԽՐԱՏԸ ՈՐԴՈՒՍ

Որդեակ, առ խրատս, մի լաւ օգնական ունեցիր,
Քո անձդ պաշտպանելու՝ ուսիդ հրացան ունեցիր։
Գեղն առանց շուն չի լինի, ձեռիդ գաւազան ունեցիր,
Թշնամիդ մորթելու համար խարտզան ունեցիր։

Աշխարհում խեղճ լինողը հոգին հաւատար կ'լինի,
Սրտումը վէրք ունենայ՝ անդեղ ու անճար կ'լինի.
Երանի այն տղային՝ լեզուանի, ճարտար կ'լինի,
Իմ հոգիս, առ օրինակ, գովելու բերան ունեցիր։

Նիւթական միջոցներդ ապահովացու յարաժամ,
Դժուար է ներկայումս մարդուն ապրել առանց դրամ.
Ոչ մի տեղ չի գտնուիլ մամոնայի պէս բարեկամ,
Աշխատիր դու չափաւոր, համեստ գանձարան ունեցիր։

Ես որքան աշխատեցայ թէ ունենամ մի օթևան,
Անկարող գտնուեցայ, չ'ճարեցի պատսպարան,
Թողնում եմ քեզի համար երկու հատոր լոկ երգարան,
Աշխատիր, աւելացուր, դու լաւ գովական ունեցիր։

Աշխատիր, գուցէ ճարես մի քանի օրավար լաւ հող,
Հող ունեցողը երբէք չի մնայ քաղցած ու անփող,
Ջիւանս քեզ կաղաչեմ, յիշէ Աստուած, ունեցիր դող,
Թէ կուզես կարդալու գիրք, սուրբ Աւետարան ունեցիր։

144

ՍՐՏԻՍ ԹԱԽԻԾԸ.

Դժուար է դիմանալ, ցաւերը սաստիկ է սրտիս,
Պարիսպը խախուտ և տնակը փոքրիկ է սրտիս,
Շուրջս նայում եմ մաղձոտ ու սև սրտեր են ամբողջ,
Մէկ բարեկամը խաւարի մէջ մահիկ է սրտիս։

Յանցանք ունենամ ցաւ չեմ անել ոչ մէկի խօսքը,
Մեղքիս փոխարէն պատժուելը քաղցրիկ է սրտիս,
Թէև օրերուս մեծ մասը տխուր է գլորւում,
Վերին Զօրութիւնը պահում է, մօտիկ է սրտիս։

Իմ հաւատարիմ բարեկամիս մէկ բառը անգամ,
Նոր գարնանային աւետաբեր ծաղիկ է սրտիս,
Կեանքս նորա համար պիտի զոհուի, Ջիւան, հաստատ,
Սիրուններու մէջ մի հատ է, անդրանիկ է սրտիս։

145

Ս Ի Ր Տ.

Զախորդութեան վերջը յաջողութիւն է,
Ուրախացիր, մի վհատիր, փափուկ սիրտ,
Համբերանքը քաջին յաղթութիւն է,
Դադար եղիր, մի՛ թուլթուա, մանուկ սիրտ։

Քաղցածութիւնըդ քո մի՛ յայտնիր անմեղ,
Երբ որ չի կշտանար քո փորըդ այնտեղ,
Աշխատի՛ր, քո ցաւին ինքդ արա դեղ,
Մի՛ յայտներ ամենին, պահէ ծածուկ, սի՛րտ։

Ուշք դարձրու Սողոմոնի առակին,
«Խրատ ունիս խօսի դու քո զաւակին,»
Մի նախանձիր քո ընկերիդ վիճակին,
Խնդիրս քեզանից այս է յատուկ, սի՛րտ։

Աղաչում եմ, Ջիւանիի՛ս թո՛ղ դադար,
Ձուր մտքերով ինձ մի՛ տանջիր չարաչար,
Լա՛ւ պահէ, չ'խփեն ապակիդ քար,
Ընտի՛ր ժամացոյց ես լարուած, բանուկ, սիրտ։

146

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՂՋԻԿՆԵՐ.

Երկու աղքատ քաղաքացի աղջի՛կներ
Նստած մէկ պատի տակ խօսում էին բան,
Երկուքն էլ խիկ քաղելու ծաղիկներ,
Անուններն էր նոցա Նունուփար, Շուշան։

Ծնողներն աղքատ, անարհեստ, անջանք,
Այդ խեղճ աղջիկները չունէին լաւ կեանք,
Իրարու հոգևոր քոյր էին նորանք,
Ոչ թէ արենակից, էին հարևան։

Շուշանն ասում էր, քոյրիկ Նունուփար,
Մինչ ե՞րբ մնանք տրտում, առանց մխիթար,
Կամ մինչև ե՞րբ շրջինք մոլոր ու շուար՝
Չունենալով մեզի մէկ մէկ սիրական։

Նունուփարն ասաւ, Շուշանիկ, քեզի
Ես կ'նմանեցնեմ բարեմիտ հեզի,
Անդրամ, անօժիտ ո՞վ կառնէ մեզի,
Չունինք բնակարան, չունինք օթևան։

Շուշանն ասաւ Նունուփարին, կայ հաստատ,
Անունովդ, ամեն բանով անարատ,
Մենք էլ կը որոշենք մեզ նման աղքատ,
Քաղաքումս աղայ շատ կայ մեզ արժան։

Նունուփարն ասաւ, ես չունիմ եղբայր,
Ունիմ մէկ ծերունի այլոց ծառայ հայր,
Ի՞նչ անեմ թէ որ կայ ինձ մէկ խղճուկ մայր,
Նա էլ հազիւ ծառայող է այլոց տան։

Շուշանն ասաւ մենք մեզ լինինք վարժապետ,
Դառնանք քաջ զինուորներ, առնենք աղեղ, նետ,
Գտնինք մին մին աղայ, փախչենք նոցա հետ,
Թո՛ղ մեզ էլ համարեն քանիսի նման։

Նունուփարն ասաւ, քոյրիկ, ե՞նչ ասիր,
Երբէք մի բաղդ կալ չի մնայ, սպասի՛ր,
Դու քեզ փախչողներու դասը մի դասիր,
Այդ անուանից լաւն է մտնել գերեզման։

Շուշանն ասաւ, քոյրիկ Նունուփար,
Ուղիղ որ դու խելքից եղած ես տկար,
Այնուհետև նորան ով կառնէ, յիմա՛ր,
Որ աղջկայ տարին լինում է քսան։

Նունուփարն ասաւ, իմ վարձով տունը,
Իցէ մէկ օր բանայ բաղդիս գարունը,
Թող կատարեալ հուչակուի իմ անունը,
Որբևայրի մարդն էլ է ինձ բաւական։

Շուշանը խարդախ էր, չէր խօսի վճիտ,
Սակայն Նունուֆարը կարծէր ճշմարիտ,
Երկուսը միասին նստած միամիտ,
Մայրը Նունուֆարին փնտռում էր իրան։

Տալով միւսի մայրը Շուշանին անուն,
Կանչեց իւր աղջիկը տարաւ դէպի տուն,
Ժամանակը մութն էր, գոլով իրիկուն՝
Շուտ ունեցան նոցա խօսքերը վախճան։

Յաջող դարձաւ նորանց բաղդի շրջանը,
Տեղը առաւ իրենց ձգած նշանը,
Ամուսնացան Նունուֆարն ու Շուշանը,
Գտնելով մարդ ամենը իւրապատկան։

Տես այժմեան աղայի դու խղճմտանքը,
Հարուստ մարդու փեսայ լինելն է ջանքը,
Մեր քաղաքն էլ մտաւ Տփխիսու կեանքը,
Փողով աղջիկ կուզեն տղայքն հիմիկուան։

Մի քանի հին ծէս կան գիտցողին դառն են,
Այժմեան հետ անորոշ, պղտոր ու խառն են,
Քաղաքը փող կուտան, գեղը փող կառնեն,
Հայոց մէջ կայ այսպէս քանիմ վատ նշան։

Արի՛, ուսում, արի դու մեր մէջ հիւր,
Դեռ ևս շատ ունինք մենք կարծիքներ թիւր,
Մաղագործներու մէջ՝ մինչ երկու հարիւր
Մանէթ, խօսքն առնելուն կուտան մէկ բերան։

Նամանաւանդ այժմեան կանայքը բոլոր,
Ամխան անգամ հանդերձ կուզեն նորանոր.
Թէ մարդիկը լինին յատուկ թագաւոր,
Չեն կարող այս ծախսը տանիլ մշտական։

Օրիորդները միշտ սիրում են հանդէս,
Իրանց սփոփելու զուարճանք, կրկէս.
Ամեն աղջիկ կ՚ուզէ որ լինի այնպէս,
Ինքը քնքուշ տիկին, իւր մարդն էլ իշխան։

Բայց ո՞րտից աղքատի աղջկան լաւ օր,
Անդադար կաշխատի ամենահզօր,
Ոտքերն համբուրելով իրա հօրն ու մօր,
Հազիւ թէ կ՚հագնի մէկ նոր պատմուճան։

Հիմա պարզախօսին կասեն անմիտ է,
Պահանջած խորհուրդը երկնքէն դիտէ,
Դարձեալ ամէն մարդ իր գիտցածը գիտէ,
Աւելնորդ կ՚հաշուեն խօսքերդ՝ Ջիւան։

147

Ա Ր Հ Ե Ս Տ.

Ինչպէս մեր հներն ասել են՝ ոսկի ապար(ան)ջան ես, արհեստ,
Ամեն առարկայից գլուխ դու գերաստիճան ես, արհեստ,
Բոլոր աշխարհին պիտանի սիրուն պատուական ես, արհեստ,
Ճանաչողը քեզ կ՚յարգէ, իսկ յարգելի բան ես, արհեստ,

Ինձի համար շքանշաններից գովական ես, արհեստ,
Դու երկնաւոր Թագաւորից պարգեւած նշան ես, արհեստ։

Եւրոպայի հարստութեան, լաւութեան պատճառը դուն ես,
Ծով գիտութեան ճիւղերու մէջ ամենից պայծառը դուն ես,
Կեանքի մէջ միշտ սնունդ տուող գլխաւոր պատառը դուն ես,
Ամեն մարդու բաժին հանող, ակով լի տակառը դուն ես.
Անգլիայի տունը շինող հաստատ ոսկու ծառը դուն ես,
Նորա համար անհատնելի, անցեց գանձարան ես, արհեստ։

Ինչ ազգ քեզի աչքեն հանեց՝ այն ազգն էլ ընկածի պէս է,
Լոկ անունով կենդանի է, բայց գործով մեռածի պէս է,
Մեռելային անշարժութեան մէջտեղը կանգնածի պէս է,
Պարապ, ձեռքերը ծոցումը, մտքով մոլորուածի պէս է,
Բայց թէ նորից քեզի դիմեց, յարութիւն առածի պէս է,
Գործոց կենդանութիւն տուող իսկ հոգւոյ նման ես, արհեստ։

Առանց քեզի մարդկութիւնը կ'հասնի մինչ վայրենութեան,
Կարգ ու կանոն կ'խանգարուի, գործերը կ'լինին խափան,
Քարանձաւները, որջերը, մարդիկ կանեն պատսպարան,
Առանց քեզի հաստատութիւն չի լինի բնաւ յաւիտեան,
Ոչ կ'շինուի լաւ գործիքներ, ոչ տուն ու տեղ, ոչ օթեւան,
Թէ քեզ աշխարհաշէն ասենք, յիրաւի արժան ես, արհեստ։

Ինչ ազգի մէջ որ դու չ'կաս, գողը, արբեցողը շատ է.
Այնպէս ազգի կեանքը կարճ է, հիմքը խախուտ, անհաստատ է,
Առանց արհեստ ժողովուրդը խեղճ է, դրութիւնը վատ է,
Երկրէ երկիր կ'թափառի պարկը ուսին, միշտ աղքատ է,
Բայց ով որ լաւ արհեստ ունի՝ կեանքը առողջ, անարատ է,
Քեզանից մարդ չէ՛ ձանձրանալ, այնքան սիրաջան ես, արհեստ։

Ջիւանս քեզանից գոհ եմ՝ ինձի տուիր երգ ու ջութակ,
Այս ջութակով իմ ապրուստս ճարում եմ ամեն ժամանակ,
Ինչպէս վերն ասինք թէ ծառ ես պտուղ կուտաս դու շարունակ,
Եթէ մարդ քեզանից օգուտ քաղելու լինի ընդունակ,
Ամենը իւր սրտին յարմար կարող է ընտրել մի տեսակ,
Բազում մասերու բաժանուած կերպ-կերպ զանազան ես,
արհեստ։

148

Ձ Մ Ե Ռ.

Ձմեռն եկաւ, ձիւնը ծածկեց ամեն տեղ,
Խեղճ մարդկանցը պատսպարան չ'մնաց.
Ցուրտն ու բուքը տարածուեցաւ քաղաք-գեղ,
Աղքատներուն յուսոյ նշան չ'մնաց։

Պանդուխտ աղքատները հազար ու հարիւր
Ոչ տուն ունին ոչ էլ ապրուստի աղբիւր,
Այսուհետեւ դաշտը չի ընդունել հիւր,
Որովհետեւ բաց իջեւան չ'մնաց։

Ձմեռն որ կայ, ձախորդութեան նշան է,
Ամեն մի գործ, առուտուր կ'խափանէ,
Դուրսը ցուրտ՝ ներսը ցուրտ՝ խեղճը ի՞նչ անէ,
Ինչ վայ գլխին՝ անելու բան չ'մնաց։

Վա՜յ այն մարդուն, որ գարունը չի բանի,
Ձմեռան համար տունը պաշար չէ՛ տանի,

Ձմեռն եկաւ թող լայ որպէս պատանի;
Գործը կանգնաւ, ոչինչ իրան չ'մնաց։

Հարուստ երկրագործը անհոգ, հանդարտիկ,
Սիրտը ուրախ կեանք կ'վարէ երջանիկ,
Հօտայի, մաճկալի երգը անուշիկ
Էլ չէ լսւում, դաշտը դուլթան չ'մնաց։

Լռեց բնութիւնը չորս ամիսաչափ,
Պարտէզը մահ դալող, տուող չ'կայ ծափ,
Ծառեր ու ծաղիկներ եղան տերևթափ,
Զբօսնելու մէկ բուրաստան չ'մնաց։

Դուրսը շատ սաստիկ ցուրտ, ուրիշ ձայն չ'կայ,
Սար ու ձորը մշուշ, երկնուց ձիւն կուգայ,
Գետերը սառեցան, էլ չեն գոչգոչայ,
Ձկնորսի ձեռքում էլ ուռկան չ'մնաց։

Երթևեկութիւնը արգելեց ձիւնը,
Ամեն մարդ քաշուեցաւ իւր տան անկիւնը.
Ծոյլ մարդուց խելահաս, խոհեմ մրջիւնը,
Պաշար ճարեց բնից բաժան չ'մնաց։

Պարապ մարդոց սիրտը չի՛ առնել դադար,
Փակուած օդի մէջը նստում են երկար,
Արևը ամպի տակ, լուսինը խաւար,
Երկնքումը, տե՛ս, ծիածան չ'մնաց։

Անցա՛ն գարնանային օրերը, անցան,
Ողջ կենդանիք պատսպարուիլ ցանկացան,

Յանկարծ բոլոր պիտոյքները թանկացան,
Ոչ մի բան հին գնին, աժան չ'մնաց։

Ո՞ւր է հովիւներու երջանիկ ժամը,
Ո՞ւր է հօտը, ոչխարներու երամը,
Մսից զրկուեցաւ գայլի ատամը,
Դաշտերումն էլ ոչ մի կենդան չ'մնաց։

Տխրեցաւ սոխակը, մեռաւ թիթեռը,
Խղճուկ հողագործի ծանրացաւ բեռը,
Քանի գնաց երկարացաւ ձմեռը,
Հացով լեցուն շտեմարան չ'մնաց։

Սար ու ձոր սպիտակ հագել են պատանք,
Բնութիւնը տխուր, չ'կայ ուրախ կեանք.
Թռչունները չեն սկսում նախերգանք,
Այգիներում նուագարան չ'մնաց։

Աւազակաց խումբը առնում է դադար,
Նախագիծ է կազմում ջոկ գարնան համար,
Էլ չէ կթւում կով ու մատակ, այծ, ոչխար,
Գիւղերումն էլ մածուն ու թան չ'մնաց։

Երանի հարուստին, սիրտը ուրախ է,
Ցրտից ու մրսելուց հեռու, անվախ է,
Ջիւա՛ն, այս ձմեռը քու գործդ էլ ձախ է,
Կարծես թէ քաղաքում խրախճան չ'մնաց։

149

ԵԿԵՂԵՑԻ.

Երանելի Կին գեղեցիկ, ով Տիկին,
Կենաց շաւիղ, Ծնող բարեաց Մաքրածին,
Գեղատիպար իմ Նազելի կաթողին,
Վարք ու բարքով մի հատիկ ես, ով Դու Մին,
Մա՛յր գիտութեան առաջինն ես, առաջին։

Կատարեալ ես Մայր մերազնեաց, ով շքեղ,
Իմաստուհի Ամենագէտ հանճարեղ,
Անպատմելի խօսակցիդ շատ համեղ,
Պտուկներիդ կաթիլները կենաց գեղ,
Տեսութիւնդ ինձ մի անիլ անբաժին։

Երջանիկ ես, ով Տիրուհի, երջանիկ,
Նախածնունդ, որդիքներով անդրանիկ,
Յուսամ Աստուած միշտ կ'մնաս անառիկ,
Անանցնելի յաւերժ գունով գեղեցիկ,
Երևելի Մեծ Իշխանի Ամուսին։

Ղամբարաձև փռփռուն են աչքերդ,
Շրջահայեաց շատ սիրուն են աչքերդ,
Փայլակի պէս զուարթուն են աչքերդ,
Շատ հեռատես, իմաստուն են աչքերդ,
Գործ քննող ներքին ու միշտ արտաքին։

Ես ծնել եմ Քո ծոցումդ, իմ հոգեակ,
Հաւատարիմ Մայր գորովի ընդունակ,
Մեր ամենիս թագ պարծանաց և պսակ,
Ով որ լինի Քո պայմանիդ հակառակ,
Նա Քո մօտդ անարգուած է գլխովին։

Ցերեկ, գիշեր, ով իմ Մայրիկ մարդաշահ,
Հին դարերէն մինչ ց'կէտս որբապահ,
Քոյրերիցդ գերապատիւ նախագահ,
Չեմ մոռանայ քաջ անունդ մինչի մահ,
Անբաժան ես կենացս հետ միասին։

Իրաւն ասեմ՝ գեղեցիկ ես, մէկ հատ ես,
Ամեն բանով աներկիւղ ես, ազատ ես,
Արևելքից արևմուտք կը նկատես,
Քո Զիւանու խաւարն իջէ փարատես,
Քանի որ կաս, ես չեմ մնար անյուսին։

150

ՄԵՐ ՈՒՆԵՒՈՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ.

Երբ որ Աստուած կամենայ տալ մեր ազգին բարի կեանք,
Կուտայ յառաջ մեր Հայոց հարուստներուն խղճմտանք,
Մեր ազգի հարուստները անտարբեր են յիրաւի,
Հազարէն մէկ՝ խեղճերի համար նորանք չեն ցաւի,
Չեն մտածեր, թէ ունին եղբարք քաղցած, ծարաւի,
Նորանց մէջը շատ չ'կայ խղճի նշոյլ, գորովանք,

Աշխարհի մէջ միշտ այս է ամենազարմանալին,—
Հարուստների ձեռքումն է ազգի բաղդի բանալին,
Դէպքը այսպէս է բերել, սա է անխմանալին,
Սորանցից պիտի յուսալ բարիք թշուառ խղճալին.
Վարուիլ նորանց հետ սիրով՝ այս է յատուկ ցանկալին,
Մինչև նորանց որդիքը առնեն ուսում, մեծարանք։

Այնուհետև կ'բացուի բաղդի դուռը համարձակ,
Ամեն մարդու բաղձանաց համեմատ առհասարակ,
Նորանք կ'դառնան բոլոր ժողովրդին օրինակ,
Ամենը իւր քակից գնելով ջոկ հանգանակ,
Կը սկսուի յաջողիլ գործը այսպէս շարունակ,
Պարտքերը ճանաչելով էլ չեն սիրեր աղաչանք։

Կազմում է բացառութիւն առատասիրտ իշխանը,
Ամեն բարի գործի մէջ ցոյց տալով իւր նշանը,
Բաց է ամեն ժամանակ նորա շտեմարանը,
Այնպէս մարդը կ'ստանայ արժանի գովասանը,
Եւ աղքատաց համար էլ պատրաստ է միշտ սեղանը,
Վարձը վերնուստ կստանայ որչափ կրէ չարչարանք։

Աստուած ամենաբարին ամեն մէկին հաւասար,
Ստեղծել է աշխարհի մէջը ապրելու համար,
Բայց ինչո՞ւ է մինն աղքատ, մինը ունի մեծ գումար,
Սա բաղդ է թէ գիտութիւն, արի՛, կազմէ գաղափար,
Ես, Ջիւանի երգիչս, մտածում եմ անդադար,
Հարստութիւն գտնելու հարկաւոր է աշխատանք։

151

„Հ Օ“ Տ Ա Ռ Ը.

Երբ որ գլխատառից հասարակ դարձաւ,
Գլորեցին ատեանից «հօ» տառը.
Փոքրանալով «թօ»-ին հպատակ դարձաւ,
Ձրկըռւեցաւ բառարանից «հօ» տառը։

Մտաւ ելաւ հարիւր տեսակ տպարան,
Ձևը չ'կորցրուց, պահեց ինքն իրան,
Շատ էլ մամուլի տակ սեղմեցին նորան,
Ազատ պրծաւ ոլորանից «հօ» տառը։

Երբ «ուա»ն սկսեց «թօ»-ի հետ մեծ դատ,
«Սէ»ն «բեն»ը բառգրքում տեղ գտան ազատ.
Մեծ «Կէն»ի շնորհիւ նորանց համեմատ,
Դուրս գալ կուզէ տանջարանից «հօ» տառը։

Ջիւա՛ն, չ'լինելով գեղագիր նոտար,
Կոպիտ «քէ»ն էլ նորան չի թողնում դադար,
Ոհն ու ահը իւր ճակատում գրած կար,
Երբ դուրս ելաւ ձուլարանից «հօ» տառը։

152

ՍԵՒ ՆԱԽԱՆՁ.

Զրկամ, մաղձոտ սրտից ծնած օձաձև,
Լոյսին խաւար ասել տուող սև նախանձ,
Հոգիդ սև է և քու կերպարանքդ սև,
Բուստին ձաւար ասել տուող սև նախանձ:

Անգութ անզգայ ես, քո խիղճդ մեռած,
Անըստուեր մարմին ես անկիւնում ընկած,
Լեզուդ թունաւոր է և սիրտդ նեխուած,
Մարդուն տաւար ասել տուող սև նախանձ:

Ջիւան, նախանձ մարդը չի լինի ուրախ,
Նորա կերած հացն է արիւն ու թարախ,
Ազնիւ հանքաբանին դարձնող խարդախ,
Ոսկուն կապար ասել տուող սև նախանձ:

153

ԹՇՈՒԱՌ ՊԱՆԴՈՒԽՏ.

Թշուառ պանդուխտ, հայրենիքիդ արա այց,
Օտարներու մօտը վէրքիդ չ'կայ դեղ,
Հայրենիքից հեռանալը ցաւ չէ, բայց
Երախտաւոր հայրեր, մայրեր կան այնտեղ:

Մայրենի երկիրը ծնող է յատուկ,
Առանց նորան մարդն է ինչպէս որբ մանուկ,
Թէև կապրի իրաւ, բայց իբրև թզուկ,
Մօրից խլուած գառը չի լինի ուժեղ:

Ջիւանի, քեզ նման տկար պանդուխտը
Անգործ ման է գալիս շուար պանդուխտը,
Հայրենիքից հեռու օտար պանդուխտը,
Վիզը ծուռն է, ոտքերը կաղ, ձեռքը խեղ:

154

Խ Ի Ղ Ճ.

Երկնային ճանապարհը հարթողը դու ես, խղճմտանք,
Ում մէջը որ դու չ'կաս, այն մարդը չունի բարի կեանք,
Դու Արարչէն բաշխուած հոգւոյ առաջնորդն ես յատուկ,
Քեզ հետևող սրտերը հաստատ կ'մնան անփտանգ:

Քեզանով չարն ու բարին մարդիկ կը որոշեն լրիւ,
Քո դէմդ մեղանչողին Աստուծմէն կ'իջնի հալածանք,
Կռապաշտ, մահմետական, եբրայեցի, քրիստոնեայ,
Բոլորի համար դու ես օրէնք, բնական հրահանգ:

Վա՜յ հազար անգամ նորան, ով որ քո ձայնդ չի լսեր,
Կենդանի աչքով պիտի տեսնի հազար ու մէկ չարչարանք,
Երանի այն մարդոցը, որոնք կ'հետևին քեզի,
Ես Ջիւանս տալիս եմ սրտով սիրով, միշտ գովասանք:

155

Ս Ր Տ Ե Ր.

Եթէ մի սիրտ սրտի չի՛ սիրեր հոգւով,
Այնպիսիք իրար հետ ապրիլ կարող չեն,
Նոքա միշտ կ'մնան իրար հետ խռով,
Ատող են մէկ մէկու, գործ կատարող չեն:

Իրար ատող սրտերը թող խափանուին,
Եթէ չ'հեռանան՝ 'իզուր կ'սպանուին,
Միատեղ մնալուց լաւ է բաժանուին,
Ըստորում միմեանց ճիշտ յարմարող չեն:

Այսպէս ընկերութեան վերջն է շատ թշուառ,
Կրակի պաշար են սոքա որպէս ծառ,
Մէկի կեանք ասածը միւսին թուի՛ դառ,
Սորանք իրարու սիրտ մխիթարող չեն:

Վաղճանն ի՞նչ է այսպէս բանին, ո՛վ Ջիւան,
Դեռահաս կ'տանի մարդուս գերեզման,
Թէ ապրին էլ՝ կարծիր միշտ կիսակենդան,
Ստուեր են աշխարհի մէջ կեանք վարող չեն:

156

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

Զարմանալի կայ մի բան, աշխարհ կ'վախի այն բանից,
Այն բանը երկիւղ չունի ոչ արքայից, ոչ իշխանից,
Հինգ հարիւր տարի հազիւ լինի նորա ստեղծուիլը,
Բերանից կ'յղանայ դարձեալ կ'ծնի բերանից:

Ինքը մեռած է, սակայն կենդանեացը վաղճան տուող,
Յարութիւն կառնի մէկէն, երբ որ կ'հանեն պատեանից,
Բայց սորա ստեղծողը Ասիա չէ, Եւրոպա է,
Այս բանը ծնուել է նախ Ֆրանսիոյ գործարանից:

Իմ պահուստից Ափրիկէի մէջ չ'կայ այնքան բազում,
Կարող ես տեղեկանալ աշխարհատես պատմաբանից,
Պէտք է խնդրենք յարաժամ Արարիչէն, Աշըգ-Ջիւան,
Միշտ հեռու պահէ սորա վնասները Ռուսաստանից:*)

157

ԸՆԿԱԾ ՄԱՐԴԸ.

Ընկած մարդը չունի հաստատ օգնական,
Կողմը պահողը քիչ՝ գանգատողը շատ,

*)Ծանօթ. Հին ձեւի հրացան.

Տառապելոյն եթէ կանչեն դատարան,
Մեղքը սուտը քիչ, հաստատողը շատ:

Ո՞հ թշնամիս չը ընկնի չար լեզուի տակ,
Ամեն կողմից գլխին կ'մաղեն կրակ,
Ընկած մարդը թէ լինի էլ հրեշտակ,
Բարին խօսողը քիչ, նախատողը շատ:

Զգուշացիր չար խօսողներուց, Ջիւան,
Մազի չափ սխալդ կ'շինեն գերան,
Ընկած մարդն է մոլոր ոչխարի նման,
Հոգսը քաշողը քիչ՝ գիշատողը շատ:

158

Դ Օ Շ Մ Ա Ց.

Թէ կ'նեղանայիր քեզ սիրողներից,
Թող գեղեցիկ չ'լինէիր, ո՛վ սիրուն,
Օրինակ առ հոգիս, համբերողներից,
Բարկանալով՝ քեզի դու կանես նկուն:

Իշխանաց պարտէզից քաղուած ծաղիկ ես,
Պարկեշտ մօրից ծնուած բարի աղջիկ ես,
Փառք տուր Արարչիդ որ գեղեցիկ ես,
Տգեղներուն ո՞վ կ'նայէ՝ յիմար դուն:

Գեղեցիկը աշխարհիս մէջ հզօր է,
Թէ ծնուել է պարկեշտ գիտնական մօրէ,
Գեղեցկութեանդ չափ շնորհք սովորէ,
Որ ունենաս այնիւ քաջ բարի անուն:

159

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ.

Ժուժեա՛, սիրտս, և համբերէ ցաւերուն,
Համբերելով ամեն մի գործ կատարի.
Աստուած հասնի նախ ընկղմած նաւերուն,
Յետոյ ինձ թշուառիս սուրբ Տէրն բարի:

Յիշէ Տէրը, օրինակ ա՛ռ Նորանից,
Չարչարուելով՝ օրհնէնք կ'ելլեր բերանից,
Շնորհակալ եղի՛ր դու այսքան բանից,
Սի՛րտ, դու այս ցաւերը տա՛ր և յօժարի:

Կ'կրեմ անունը այն Հմայեակին,
Որ է քաջ եղբայրը սուրբ Նահատակին,
Սի՛րտ, յիշէ Ղևոնդին ու սուրբ Սահակին,
Բանդում չարչարուեցան քանի՞ մէկ տարի:

160

ԲՈՒՊԱՅԻ ԴԻՒԱՆԻ.

Ինչո՞ւց է բան հասկացող մարդոցը միշտ բանբասում են,
Մականուններ կնքելով՝ կարգէն մոլորեալ դասում են,
Եզուիտ ու ցածրահոգի անխիղճները հարուած տալով՝
Զգայուն թարմ սրտերը ամեն միջոց վնասում են։

Ովքե՞ր են բանբասում են ազնիւ, խոհեմ գիտուններուն,
Մանաւանդ ուսում առած պարկեշտ, խելօք արթուններուն,
Խաբուելով եզուիտական կարգէն եղած բաբուններուն,
Զարգացած մտքով խելօք մարդուն անիրաւ ասում են։

Ո՛վ Ջիւան, մեր երկրի վերայ խաւար մութն է տիրում,
Մարդ չ՚կայ Քրիստոսին լող, թէ ինչ է պատուիրում,
Քաջ լուսաւորեալներից պառաւներին շատ են սիրում,
Նետ դնել տալով նորանից մեծ մեծ բաներ են սպասում։

161

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ.

Հայոց քաղցր և ճոխ լեզու,
Անուշիկ բառերուդ մատաղ,

Թէ հին, թէ նոր, լաւ պտղատու
Քու տնկած ծառերուդ մատաղ։

Թէև ունիս ոխակալող,
Բայց դու կաս, չես մաշող հալող,
Ամեն լեզուի յարմար գալող
Մեսրովպայ տառերուդ մատաղ։

Հայոց բառբառ միշտ գովանի,
Մեր մօր լեզուն մեզ ընտանի,
Ընդարձակ բազմակողմանի,
Մտաւոր ճառերուդ մատաղ։

Ադամայ լեզուն ես հաստատ,
Ծլէ՛ր, ծաղկէ՛ր, գցէ արմատ,
Ունիս փայլուն ճրագներ շատ,
Մշտապէս վառերուդ մատաղ։

Ո՞վ ունի քեզի չափ քանքար,
Լեզու քիչ կայ քեզի յարմար,
Հայոց եկեղեցու համար
Ստեղծած բառերուդ մատաղ։

Խրթին մեր Նարեկի նման
Գիրք ես տուել մեզ պատուական,
Խորախորհուրդ ճիշտ գերընական,
Մութ մռայլ մառերուդ մատաղ։

162

ԲԱՆԱՍՏԵՂԾ.

Բանաստեղծի բնական ձիրքը միշտ վառ կ'լինի,
Խելքը ամփոփ, բոլորուած, միտքը պայծառ կ'լինի,
Թէ հարուածէ, թէ գովէ՝ նա անաչառ կ'լինի,
Բանաստեղծին չ'յարգող մարդը թշուառ կ'լինի։

Բանաստեղծին ճշմարիտ մարդկանց կարգն են դասում,
Հոգւոյ, սրտի սփոփանք նորանից են սպասում,
Ինձ նման չոր ու ցամաք գրողներուն չեմ ասում,
Դրախտ նկարագրեմ չորցած անտառ կ'լինի։

Բանաստեղծի աչքերը փորձաքար են հաստատուն,
Չեն դադարի քննելուց լաւ ու վատը օրն ի բուն,
Ծածկուած գաղտնիքները շուտ իմացող, զգայուն,
Գրելու մէջ սոխակի՛ց քաղցրաբարբառ կ'լինի։

Բանաստեղծի տաղանդի հետք է եղաւ ուսումը,
Գրուածներում կ'փայլի կինամոնը գրքումը,
Ո՛րտեղ գտնեմ Րաֆֆիի մտքերի ընդլայնումը,
Որ մի չոր փայտ էլ գովէ պտղատու ծառ կ'լինի։

Ջիւա՛ն, բանաստեղծներուն մեծ հոգի հսկայ գիտեմ,
Նորանց ամեն խօսքերը անգին շափիւղայ գիտեմ,
Բանաստեղծի գրիչը երկնային ընծայ գիտեմ,
Ժողովրդի կրթելով բարեաց պատճառ կ'լինի։

163

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք.

Տաճկաց բինգեօլի եղանակին.

Երբ որ լինի գարնամուտ, նոր գարուն,
Կ'բազմանան վտակներդ, Հայրենիք.
Շար 'ի շար ցնծութեամբ երգով զուարթուն
Շարժւում են բանակներդ, Հայրենիք։

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,
Պէսպէս գունով ծաղիկներդ գալարուն,
Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն
Քո հարազատ մշակներդ, Հայրենիք։

Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քո միջիցդ անմահութեան հոտ կուգայ,
Հազար ափսոս լուսաւորուած չեն հիմայ
Ժողովուրդդ, զաւակներդ, Հայրենիք...

164

Օ Ր Ե Ր Ս.

Անցաւ օրերս լացով ու հառաչելով անցաւ,
Աչքիս հեղեղը ձայն տալով, կարկաչելով անցաւ.

Յոբից առաւել ցաւերու հանդիպեցայ, աւա՜ղ,
Ո՜հ իմ կենացս մեծ մասը ամաչելով անցաւ։

Գալով սիրելի կեանքիս հատոր անձկալիս անմեղ,
Գառը կորուցած, ոչխարը բառաչելով անցաւ,
Սիրտս բեւեռեց, ձեռքերս գամեց սիրականս,
Կուրծքիս վերայ իմ բազուկներս խաչելով անցաւ…

165

ՀԱՐՑԵՐ.

Ի՞նչ բան է երկնքից կիջնի երկիրը,
Նովաւ կ'կշտանայ աշխարհն ընդհանուր,
Ինչո՞վ է մարդկային ամբողջ խնդիրը,
Ի՞նչն է որ կ'դառնայ անանխ, անջուր։

Աշխարհի չո՞րն է շատ թէ, ասա, ջուրը,
Ո՞ւմ էր թոռնիկ դառաւ իրա կեսուրը,
Ի՞նչ թռչուն է որ աբեթ է փետուրը,
Որ կ'թռչի թեւերից կ'թափի հուր։

Ո՞վ է ինձի պատմէ ամենաբարի,
Ի՞նչն է յամառութեան միշտ կ'յօժարի,
Ո՞վ էր մեռաւ, յարեաւ, ապրաւ շատ տարի,
Երեսը անծիծաղ, սիրտը միշտ տխուր։

166

ԻՄ ԱՆՑԱԾ ՏԱՐԻՔԸ.

Իմ անցած օրերս անցած տարիքս
Այսօր իմ աչքերիս երազ կ'թուայ,
Ոչինչ համարելով բոլոր բարիքս՝
Նախանձ թշնամու մօտ տնազ կ'թուայ։

Կորուսի օրերս թանկ ու անման,
Իմ թշնամուս տալով պատիւ, գովասան.
Եթէ տասը մատս մոմի պէս լոյս տան,
Դարձեալ անկամորդին նուազ կ'թուայ։

Բա՞ւ է անձն իմ, բաւ է դու քեզի խաբես,
Սայերջանիկ ապրիս, խեղճ հոգիդ լափես,
Ջիւան բերանիցդ մարգարիտ թափես՝
Քեզի ատողներուն աւազ կ'թուայ։

167

ԲՈԽՓԱՅԻ ԴԻԽԱՆԻ.

Իսկ Արարչից ամեն մարդու մէկ բնութիւն տրուած է,
Որը ազատ որը գերի ցաւերու մէջ խրուած է,
Ճշմարիտ խօսողներու գագաթները ծակ պէտք է միշտ,
Որովհետև սուր ձեռքից կեղծաւորաց մրուած է։

Ճշմարիտ քաջ գինուորը, տես, կռւում է, սուսեր չունի,
Աղքատի մեծ գիտունը իւր տանը մէկ լապտեր չունի,
Քաղցրը արդեօք ինչո՞ւ իրան համեմատ ընկեր չունի,
Կարելի լաւը վատին ընտականից գրուած է։

Կեղծաւորը աշխատում է միամըտին խանգարէ,
Հետեւում է պարզախօսի ունեցածը աւարէ,
Ուզում է ճշմարտութեան հանդէպ կռիւներ հանճարէ,
Ստախօսի աղեղը լարուած՝ սուսերը սրուած է։

Տե՛ս, Ջիւա՛ն, ուղղախօսին երթալու ճանապարհ չ'կայ,
Սուտ լուրերը չորս բոլորը փաթաթել են, համար չ'կայ,
Հիմայ նորէն երկընուց ձայնէ հրեշտակ, ճար չ'կայ,
Երբ մի մարդու անունը վատ աշխարհի մէջ ցրուած է։

168

ԴԻԻՊԷԻԹ.

Իմ սիրուն, հագած հալաւդ
Գեղեցկութեանդ յարմար չէ.
Տարածուել է քո համբաւդ,
Աւա՛ղ, որ քեզի համար չէ։

Կորուսիր թանգ ժամանակդ
Չ'ճանաչելով վիճակդ,
Իմանում եմ նպատակդ,
Գաղափարդ գաղափար չէ։

Մի ձգեր այլոց գլխին քող,
Որ տեսնելու չ'ըլնին կարող,
Չկայ քո լուսիդ կարօտող,
Հիմայ դարը շատ խաւար չէ։

Քանի չէ իմացուել լուրդ,
Տեղը դի՛ր դաշոյնդ, սուրդ,
Քո կերցրած կերակուրդ
Ախորժակի օգտակար չէ։

Յայտնի է գործած դարանդ,
Ո՞վ չի՛ գիտեր ծուռ է բանըդ,
Չի՛ համոզուիր ստութեանդ,
Հոգի՛ս, Ջիւանը յիմար չէ։

169

ԳԱԼԵՆՏԷՐԻ.

Ինձնից մի հեռանար սիրոյ բարձր հեղինակը,
Ծագեա՛ մտացս աշխարհի մէջ Քո արեգակը,
Ինքդ ես բոլոր աշխարհի միջին սէր տարածողը,
Անբաղդ չէ մի մարդ, երբ ունի Քու սիրոյդ պսակը։

Սիրով ամենայն բան Քո մտացէն յառաջ եկաւ,
Մարդուն սիրելով ղրկեցիր աշխարհ Քո Զաւակը,
Ինչ մարդ Քո սէրը իւր մտաց մէջը որ չունեցաւ,
Իսպառ չի գիտեր նա սիրոյ քաղցր եղանակը։

Երբ ես ծնողից ծնուել եմ ու յայտնի եմ եղել,
Սիրոյդ բաժակով ըմպել եմ քաղցր օշարակը.
Անվերջ ու անսկիզբ սէր է իսկ անունդ, անմահ,
Հաստատ ապաւէն միայն ես մարդկանց նպատակը.
Ապրիմ, թէ մեռնիմ Ջիւանս, թէ ողջանամ ես,
Այժմ և յաւիտեան Քո սիրոյդ եմ հպատակ։

170

ՄՈԻԽԼՆՄԷՋ.

Իմ բնութեանս համեմատ մէկ հատ բարեկամ չ'գտայ,
Անցուցած օրերուս մէջ երբէք ուրախ ժամ չ'գտայ,
Չ'գտայ իմ սիրտս ուրախ, մինչև մի անգամ չ'գտայ,
Ամենևին ուրախ օրեր, ուրախ ամիս, ամ չ'գտայ։

Այս դաւաճան, գոռող սրտիցս չի մնար միտքս մաքուր,
Մաշում է անուշ կեանքս տառապանքով դատարկ ճգուր,
Մինչև անգամ երակներուս միջի արիւնն էլ է տխուր,
Կազմուածքիս մէջը ուրախ փնտռեցի անգամ չ'գտայ։

Ամենևին բան չիմացայ, կորան պատուական օրերս,
Ներկայ չի յիշուի անցեալը, եղան աննշան օրերս,
Մի ազատ կեանք էլ չունեցայ սև ու մութ անցան օրերս,
Վերջապէս աշխարհի մէջ քմքիս հաճոյ համ չ'գտայ։

Ինձի թշուառի պէս բռնելու համար թակարթներ լարեցին,
Իմ ունեցած բոլոր կայքս ինձ խաբելով աւարեցին,

Իմ իսկական բարութեանս դէմ չարութիւն հնարեցին,
Ո՛չ հօրէ, ո՛չ եղբօրէ, ո՛չ մէկէն խնամ չ'գտայ։

Խեղճ Ջիւանս ես ըմպեցի դառն օղիով դաւը բոլոր,
Ջնչին ունեցած բան է եղեր աշխարհի համբաւը բոլոր,
Քննեցի ու իմացայ ընկերներուս ցաւը բոլոր,
Ինձի նման կեանքը մէկին թառամ ու թարշամ չ'գտայ։

171

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ը.

Իմ կարողութեան չափ որքան որ գիտեմ,
Պիտի գովեմ ես աննման Թիֆլիսը,
Կեանքիս մէջը ես վատութիւն տեսած չեմ,
Ինձ յարգել է միշտ պատուական Թիֆլիսը։

Աստուած օրհնէ սորա հողն ու ջուրը,
Բազմացնէ գործը և առուտուրը,
Հետը ուկի բերէ սատմական Կուրը,
Փարթամանայ ազնուական Թիֆլիսը։

Բազմալեզու, բազմակրօն, բազմամարդ,
Ժողովուրդը անհոգ, ուրախ և զուարթ.
Կարմրաթուշ թէ ծեր թէ երիտասարդ,
Սիրուններու բնակարան Թիֆլիսը։

Մայիս ամսում կարծես դրախտ կ'դառնայ,
Ամէն մարդ ժպտալով տանից դուրս կուգայ,

Գնում են Մուշտայիդ և Օրթաճալայ,
Կեանք կ'ստանայ հին բուրաստան Թիֆլիսը։

Ողջ Կովկասի քաղաքներու թագուհին,
Ինչպէս աստղերու մէջ փայլող մի լուսին,
Եօթը միլիոն ժողովրդի մայր տիկին,
Տարածում է վեհ հրաման Թիֆլիսը։

Այստեղի մարդկանց մէջ չ'կայ իմ ու քու,
Իրար յարգող, սիրող, հնազանդ, հլու,
Ամէն շաբաթ տօն է մէկ եկեղեցու,
Ունի բազում զբօսարան Թիֆլիսը։

Տուել է տէրութեան մեծամեծ մարդիկ,
Քաջ քաջ գեներալներ, գիտնական անձինք,
Հայրենիքի համար գործել են բարիք,
Լսել, հրճուել է պատուարժան Թիֆլիսը։

Ունի երկու մեծ բանտ ունի ամրոցներ,
Մեծ հօյակապ տներ, լայն-նեղ փողոցներ,
Ունի արհեստանոց, կերպ կերպ դպրոցներ,
Ափսոս չունի համալսարան Թիֆլիսը։

Հարուստը շատ հարուստ կապրի ապահով,
Աղքատը ծարայեղ, աղքատ տունը, սով,
Հանքային ջրերով բաղանիքներով
Համարւում է բժշկարան Թիֆլիսը։

Թիֆլիսը Կովկասի համար ճրագ է,
Զարգացած մարդկանցով պսակ ու թագ է,

Կարելի է ասել՝ հայաքաղաք է,
Պահում է շատ հայադաւան Թիֆլիսը։

Բարեմաղթենք լինի Լոնդոնի նման,
Զարգանայ արհեստով ծաղկի ամեն բան.
Ամեն մէկում հարիւրաւոր բանւոր կան,
Պատրաստել է վեց գործարան Թիֆլիսը։

Մեծ Ինքնակալ Կայսրն ամենաարդար,
Գորովագութ հայր է բոլորիս համար,
Սիրում է ազգերին համահաւասար,
Ունի հզօր տէր ու պաշտպան Թիֆլիսը։

Մեծ մարկանց մարմիններ իբրև գանձ անգին,
Պահում, է շիրիմներ շինած ամենին,
Մէկը Վարանցովին, միւսը Պուշկինին,
Կանգնեցրել է ջուխտ արձան Թիֆլիսը։

Կայ տասը լրագիր լեզուով չորս տեսակ,
Բոլորն էլ մարդկութեան օգուտ, ընդունակ,
Ամենն էլ բանում են գործերն աջողակ,
Ունի վեց-եօթը տպարան Թիֆլիսը։

Կան ընկերութիւններ բարձրից հաստատուած,
Օրէնքով ճանաչուած և գնահատուած,
Կարծես հանգամանքից յատուկ խրատուած,
Դառնալու է բարոյական Թիֆլիսը։

Ազատուելով բարբարոսաց ձեռքից,
Հին ցաւերը նա հանել է մտքից.

Զար ու բարի շատ են անցել գլխէցդ,
Կ՚լինի հազար տարեկան Թիֆլիսը։

Թէ գնալու լինինք հարիւր տարի յետ,
Քաղաքումս եղել է առանձին ջոկ պետ,
Այժմ միացած է Ռուսիայի հետ,
Հնումն է եղել Վրաստան Թիֆլիսը։

Քաշող զօրութիւն կայ արանում յատուկ,
Գալիս են օտարներ յայտնի թէ ծածուկ.
Ո՞րքան պանդուխտներու ջրումն ինչպէս ձուկ
Որսացել է որպէս ուռկան Թիֆլիսը։

Փողի կողմից հարուստ հայերն են այստեղ,
Վրացիք էլ ունին կալուածներ շքեղ,
Հին ցեղի իշխաններ փարթամ, փառահեղ
Ծոցումն ունի մայր ախրական Թիֆլիսը։

Երկաթուղիները գոռում են, գոչում,
Ամեն օր մարդ, ապրանք այստեղ են լցնում.
Բագուի ու Բաթումի մէջ տեղն է ընկնում
Առուտուրի մեծ կայարան Թիֆլիսը։

Էլ որքան թալթ, մուրթադ որ կայ Իրանում,
Միշտ լցւում են Կովկաս և փող են տանում.
Ինչքան հիւանդ, կոյր, կաղ, խեղ է պահպանում
Անկեալներու պատսպարան Թիֆլիսը։

Ջիւան, Աստուած երկար օրեր կամենայ,
Տոկուն լինի հաստանքներուն դիմանայ,

Շէն ու հաստատ լինի ծաղկի զարգանայ;
Չ՚ընկճուի մինչ յաւիտեան Թիֆլիսը։

172

ՀՈՂԱԳՈՐԾ.

Գարունն անցաւ եկաւ ամառ,
Դեռ կ՚ննջես դուն, հողագործ՚,
Եփր մէկ ժամանակ կայտառ,
Ե՞ր քնիս, արթուն հողագործ։

Անձիդ մէկ լաւ հագուստ չունիս,
Կարծում ես թէ կորուստ չունէս.
Օրերդ անցան ապրուստ չունիս,
Մերձեցաւ աշուն, հողագործ։

Թշնամիք լոյսդ մարեցին,
Քեզ միամիտ համարեցին,
Դաշտերդ օտարք վարեցին,
Քեզ թողին նկուն, հողագործ։

Արիութիւնդ վանեցիր,
Քեզ պարապ ձմեռ հանեցիր,
Ոչ շինեցիր, ոչ ցանեցիր,
Անհաց ու անտուն հողագործ։

Աղքատութեան յօժարացար,
Օրըստօրէ տկարացար.

Ի՞նչու այդպէս յիմարացար,
Ա՜խ իմ բանիբուն հողագործ,

Ներկայս այսպէս դու խղճուկ կաս,
Նորից կամին տալ պատուհաս,
Թշնամիք կուզեն չունենաս
Աշխարհը անուն, հողագործ։

Ահա քեզ վկայ Արարատ,
Որ եղել ես դուն պայազատ.
Ո՞ւր են որդիքդ բազմաշխատ,
Անուշիկ, սիրուն հողագործ։

Նստած որդիքներդ վաղիւ,
Քեզնից պահանջում են հաշիւ.
Ո՞ւր են քո դաշտերդ անթիւ,
Լեռներդ անհուն, հողագործ։

Ճանաչեցիր չարն ու բարին,
Իմացար գործն աշխարհին.
Մինչ գայ նորոգեալ տարին,
Կ'սպասէ գարուն, հողագործ։

Վեր կաց ի՞նչու սիրտդ հով է,
Հոգիդ հանգիստ չէ, անխռով է,
Խելքդ գլուխդ ժողովէ,
Բարի, զգայուն հողագործ։

Ջուր մի՛ վաճառեր լաւ օրդ,
Զօրացուր հսկայ, հզօրդ,

Պատրաստիր գութան արօրդ,
Սերմ ճարէ աճուն, հողագործ։

Խելքով Եւրոպին յարմարէ,
Քո արտերդ կառավարէ.
Ամեն գործդ լաւ կատարէ,
Ինչպէս իմաստուն հողագործ։

Մի՛ թէ քեզ պէտն էլ չէ՞ր ծնած,
Միայն քու բաղդդ կոյր մնաց.
Այս օրերս անցաւ գնաց,
Եղև երիկուն, հողագործ։

Ձիւանը քո բարեկամն է,
Ըստ որում գործքդ անդամն է,
Արադ թուիր քանի ժամն է,
Եղիր մէկ թուչուն, հողագործ։

173

ԲԱՍԵՆՑՈՒ ԵՐԳ.

Սէվկիւլլի ախպէրս, ջանս, ջիգեարս,
Մէջը դարիբութեան ո՞րման է հրճպ.
Հրմըքի կտրել է սապրըս, ղարարըս,
Կաշեմ չի գալ վաթան ո՞րման է հճրպ։

Էս բանը իմ սրտիս շատ դիժար կուգայ,
Հեռէուանց խէրի տեղ մեննակ դարտ կուգայ,
Փայլուանս տըզման ո՛ր մանէ հրճպ։

Սրտին եմ բարկցել, դարձել բարակ թել,
Իմ դարտիս աշխարհը դարդ չ'կայ յաւել,
Ախպէր ջան կանչելով կէս մարդ եմ եղել,
Անտէր, անտիրական ո՞ր ման է հճրպ։

174

ԹԵՃՆԻՍ.

Իմ տուած յարգանքս, պատուելի՛ ընկեր,
Անկեղծ սիրելիի պատիւ համարէ,
Իմացի՛ր, քո սէրդ սրտումս է ընկեր,
Այրիլս քո տեսոյդ, քեզի համար է։

Հագել, զարուել ես գեղեցիկ հալաւ,
Ամէն մարդ քեզ կասէ գեղեցիկ հա՛ լաւ։
Հոգիս կրակովդ գեղեցիկ հալաւ,
Թէ խիղճ ունիս, մէկ մտածէ, հա՛, մարէ։

Զիւանիիս վերքերն արիր քարանցաւ,
Մարդ եմ ես, սիրելի՛, չեմ իսկ քար, անցաւ,
Քո մասին գլխիցս քանի՛ քար անցաւ,
Լե՛ր ցաւակից, արի՛, թուէ, համարէ։

175

ՄԵՐ ԴԱՐԸ.

Ի՞նչ վատ ժամանակի հասանք, ով Աստուած,
Շատ վատ է երեւում աշխարհի կեանքը,
Բազմացան անկամորթ ագահները ցած,
Խաբում, կլանում են այլոց ապրանքը։

Ժամանակիս քիչ կայ լաւ երիտասարդ,
Ըստ մեծի մասին են խաբեբայ, կոխարդ,
Որտեղ որ տեսնում ես շրջամոլիք մարդ,
Ծուլթիւն է նորա բոլոր բաղձանքը։

Վատ քարոզիչներ ելած են հանդէս,
Խաբում են շատ մարդու երեխայի պէս.
Ներքուստ գայլի նման հօտն անում են կէս,
Արտաքուստ հովուի հետ քուքուանքը։

Կարծեմ, չի լինիր այսպէս մի շփոթուած դար,
Երթալով կ'շտանայ անխիղճն անհամար,
Մարդկանց թոյն են տալիս շատ արուեստաբար,
Կուտեն, չեն հասկանայ գալած փորձանքը։

Մի խումբ մարդիկ կան, որ ողջը բացբերան,
Ո՛չ Աստուած կ'յիշեն և ոչ դատաստան,
Ձեռքերն ընկած մարդը ճիշտ սագի նման,
Կ'պլոկեն խեղճի ողջ զարդարանքը։

Կիսատուսում մարդու խօսած առակը,
Կ'մարէ միամիտ մարդկանց կրակը.
Դեղ տալու փոխանակ կ'հանէ ակը,
Կաւելացնէ առողջ մարդու տանջանքը։

Այս կերպ բժիշկները շատ են յառաջել,
Տգէտ, բան չ'գիտեն և չեն ամաչել,
Հազարից մէկ վարպետին չեն ճանաչել,
Շատ պակաս է իմաստունի յարգանքը։

Մի տեսակ հարուստ կայ նման տզրուկի
Կ'ծծէ արիւնը աղքատ ծերուկի,
Հաշիւ չի լինի ոսկեաճամուկի,
Կրկին աղքատներին կպճելն է ջանքը։

Արարչէ՞ց է այս պատիժը մեզ համար,
Որը մի վատ բան կ'ատանայ աշխարհ.
Դի ասելով կ'վազվազեն անդադար,
Բազմացել է գայլերի արշաւանքը։

Սրիկայի համար խրատն է տնազ,
Նա մարդ աւարելու կ'յարի փռազ,
Աչքն է ապօրինի գործի հանապազ,
Անխիղճ մարդը բան չի՛ սեպել գրկանքը։

Ո՞ւր է մարդկութեան հետ զգաստութիւնը,
Ո՞ւր է բարոյական պատրաստութիւնը,
Այժմ փող չի՛ անիլ նուաստութիւնը,
Ամէն կողմով շատ է իւր տառապանքը։

Գունդագունդ կ'շրջի անառակ բորդը,
Վատ խօսքերով կ'խոցոտեն մեր լեարդը,
Հանգստութիւն չունի միայնակ մարդը,
Ամեն օր կ'զգայ կեանքի զզուանքը։

Անամօթն աշխարհի՛ն շատ վնաս կուտայ,
Ճշտութիւն, երկիւղ նորա մէջ չ'կայ,
Որտեղ որ կ'տեսնին մի համեստ տղայ,
Կըսկսեն ետեւից հայհոյանքը։

Քննէ, գիտուն, այժմեան Առաքեալն խստակ
Ազգ յառաջ տանելու չունի նպատակ.
Ցերեկը մարգարէ, գիշերն աւազակ,
Լաւ հասկացի՛ր սրբի դու խղճմտանքը։

Զարութիւններից շատ հոգիս է տխուր,
Զոքել են սրտերիս ցաւերն ընդհանուր,
Հիմայ աղբիւրներից չեն վազեր պարզ ջուր,
Պղտոր է գետերու վճիտ հոսանքը։

Անգործ, պարապ մարդիկ շատ, չեն ուտեր հող,
Հարկաւ գորանք վերջը պիտի լինին գող,
Հարիւր մարդու իննսունը արբեցող,
Քննող չ'կայ, որտե՞ց է աշխատանքը։

Թէ որոնես հինգ անկիւնը աշխարհին՝
Դեռ ուշ կ'շիտկուի սիւնը աշխարհին,
Սի՛րտ, մի կարդայ պատմութիւնը աշխարհին,
Ցաւիտեան չեն հատնի ցաւոց գրեանքը։

Լուել է, չի՛ խօսի մեծ իմաստունը;
Զզուելով աշխարհից փակուել է տունը,
Դառն ժամանակի անդուր անունը,
Փակել է զգայուն մարդկանց բերկրանքը։

Տուրք ու ողորմութիւն, մէկ նուէր չ'կայ,
Մարդկանց մէջը յոյս ու հաւատ, սէր չ'կայ.
Բայց Աստուած՝ խեղճ մարդոցը տէր չ'կայ,
Ինքն է թեթեւցնող մեր չարչարանքը։

Ուրեմն այդպէս է՝ Ջիւանի երգիչ,
Շատ դատէ, շատ լսէ, ինքդ խօսիր քիչ,
Ամեն բան կ'ուզուի, կանչէ Արարիչ,
Քեզանից հեռացո՛ւր զուր բամբասանքը։

ՃՀԹ

Ս Ի Ր Ա Կ Ա Ն.

Սիրակա՛ն, քեզ ի՞նչ ասեմ, սպրապ գործ ու բան չունիս,
Ոսկէ ժամացոյց կուզես, կաշուց ոտնաման չունիս,
Թախանձում ես, խնդրում ես, թէ ինձի ա՛ռ լաւ շորեր,
Գիտե՞ս, թէ ինձ պատել են որպիսի սեւ սեւ օրեր,
Դառն մտածմունքներից խելքս գլխիցս է կորեր,
Ցաւիս բժիշկ գտնելու, մէկ դեղ ու դարման չունիս։

Կեանքս, միթէ չե՞ս գիտեր հիմիկուայ ժամանակը,
Աուխծի փորն է մտել անտէր փողի քսակը,
Կեանքը շուայլացել է, փոխուել է եղանակը,

Բոլոր մարդկանց կոկորդին դէմ է առել դանակը,
Ամա՛ն, ի՞նչուս յոյս դնեմ, որ մտնեմ պարտքի տակը,
Ինչ է, հարուստ դրացուդ պէս ապարանջան չունիս։

Երեխայքդ կրթութիւն, հաց ու ապրուստ են ուզում,
Փոխուել է ժամանակը, չի՛ լինի առանց ուսում,
Որ չենք կարող նրանց տալ մարդավայել կեր ու խում,
Գոնէ կրթենք մտքերը, որ չ'լինին թերի, հում,
Ասուհետ էլ չիթ հագի, թող չ'լինի ապրեշում,
Ես պիտի քեզ հաւանեմ, ուրիշ սիրական չունիս։

Քարմանդ, ճախարակդ ձեռիցդ մի թողուր բաց,
Թէ ուզում ես կուշտ փորով, առողջ կեանքով ուտել հաց,
Ծոյլ ու դանդաղ կնոջը ապագան է սուգ ու լաց,
Կարըդ, գուլպայ գործելդ յառաջ տար կամաց կամաց ,
Մօրդ պատուիրանները մաքուր պահէ, մտը կա՛ց,
Դու նորանի՛ց առաւել բարձր աստիճան չունիս։

Սեռիդ յատկութիւնն է, պէտք է տնարար լինիս,
Մարդիդ թեւին թեւընկեր, գործին օգտակար լինիս,
Զաւակներիդ խնամող, սրտին մխիթար լինիս,
Պահապան հրեշտակի նման բարերար լինիս.
Մահն է յատուկ, Ջիւանուդ, եթէ անկատար լինիս,
Թէ կատարես խօսքերս, էլ քեզի նման չունիս։

177

ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

Գեղեցկութեանդ չափ շնորհք չունիս դու,
Սիրուն ես, բայց զարգացած չես, ինչ անեմ,
Պատկերով, հասակով ազու ես, ազու,
Քո աժէքդ հասկացած չես, ինչ անեմ։

Պարապ անցած օրերուդ չես ափսոսում,
Աչքերս ջրի տեղ արիւն է հոսում,
Միայն գեղեցկութեան վերայ ես խօսում,
Ուրիշ բաներ իմացած չես, ինչ անեմ։

Լաւ է լինիլ աղեղ, չ'լինիլ ցանծաղ,
Իմացի՛ր, ինչ կասեմ, ով գեղածիծաղ,
Ես սիրում եմ կարդալ, դու սիրում ես խաղ,
Ուսումնարան գնացած չես, ինչ անեմ։

Ե՛կ, ընթանանք Ջիւանուս հետ միասին,
Մի՛ աշխատիր իմ անուանս վնասին,
Որտեղ որ գրուած կայ յատուկ ձեր մասին,
Դու այն գիրքը կարդացած չես, ինչ անեմ։

178

Ո Ւ Ս Ո Ւ Մ.

Ծտապլի՛ր, ով սուրբ ուսում, Հայոց մէջը շուտ շուտ արի՛,
Քեզանով անշուշտ պիտի սերունդներս լինին բարի.
Ընդհանուր պիտոյքներից աւել պիտանի ես մեզի,
Հացի չափ յարգելի ես, հարկաւոր ես ամեն տարի։

Ինչպէս որ Հայոց Վռամշապուհ թագաւորին տուիր,
Տարածէ պտուղներդ հիմայ Հայոց մէջ այն դարի,
Մովսէսի և Մեսրովբի նմաները բեր քո հետդ,
Հարկաւոր է մեզ համար այնպէս ուսուցիչներն արի։

Փառք Արարչին, հիմայ էլ ունինք ուսուցիչներ բազում,
Ցանկանում ենք մեր մէջը ես առաւել գալարի,
Ես անուսում, բայց գիտեմ արժէքը ուսման թանկագին,
Եթէ ինձ տան չեմ փոխիլ հետը հազար-բեւր գոհարի,
Բայց ես անբաղդ, խղճալի Ջիւանին եմ առանց ուսում,
Ծով գիտութեան մէջը ես մնացի առանց հանճարի։

179

Շ Ե Ք Ի.

Ապրիս հասակագեղ, խօսքերդ համեղ,
Չի՛ լինի ամեն տեղ քեզ պէս արարած,

Արարած՝ բայց ուժեղ, պատկերդ ահեղ,
Խելք ու շնորհք, ուղեղ տուել է Աստուած։

Աստուած քեզի շատ բան տեսել է արժան,
Արիւնդ պատուական, որպէս մի իշխան,
Ծնել է Շիրակուան քեզ պէս ախոյեան,
Հին Գողիաթի նման դուն ես անկասկած։

Անկասկած մարդ ես դու մարդկանց մէջ աղու,
Ճարտար, քաղցրալեզու, անվեհեր, հուժկու,
Թարմ ծառ ես պտղատու, պտուղդ ազդու,
Հնազանդ և հլու, բարի, երկիւղած։

180

ԿԱՐՆԵՑԻ ՀԱՅԱԳՈՐԾՆԵՐ.

Ախպար, արի ասօր էրթանք մեր պախչան,
Քիչմ նստինք զրցինք, քիչմա վարդ քաղենք,
Բանանք գաթով, հալուով լիքը մեր պողչան,
Խմենք ճերմակ ջուրը, քանի օր սաղ ենք։

Դունա խաղմ ըսէ իմ թասիս վրայ,
Բէլքի աս թէրմաշը անուշ կուլ էրթայ,
Աս աշխարհը հէչ մէ մարդում չի մնայ,
Ասօր հոս ենք, յէգվան կերթանք, զօնաղ ենք։

Ֆըռին յէրդէստանը մեզի կ՛մաշենք,
Մեր չօլուղ-չօճուղին դէրտը կ՛քաշենք,

Ասօր քէֆի օր է, քէֆերուս աշենք,
Յէգվան ալի էրթանք ալուրը մաղենք։

Գասպարն եմ, Աստըծմէն չեմ կտրեր յուսս,
Էրկուսիս սաղ պահէ իմ Տէր Յիսուսս,
Սաղ էսնըֆին մէջը մեննակ էրկուսս,
Քուլլի կսեն, թէ շատ սիրով օրթաղ ենք։

181

ՄՇԵՑՈՒ ԵՐԳԸ.

Թըրկեր եմ խեղճ, տկլոր գլիմ ճժեր, գլիմ տուն,
Կօլօրտիմ մէկ փշուր չոր խացի խամար,
Ըսկլի չունիմ դադար, ըսկլի չունիմ քուն,
Եօթ տարի է յինէ չունին մէկ խապար։

Զըմ գինայ թէ՝ մկայ ինչ ձուն տամ խալիս,
Կուրցեր են գլիմ աչեր, մացեր եմ լալիս,
Դուռըմ ըլէ չի բացուի իմ սև ճըղալիս,
Ձէմլէ էն Կիկօն եմ անօթի, անճար։

Խայու խաւատ, խայու Աստուած, փրկէ գլխ,
Դիպա Մշու դաշտը գլիմ տուն խրկէ գլխ,
Եա չէ առ իմ խոգին, ումըրէս գրկէ գլխ,
Ճամբախըս չիրիշկէ գլիմ սէֆիլ Նուպար։

182

ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐԳ

Աղջկայ մնաս բարեւը հօրը•

Ա ղ ջ ի կ ը.—Արի հայրիկ, արի իմ կեանք,
Մնաս բարեաւ, ես գնում եմ.
Անուշ ծնող, բարի իմ կեանք,
Մնաս բարեաւ, ես գնում եմ։

Հ ա յ ր ը.—Ունեցիր խելք, շնորհք ու շէնք,
Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ,
Ամուսնութիւնն է սուրբ օրէնք,
Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ։

Ա ղ ջ ի կ ը.—Էի ամեն հոգսէ ազատ,
Տանդ մէջ անմեղ, անարատ,
Օրհնէ ինձի, հա՛յր հարազատ,
Մնաս բարեաւ, ես գնում եմ։

Հ ա յ ր ը.—Փեսայիդ հետ սուրբ պայմանով
Ուրախացիր միշտ նորանով,
Տէրը օրհնէ իւր բերանով,
Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ։

Ա ղ ջ ի կ ը.—Ի՞նչպէս ջոկնուիմ քեզանից,
Մեծ ես ինձ համար իշխանից,

Բաժինս կտրաւ այս տանից
Մնաս բարեաւ, ես գնում եմ։

Հ ա յ ր ը.—Կեսրդ ու կեսրարիդ արժան,
Պատուէ հօրդ մօրդ նման,
Քեզ չեմ մոռնար յաւիտեան,
Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ։

183

ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐԳ.

Աղջկայ մնաս բարեւը մօրը

Ա ղ ջ ի կ ը.—Քաղցր մայրիկ, հոգեհայս հատոր
Օրնէ ինձի, ես գնում եմ,
Քեզ հետ ապրեցայ բաղդաւոր,
Մնաս բարեաւ, ես գնում եմ։

Մ ա յ ր ը.—Լրացաւ քո ժամանակդ,
Դուստր իմ, գնա՛, մի՛ լար, գնա՛,
Վայելէ թագ ու պսակդ,
Գնա՛, որդիս մի՛ լար, գնա։

Ա ղ ջ ի կ ը.—Բե՛ր, համբուրեմ ձեռքդ, մա՛յրիկ,
Կերել եմ կաթըդ անուշիկ,
Երանի չ՚լնէի աղջիկ,
Մնաս բարեաւ, ես գնում եմ։

Մ ա յ ր ը.—Մի՛ գնար վատ դրացու տուն,
Խելք ու մտքով եղի՛ր արթուն,

Ունեցիր միշտ բարի անուն,
Գնայ որդիս, մի լար, գնա։

Աղջիկը.—Կորեցիր քունդ ինձ համար,
Օրօր ասելով անդադար,
Ով իմ ճշմարիտ բարերար,
Մնաս բարեաւ, ես գնում եմ,

Մայրը.—Եկաւ փեսան, դու ոտքի ել,
Ի քեզանից նա առաւել,
Նորան քեզ Տէրն է կամեցել,
Գնա՛, որդիս, Աստուած քեզ հետ.

184

«ՍՕՈՒՔ ՍՈՒ ԲԱՇՆՏԱՅԻ» ԵՂԱՆԱԿՈՎ.

Պաղ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ,
Ձեռին սափոր, լցած ջուրն էր անուշիկ,
Աչք ու ունքը ղալմով քաշած գեղեցիկ,
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Պաղ աղբիւրի մօտը պարէզում նստած,
Ունէին լաւ գինի, գառի խորոված,
Երգում էին, պարում էին բոլորած,
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Նան էր գալիս ընկերներով միասին,
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին,
Մազերը ոսկեգոյն, ճակատը լուսին,
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Ցերեկը անդադար նորան եմ յիշում,
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում,
Տոչորուած ման կուգամ խեղճ, մոլոր, տրտում,
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

Ա՜խ, երանի այն աւուր, շատ երանի,
Տեսութեանը կրկին լինիմ արժանի,
Առանց նորան ես չեմ մնար կենդանի,
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան։

185

ԵՐԳ.

Իմաստութեան փափագ ունեցող անձը,
Հեզ ու խոնարհ, համեստ կատարեալ պէտք է,
Ճշմարտութեան զոհուել կամեցող անձը,
Ուղիղ, առաքինի առաքեալ պէտք է։

Սուրբ է հարսը անմահական Փեսային,
Ի նման Մարիամին, ոչ թէ Սառային,

Պինդ պահպանող հրամանը Արքային,
Հարազատ ծառայող կուսակալ պէտք է։

Բանիբուն լինողը չի ընկնիլ թակարդ,
Նա միշտ առողջ կեանքով կ'մնայ զուարթ,
Աշխարհի մէջ ինչպէս լինի, կ'ապրի մարդ,
Վերջին պատասխանը ուղիղ տալ պէտք է։

Ջիւան, բարութիւնը հաստատուն սէր է,
Աստծուց եկածը յատուկ նուէր է,
Ծուլութիւն աղքատութիւն կ'բերէ,
Հաստատ գոլծի համար միշտ ման գալ պէտք է։

186

ԱՌ ՎՍԵՄԱՇՈՒՔ ԿՈՄՍ ԼՈՐԻՍ ՄԵԼԻՔԵԱՆ.

Լիահանճար անարատ շնորհաց շտեմարան,
Վսեմաշուք ազնիւ Կոմս քաջդ Լօռու Մելիքեան,
Դուն Կովկասում ծնուած ես,
Բարի հոգւով սնուած ես,
Անմահ Փրկչի արիւնով
Մկրտուելով գնուած ես.
Գեղեցկատիպ պատկերիդ նման այլ տեղ չի՛ լինիլ,
Ցեղիդ նման շատ երկիր պատուելի ցեղ չի՛ լինիլ,
Լուսինը իւր աստղերով քեզ պէս շքեղ չի լինիլ,
Այնքան ունիս քեզ վերայ փառաւոր շքանշան։

Ամբողջ Ռուսաստանում հռչակուած ես, ով հերոս,
Քեզ վերայ բան գրելու հարկաւոր է Հոմերոս,
Նախ Կարսը կործանեցիր,
Տաճիկներին վանեցիր,
Հայրենեացդ պատիւը
Միշտ բարձր պահպանեցիր.
Թշնամիքդ ամօթու քեզի դարձան բարեկամ,
Քո պատիւդ, քո փառքդ աւելացաւ ամէ ամ,
Տէրութիւնը քեզ սիրեց գթառատ բարեխնամ,
Լիովին վարձատրեց տալով բարձր աստիճան։

Կեցցես, ապրիս, շատ ապրիս, կեցցես Տէրութեան համար,
Ամենևին գործի մէջ չեղար թերի, անկատար,
Ծագումովդ, ցեղովդ որպէս մէկ հատ անգին քար,
Ամենայն մի դարի մէջ գնահատող կարկեհան։

Մեր ողորմած կայսերի հարազատ թիկնապահը,
Հաւատարիմ ծառայող, ունելով Տիրոջ ահը.
Միջոցներ հնարեցիր,
Եղած չարը մարեցիր,
Ինչքան դժուար գործ տուին
Բոլորը կատարեցիր.
Անդադար աշխատեցար գիշեր ցերեկ առանց քուն,
Երկրորդ Դաւթի որդին ես դու Սողոմոն իմաստուն,
Վարակիչ հիւանդութեան առաջն առար հաստատուն,
Վտանգից ազատեցիր ողջ նահանգով Հաշտարխան։

157

Գ Ե Ա Փ.

Լսի՛ր, սիրելի՛, իմ աղաչանքս,
Արժան համարէ, լուր պաղատանքս,
Կեղծ մի համարեր իմ գովասանքս,
Սրտով սիրում եմ քեզ, բարի կեանքս։

Աստուած վկայ է քեզ սիրում եմ շատ,
Եղիր միամիտ, ընծայէ հաւատ,
Լինիս երանի սուրբ ու անարատ,
Սա է յարաժամ ցանկալի ջանքս։

Ամեն առաւօտ խնդրում եմ այսքան,
Սրտիդ համեմատ Տէրը տայ արժան,
Առանց քեզի ես եմ կիսակենդան,
Շատ է, նազելի, միշտ գորովանքս։

Ափսո՜ս, գեղեցիկ, չես նայում ինձի,
Տեսոյդ նայիլը խնայում ինձի,
Իզուր մի մաշեր ներկայում ինձի,
Արդէն կայ վաղուց իմ տոչորանքս։

Եղիր Ջիւանուս հաստատուն ընկեր,
Խաւար մտացս լուսատու լապտեր,
Սպասելով ինձ չ՚մնաց համբեր,
Սաստիկ աւելացաւ մոլորանքս։

188

ԱՇԱԿԵՐՏ.

Լե՛ր, աշակերտ, խելահաս մարդոց մօտը, ազնիւ տղայ,
Կանչելով իմաստութեան Հեղինակին արդար վկայ,
Տես թէ իմաստութիւնը որպէս հզօր թագաւոր է,
Իսկ հոգուդ կենդանութիւն, պարանոցիդ զարդեր կուտայ։

Հասկացող եղիր ու հասկացիր բանին ճշմարիտը,
Երբ կուզես տգէտ մնալ գերեզմանդ պատրաստ ահա,
Գիտցիր որ ինչ մարդ չունի իմաստութիւն և կեանք չունի,
Կանցնի արև, լուսինը, չտեսնելով կոյր կ՚մնայ։

Գիտունի միտքը բաց է, հայելւոյ պէս փայլում է միշտ,
Միշտ նորա սրտի եղած աշխարհումը արևը կայ,
Ով Ջիւան, «իմաստութեան սկիզբը երկիւղ տեառն է»,
Մարդը որչափ որ գիտուն լինի, սխալմունք կունենայ։

189

Լ Ա Ւ Է.

Լաւ է բոլորովին տգէտ յիմարը,
Քանց կիսաուսում խակ իմաստունը,
Լսածը չ՚գտած թերուս հանճարը
Խօսելով կ՚քանդէ շատերի տունը։

Գիտութիւնը գնահատել չէ կարող,
Լոյսը խաւարից զատել չէ կարող,
Լաւ բանը ուղիղ դատել չէ կարող,
Վերան կ՚առնէ գնապետի անունը։

Ջիւան, կան խելացի մարդիկ բնական,
Նոքա չեն համարուի ճիշտ ուսումնական,
Հազիւ ուսումնասէր կանուանէ իրան,
Ամեն բանից տեղեակ մտքով հասունը։

190

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԸ.

Խաբեբայ աշխարհը թէ լաւ նկատես,
Քիչ կ՚ճարուի հաւատարիմ բարեկամ,
Որքա՛ն մարդու հետ սրինդ սէր հաստատես,
Նա չի մնալ քեզ հետ սիրով յարաժամ։

Թէ դաւն չ՚լինի աշխարհ՚ի բանը,
Մարդիկ ինչո՞ւ կ՚հակուին դէպ դաժանը,
Թող դու արենակից մերձ ազգականը,
Եղբայրն իւր եղբօրը չի սիրել անգամ։

Միթէ պատուիրած չէ՞ անմահ Հզօրը,
Որ սպանել չի որդին իւր ծնող մօրը,
Ատելութեան ոգին ծագեց այն օրը,
Կայէնն ու Աբելը երբ ծնաւ Ադամ։

Տե՛ս, Ջիւան, մեղրի տեղ ծախելով լեղին
Խարդախը կ՚խաբէ խղճուկ անմեղին,
Նախանձը շատնալով մարդկային ցեղին,
Ափսո՜ս, սէրը պակասում է ամէ ամ։

191

ԽԵՂՃ ՄԱՐԴԸ.

Խղճալի մարդկանց համար աշխարհը նեղ է յարաժամ,
Ընտրում նորանք չունին օգնող, ցաւակից բարեկամ,
Ծեծւում են, զրկւում են իրանց բոլոր կայանքներից,
Վազում են դատարանը, դարձեալ չ՚կայ տանող խնամ։

Խեղճերը ցերեկ-գիշեր ինչո՞վ հազիւ մի բան ճարեն,
Բա՛յց անզգամները միշտ կ՚ապրին առանց ինչ անդրամ,
Պարզ ու ճշմարիտ եղող մարդիկ կարող չեն ապրել հեշտ
Խաբեբայ անձինք նորանց չեն տայ շնորհիւ գործի համ։

Վերջապէս ճշմարտութիւն սիրող չկայ ամեն մի տեղ,
Բոլորը կախարդներ են, խելք հմայող, Մոգեան երամ,
Քեզ նման խեղճ պարզամիտ լինողները, Աշըգ-Ջիւան,
Ամեն անգամ խաբւում են Բելիարին ինչպէս Ադամ։

192

ԱՂՔԱՏ ՄԱՐԴԸ.

Խեղճութիւնը մարդու ամեն բան կանէ,
Ցածութիւն, մտնութիւն, ողջն անել կուտայ,
Ասելով այդպիսի մարդուն արժան է,
Թշնամիք իւր վերայ այպանել կուտայ։

Խեղճ ու ողորմելուն օժեւան չ'կայ,
Պարզ ազատ խօսելու հրաման չ'կայ,
Աղքատութեան նման թշուառ բան չ'կայ,
Դեռահաս շատ մարդու սպանել կուտայ։

Ջիւանի, խեղճ մարդու օրն է տարաժամ,
Դէպի թշուառ մահին կերթայ ինքնակամ,
Խեղճութիւնը արդար մարդոյը անգամ
Մտքով ամեն բանի վարանել կուտայ։

193

ԵՂԱԾ ՉԵՂԱԾ ՄԷԿ ՀԱՇԻՒ Է.

Ծոյլ անպիտան անգործ մարդը
Եղած, չեղած մէկ հաշիւ է,

Ինչպէս անգոյն, անհոտ վարդը,
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Լաւ մարդու ոտացն է կացին,
Թէ որ վատ է իւր դրացին.
Հօրը համար անպէտք որդին
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Ինքն է իւր քսակի գողը,
Տանը վերայ մաղող հողը.
Նրայլ մարդու համար փողը,
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Ներքիներն ի՞նչ պէտք է կին,
Ծքեղ սեռից չունի բաժին,
Կոյրի համար արև, լուսին
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Անասուներն տուր գովասանք,
Նա ի՞նչ գիտէ այդպիսի կեանք.
Անզգամին պատիւ յարգանք
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Մօտ է այնպիսի կորուստը,
Զորս չափ կտաւ է հագուստը,
Ժլատ անօգուտ հարուստը
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Կենդանի մարդուն է արժան,
Պատիւ, յարգանք, շքանշան,

Մեռած մարդու համար արձան
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Խելօք, հմուտ դիտնականը
Հիմքը ամուր կանէ տանը.
Կիսատ սուտ շինուած բանը,
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Առողջ տղին տուր երիվար,
Որ թռչի երթայ սարէ սար.
Անտէր մարդուն հարթ ճանապարհ
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Նորանք չունին շնորհք ու շէնք,
Գանգատիլն է նոցա օրէնք,
Երկչոտներուն զրահ ու զէնք
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Կորիճ ազգն է ինքնին հնոց,
Միշտ կարձակէ կրակ ու բոց.
Փախչող զորքին բերդ ու ամրոց
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Սկզբէն է հարկաւոր ջանք,
Բանի որ հիւանդն ունի կեանք,
Հոգեվարքին դեղ ու դեղըրանք
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Խեղճին ի՞նչ օգուտ իշխանը,
Որ չի հասնի նեղութեանը.

Անտարբեր պաղ ազգականը
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Երբ որ տեղը գայ ճշմարիտ,
Հարկաւոր չէ լինել կրկիտ.
Զատկից յետոյ կարմիր հաւկիթ
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

Ուրախութեան օրը յատուկ
Կուրախանան ծեր ու մանուկ,
Հարսանիքից վերջը թմբուկ
Եղած չեղած մէկ հաշիւ է։

Զիւա՛ն, բարեսիրտն է յարմար
Լսել սիրով երգ ու քնար,
Չար ու դաժան մարդոց համար
Եղած, չեղած մէկ հաշիւ է։

194

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ.

Տաճկաց «քերամ էյլէր» եղանակով.

Գթա՛, հոգեակ, այս է խղճս քեզանից,
Բա՛ց, սիրուհի, երեսդ, ուրախանամ,
Տեսութիւնդ մի խնայիր ինձանից,
Բաց, սիրուհի, երեսդ ուրախանամ,
Քո ինձ հարազատ լինելդ իմանամ։

Լոյս երեսիդ վերայ ոսկի թելերը
Ամպի նման ծածկում են քո պատկերը,
Այդ բանը չեն ընդունիլ իմ աչքերը,
Բայց, սիրուհի, երեսդ, ուրախանամ,
Քո ինձ հարազատ լինելդ իմանամ։

Համեստ աղջիկ, ինձ մի տանջիր չարաչար,
Գիշեր ցերեկ դադար չունիմ քեզ համար,
Ափսոս արի ինձ, մի ձգէ քարէ քար,
Բայց, սիրուհի, երեսդ, ուրախանամ,
Քո ինձ հարազատ լինելդ իմանամ։

Գեղատեսիլ կերպարանքդ պահելով,
Վրդովում ես դու իմ սիրտը անխռով,
Մտերիմ եմ լեր ինձանից ապահով,
Բայց, սիրուհի, երեսդ, ուրախանամ,
Քո ինձ հարազատ լինելդ իմանամ։

195

ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ.

Ա՜խ, կորան փողերս, կորան,
Ծակ լինելով իմ գրպանը,
Բոլոր մարդիկ խելացւորան,
Ես մնացի առաջուանը։

Խղճուկ հօրս բանը բուսաւ,
Չ'լսեցի ինչ որ խօսաւ,
Չ'արթնցայ մինչ չ'հասաւ
Ոսկորիս դանկի բերանը։

Առաջինն էի յետ ընկայ,
Վատ խօսելով եղբօրս վերայ,
Այլոց աչքի շիւղը տեսայ,
Պահելով իմոյս գերանը։

Ջիւանին եմ, վատ սարքս
Նսեմացուց փայլուն յարգս,
Բռւի կամքս, կայլտ փորքս
Թող խելքիս տան պատասխանը։

196

ՓՈՐՁՈՒԱԾ ԱՌԱՐԿԱՅ.

Փորձուած առարկայ է հնուց մնացած պատուական,
Չի անել մէկ թշնամի, ինչ որ կանէ մարդ ինքն իրան,
Իւր ունեցած գաղտնիքը ամեն մէկին հաւատալով,
Զուր անգը գործել կուտայ անձին համար այլոց դարան։

Խեղճ փաճառուող եղի պէս աշխարհ կ՚նայէ ատամին,
Վայ նորա գլխին կուգայ, ով որ կ'լինի բաց բերան,
Մի հաւատալք ամենայն հոգւոյ, ասում է Փրկիչը,
Բայց ո՞ւր է խելք, որ պահէ այդպիսի բարձր պատուիրան։

Մարդը երբ հեռանում է բարոյական ճանապարհից,
Կարծում ես էլ չէ երեւում նորա մէջ պատուոյ նշան,

Շատ ժամանակ մարդը իւր խելքի ճօթից վնասւում է,
Դէպքերը չեն պատահել, աշխարհի մէջը մշտական։

Կենդանեաց մէջ ամենից խելացին է բանականը,
Երբեմն գլորւելով դառնում է անխելք, անպիտան,
Ասում է հին առածը՝ թէ բերդը ներսից կառնուի,
Նոյնպէս էլ մարդը իրան խելքից կ'վնասուի, Ջիւան։

197

ԵՐԿՈՒ ՏՈՂ.

Ով չի՛ սիրել անձը իրան,
Ուրիշին սիրել չի՛ կարող.
Ինչ մարդ չի՛ պահել պատուիրան,
Այլոց պատուիրել չի՛ կարող։

Հասուն խելքն է բան շինողը,
Ընտիր խօսքեր յօրինողը,
Կամացը տէր չ'լինողը
Իւր տանը տիրել չի՛ կարող։

Ընկած-ելած մարդն է յարգի,
Նա է զտուած մաքուր ոսկի,
Անփորձ, վախկոտ հարուստն՝ իսկի
Մի փող նուիրել չի՛ կարող։

Ինչքան լինի մարդ իմաստուն,
Իրանից կայ բարձր անուն,

Բայց որ Աստուած շինէ մի տուն,
Ոչ ոք աւերել չի կարող։

Ջիւանի՛, մարդն է բանական,
Դիմացող է մեծ նեղութեան,
Չի ունենալ բարի վաղճան,
Ով որ համբերել չի կարող։

198

ՄԵՐ ՑԱՒԵՐԸ.

Գունդագունդ և դասադաս ցաւերը կազմելով բանակ,
Արշաւում են դէպի խղճուկ հայերս վերայ շիտակ,
Դեղ չունինք, բժիշկ չունինք, դէմ դնելու չենք ընդունակ,
Անտարակոյս ցաւերը մեզնից կ'տանին յաղթանակ,
Բայց մի բան կայ, տոկուն ենք, դիմանումենք շատ ժամանակ,
Ցաւերը ձանձրանալով մեզնից կ'փախնեն շարունակ։

Գաղտնի մի ձեռք կայ հզօր պահող մեզի, Աստուած է նա,
Միշտ Նորանից օգնութիւն տկարներուն անշուշտ կ'գայ,
Թող ցաւերը սաստկանան, Տէրը տանելու ոյժ կուտայ,
Ցաւապետը տեսնելով սխալմունքը՝ յետ կ'գնայ,
Կստանանք մի ժամանակ, հանդարտութիւն հանգիստ վիճակ,
Կեանքերս բարւոքելով կ'դառնայ դէպի յաջողակ։

Մենք մի յայտնի հին գիւցազուն մեծ ազգի՛ նշխարներ ենք
Մեզ շահողը կօգտուի, յակինթներ են, գոհարներ ենք,
Թող չիմանան ցաւերը, խեղճ ու մոլոր անճարներ ենք,

Մենք Քրիստոսից Հեզութիւն սովորած տկարներ ենք,
Զենք սիրեր վարուել մեզի տիրողներու Հետ Հակառակ,
Ունելով մեզ Փրկիչը խրատ ու ընտիր օրինակ։

Մեզ վերայ տեսակ-տեսակ, ցեղ-ցեղ ցաւեր են փորձ արել,
Ոչ մէկը բռնութիւնով մեզնից մի օգուտ չեն տարել,
Մեր կլիման, մեր օդը մեզ պահել են, պատսպարել,
Ցաւերը յետ դառնալով իրանց տեղերն են դադարել,
Մեզի տալով մեր վայելած օրերը անցաւ փառունակ,
Դառնալով մեր երկիրը կրկին բարի մարդաընակ։

Որ կուգայ Հոգս ու ցաւերը մեզնից կ'վերանան, Ջիւան,
Երկնուց աղեղնակը ցոյց կուտայ Հաշտութեան նշան,
Բերանը տերև առած կ'դառնայ աղաւնին Նոյեան,
Մեզ աւետեաց լուր կուտայ Հետը օրեր խաղաղութեան,
Հորիզոնը պարզելով ծագում է պայծառ արեգակ,
Հողմերը դադարելով յաջորդում է լաւ եղանակ։

199

Գ Ա Ն Գ Ա Տ.

Կեանքիս թռչունը, մազերդ կապեցին,
Գեղեցիկ, քեզանից ինչպէս ազատուիմ,
Կրակ աչքերդ իմ սիրտս լափեցին,
Ցոյս չ'թողիր որ ցաւերից փարատուիմ։

Այս ինչ սէր էր տուիր դու ինձ, սիրահար,
Սրտիս մէջը բորբոքում է անդադար,

Առար խելք ու միտքս, արիր խելագար,
Արժա՞ն տեսար որ այրոց մէջ նախատուիմ։

Խեղճ Ջիւանը Հեռացրիր իւր տանից,
Կախարդական գիր ելաւ քո գրպանից,
Թող չարաչար տանջուիմ ես քեզանից,
Թէ պատահաւ կրկին անգամ խրատուիմ։

200

Խ Ր Ա Տ.

Կեանքդ բարւոքելու աշխատիր, գիտուն,
Ինչ ես թռչունի պէս՞ միշտ մտնում, թակարդ
Հարիւր տարի ապրիս թէ Հարիւր յիսուն,
Վերջդ մեռանելն է ինչ մտքի ես մարդ։

Եկ մի ննջիր քանի կեանքիդ գարունն է,
Յիշելի մարդ միշտ մտաւոր արթունն է,
Անմահ յիշատակը բարի անունն է,
Աշխատի՛ր գտնելու, ով երիտասարդ։

Ջիւան, բաւ է շրջիս մտատանջ, մոլոր,
Ովկեանոս ծովից աշխարհըն է խոր,
Որչափ Հարուստ լինիս, որչափ փառաւոր,
Վերջդ պիտի մնաս մերկ և առանց զարդ։

201

Ե Վ Ե Լ Ա Խ Ր.

Կատարեալ լինելու համար, գեղեցիկ,
Կարդա բարոյական գրքերը յատուկ.
Կարող ես նորանով լինել երջանիկ,
Կենարար Փրկիչը յիշելով ծածուկ։

Կանուխ ել տեղիցդ, անմեղ հրեշտակ,
Կատարէ քո սուրբ աղօթքդ միայնակ,
Կանգնիլ մի քո ծնողացդ հակառակ,
Կանոնաւոր կերպով շարժիր, ով մանուկ։

Կամքդ տուր Արարչին գիշեր և ցերեկ,
Կեանքիդ նաւը երբէք չի թողուր անղեկ,
Կանչէ Աստուած, դու չես մնար սրտաբեկ,
Կառավարողը քեզ կ'պահէ փափուկ։

Կանաչազարդ ծառ ես, մանկիկ նորատունկ,
Կաթնահամ բերանէդ միշտ կ'բուրէ խունկ,
Կաքաւ ես շարժումով, ձայնովդ կռունկ,
Կեաց միշտ Ջիւանիին համար դու նեցուկ։

202

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Պարսկաստան, Պարսկաստան, դու լաւ երկիր ես,
Ափսոս որ որդիքդ անլոյս խաւար են,
Նորանով յետ ընկած հող ու մոխիր ես,
Քանի որ մարդիկդ անգէտ, յիմար են։

Թագաւորդ բարի, հեռատես, խոհեմ,
Միտքը լուսաւոր է, հայացքը վսեմ,
Ճերմակ գլուխներդ կանգնում են ընդդէմ
Հոգւով կուրացած են մտքով տկար են։

Հռչակուած երկիր ես, անունդ հին է,
Քեզ համար ասում են արեւածին է,
Մեր տերութեան տուած օգուտդ մին է
Բայց քու վնասներդ հարիւր հազար են։

Մեր երկըրի քոյրն ես, պառաւ Պարսկաստան
Կովկասի մերձակայ մօտիկ հարեւան,
Մինչ երբ քու ցաւերդ տանի Ռուսաստան,
Ահռելի են, մահացու են, դժուար են։

Տարին մի ցաւ, մի չառ կուղարկես մեզի,
Ջնգախտի բարեկամ, ինչ անենք քեզի,
Նման ցեցը ընկած հագած բեհեզի,
Քու կարգերդ այս դարին անյարմար են։

Կեղծաւոր դէնպետդ մթին հպատակ,
Նոր տեսակ զարգացած մարդկանց հակառակ,
Իւր արբանեակները մէկ մէկ աւազակ,
Ժողովուրդը միշտ կեղեքեն, կ'աւարեն։

Քնից արթնանալու չունիս դուն փափաք,
Միշտ գիշեր ես սիրում անլոյս, անճրագ,
Խաներդ ու բէկերդ մէկ մէկ օձի ձագ,
Սատանայի նման խաբող և չար են։

Ղուրանը չի կարող ամեն բան հոգալ,
Կրօնական գիրք է, ուղիղ թէ սխալ,
Իւր աշակերտները որպէս բանակալ,
Միջները խիղճ չկայ սրտերը քար են։

Չեն թողնում որ ժողովուրդը զարգանայ,
Իրան օգուտն ու վնասը հասկանայ,
Կուզեն որ ամբոխը միշտ խաւար մնայ,
Սուտը կուզեն առաջ տանել, վատթար են։

Փթած գաղափարդ, փթած ուսմունքդ
Շղթայել է աղջկունքդ, հարսունքդ,
Անգլիայի փորն է մտնում արդիւնքդ,
Լաւ հիւթերդ ծծողները օտար են։

Քու կարդացողներդ ձեռք առնեմ կրկին,
Գիտութիւնը գայլ են կարծում ահագին,
Ինչ բարի նորութիւն տեսան՝ կ'խրանին,
Սէյիդներդ խելագարուած ոչխար են։

Մեծերդ վաւաշոտ մոլութեան ծառայ,
Քու զօրապետներդ տգէտ խաբեբայ,
Զօրքերդ անկանոն իբրև սրիկայ,
Կարգ պահելու տեղակ կարգ կ'խանգարեն։

Ո՞ւր է Ֆերդուսի, Հաֆիզ սուրբ անձնանուէր,
Ճանաչող հայրենիք, ճանաչող և տէր.
Այժմեան գրողներդ տափոտ, վատ շուէր,
Կանանց, պատանեկաց թունդ սիրահար են,

Բաւական է, երկիր, արթնացիր շուտով,
Քանի գործդ գլխից չէ եղել խռով,
Լսիր թագաւորիդ դարձիր ապահով,
Դրած կանոնները սուրբ են, արդար են։

Օրինակ առ քո մերձ քաջ հարևանից,
Այն է ուժեղ, խելօք մեծ Ռուսաստանից,
Ղրկիր, կրթէ միշտ սովորէ նրանից,
Եթէ զաւակներդ բան կ'պաշարեն։

Արդարադատ Շահի ձեռքը տուր սանձդ,
Կեղծ դէնպետին մի հաւատալ քո անձդ.
Առաջ քաշէ ուսում առած մարդկանցդ,
Նորանց լսէ, նորանք խելօք, ճարտար են,

203

ՆՈՒԷՐ

Բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանցին.

Բերանս համ դրեց, հոգոյս մէջը ոյժ
Քո տուած դարմանդ, յարգելի բժիշկ.
Խօսքերդ կեանք տուին, պատկերդ աշխոյժ,
Երբ մօտեցայ տանդ, յարգելի բժիշկ։

Յարգեցիր, պատուեցիր խիստ մտերմաբար,
Կեանքիս Փրկչի նման օգնութեան հասար,
Բանեցիր երակս, զննեցիր երկար,
Կեանք էր պատասխանդ, յարգելի բժիշկ։

Գարնան հոտ է փչում քո օթևանից,
Սառն մահը միշտ փախչում է քեզանից,
Շնորհքդ առել ես դու Աստուածանից,
Նա է քու պաշտպանդ, յարգելի բժիշկ։

Ռաբբունու նման քարոզ կ'կարդաս,
Ազգու խօսքերով հիւանդին կեանք կտաս,
Տէր Աստուած չ'կամի կեանքիդ պատուհաս
Եւ ոչ բիծ անուանդ յարգելի բժիշկ։

Աշխարհիս մէջ ուրտեղ բժիշկներ չ'կան,
Նա է անտէր այգի առանց այգեպան,

Կռուիր աղետի դէմ, օգնիր մարդկութեան,
Տէրն է օգնականդ, յարգելի բժիշկ։

Տնանկներուն չես խնայում բարիքդ,
Սուրբ է նորանց մասին յայտնած կարծիքդ.
Արած լաւութիւնդ, քո երախտիքդ
Չի մոռնայ Զիւանդ, յարգելի բժիշկ։

204

ՌՈՒՊԱՅԻ.

Կենացս մաս, իմ Հմայեակ, ես ուրիշ տապար չունիմ,
Աշխարհիս մէջ քեզնէն ի զատ սրտով սիրահար չունիմ,
Ես քո սիրուդ նետերովը վիրաւորուած ման կուգամ,
Դիր խոցերուս սպեղանի, ես քաշելու ճար չունիմ։

Հաւատարիմ սիրահարիդ ես եմ ընտիր սիրական,
Իմ ճանաչած քաջերի մէջ դուն ես մէկ հատ աննման,
Քաղցր և համեղ պտուղներդ մեղրից անուշ պատուական,
Արուսեակիս քմքին հաճոյ դուն ես, ես շաքար չունիմ։

205

ՄՈՒԽԷՆՄԷՋ.

Հեռացիր, ո՛վ պատանի, դուն գինետանից հեռացիր,
Հեռացիր ու մի մնար, այն օթևանից հեռացիր,

Անվայել սուտ ընկերից, վատաբերանից հեռացի՛ր;
Ծիզուիծ ու ցածրահոգի ատենաբանից հեռացիր,
Մահաբեր թոյնով լեցուն շտեմարանից հեռացիր։

Մի՛ լինիր, ո՛վ բարեկամ, գզուելի վատթար մի լինիր,
Գինիին և օղիին պատանդ ու աւար մի՛ լինիր,
Աշխատիր, գիտուն եղիր, անպատիւ յիմար մի՛ լինիր,
Միամիտ սոխակի պէս վարդի սիրահար մի լինիր,
Խաբեբայ ու ստախոս կեղծ սիրեկանից հեռացիր։

Չէ՛ ուրախ և չի՛ լինիլ քեզի նման որը տխուրը,
Ըստորում քո սրտի մէջ ընկել է խմիչքի հուրը,
Քանի որ դու սիրում ես առուել խաղողի ջուրը,
Թարց ունեցած դրամեդ մինչ հոգիդ է կուտաս տուրը,
Հեռացիր, ուրացողաց վատ գործարանից, հեռացի՛ր։

Միամիտ ես, միամիտ, ա՛խ, ի՞նչ անեմ, դու միամիտ,
Խաբեբայ ուրացողին կ'ճանաչես, լաւ, ճշմարիտ,
Ակներև երևում է քո առաջդ խորունկ հովիտ,
Թողնելով Արարիչը կ'դաւանեն սուտ Անահիտ,
Կռապաշտ ընկերութեան ժողովարանից հեռացի՛ր։

Ո՛վ Ջիւան, սուտ աշխարհը քեզի ապաստան մի անիլ
Ադամին խաբող օձը՝ հոգւոյդ պահապան մի՛ անիլ,
Անբնականը սովորելով դու քեզ բնական մի՛ անիլ,
Աստուծոյ և բնութեան դէմ հակառակ բան մի անիլ,
Սոդոմայ պէս քաղաքից, նեռադաւանից հեռացի՛ր։

206

Դ Ա Ս Ի Թ Ա Ն.

Հայի՛ տղայ, զգուշացիր խելք ճարէ,
Ամէն անգամ ալլոց առակ մի լինի,
Պարկեշտ մարդկանց բնութեանը յարմարէ,
Ափսոս արի քեզ, խայտառակ մի լինի։

Մոլիներուն ընկեր իսպառ մի դառնայ,
Անուշ իմ, բթամիտ, ցանցառ մի դառնայ,
Դու վատ սկզբունքի պատճառ մի՛ դառնայ,
Ընկերներուդ չար օրինակ մի՛ լինի։

Վախեցի՛ր Աստուծմէ, ով երիտասարդ,
Նորան պաշտել պարտաւոր է ամեն մարդ,
Վախեցիր քո սրտին չ'դիպնի գեղարդ,
Տիրոջ կամաց դուն հակառակ մի լինի։

Պատուէ հայր ու մայրդ դու ապրիս երկար,
Մաքրէ սիրտդ, որ է Աստուծոյ տաճար,
Քեզ պէս ստեղծածին մի կամենայ չար,
Օրինազանց չնչին էակ մի լինի։

Մարդասպան մի լինի, կ'սպանուիս անշուշտ,
Գերդաստանդ քաղցած կ'մնայ անկուշտ,
Ուրիշը կ'լինի քեզ արիւնըռուշտ,
Դու ոչ մէկին արիւնկզակ մի լինի։

Տիրոջմէն կ՚զատուի ինչ մարդ որ շնայ,
Առանց այլայլութեան դժոխք կ՚գնայ,
Գող լինողը առանց պատժի չի մնայ,
Կ՚խեղդուիս, եկ աւազակ մի՛ լինի։

Մի երդուիր Աստուծոյ անուանը ահեղ,
Սուտ երդում տուողը չի՛ մնայ անմեղ,
Ստախօսը պատիւ չունի ոչ մի տեղ,
Սուտ վկայող, կեանքի ներհակ մի լինի։

Մի ձգեր աչքերդ դրացուդ տանը,
Ոչ փողին, ոչ ապրանքին ոչ կնկանը,
Ակամայ ընկերիդ մէկ դահեկանը
Յափշտակելու համարձակ մի լինի։

Մէկ օր լուր կուգայ դատարաններէն,
Պարտը կ՚պահանջուի պարտականներէն,
Մի զատուիր Աստուծոյ պատուիրաններէն,
Դու այս մասին անընդունակ մի լինի։

Մի՛ պղտորիր հոգւոյդ պարզահոս գետը,
Անշուշտ հարուած կուտայ քեզ խղճիդ նետը,
Անցեալը բաղդատէ ներկայի հետը,
Բարին թողած չարին մշակ մի լինի։

Մարդը մարդ ճանաչէ, հարուստ թէ աղքատ,
Ծերունու պատիւը պահպանէ հաստատ,
Լեզուիդ վերայ սանձ դիր, որ չխօսի վատ,
Սիրտ խոցոտող թուր ու դանակ մի լինի։

Եղբա՛յր, արի ուսումի տուր զաւակդ,
Որ շուտ տեղը հասնի քո նպատակդ,
Ի զուր մի՛ վաճառեր թանկ ժամանակդ,
Առանց գործի և անվաստակ մի լինի։

Արբեցող մի՛ լինի, կեանքիդ վնաս է,
Հասկացիր որ պատիւդ միշտ պակաս է,
Աշխատիր քեզ մարդկանց լաւ կարգը դասէ,
Վատերուն հետ դու շարունակ մի լինի։

Թղթախաղութիւնից օգուտ չես քաղեր,
Իզուր տանդ վերայ մոխիր մի մաղեր,
Ջափով ապրի քեզ պարտքի տակ մի թաղեր,
Փողատիրոջը հպատակ մի՛ լինի։

Աշխատի՛ր, չ՚սառչի ճշտութեան եռը,
Մեղքերով մի՛ ճնշեր սրտիդ անմեռը,
Տեղդ ծանր կեցի՛ր, մի՛ շարժիր բեռը,
Մի լոկ խօսքով դու թեւշալակ մի՛ լինի։

Հողից եղած, դարձեալ պիտի լինիս հող,
Վերջդ դատաստան կայ, քաշէ ահ ու դող.
Աշխատի՛ր մարդկութեան օգուտ բան՛ր թող,
Մեռնելէդ յետ անյիշատակ մի՛ լինի։

Ջիւան, կանչէ սուրբ իշխանաց Իշխանը,
Որ նա է ողջ աշխարհի Պահապանը,
Հայ ծնուել ես, հայ մտիր գերեզմանը,
Դու ազգուրաց իբր Վասակ մի՛ լինի։

207

Դ Օ Շ Մ Ա Յ.

Հարազատ փեսայիդ հաւատարիմ հարս,
Տուք երեսդ՝ հոգիդ անմեղ ցոյց կուտայ.
Մայրախնամ կաթով սնուցիչ իմ հարս,
Քաղցր լեզուդ վէրքերիս դեղ ցոյց կուտայ։

Կրակի նման է շիկագոյն հերդ,
Սիրտ կ՚խոցէ արենարբու սուսերդ,
Հայելւոյ մէջ արեւադէմ պատկերդ,
Նուրբ կոկորդդ ոսկեայ բիւրեղ ցոյց կուտայ։

Ջիւանիիս ծանօթ ազնուազուն ես,
Հոգիդ գարնան փափաք, մարմնով աշուն ես,
Բայց ինչ օգուտ, գեղեցիկ ես, սիրուն ես,
Հին հանդերձդ քեզի ագեղ ցոյց կուտայ։

208

Ս Է Մ Ա Յ Ի.

Համընթաց կեանքիս յարմար, ով սիրելիս, ինձ մխիթար չես,
Հակառակ կերպով ես վարւում դու ակմբի կառավար չես,
Գնա՛, ինձէն հեռացիր, ով անիրաւ, անբարիշտ անգութ,
Գիտեմ անշուշտ որ անբարեսէր ես և ինձի յարմար չես։

Խենէշ կերպարանքդ, բարքդ, գրեմ տամ քեզ՛ դու կարդա,
Կ՚իմանաս դու սխալմունքդ, գիտեմ, այնքան էլ յիմար չես.
Նախանձոտ փառասիրտ օձի նման միշտ խայթում ես այլոց,
Որ ունիս այդպէս արատ քեզ կ՚կարծես թէ դու վատթար չե՞ս։

Ցերեկը մինչ երեկոյ բանբասելով ման կուգաս մարդկանց,
Գիշերը միամիտ պառկած տեղդ անգամ դու դադար չես,
Ջիւանի երգիչը ամէն մի կերպով քեզի լաւ փորձեց,
Նկատեց վարք ու բարքդ լաւ տեսաւ անկեղծ ու արդար չես։

209

«ԱՅԳԵՊԱՆ ԻՆՁ ԵՍ ԱՆՈՒՄ, ՇԱՄԲԸ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՉԻ ԼԻՆԻ.»

Ա շ ը ղ Շ ի ր ի ն.

Ճարտարապետ, աւազի վերայ օթևան չի՛ լինի,
Գայլի ձագը կրթելով ընտանի կենդան չի՛ լինի,
Ապերախտ մարդուն որը հազար տեսակ պատիւ անես,
Նա քեզի աշխատակից իբր օգնական չի՛ լինի։

Կայծքարը կարմիր արիւնների մէջը ներկես հազար,
Գեղեցիկ գոյն առնելով, գիտցիր, կարկեհան չի լինի,
Թութակը սովորելով վարժութիւնով մի քանի խօսք,
Խօսելով մարդու նման, նա մարդ իսկական չի լինի։

Աշխարհի բոլոր եղած գրքերը ողջն հաւաքես,
Շաղուելով մի գիրք շինես, դեռ Աւետարան չի՛ լինի.

Փայլում է արևի պէս ճեմարանը Մոսկուայի մէջ,
Ընդհանուր հայերի մէջ մէկ հատ Լազարեան չի լինի։

Մարդու ծնած երկիրը արքայութեան չափ քաղցր է,
Ոչ մի տեղ Հայրենիքից բարձր աստիճան չի լինի,
Ով Ջիւան, դու երգերուդ խառնես էլ մեղր ու շաքար,
Շիրինի ասածներու նման դուրեկան չի լինի։

210

Պ Ա Յ Տ

Մի առաւօտ ես տանիցը շուտ դուրս ելայ միայնակ,
Գնում էի փողոցը, տեսայ մի լաւ օրինակ.—
Տեսայ մի երիտասարդ, հեծած ձին էր սպիտակ,
Ուզում էր մի պայտ իշխի հանելով փողի քսակ,
Հարցնելով տղային ասի այդ ինչ նպատակ,
Մի՛ պայտով չի պայտուի չորս ոտնանի աւանակ։

Տղան դարձաւ դէպի ինձ, ասաւ, ով իմ բարեկամ,
Այս պայտը պիտի տանիմ մեր գիւղի տէրտէրին տամ,
Այնտեղ կուզեմ մի աղջիկ, որ անունն է Մարիամ,
Ես նորան շատ եմ սիրում, նա երբէք չունի խնամ,
Մեր տէրտէրը կախարդ է, ասաց, ինչպէս մի խախամ,
Շատ գործեր է կատարում պայտով ամեն մի տեսակ։

Ասի, որ պայտը տանիս ինչ կանէ տէր Հայրիկը,
Ասաց, վերան գծում է կախարդական ծաղիկը,

Կրակարանի մօտը թաղում է այս պայտիկը,
Որքան տաքանայ պայտը կ'տաքանայ աղջիկը,
Այնուհետև սիրուհիս կուղարկէ իւր մատնիքը,
Այլ չի՛ մնայ նա ինձ հետ սիրով երբէք հակառակ։

Կրկին առաջարկեցի ես տղային գիւղական,
Ասի, ճիշտ կ'հաւատա՞ս, որ լինի այդպիսի բան.
Տղան քիչ մտածելով տուեց այսպէս պատասխան
Թէ ես սիրոյ ձեռքիցը եղած եմ թափառական,
Ինչ ասեն, կ'հաւատամ, գուցէ տան ցաւիս դարման,
Ընկել է սրտիս մէջը, ասաց, մի անշէջ կրակ։

Տղային ափսոսալով տուի այսպէս մի խրատ—
Թէ, եղբա՛յր, դորանք սուտ են, անմիտ բան են անհաստատ,
Տէրտէրը քեզ խաբել է, դու մի՛ ընծայիր հաւատ,
Նա ինքն էլ չի հասկանում արածը լաւ է թէ վատ,
Արի եղբայր, հեռացիր, այդ փանդիկից լեր ազատ,
Քեզ այդ բանին դրկողը է սուտութեանց հեղինակ։

Ինձ թողնելով հեռացաւ, գնաց տղան իւր գեղը,
Մտքովս ասի շատ ափսոս խաբուել է խեղճ անմեղը,
Նա կարծում էր, թէ տարաւ ունեցած ցաւի դեղը,
Հիմայ դուք լաւ կշռեցէք այս տէրտէրի ուղեղը,
Երանի ժողովրդին որ սա է հանճարեղը,
Ով Ջիւան, էլ հայերը ինչո՞ւ կերթան շկոթակ։

211

ԳԱԼԷՆՏԷՐԻ.

Մինչ ե՛րբ գովելի, իմ պաղատանս չ’լսես դու,
Տալով քեզի գովեստ, գովասանս չ’լսես դու,
Միթէ սիրելի կանոնը այդպէ՞ս կ’պահանջէ,
Քեզ խօսելով յոգնի բերանս, չ’լսես դու։

Ես իմ հոգւովս քեզ համար պատրաստ կամ յարաժամ,
Ինչո՞ւ ամենևին, սիրականս, չ’լսես դու,
Ամեն առաւօտ պատուհանից երգելու ձայնս,
Միթէ կարելի՞ է, հարևանս, չ’լսես դու։

Չէ՛, չէ՛, սիրուհի՛, մի՛ անիլ այդպէս, բաւական է,
Արժան չէ քեզ համար, սիրաբանս չ’լսես դու,
Այնպէս կթուի ինձ մահը մինչև չ’հասած դեռ,
Մինչև չ’տեսանես գերեզմանս, չ’լսես դու։

Ի՞նչպէս բնութեան, ո՞րպիսի խղճի տէր ես եղած,
Զարմանք չէ՞, խօսած աւետարանս չ’լսես դու,
Վերջն է, Ջիւանս դադարաւ էլ չի՛ խօսի երբէք,
Աստուած չի ներեր, իմ աղաչանս չ’լսես դու։

212

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ.

Մարդ, քեզի կատեն, վատ ճանաչելէն,
Յարաժամ բաղդը աստիճան չի բերեր,
Աքաղաղը կ’դադարի կանչելէն,
Միշտ քեզ համար լուսոյ նշան չի բերեր։

Մանկութեան վաստակը ջըրի նման է,
Եթէ առաջն առար քեզ բաւական է,
Քանի գործդ յաջողակ է, պահպանէ,
Ամեն անգամ գետը գերան չի բերեր։

Քանի յաջողակ կ’դառնայ շրջանդ,
Եղած ծախսը չափաւորէ քո տանդ,
Գիտցիր առանց գործի քո սիրականդ
Քեզ իբրև մարդ երբէք բերան չի՛ բերեր։

Ջիւա՛ն, լաւ ճանաչէ դու քո հաշիւը,
Առանց գործի ցածր է մարդու պատիւը,
Միշտ յաջող չի՛ դառնայ բաղդից անիւը,
Ամեն տարի արտը օրան չի բերեր։

213

ԽՆԴԻՐ ԸՆԿԵՐԻՆ.

Մարդ, քեզի կաղաչեմ, լուր իմ խօսքերս,
Դու մոլութեան խրախճանից հեռացիր,
Մի կարծեր անօգուտ, զուր իմ խօսքերս,
Մարդակորոյս օթևանից հեռացիր։

Մէկ մարդու միշտ բաւ է մէկ ամուսինը,
Այլոց մի տար գերդաստանիդ բաժինը,
Դու մի սիրեր շողոքորթիչ տիկինը,
Դառնասիրտ մեղրաբերանից հեռացիր։

Եղբայր, թէ հասկանաս այսչափը բաւ է,
Աւելի խօսիլը միշտ գլխու ցաւ է,
Արտաքուստ սոխակ է, ներքուստ ագռաւ է,
Դու երկդիմի սիրականից հեռացիր։

Ջիւանիիս դու մի կարծեր հակառակ,
Ասածներս մօտդ պահէ յիշատակ,
Ափսոս ես, կ՚մահանաս անժամանակ,
Արի՛, դու քու գերեզմանից հեռացիր։

214

Դ Ի Տ Մ Ո Ւ Ն Ք.

Մարդ ինչ առարկայից որ քաշէ վնաս,
Չի՛ հեռանայ, կրկին կսիրէ նորան,
Հասակաւոր լինի, թէկուզ դեռահաս,
Կ՚սխալուի այս բանի մէջ մշտական։

Մարդ որքան ունենայ ուսում, հրահանգ,
Չէ կարող ունենալ խաղաղ բարի կեանք,
Գիտէ որ ինչ բանից պիտի գայ փորձանք,
Դիտմամբ այն վնասին կ՚լինի արժան։

Ջիւան, բաղդի համար կ՚տեսնի երազ,
Բայց չ՚սիրած բանը կ՚գտնի վռազ,
Մարդը կ՚սխալուի միշտ և հանապազ,
Թէ տգէտ է եղել, թէ մեծ գիտնական։

215

Ս Ե Ղ Ի Ս.

Մի՛ լինիր, ով բնութիւն, կեանքիս դաւաճան մի լինիր,
Մի լինիր, ինքնահաւան մարդուն սիրական մի լինիր,
Աշխատիր առաքինի նիւթեր ժողովէ անօթդ,
Անոտի, անօգտաւէտ բառի օթևան մի լինիր։

Կրօնդ և քո լեզուդ միշտ պահպանէ կեանքիդ նման,
Խաբեբայ սուտ կղերի խօսքով պապական մի լինիր,
Միմիայն քո պատիւդ աւելանալու համար տգէտ,
Փառամոլ և շահասէր պատուի մուրացկան մի լինիր։

Ամենայն մարդու իրայ վարուիր գաղափարով հետը,
Ճշմարիտ ընկերութեան կեանքիցը բաժան մի լինիր,
Արտաքին դէմքիդ նման ներքին խորհուրդդ էլ սուրբ արա,
Գարշելի ոսկորներով լեցուն գերեզման մի՛ լինիր։

Աշխատիր ծուլութիւնը քեզանից հեռու պահէ միշտ,
Ազգատի անտանելի վիճակին արժան մի լինիր,
Ով Ջիւան, մնհիմն անհաստատ սէրից հեռու փախի՛ր,
Վառվելով Ալայիսի Արմաւրի նման մի՛ լինիր։

216

Վ Ա Ր Դ.

Մինչև ե՞րբ չարչարես անբաղդ սոխակին,
Ով դու ապերախտ վարդ, անխնամ ծաղիկ,
Մինչև ե՞րբ ինձ, ասա՛, այդ վառ կրակին
Մէջը պիտի այրես որպէս թիթեռնիկ։

Մինչև ե՞րբ, ինձ ասա, խղճալին էրուի,
Չ՚հասկանայ ունայն սիրով դեգերուի.
Ամեն անգամ սխալմունքդ չի ներուի,
Լաւ է զգուշանաս, սիրուն վարդենիկ։

Վարդուհի՛, Վարդուհի, անուշ սիրեկա՛ն,
Մի՛ մաշեր խղճալու նոր կեանքը Ջիւան,
Տասն և մէկ ամսոյ մէջ գոնէ մի վայրկեան,
Սոխակի մօտ բացուիր աամ երջանիկ։

217

Է Վ Է Լ Ա Խ Ր.

Նոր բացուած ծաղկի պէս բացուել ես սի՛րուն,
Նայուածքդ Մրայօն կուսին է նման,
Նկատելով քեզի կանուանեմ գիտուն,
Նախատես աչքերդ ունելով նշան։

Նախանձում է արևն անգամ քեզ տիկին,
Նա չունելով քո պէս ազնիւ ամուսին,
Նարգոսը ծծերիդ արուելով բաժին,
Նունուֆարը բացեց դատ և դատաստան։

Նահապետէն Հայկայ ստացար պարէն,
Նախնեացդ թշնամու սրտին դառար զէն,
Նահանգը մարդկութեան սիրոյդ փոխարէն,
Նոր երգի՛չ Ջիւանը տեսաւ քեզ արժան,

218

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ.

Ննջէ, գա՛ռնուկ, սիրուն զաւակ,
Ննջէ օրօրանին մէջը,
Ննջէ, մի լար, իմ աղաւնեակ,
Սիրուն օթևանին մէջը։

Քնի՛ր, որ մեծանաս, հոգի՛ս,
Աստուծոյ հոգւով նորոգուիս,
Վարժապետիդ առջև չոքիս
Դու ուսումնարանին մէջը։

Քեզ զօրացնէ բարին Աստուած,
Մի՛տք ունենաս լայնատարած,
Լինիս միշտ խաւարահալած,
Լուսաւորող բանին մէջը։

Օրօր ասեմ, սիրուն օրօր,
Զօրանաս որդի միամօր,
Սնուցանէ Անմահն Հզօր
Քեզ իր պատուիրանին մէջը։

Գարնան ծաղիկ նարդոս, շուշան,
Անթառամ վարդ ես, հոգեհան,
Հոտով պալասանի նման,
Ծաղկիր բուրաստանին մէջը։

Զօրացի՛ր, հոգւոյս իմ հատոր,
Եղի՛ր հասուն կարմիր խնձոր,
Լեր անդամ շատին հարկաւոր,
Նստիր բազմականին մէջը։

Պատուէ ծնողքդ, որդեակ,
Եղի՛ր խոհեմ, ընտիր զաւակ,
Լեր հօրդ բարի յիշատակ,
Իրայ գերդաստանի մէջը։

Մի՛ լինիլ թոյլ երբայեցի,
Շուտ կ'կոտրես ինչպէս խեցի,
Սիրէ Հայոց եկեղեցի,
Կեա՛ց ժողովարանին մէջը։

Պարզ եղիր, մի լինիր խարդախ,
Միտքդ պահէ հանդիստ խաղաղ,
Խօսի՛ր ճշմարտութիւնն անվախ,
Ժողովքին ատեանին մէջը։

Երբ լինիս երեսուն ամաց,
Լեր հեռատես շրջահայեաց,
Գտիր մի աղջիկ բանիմաց
Հասակով քսանին մէջը։

Կապուէ հետը սիրով նորան,
Կանչելով Տէրը օգնական,
Կացիր հետը մինչ ցվաղճան
Խաղաղ սուրբ պայմանին մէջը։

Իմ Գարեգին մանուկ տղայ,
Խօսքերս ականջիդ օղ արա.
Մեծցիր այս խրատը կարդա
Հօրդ երգարանին մէջը։

Աշըրգ-Ջիւանին եմ յատուկ,
Բան է, վերջ տամ երգոյս փափուկ,
Օրօր ասեմ քնիր մանուկ,
Հանգիստ ննջարանին մէջը։

219

ԱՌ ՆԱԶԵԼԻՆ.

Նազելի, թագուհին չէ քեզ համեմատ,
Ծոցը հոտով ծաղիկ չունի քեզ նման,
Սև սև աչեր, կամար ունքեր, լայն ճակատ
Ամենայն գեղեցիկ չունի քեզ նման։

Դրախտի ծնունդ ես, գեղանի շուշան,
Ծոցումդ պահուած կայ հոտով պալասան,
Թէև Սուլթանի մօտը սիրուններ շատ կան,
Նորանց մէջ մի հատիկ չունի քեզ նման։

Դու Ջիւանու սածիցն էլ առաւել,
Ոչքան գովասանք տան է քեզի վայել,
Թէպէտ Վրաստանի անունն է ելել,
Իսկապէս սիրունիկ չունի քեզ նման։

220

ՂԱՐԻԲ ԿԱՐՆԵՑԻՈՅ ԵՐԳԸ.

Ո՞վ ունիմ որ կամ ո՛վ ցաւի ինձ համար,
Խեղճ ու մենակ օտար աշխարհ ընկած եմ,
Հոգսերս առանց թիւ, ցաւերս անհամար,
Չ'գիտեմ, թէ որ՞ մասին մտածեմ։

Խորին մտածմունքով ես ինձ կ'մաշեմ,
Տապարն առած կեանքիս ծառը կ'տաշեմ,
Ձեռքովս արել եմ, հոգովս քաշեմ,
Մարդ մեղք չունի, ես իմ խելքով գտած եմ։

Խղճալի Ղարիպն եմ Կարին քաղաքէն,
Վախեմ թէ զուրկ մնամ ես իմ փափաքէն,
Թիթեռն ինչպէս չի հեռանայ ճրագէն,
Ես էլ այնպէս մէկի սիրուն յարած եմ։

221

ՅԱՆԴԻՄԱՆԱՆՔ.

Ով գոռոզ մարդ, բաւ չէ այդքան անխոհեմ յիմար մնաս,
Յաւ չէ՞ քեզ, լայն աշխարհը միշտ աղքատ ու անճար մնաս,
Միթէ Աստուած քեզ կուզէ՞, որ վատ դրութեան մէջ լինիս,
Ինչո՞ւ այդպէս երեսանկեալ, ամենավատթար մնաս։

Աշխատանքդ թէ մէկ է, ծախքդ նորան պէս երկուս է,
Գործերդ քեզ չի երեւայ, պարտքդ խելքից դուս է.
Տես քո շռայլութեանդ տրտմողը իսկ Յիսուս է,
Դուն կուզես արդէն նորանով աշխարհը արդար մնաս։

Բաւական է մոլութիւնը, ով տղէտ, քեզի տիրէ,
Աշխատիր վատ գործերից փախիր, քանի անձդ ժիր է,
Ինքն Աստուած բարի է, գիտցիր, բարութիւն կ'սիրէ,
Զղջայ, ով մարդ, սխալմունքդ քանի՞ մէկ դու չար մնաս։

Ե՛կ Ջիւանուս առածը գանեայ խրատ ընդունէ քեզ,
Դուն Հայի գագաթ ունիս, ամօթ չէ որ մնաս դու եզ,
Հասկցիր մարդկութիւնը, եղի՛ր համեստ և բարի, հեզ,
Աշխարհը լոյս, աչքերդ կապ, ինչո՞ւ միշտ խաւար մնաս։

222

ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ.

Ով գեղեցիկ, աննման, ազնիւ, հարազատ բարեկամ,
Շտապիր, հասի՛ր, նեղութիւնս փարատի՛ր ժամ է ժամ,
Եկ խօսիր, լսեմ գոնէ քաղցր սիրալիր խօսքերդ,
Այդպիսի վարուելովդ ինձի կանես հաստատ խնամ։

Թանկագին տեսութիւնդ զգալի է միշտ ինձ համար,
Կարծում եմ դու վարդ լինիս կարմիր հոտաւէտ անթառամ
Հասկցիր, առանց քեզի չունիմ մխիթարանք, սիրուն,
Ես քո սիրոյդ ծովակը սրտով եմ ընկեր ինքնակամ։

Քեզ նման ազնիւ, հարազատ բարեկամը իսկապէս,
Կեանք կուտայ նորոգելով կեանքը Ջիւանուս ամէ ամ։

223

ԻՄ ԿԵԱՆՔԸ.

Ունիմ, փառք Աստուծոյ, մասնաւոր ապրուստ,
Ես իմ վիճակիցս անբաւական չեմ.
Կ'հագնեմ միակերպ հասարակ հագուստ,
Աստիճանս ցածր է, ես խոմ իշխան չեմ։

Զափաւորութիւնը կ'տեսնեմ արժան
Այն մարդոցը, որոնք են ինձի նման,
Թէև վարձով է, իմս չէ սեպհական,
Բայց ես նորէն գոհ եմ, անօթևան չեմ։

Դեռ ևս շատ բանի մէջ միամիտ եմ,
Ունիմ կարօտութիւն ուսման կ'դիտեմ,
Երգիչ եմ, Հայերէն, Տաճկերէն գիտեմ,
Այս է գիտութիւնս, ուսումնական չեմ։

Ջիւանս հասկացայ բանի հիմը նոր,
Աւա՜ղ, ժամանակս անցկացաւ բոլոր,
Ուսում չ'գիտնալուս ես չեմ յանցաւոր,
Հայրս է պարտական, ես պարտական չեմ։

224

Ջ Ո Ւ Ր   Ջ Ա Ն Ք.

Որ նաւը ծովն ընկղմի,
Խղճուկ նաւավարն ի՞նչ անէ,
Կոյրը միշտ վազում է տղմի,
Նորան լոյս ղամպարն ի՞նչ անէ։

Խլին թէ լաւ ասես թէ վատ,
Կ'կարծէ իրան համեմատ,
Սեւին սապոն, խեւին խրատ,
Ծուռին գաղափարն ի՞նչ անէ։

Թանը լաւ է միշտ սովորին,
Քանց բաժակը ճոգաւորին,
Տքից փախեցող գինուորին,
Հրացան, ասպարն ի՞նչ անէ։

Նեղ տեղից չի՛ գնար լայնը
Բան չ'հասկացող ունայնը,
Երբ մի մարդ չի լսեր ձայնը,
Խեղճ քնարահարն ի՞նչ անէ։

Ջուր է ջանքը, Աշըգ-Ջիւան,
Բոյսը այնպէս է բնական,
Փայտին ոստոս և անպիտան
Հիւսնի սուր տապարն ի՞նչ անէ։

225

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք.

Ո՜վ Տէր Աստուած, բաց մեր հոգւոյ աչքերը արթուն մնանք,
Լեր խնայող մեր հասակին, բաւական է քուն մնանք,
Երկնաւոր Հայր, պարգեւէ առատ ողորմութիւն մեզի,
Զարգացուր մեր մտքերը, սուրբ հոգւով իմաստուն մնանք։

Մարմնեղէն լուսից կարօտ մնալը ցաւ չէ մեզ համար,
Քանի որ մեծ յոյս ունինք քեզ վերայ, անմահ Բարերար,
Հոգեպէս ուրախացու, մարմնով բնական ենք խաւար,
Տուր մեզի մտքի կորովութիւն, գոնէ հասուն մնանք։

Հոգի ես, Տէր, թո՛ղ մեր հոգւոյ աչքերը տեսնին քեզի,
Մշտաբուղխ առատ գիտութեան աղբիւրէն մաս տուր մեզի,
Հասցրու մեզ, ով Տէր իմ իմաստութեան ասպարէզի,
Հասկանանք չարն ու բարին, ուշիմ և զգայուն մնանք։

226

Ե Ռ Ա Ն Դ.

Ով մարդ, իմաստութեան եռանդ ունեցիր,
Այս խրատով քեզի վնաս չեմ ասել.
Աշխատի՛ր շնորհք ու տաղանդ ունեցիր,
Մոլութեանը ես գործի մաս չեմ ասել։

Կատարեալ վարք, հանդարտ անուն ունեցող,
Ուղիղ կրօն, ազգի արիւն ունեցող,
Բաղդ ու շնորհք, գեղեցկութիւն ունեցող
Մարդուն թագաւորից պակաս չեմ ասել։

Ինչ մարդ չունի նոր սիրտ և նոր գաղափար,
Իսկ նա է սնոտի յամառուած տխմար,
Ինչ հովիւ հոգ չունի իւր հօտի համար,
Ես նորան մէկ սուտ Աթենաս չեմ ասել։

Ջիւան, գիտցածիդ չափ խօսէ յատուկը,
Պարզաբանէ սրտիդ եղած ծածուկը,
Ինչ ուսուցիչ լաւ չի կրթէ մանուկը,
Տուած դասին ճշմարիտ դաս չեմ ասել։

227

ԱՍՏՈՒԱԾԱՎԱԽ ՄԱՐԴԸ.

Ով Աստըծուց վախենում է՝ վնաս չի տալ իւր ընկերին,
Երբ տեսնում է, որ նման է նա իւր ունեցած պատկերին,
Աստուածավախ մարդը յատուկ երբ ուզում է գնալ հանդէս,
Ինչպէս կամենում է իրան, և ընկերին կամի այնպէս,
Անձիդ պէս սիրէ ընկերդ, որպէս ասում է Յովհաննէս,
Առաքինի մարդու համար սա է կրօն և սա է ծէս,
Նա գիտէ, որ սէրն է ամեն առարկայից կարգը վերին։

Մարդուս առաջին ընկերը է իւր ցեղը, ազգականը,
Որ խօսում է իրայ լեզուն, է բնութեամբ իւր նմանը,

Երկրորդ՝ պէտքէ ընկեր ասել ողջ ընդհանուր մարդկութեանը,
Որովհետև մի հօրից է յառաջ եկել բանականը,
Բայց սէրը ինքն է արարիչ, կարգի դնող ամեն բանը,
Աստուծոյ կամաց հաճիլն է ճիշտ ամենապատուականը,
Աւա՜ղ, չի շիտկուիլ ծուռը, կատարեալ չի լինիլ թերին։

Ով երկիւղ չունի Արարչից, և նա չունի խիղճ ու խնամ,
Այնպիսին է Աստուածային հոտի մէջը գայլ յարաժամ,
Ես չ'կարծեմ, թէ այնպիսի մարդն է պետութեան բարեկամ,
Քանի ողջ է, նա վնաս է մարդկային ցեղին ամէ ամ,
Այնպէսներուն կարդա քարոզ օրը կուզես հազար անգամ,
Աւա՜ղ, որ այդպէսներուն էլ նախահայր կոչւում է Ադամ,
Անխիղճ ու անկրօն մարդն է իսկ Սադայէլի գերին։

Բայց գիտցիր, իմ սիրելի, բարեպաշտ մարդիկը զատ են,
Իսկ դորանք են որ անխիղճ ու անողորմ մարդոցը կատեն.
Այդպէս մարդիկ հոգուագիտ, են հրեշտակաց համեմատ են,
Ամեն մեղքից մոլութիւնից բացակայ են ու ազատ են,
Դորանց այս աշխարհին տուած ամեն օգուտները շատ են
Աստուածասէր հարուստները աղքատաց այնպէս նկատեն,
Ինչպէս մի մայր պաշտպանում է նորամանուկ կաթնակերին։

Խիղճը արդար մարդոյ ծառը իսկ դալար ածիւնածիւղ,
Նորա ծառի տուած պտուղներն են միշտ կենդանի իւղ.
Ոստերը միշտ կանաչ ու թարմ հասցնում են պտղատու շիւղ,
Այսպէս մարդու կեանքն է յատուկ անթառամ փունջ ծաղ-
կեայ ընձիւղ,
Ջիւան, թէ դու հանդիստ կուզես մանարի դտիր մի լաւ գիւղ,
Վերջապէս ինչ մարդոց մէջը չ'լինի Աստուծոյ երկիւղ,
Այնպէսն է ցերեկից հեռու, շատ մօտիկ մշտագիշերին։

228

Շ Է Ք Ի.

Ով վարդ արեւելեան, բոյս կենդանութեան,
Խրախոյս մարդկութեան, ցոյց տուր քո տերեւ,
Կսպասէ քո գարնան ծառայ եւ իշխան,
Քեզնից մարդիկն համայն խնդրում են պարգեւ։

Սոխակ սիրաբանդ է երգիչ տանդ,
Խնդրում է արժանդ, լոյս բուրաստանդ,
Կանչէ այգեպանդ, ուղղէ շրջանդ,
Բաց քո պատուհանդ, թող ծագէ արեւ։

Հերիք մնաս տխմար, մարդկանց անյարմար,
Եղիր շքեղ գոհար, քանի կաս դալար,
Ծարէ նոր գաղափար, մի մնար խաւար,
Աչքերդ արա՛ ղամբար, չ՚մնայ կեղեւ։

Սոխակին հաւանող, միշտ ծափ հարկանող,
Քեզի կոյս պահպանող եւ քաջ անուանող,
Ագռաւին սպանող մօտը չ՚տանող,
Լեր դարուս նմանող, գտիր նորաձեւ։

Ջիւանուս խրատես, եւ համեմատես,
Որ անուն հաստատես, վէրքս փարատես,
Կեանքիս հարազատ ես, բոյս անարատ ես,
Նորատունկ արմատ ես, քեզ պէտք է անձրեւ։

229

Ղ Օ Շ Մ Ա Յ։

" Որ մի մարդ բնական լինում է տխուր;
Աշխարհք բժիշկ դառնայ չի երթայ ցաւը;
Խորասուզ կ՚լինի դեռ չ՚տեսած ջուր,
Վասն զի խղճալւոյն կոտրած է նաւը։

՚Ինչ է տխուրը, ինչպէս որբ տղայ,
Ուրախութիւն չունի, սուտ է յարակայ,
Կուզես օրը տասն եւ ութը ջուր լուայ,
Սպիտակ չի լինի բնական սեաւը։

Ջիւան, նա կ՚մնայ միշտ սպասելով,
Իրան տխուրների շարքը դասելով,
Պիտի շունչը հատնի միշտ ձիւն ասելով,
Գարնանից անտեղեակ անմեղ ագռաւը։

230

Ա Ղ Օ Թ Ք.

Ո՜վ ամենակարող Արարիչ Աստուած,
Խնդրում եմ ինձ մտքի կարողութիւն տուր,
Աղերսում եմ, խնդրում միշտ բազկատարած,
Տուր ինձ հոգւոյ սնունդ, կենաց կերակուր։

Ով Արքայից Արքայ, անվերջ Նախագահ,
Տուր ինձ կարողութիւն չ՚մնամ անշահ,
Բացի քեզնից ես ում դիմեմ, ով անմահ,
Որ լինի առանց մեղ ամենամաքուր։

Զիւանն եմ փափագող միշտ անբիծ Հոգուդ,
Մէտքս լուսոյ կարօտ, շատ բան ինձի մութ,
Ուրախացո՛ սիրտս ով Աստուածութ,
Մի թողներ թշուառիս միշտ մնալ տխուր։

231

Գ. Օ Շ Մ Ա Յ.

Ով դու զբաղմունքի, ցաւի թագաւոր,
Հոգսը տրտմութիւնը տուիր ինձի բաժ,
Շրջիմ միշտ երերուն, մտատանջ, մոլոր,
Չես գթալ ինձ վերայ, սիրտդ է պառաժ։

Կ՚թափես խեղճերու արիւնը անվախ,
Խօսքերդ մարդասպան, բնութիւնդ ձախ,
Մթնագոյն ամպի պէս միշտ յօնքերդ կախ,
Պատկերդ թանձրամած, աչքերդ է խաժ։

Զիւանն եմ, առ այժմ դպիրը սրտիս,
Կուտամ չես ընդունիր խնդիրը սրտիս,
Անդադար կ՚խաղայ երկիրը սրտիս,
Այդ քո որոտմունքից չի մնար անժաժ։

232

Գ. Օ Շ Մ Ա Յ.

Ով անգգայ, անխիղճ, կեղտոտ իմաստակ,
Մինչ ե՞րբ վիրաւորես անմեղ սրտերը,
Ով Նեռի կարապետ, հոգւոյ աւազակ,
Ինչո՞ւ կ՚պղտորես շքեղ սրտերը։

Հողմերից հալածուած ամպերի նման
Թափառիս անդադար միշտ աստանդական,
Դարձեալ քեզի դու կանուանես գիտնական,
Միթէ կ՚համոզուե՞ն ուժեղ սրտերը։

Զիւան, թափի՛ր աչքիդ մարգարիտները,
Աստուած կուզէ հոգւոյ ճշմարիտները,
Կ՚պահէ անվնաս միամիտները,
Չի թողներ անբժիշկ անդեղ սրտերը։

233

«ԲԻԻԼԲԻԻԼ, ՔՈ ՆՄԱՆ ՔԵԶ ՎԵՐԱՅ ՓԱՓԱԲ ՉՈԻՆԻ ՎԱՐԴԴ.»

Ո՜վ պարտիզատէր, ինչու գոհունակ չունի վարդդ,
Շատ կարելի է բաղդը յաջողակ չունի վարդդ,
Անուանը համեմատ գեղեցիկ չէ երևում ճիշդ,
Նման շուշանին փայլ ու սպիտակ չունի վարդդ։

Ոստերը չորացեալ օրը միշտ ծարաւ է անցնում,
Անձրևի կաթիլ երկնից օժանդակ չունի վարդ,
Նարգոս, շուշանիկ, նարգիզ ու շահպրակը տես մէկ,
Ափսոս, նոցա նման բարի վաստակ չունի վարդ։

Նա վառւում է, հառաչում է, դա նստած է հանգիստ,
Երբէք սոխակին սէր ու նմանակ չունի վարդ,
Ցերեկը արև չէ տեսանում ամպերի տակն է,
Իսկ գիշերը խաւար, լոյս ու լուսնակ չունի վարդ։

234

Գ Ա Լ Է Ն Տ Է Ր Ի.

Ով մարդ, հեռացիր խաբեբայ, խարդախ սիրականից,
Օգուտ չի լինիր, խեղճ սիրահար, ձախ սիրականից,
Քեզ պէս քանի անձինք խաբելով զրկել է փառքից,
Փախիր ուրեմն անամօթ, անվախ սիրականից։

Միշտ բամբասելով քաղաքի մէջ խօսում է վատ,
Ի՞նչ ես իմանում այդ քո մեծածախ սիրականից,
Ձեռքերի արիւնալուայ է տեսնում բոլոր աշխարհ,
Ե՛կ, ե՛կ, հեռացիր արենաշաղախ սիրականից։

Մաքուր սէրդ ափսոս չէ՞, հոգի՛ս, որ նորան յանձնես,
Հեռու ման արի սև, մրաթաթախ սիրականից,
Անգութ սևամաղձի սուսերից քեզ նման, ով մարդ,
Շատին եղել է գլուխը ջախջախ սիրականից։

Անշուշտ Ջիւանս գիտում է, սիրոյդ փոխարէնը
Պիտի ճաշակես արիւն ու թարախ՝ սիրականից։

235

ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԵՐԳ.

«Նէճիպէյի եղանակով»

Ես քեզ տեսայ մէջը այգուն,
Ծովտալով ինչպէս թռչուն,
Սրտիս սաստիկ դուր եկար դուն,
Ա՜խ, իմ սիրական, անուշ սիրական,
Կեանքիս հատորը դուն ես, աննման,
Վառայ, վառայ, ես վառայ,
Կրակից ճարակ դառայ,
Հանգստութիւն չունեցայ,
Մինչ իմ կարօտս չառայ։

Այն օրուանից չունիմ դադար,
Ինչ քեզ տեսայ, գեղատիպար,
Իսկապէս եղայ սիրահար,
Ա՜խ, իմ սիրական, անուշ սիրական,
Կեանքիս հատորը դուն ես, աննման։
Վառայ, վառայ, ես վառայ,
Կրակից ճարակ դառայ,
Հանգստութիւն չունեցայ,
Մինչ իմ կարօտս չառայ։

Աչքերիցդ մի կայծ թռաւ,
Թռաւ, սրտիս մէջը ընկաւ,
Ինչ կանեմ՝ չի՛ հանգչիր բնաւ.
Ա՜խ, իմ սիրական, անուշ սիրական,
Կեանքիս հատորը դուն ես, աննման,
Վառայ, վառայ, ես վառայ,
Կրակիդ ճարակ դառայ,
Հանգստութիւն չունեցայ,
Մինչ իմ կարօտս չառայ:

Փախան ես ոսկեփետուր,
Աչքերիդ մէջ կ'ցոլայ հուր,
Թագուհին ես թռչնոց հանուր,
Ա՜խ, իմ սիրական, անուշ սիրական,
Կեանքիս հատորը դուն ես, աննման,
Վառայ, վառայ, ես վառայ,
Կրակիդ ճարակ դառայ,
Հանգստութիւն չունեցայ,
Մինչ իմ կարօտս չառայ:

236

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

Փողի, կամ կնոջ համար կրօնը փոխողը վատ է,
Չ'համոզուած կրօնափոխ լինողը անհաւատ է,
Աչքիցը կելլէ գեղեցիկ կինը փողը հատնելով,
Ըստորում նոր ընդունած կրօնի մէջ անհաստատ է:

Երկընուց ո՞վ լուր բերեց թէ սա ազգն է դրախտական,
Ով բարի արդար եղաւ, տանջանքներից նա ազատ է,
Ամէն ազգ մի սար ունի, քամակը տուել է նորան,
Ով Ջիւան, մեր ազգի էլ հաւատը սուրբ, անարատ է:

237

ԵՂԲԱՅՐ.

Դու քեզ համար եղար, ես էլ ինձ համար,
Ոչ ես մի բան դառայ և ոչ դու, եղբայր,
Զաշխատեցինք մի տեղ համերաշխաբար,
Ջլատուեց ուժերս ահարկու, եղբայր:

Քանի մէկ տեղ էինք, մենք չունէինք ահ,
Մեզի ոսոխներուն կսպառնայինք մահ,
Արդեօք բաժանուելով ի՞նչ ունեցանք շահ,
Արի, մէկ մտածենք, իմ աղու եղբայր:

Ա՜խ, ինչ ժամ մէկ էինք որպէս քաջ կորիւն,
Երկիր սարսեցնէր մեր գոռուն, գոչիւն,
Ես մտայ մի անկիւն, դուն էլ մի անկիւն,
Եղանք ամեն մէկս մէկ կտոր, եղբայր:

Երբ միասին էինք սրտով սիրակեզ,
Մեր տունն էր զարդարուած իբր մէկ պարտէզ,
Ինչ ժամ մտնում էինք մէկ տեղ ասպարէզ,
Պապանձում էր ամեն չար լեզու, եղբայր:

Նման մեր պապ Վարդան քաջ նահատակին;
Անվախ մտնում էինք մէջը կրակի,
Երբ որ տալիս էինք քամակ քամակի,
Տապալւում էր փիղը այն հուժկու, եղբայր։

Զ'լսեցինք խօսքը մեր բարեկամին,
Մենք մեզի հասցրինք այս թշուառ ժամին,
Ամեն մարդ խփում է մեզ իւր ատամին,
Դարձել ենք խաղալիք ինչպէս ձու, եղբայր։

Մենք մի հօր զաւակ ենք, եղբայր հարազատ,
Ինչո՞ւ համար չունինք մի ծէս, մի հաւատ,
Խորթ ու մօրի չ'կայ մեր մէջը հաստատ,
Ծնողներս մէկ է իմ ու քու, եղբայր։

Մի աղբիւրի ջուր ենք, բայց չենք իրար հետ,
Մեզի բաժանել է բանսարկուն վարպետ,
Միանալով կազմենք մի ահագին գետ,
Զ'մնանք անջատուած իբր առու, եղբայր։

Մոռացանք իրարու, մոռացանք իսպառ,
Գրուանի տակ մնաց մեր ճրագը վառ,
Իմ այստեղ վիզըս ծուռ, դու այդտեղ թշուառ,
Ընկել ենք իրարուց շատ հեռու եղբայր։

Մեր վաստակածները մեզ անօգուտ են,
Տներս անպարիսպ հիմքից խախուտ են,
Մեզը կ'պատրաստենք արջերը կուտեն,
Եղել ենք անպաշտպան խեղճ մեղու, եղբայր։

Եթէ չ'հաշտուենք ու ատենք իրար,
Հաւատացիր, կ'սխալուինք չարաչար,
Այս մեր արարմունքը թէ տեւեց երկար,
Վերք կուտայ երկուսիս մահացու, եղբայր։

Կարծեմ բաւական է մնացինք բաժան,
Արի՛, կրկին լինինք մենք մի գերդաստան,
Թող, թշնամին ճաքի, մտնի գերեզման,
Դա է մեզի համար ձեռնատու, եղբայր։

Ջիւանի, եղբօրդ մի պատճառեր ցաւ,
Մի լինիր նախանձոտ, խեռ, փառահամբաւ,
Ասածս լաւ լսիր, համարէ քեզ բաւ,
Թէեւ չեն խօսքերս իմ ազդու, եղբայր։

238

Մ Ա Տ Ռ Ո Ւ Ա Կ.

Մատռուակ, բե՛ր ինձ գինի տուր այս գիշեր,
Մորմոքում եմ, սիրտս է տխուր այս գիշեր.
Ինձ մի բանով ուրախացուր այս գիշեր,
Գոնէ չանցնին ժամերս զուր այս գիշեր։

Շնորհք արա, մի՛ ձանձրանար, գեղանի,
Լեր իմ ցաւիս դու ցաւակից գովանի,
Բեր մատռուակ, բեր գինին հին մառանի,
Վա՜ռ կրակիս սրսկէ ջուր այս գիշեր։

Տուր թևդ ինձ, գեղեցիկս, սիրունս,
Անուանդ հետ պիտի կապեմ անունս,
Արդէն գիտես, որ չի տանիր իմ քունս,
Եւ, զբօսենք, օդն է մաքուր այս գիշեր։

Հոգւոյս հատոր, բաւ է կրեմ քո ցաւը,
Գերիդ դառնամ ու փարուիմ քո կամաւը,
Ինձ սիրում ես թէ ոչ, ասա՛ իրաւը,
Տուր ինձ շուտով վճռական լուր այս գիշեր։

Լուր իմ խօսքս, խնդրում եմ խոնարհաբար,
Մի այլայլիր, ես չեմ խօսում անկատար,
Եթէ լինելու ենք մէկ մէկու համար,
Արի՛ կապենք պայման ամուր այս գիշեր։

239

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ ԵՐԳԻՉՆԵՐԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ո՞վ էր տեսել այսպէս տարի, այսպէս բան,
Ոչ հարսնիք կայ, ոչ փեսատես, ոչ նշան,
Թէ որ գործը այսպէս գնայ մշտական,
Երգիչները դիփ կ՚լինին մուրացկան։

Ժողովուրդը խեղճ ու մոլոր շուարած,
Ձեռքը ծուռ, կարծես, մխերն է մարած,
Արհեստներս է, պիտի տանենք, ինչ արած,
Ինչ էլ որ կայ, պիտի լինինք բաւական։

Արհեստաւոր դասի վերայ ճար չ՚կայ,
Չի՛ աշխատիր որ ծախս անէ անխնայ,
Որտի՞ց ունի աւել փող որ մեզի տայ,
Խեղճը հազիւ պահպանում է ինքն իրան։

Վաճառականներու դրութիւնը վատ,
Մուտքերը սաստիկ քիչ, ելքերը միշտ շատ,
Առևտուրը ընկած՝ վերքերն անփարատ,
Ձեռքերը ծոցերում, գործերը խափան։

Գիւղացւոց հօգսերը աւելի բազում,
Աղքատ, հողերը քիչ, սրտերը տրտում,
Երբ կ՚լինի հանդէս, խնջոյք, կերուխում,
Էլ ո՞վ կ՚մտածէ, թէ ունինք Ջիւան։

240

ԲԱՐԵԿԱՄ.

Քանի ժամանակը ձեռքդ է, վայելէ,
Բարեկամ, աշխարհը քեզի չի՛ մնալ,
Մերթ մերթ ուրախութեան տունը այցելէ,
Ամեն ժամ աշխարհը քեզի չի՛ մնալ։

Ե՛կ, չափաւոր սիրէ աշխարհի շահը,
Սրտիցդ մի՛ հաներ Աստուծոյ ահը,
Մի օր ծերութեան հետ կ՚հասնի մահը,
Շատ անգամ աշխարհը քեզի չի՛ մնալ։

Ջիւանի, ընկերիդ կամեցիր բարի,
Նորա տուած չարչարանքին յօժարի,
Մաթուսաղան ապրաւ ինն հարիւր տարի,
Տես Ադամ, աշխարհը քեզի չի մնալ։

241

ԱՊԵՐԱԽՏԸ.

Զարասիրտ, նախանձոտ մարդը, ընկերին
Չի ուզեր որ լինի ապահով, խաղաղ,
Եթէ տեսնի մի նոր զարդը ընկերին,
Ամբողջ տարով նա կ՚մնայ անծիծաղ։

Այսպէս մարդը միշտ կ՚քաշէ դէպ իրան,
Իրա կողմն է տաշում ուրագի նման.
Եթէ իւր ընկերին մի չնչին բան տան,
Ինչո՞ւ ինձ չ՚տուին, կասէ, շատ աւաղ։

Սա իւր վատ կրքերի դարձել է գերին,
Ոչ զաւակ կ՚սիրէ, և ոչ ամուսին,
Թէև մարդ է, սորան կասեն մարդածին,
Մի շան չափ էլ չի ճանաչիլ հաց ու աղ։

Ջիւան, բարի մարդկանց մօտ սա յէտին է,
Անունով ստուեր է, գործով չնչին է,
Այսպէս մարդը հոգի չունի, մարմին է,
Վաղուց խիղճը մեռած մտած՝ է դագաղ։

242

ՀԱՅ ԱՂՋԻԿ.

Սև աչերուդ, աղեղ ունքերիդ մատաղ,
Մեղրից ու շաքարից անուշ հա՛յ աղջիկ,
Վարդագոյն այտերդ միշտ գեղածիծաղ,
Քայլքդ կաքաւի պէս քնքուշ, հայ աղջիկ։

Ի՞նչն է պարանոցիդ ոսկեղէն զարդը,
Կարծես, Անահիտն է մասը, մակարդը,
Պատկերիդ նկատող երիտասարդը
Կ՚լինի խելագար, ապուշ, հայ աղջիկ,

Գրաւիչ խօսքերով ով իմ հոգեհան,
Բունի սիրել կուտաս մարդկանց, սիրական,
Պտոյտ տալըդ անմեղ աղաւնու նման,
Շարժուածքդ խոհեմ, զգուշ, հայ աղջիկ...։

243

ՂՕՇՄԱՅ.

Սիրականի մօտ գնալը դիւրին է,
Բայց զատուիլը շատ դժուար է, սիրելի,
Սէր քաշողի խելք ու միտքը խորին է,
Մի ծածկուած գաղափար է, սիրելի։

Աշխատողը գործից կ'քաղէ արդիւն,
Քրտընքի փոխանակ թափելով արիւն,
Ճշմարիտ սիրոյ մէջ նախանձ, դառնութիւն,
Չի պատահի, անհնար է, սիրելի։

Ինչպէս Սօսը Սանդխտէին բարեկամ,
Այնպէս սէրս կաւելանայ ամէ ամ,
Եթէ դու հեռանաս մի րոպէ, մի ժամ,
Սիրահարդ ում 'նշմարէ, սիրելի։

244

Բ Ա Գ Ո Ս.

Սուրբ Բագոսի ինձի տուած օգուտը
Կուզեմ քեզի յայտնել, ով իմ ազգական.
Սատանայի ցեղ է, ով խօսի սուտը,
Չեմ ուզիլ կեղծօրէն դնել բնաբան։

Ինչպէս ճշմարիտ է քեզ պատմեմ այնպէս,
Խմիչքը մեր կեանքը ճիշտ անում է կէս,
Ոչ Հոմերոս գիտէ ոչ Մեծն Ներսէս,
Ամենին հաւասար կանէ դատաստան։

Ջոկ խորհրդով օձին խաբուեց Ադամը,
Այնպէս ինձի դառաւ իմ բարեկամը,
Ախալքալաք տեսայ խմիչքի համը,
Երբ ես էի տասն և ութը տարեկան։

Սա իմ բարեկամն էր երգող չարամոյն,
Այն կաթիլը գործ էր ածում գունագոյն,
Երբ ինձ ստիպում էր կարծում էի թոյն,
Գիտէի խմիչքը պատճառը մահուան։

Սիրելիս լինելով կախարդ, ձեռնածու,
Անմեղ բնութեանս շուտ եղաւ հասու,
Ասաւ եթէ խմիչք չ'գործածես դու,
Չես ընդունուիր ամենայն մի խրախճան։

Այդ իմ հին ընկերիս ես հաւատալով,
Մտանք մի նեղ փողոց, մի քիչ ման գալով,
Բարեկամիս հետը ձեռք ձեռքի տալով,
Եկանք 'ի միասին մէկ հատ մկիտան։

Երբ մտանք այդ շէնքը, կանգնած էր մի մարդ,
Երեսը շատ ծաղր, այտերն իբրև վարդ.
Նա մեզի բարևեց ուրախ և զուարթ,
Ու ցոյց տուեց մեզի մի ջոկ օթևան։

Նստանք այնտեղ, առաջ եկաւ արաղը,
Գինին, խորովածը, ծիծակը, աղը,
Տեսայ այդտեղ պիտի կախուեր մեր մաղը,
Օգուտն ինչ, լռելով նստեցի սեղան։

Գիտցայ, ինձ արժան չէր այդ խաղցած դերս,
Ձեռք պարզեցի պատկառելով պատկերս,
Գինավաճառի հետ ես ու ընկերս,
Քցեցինք ամենս մի մի ստաքան։

Խմիչքը երբ մտաւ սրտիս սենեակը,
Մտքիս անկիւններում վառեց կրակը,
Կրկին ձեռս առայ գինւոյ բաժակը,
Խմել ընկերներիս, անելով նշան։

Երկուսն երեք եղաւ, տաքցաւ գագաթս,
Քսակիցս չէր հեռանայ իմ թաթս,
Հանեցի դրպանէս բոլոր արծաթս,
Կուզէի ծախս անել 'ի մէջ մի վայրկեան։

Ընկերս բազմել էր աթոռի վերայ,
Ձեռքին ունէր բռնած գինով լի կթխայ,
Կանչեց մօտը եօթը ութը խաբեբայ,
Իրան խորհրդակից մարդիկ ժրաջան։

Դորանք նստան սեղանի չորս բոլորը,
Հին գինին պարպել էր, բերինք մենք նորը,
Բաժակներու մէջը լցրին խնձորը,
Իմ կենացս համար բաց արին բերան։

Իմ կենացս խմում էին նոր ի նոր,
Ես ինձ կ'կարծէի յատուկ բաղդաւոր,
Այն վայրկենին դարձել էի թագաւոր,
Աչքիս մէկ կերեւէր ծառայ թէ իշխան։

Վերջապէս այդ օրը մինչեւ իրիկուն,
Ինձանից կ'խմէր յիմար թէ գիտուն,
Մութն էր ամեն մի մարդ գնաց դէպի տուն,
Միայնակ մնացի ես անօգնական։

Նուտով փախած էր իմ ծանօթ ընկերը,
Որ ինձ խոստացել էր թէ գնանք մերը,
Գինետունը կեցայ ես այդ գիշերը,
Ըստորում չունէի ես ջոկ կեցարան։

Գետնի վերայ ընկած, սենեակս ստուն,
Բարձ արի այդ գիշեր գինւոյ տակառն,
Դուռը վերաս կողպեց գինեվաճառն,
Վանդակն էի ընկած թռչունի նման։

Կէս գիշեր էր քնից արթնացայ տխուր,
Ցրտի պաղութիւնից եղած կցկտուր,
Եթէ մի մարդ ինձ տար մի բաժակ պաղ ջուր,
Մօտս արժէք ունէր հազար դահեկան։

Ամբողջ երակներս եղած էին դող,
Զոր քարերից չէր մնացել կուշտ ու կող,
Ձեռքս ծոցս տարայ չ'գտայ մէկ փող,
Սկսեցի անել լաց ու կոծ, կական։

Դուռը բացուեց, երբ լուսացաւ առաւօտ,
Այն գինեվաճառը եկաւ ինձի մօտ.
Վերջապէս խնդրում եմ չ'լինի կարօտ,
Իմ քաշած օրերին ոչ մի բանական։

Առանց փող չտուեց ինձի մի արաղ,
Այն գինեվաճառը, աւա՜ղ, շատ աւա՜ղ,
Քանի մանէթ փողս մտցուցի դագաղ,
Ընկերիս ձեռքովը տարայ գերեզման։

Ոգիս գրաւելով այդ ամպխտանը,
Ընտիր աշխատանքս լցրուց գրպանը,
Այնքան փողս կերաւ այն մկխտանը,
Կրկին նա ինձանից չեղաւ բաւական։

Այդ տեղից դուրս ելայ դատարկ ջեպ ու ծոց,
Սրտումս բացուել էր հազար մի կերպ խոց,
Ուղղուայ այնուհետեւ դէպի սրջանոց,
Թէ տեսնիմ իմ ընկերներէս այնտեղ կա՞ն։

Տեսայ որ այդտեղ են՝ ծագեց արեւ,
Շարժեց երակներս փոխուեցաւ ձեւս,
Բարեւ տուի, երբ որ չառան բարեւս
Մնացի զարմացած ես, անպատասխան։

Անխիղճ ընկերներս պատուոյս փոխանակ
Վարուեցան ինձի հետ խռով, հակառակ,
Նստայ այդտեղ բաւականին ժամանակ,
Երբէք մինը մի սուրճ չտեսաւ արժան։

Այդպէս ընկերներից հեռացիր, ով մարդ,
Որ են մարդ աւարող, խաբեբայ, կախարդ,
Ծայրայեղութիւնն է մարդուն միշտ թակարդ,
Չափազանցութիւնից դուրս չի՛ գար լաւ բան։

Զգուշացիր, հոգիս, խմէ չափաւոր,
Որ վերջը խմիչքը քեզ չ՛լինի բոր,
Եթէ միշտ հետեւար, կ՛մնաս մոլոր,
Անպատիւ շուարեալ մարդ սատանդական։

Սիրելի՛ ազգական լեր ուշիմ, արի,
Մի՛ լինիր որկրամոլ, քչին յօժարի,
Ջիւանն եմ կամեցող միշտ քեզի բարի,
Կ՛մնամ քեզի հետ հոգւով անբաժան։

245

Ս Է Մ Ա Յ Ի.

Սիրականս պիտի գար շուտ, մէկ օրը մէկ շաբաթ դարձուց,
Անարժան աչքէ ընկած վատ սիրելիս խանդակաթ դարձուց.
Բոլոր աշխարհ ու երկիր իմ խորհրդիս վայ ուզեց կարդալ,
Անարատ սիրոյ քաղցր բաժակը դառն դաւաթ դարձուց։

Ապերախտ սիրելիս ինչ վերնատինք, գնաց չեկաւ էլ յետ,
Առոյգ, կարմիր գունով ներկած երեսս սեւաթ դարձուց,
Սիրով վառուած անուշ կեանքս հոգիս չարչարուելով ճնշեց,
Կակուղ, քնքուշ, դադար սիրտս գրելու մագաղաթ դարձուց.
Ջիւանի, սիրահարին սիրականը յանդիման դարձուց,
Իրան ամեն մի խօսքը սիրտ ծակելու սուր մախաթ դարձուց։

246

Գ Ե Ղ Ա Ն Ի.

Սիրել եմ, չեմ զղջար, քեզ, ով գեղանի,
Օտարք ինչ ասում են—թող ասեն, ցաւ չէ,

Դու մի խաբուիր այլոց որպէս պատանի,
Նորանց ամեն ասածները իրաւ չէ։

Հողմը ժայռ քարիցը ինչ պիտի տանի,
Որքան փչէ դատարկ, իզուր կանցնի,
Վայրախօսը այն կողմին կ՚նմանի,
Թոյլ ծառի պէս միշտ շարժուիլը լաւ չէ։

Տոկուն սիրտ ունեցիր, լինելով արի,
Կարող ես դու յաղթել ամենայն չարի,
Խելօք, խոհեմ, համեստ լինիլն է բարի,
Միայն գեղեցիկ լինիլը քեզ բաւ չէ։

Ջիւանին եմ քեզի բարի ակնածող,
Բարին սիրող, չար բանը միշտ հալածող,
Եղիր դուն հեռատես, արթուն, մտածող,
Գիտցիր սիրունի թշնամին սակաւ չէ։

247

Դ Ա Ս Ի Թ Ա Ն.

Սիրելի բարեկամ, անցաւ գարունը,
Չ՚ճարեցիր քեզի մի գործ օգտակար,
Ջուր անցաւ ամառը, եկաւ աշունը,
Չունիս ոչինչ սնունդ, ձմեռուայ պաշար։

Թէ դու քեզ չ՚գթաս—ոչ ոք չի՛ գթայ,
Մէկ մտածէ, որ ես ունիմ ապագայ,

Ի՞նչպէս մարդ ես, խեղճութիւնը չես զգայ,
Այլք կ՚ցաւին, դու չես ցաւիր քեզ համար։

Թէ աշխարհը չափես դու ծայրէ ի ծայր,
Չի ճարուի քեզի պէս թշուառական այր,
Մինչ երբ խեղճութիւնը քեզ իշխէ, եղբայր,
Մարդ ես, մէկ մտածէ գտի՛ր մէկ հնար։

Ո՞ւր է որ էիր դու անյաղթ քաջ ու ժիր,
Ինչո՞ւ սարկացար, խելացի դպիր,
Որդիքներուդ ամեն մինը մի երկիր,
Ընկած կ՚թափառին մոլոր ու շուար։

Վարպետ ես, հնարէ մի նոր մեքենայ,
Միշտ հոգւով աշխատիր, ոչ թէ ակամայ,
Միթէ՞ աշխարհը ողորմած մարդ չ՚կայ,
Որ մինը քեզ համար լինի բարերար։

Բաց մտքիդ աչքերը եղի՛ր բանիմաց,
Սիրելիս, աչքերդ բաց, ասում եմ բաց,
Դառն աշխատանքով մի կտոր չոր հաց,
Դռնէ դուռ մուրալով կ՚ճարես դժուար։

Ուրեմն աշխատի՛ր, ազնիւ բարեկամ,
Որ Տէրը քեզ խղճայ ու անէ խնամ,
Անսնունդ կ՚մնայ ծոյլը յարաժամ,
Գերդաստանով անբաղդ, միշտ անմխիթար։

Ինչո՞ւ քեզի նման գիտուն անհատը
Լաւ ընթացքը թողած կ՚բռնէ վատը,

Լաւ, եղբայր, մի՛ անարգեր խրատը,
Երբ մի մարդ կ'խօսի քու գործիդ յարմար։

Աշխատանքով կապրին ծառայ թէ իշխան,
Մարդ չի՛ դադրի, երբ չ'մտնի գերեզման.
Չաշխատողը և չի ուտեր ոչինչ բան,
Ամենայն մի դիմօք կ'մնայ անճար։

Թէ որ աշխատելու չունէիր փափագ,
Ինչո՞ւ ամուսնացար, ունեցար զաւակ,
Տունդ մտնողը կ'կարծէ աւերակ,
Անօթի ու ծարաւ, առանց կառավար։

Է՜հ, ամօթ է, եղբայր, քնից սթափէ,
Բաւական է ծուլութիւնը քեզ խաբէ,
Մտածէ խելքովդ ձևէ ու չափէ,
Գտի՛ր մի բարի գործ, շուտով յառաջ տար։

Կանչէ Աստուած, գնա մի գիւղի անկիւն,
Անկարծիք դու այնտից կ'քաղես արդիւն,
Դաշտը վարողը պիտի անկէ ոսկէ սիւն,
Թէ անյապաղ քրտինք թափէ անդադար։

Աստուած քեզ տուել է խելք ու միտք, ուղեղ,
Ֆիզիքապէս առողջ, յաղթանդամ, ուժեղ,
Մօտ արա՛ որդիքդ, թոռներդ մի տեղ,
Գործի դի՛ր ամենին, եղի՛ր յուշարար։

Առաջինն ճարէ մի քանի զոյգ եզ,
Սորվէ երկրագործի սուրբ արհեստը հեզ,

Այնուհետև շատ մարդ օգնել կուզեն քեզ,
Որ տեսան գործիդ մէջ կաշխատիս արդար։

Որ տեսան գործիդ մէջ արդար ես, յատուկ,
Քեզ սիրել կ'ցանկան թէ ծեր, թէ մանուկ,
Ամեն իշխան քեզի կը օգնէ ծածուկ,
Փոքր տոկոսիքով փոխ տալով գումար։

Կամաց կամաց դու կստանաս մեծ համբաւ,
Այլուստի կողմից չես ունենար ցաւ,
Մարդը յառաջ կերթայ սակաւ առ սակաւ,
Մէկէն չի՛ սկսիր հարիւր ու հազար։

Արի՛ եղբայր իրար բարի կամենանք,
Սիրոյ պայմաններէն մենք չ'հեռանանք,
Շատ խօսալով այլոց ձանձրութիւն կուտանք,
Քչից շատ հասկացիր ու եղիր յօժար։

Ջիւանի՛, թէ մարդ յատուկ հասկանայ,
Ջանքը, իր եռանդը իզուր չի գնայ,
Աշխատողը երբէք քաղցած չի՛ մնայ,
Երբ Աստուած տուել է մարդուն մեծ հանճար։

248

Ի Ղ Ձ.

Մինչև երբ սպասեմ քո ճանապարհը,
Իմ կենացս մասը, գալու ես արի,

Առանց քեզ տխուր է հոգւոյս աշխարհը,
Մի՛ տար այդ վնասը, գալու ես, արի՛։

Բացի քեզ տեսնելը ես բաղձանք չունիմ,
Իղձս այս է, ուրիշ պաղատանք չունիմ,
Առանց քեզի արև չունիմ, կեանք չունիմ,
Մտքիս Մեկենասը, գալու ես, արի՛։

Արի՛, Ջիւանիիդ վէրքը փարատէ,
Կրկին սիրոյդ մէջը կրկին հաստատէ,
Տելեմաքն եմ, Կալիփսէից ազատէ,
Հոգւոյս Աթենասը, գալու ես, արի՛։

249

ՕՏԱՐԱԿԱՆԻ ԵՐԳ.

«Եմենի եղանակով.»

Օտարութեան մէջը զուր անցաւ ջանքս,
Կարօտդ քաշելով՝ մաշեցի կեանքս,
Կրկին դէպի քեզ է սիրտս, բաղձանքս,
Ա՜խ, իմ քաղաք, անուշ քաղաք հայրական—
Պալիս, մամիս, նախնիքներիս օթևան։

Ծննդավայր, երբ քեզանից հեռացայ,
Կարծես դրախտիցը դժոխքը ընկայ,
Համդ ու արժէքդ ես նոր իմացայ,
Ա՜խ, իմ քաղաք, անուշ քաղաք հայրական,
Պալիս, մամիս, նախնիքներիս օթևան։

Տրկարներուն թէ չ՚ճնշէ հզօրը,
Կարելի՞ է որդին մոռանայ հօրը,
Մանաւանդ քեզ նման հարազատ մօրը,
Ա՜խ, իմ քաղաք, անուշ քաղաք հայրական,
Պալիս, մամիս, նախնիքներիս օթևան։

Օտարութեան հացը առացին մեծկակ,
Բայց գնացի տեսայ փոքր նկանակ,
Դառնահամ, անաճուն, սպառող քսակ,
Ա՜խ, իմ քաղաք, անուշ քաղաք հայրական,
Պալիս, մամիս, նախնիքներիս օթևան։

250

Դ Ի Ի Ա Ն Ի.

Սրբուհի սուրբ, ո՜վ տուեց այդպէս դառն կսկիծ քեզի,
Յաւդ ի՞նչ է, մաքրուհի՛, որ պատել է թախիծ քեզի,
Թո՛ղ հառաչեն և սգան մեղքով շաղախուած մարդիկը,
Անգուգական Նակը ստեղծել է անբիծ քեզի։

Դու ժառանգական բարի անձանց շառաւիղ ես սիրուն,
Անարատ կաթ է եղել, ով որ տուել է ծիծ քեզի,
Կենդանագրիդ առաջ ծունր դնելով մշտապէս,
Գեղեցիկ սեռը յատուկ ընտրել է նախագիծ քեզի։

Կազմուածքդ, մարմինդ ոսկուց զարգացած կարծում են,
Չէ եղել, չէ պատահել ամենևին կսկիծ քեզի,

Անարատ մաքրածինդ շատ հեռու ես խարդախներից,
Վստահիլ չի՛ մօտ գալու, ի՛նչ մարդ եղաւ կծիծ, քեզի։

251

ՍԱԴՐԱՆՁ.

Գիտութիւնը մշտապէս, ով մարդ առանձին թէ կուտայ,
Մշտապէս, ո՛վ մարդ, առանձին թէ կուտայ, պարգև կուտայ,
Ո՛վ մարդ առանձին թէ կուտայ, պարգև կուտայ, լաւ ձև կուտայ,
Թէ կուտայ, պարգև կուտայ, լաւ ձև կուտայ, իսկ և կուտայ։

Ուսում առնող լաւ տղան կ՚դառնայ անուշ գառի պէս,
Լաւ տղան կ՚դառնայ անուշ գառի պէս, կայտառի պէս,
Դառնայ անուշ գառի պէս, կայտառի պէս, թարմ ծառի պէս,
Գառի պէս, կայտառի պէս, թարմ ծառի պէս տերև կուտայ։

Կրթութիւնը գին չունի, ինչ տաս կորած չէ, բարերար,
Գին չունի, ինչ տաս կորած չէ, բարերար, որդուդ համար,
Ինչ տաս կորած չէ, բարերար, որդուդ համար, մի՛շտ օգտակար,
Բարերար, որդուդ համար, միշտ օգտակար արև կուտայ։

Զարգացումը մեծ բանէ, միշտ կուտայ մարդուն բարու-
թիւն,
Մեծ բանէ, միշտ կուտայ մարդուն բարութիւն, խոնարհու-
թիւն,
Կուտայ մարդուն բարութիւն, խոնարհութիւն, արդարու-
թիւն,
Բարութիւն, խոնարհութիւն, արդարութիւն մինչև կուտայ։

Ո՛վ Ջիւանի, Տէրն է Աստուած ամենամեծ հանճարի,
Տէրն է Աստուած ամենամեծ հանճարի, ամեն տարի,

Ամենամեծ հանճարի ամեն տարի, առատ բարի,
Հանճարի, ամէն տարի, առատ բարի, անձրև կուտայ։

225

ԳԱԼԷՆՏԷՐԻ ՄՈՒԽԷՆՄԷՁ.

Վարդ, վարդ ասելով կեանքը գնացել է սոխակին,
Մէկ օր, մի ժամանակ չէ հասել ի՛ր նպատակին,
Ափսոս, հազար ափսոս նորա սիրելի փափաքին,
Որ չէ խնայում խղճալի՛ պատանի հասակին,
Դարձեալ ուսաղ ասեմ նորա երգի եղանակին,
Ունայն սիրովը ծաղրատեղ է դառել թութակին։

Տասն և մի ամիս համբերելով յոյս է նկատում,
Խաւարը միգախառն գաւառից լոյս է նկատում,
Անմարդ, անապատ տեղից խրախոյս է նկատում,
Արմատը փտած ծառից նորաբոյս է նկատում,
Վարդին սոխակը սրտով սուրբ կոյս է նկատում,
Կարծում է համեմատ իրու արդար արեգակին։

Սոխակը ոչնչացրել է մարմինը փափուկ,
Ո՛հ, ոհ, ասելով վարդի սիրոյն դարձել է ծերուկ,
Ջուր սիրոյ մասին մահը տարել է քանի մանուկ,
Ինչպէս սոխակը ճանաչել է իւր սէրը յաւուկ,
Բայց չէ իմացել թէ կ՚սիրէ միշտ փուշը ծածուկ,
Սև ագռաւն էլ նկատում է մէկ ժամանակին։

Այս սիրոյն հաւանող բնական մարդը անօգուտ,
Այդ մարդու ձեռաց սուսերը, գեղարդը անօգուտ,

Անդաստանը ցանած ցորենը, յարդը անօգուտ,
Ինչպէս սոխակի հանդիսանայ զարդը անօգուտ,
Թողած պալատը, կ'սիրէ վարդը անօգուտ,
Կամ չէ իմացել համբաւը կապուտ մանիշակին։

Իզուր սիրոյ վերջը, Ջիւանի, մարդ կ'ճարէ ցաւ,
Օգուտ չի քաղիլ, վնաս է, հոգին կուտայ դրաւ,
Սիրոյ ծովի վերայ չի կարող շուռ գալ ամեն նաւ,
Ձեռնտու չէ մեզ աննպատակ սէրը, չէ իրաւ,
Թիթեռի սէրը ճշմարիտ է, միշտ սոխակից լաւ,
Ամբողջ կեանք իւր անձը նուիրում է կրակին։

253

ԽԱՉԱՏՈՒՐ ԿՆՏԷՂՑԵԱՆԻ ՍԻՐԱԾ ԵՐԳԸ.

Տգէտ բանմբասողները անծանօթ լուր կսպասեն,
Կամ ֆարմասօն, կամ ըօճիրան պատրաստ են որ քեզ ասեն,
Ողջ այնպիսի մարդիկը խելքերից պակաս են,
Իրանց փորը անօթի, ուրիշին կալ կ'կասեն։

Պարապ և անաշխատանք, անուսում ցանցառները,
Մ'տքերովը չափում են շատ տեղի անտառները,
Իբր գազան կ'ծախեն խեղճ անուշիկ գառները,
Իրանց դատողութեամբը նրանց շարքում կ'դասեն։

Կռիւ տեսնին, կ'ցնծան, մատուին*) իրար կ'քսեն,
Ուզում են այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն,

*)Ծանօթ. գաւառական լեզուով մատներ.

Ուրիշներին որկրամոլ, հաւատից դառած կասեն,
Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պաս են։

Ջիւան, յառաջ մի խաղար, քար կ'խփեն քո թևին,
Նորանք այնպէս մարդիկ են՝ խաւար կասեն արևին,
Արդարութիւնը ինչ է, չեն գիտեր ամենևին,
Բարութեան միշտ հակառակ, չարութեան մակարդ-մաս են։

254

Մ Ո Ի Ս Տ Է Զ Է Տ.

Վարդին սոխակից հեռացնող ով անիրաւ փուշ,
Կեանքերու զրաւ փուշ։
Յուսամ կ'լինիս վառ կրակին մի օր գրաւ, փուշ,
Չես ճարի թաթաւ, փուշ։
Մինչ երբ, ասա, անմեղներուն խաբես, անցնիս,
Կայծով լափես, անցնիս։
Ով անպիտան արմատ ի բնէ, այտերդ սևաւ փուշ,
Պատճառում ես ցաւ, փուշ։
Ո՛հ, որպիսի՜ անխիղճ, թիւնալից խայթ կայ քո մօտդ,
Զօրանայ արօտդ։
Ո՞րքան նորահաս սրտերու ընծայում ես ցաւ, փուշ,
Արիւն ու շարաւ, փուշ.
Թրթուրը, ճճին քեզանից խղճով են, ո՛վ անգութ,
Սակայն դու սև ու մութ,
Տարին քանի՜ հատ բերում ես սոխակ ու կաքաւ, փուշ,
Զոհուած, դուռդ խաւ, փուշ։

Վերջդ Ջիւանս քաջ գիտէ, որ չորանում են շուտ,
Անվարձ ու անօգուտ,
Ներգործութիւնդ անց չի՛ կենալ էլ քու, պառաւ փուշ,
Այրի, դու ծառաւ փուշ։

255

Ա Շ Խ Ա Ր Հ.

Տրտմութեան օթևան սգոյ տուն աշխարհ,
Քո մէջդ ոչ մի մարդ անցաւ չի՛ մնալ,
Լացով հարցս նման ընկայ ճանապարհ,
Ցաւերդ զգուեցի, երբ մօրից ծնայ։

Քո փառքերդ չնչին, պարգևներդ սուտ,
Կրկին կ՚պահանջես ստացողից շուտ,
Երբէք մի մարդ քեզնից չի՛ քաղեր օգուտ,
Ցաւով կ՚ծնանի, ցաւով կ՚գնայ։

Փրկիչդ խաչեցիր, ով անհարազատ,
Մ՞թէ մարդ քեզ նորէն կ՚ընծայէ հաւատ,
Ջիւանս քեզանից տրտմութիւնէն զատ,
Թէ իրաւն ասեմ, ես ոչինչ սնայ։

256

Մ Ո Ւ Ս Տ Է Զ Է Տ.

Տրտում ու տխուր շրջագայող անդադար եմ ես,
Ո՛հ, ապիկար եմ ես,
Տատրակի նման անընկեր, անմխիթար եմ ես,
Բաղդից օտար եմ ես։
Աշխարհի ալեացն չի՛ գիմանար նաւը սրտիս,
Է շատ ցաւը սրտիս.
Յուսով ու հաւատով ու սիրով անկատար եմ ես,
Մտքով տկար եմ ես,
Աւա՜ղ երիտասարդութեան անցած ժամանակիս,
Իզուր նպատակիս,
Վասն զի բարի գործքերու անօգտակար եմ ես,
Քանզի խաւար եմ ես։
Փոքր ինչ նկատում եմ դէպի ինձ, մեղքերս անթիւ,
Ցաւս չունի հաշիւ,
Դարց գամ կարելի է թէ նորէն ապաշխարեմ ես,
Անցքս նկարեմ ես։
Զբաղուելով ունայն սիրոյ հեղինակի հետն,
Սրտիս հարի նետն.
Այն ինչ խոցերէն փրկուելու ի՞նչ հնար եմ ես,
Անդեղ ու ճար եմ ես։
Ում որ բարեկամ անուանում եմ ճշմարիտ, անբիծ,
Ցոյց տալիս է կսկիծ,

Ոչ ոք չ'կայ աստ, Ջիւանուն բարերար եմ ես,
Ընկեր համարեմ ես։

257

Փ Ո Ր Ձ.

Փորձը մարդուն կ'դարձնէ կատարեալ,
Գործերի մէջ չի՛ ունենար շատ սխալ,
Կըսկսի ոսկւոյ նման երեւալ,
Մաքուր, զտուած, փայլուն որպէս մի Ջոհալ։

Փորձը խելօք մարդուն շատ բան ցոյց կուտայ
Փորձով մարդիկ դառնում են փիլիսոփայ,
Հանքաբանը, բնագէտը քեզ վկայ,
Փորձով նորանք կսկսին յառաջ երթալ։

Փորձը որ կայ մարդկանց եփող մի հուր է,
Լաւ դուրս կուգայ ով որ ազնիւ մաքուր է,
Անխելք մարդը որքան փորձուի՝ զուր է,
Վատութիւնից նա չի՛ կարող լաւ դառնալ։

Անփորձ մարդու խօսած խօսքն է թերի, հում,
Թէեւ ունի բաւականին նա ուսում,
Ձի ստանայ փորձուածի համարում,
Ժողովրդի մէջը չունի երթ ու գալ։

Փորձը խելքի բոյն է, մամուլն է, Ջիւան,
Ծանր թեթեւ նա ցոյց կուտայ ամեն բան,
Փորձով մարդու լաւն ու վատը կ'իմանան,
Անյիշաչար լինի, թէկուզ ոխակալ։

258

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ.

Փորդ քաղցած, հագուստդ հին, ազատախօս հեղինակ,
Քեզ կ'յիշեն, մի՛ վախենար, երբ մեռնիս այն ժամանակ,
Դու քեզ մաշէ որքան կուզես միայն այս առ մաքի տակ,
Աշխարհի մէջ մէկ գին ունի թէ հաստ մանես, թէ բարակ։

Կեղծաւորը պատիւ ունի ամենայն տեղ մշտական,
Որովհետեւ խօսելու մէջ ունի երկու հատ բերան,
Այլ տեղ մէկին կ'բամբասէ, մօտը կուտայ գովասան,
Այնպէս մարդուն կը անուանեն ուշիմ, խելօք, ընդունակ։

Ճշմարտախօս լինելովդ միշտ անարգանք կ'ստանաս,
Գերդաստանդ խեղճ կ'մնայ քակիդ տալով վնաս,
Քանզի աշխարհ գիւրն սիրէ, այլոց կուտայ պատուհաս,
Տատերն ինչպէս որ կ'փարուին դուն էլ եղիր նոյն գունակ։

259

Բ Ա Ղ Դ.

Քեզանից ո՞ւր գնամ, ում գանգատ անեմ,
Տուել ես մահացու ինձի ցաւ, բաղդս,
Քեզ ինչ դիմով խօսիմ, ինչ պատասխանեմ,
Իմ հոգիս արել ես քեզ գրաւ, բաղդս։

Իմ սրտիս համաձայն դու չես բարեկամ,
Քո մտքէդ անցածը կանես ամեն ժամ,
Անձս բամբասելով օրը շատ անգամ
Կ'մատնես թշնամոյն, անիրաւ բաղդս։

Քո վէրքերդ սրտիս մէջը ցանելով,
Կամաց կամաց ճանապահդ տանելով,
Անմահական աղբիւրներից հանելով
Կթողնես յաւիտեան ինձ ծարաւ, բաղդս։

Թէ ասեմ Ջիւանս քեզնից ազատ եմ,
Մուրհակս ձեռիդ, է ի՞նչ բան հաստատեմ,
Քեզի ի՞նչ քարոզեմ կամ ի՞նչ խրատեմ,
Ոչ երիտասարդ ես ոչ պառաւ, բաղդս։

260

ՔԱՂԱՔԱՑԻ ԵՒ ԳԻՒՂԱՑԻ.

Քաղաքացին ու գիւղացին իրար հետ
Վիճում էին, պատահելով ես տեսայ,
Մէկը միւսից սրախօս վարպետ,
Անում էին մի այսպիսի առարկայ։

Գիւղացին ասում էր—ով քաղաքացի,
Առանց մեզի կարօտ կ'մնաք հացի,
Ձեզ վերայ վարձ ունի ամեն գիւղացի,
Ձեր ամեն նեղ օրուան կ'լինինք ներկայ։

Քաղաքացին ասաւ—ձեզ պէտք չէ յարգել,
Որովհետև չունիք կարգով մուտ ու ել,
Առանց փողի չէք տար մէկ չնչին աւել,
Ինչո՞վ կ'պարծենաս, սրտիկ խաբեբայ։

Գիւղացին ասում էր—ձեզ մօտ ջրուած է,
Գիրքն այնպէս չէք կարդար ինչպէս գրուած է,
Խաբեբայութիւնը ձեզի տուած է,
Հազար անգամ կասէք դուր «Աստուած վկայ»։

Քաղաքացին ասաւ—չունի չափ քանակ,
Եթէ անել ուզեմ ձեզ այպ ու ծանակ,
Կարգ, կանոն, մարդկութիւն մեզնից կստանաք,
Միշտ մեր երախտիքը շատ է ձեր վերայ։

Գիւղացին ասում էր—այ՛ քանիմ-բան
Սովորել ենք ձեզնից, ունինք մենք նշան,
Հարբեցութեան, հայհոյութեան, գողութեան
Քաղաքից գիւղերն էլ եղան ենթակայ։

Քաղաքացին ասաւ—քաղաքն է արժան
Թագուհի կոչուելու ամեն մի վայրկեան,
Դուք չ'գիտէք ուսում և ուսումնարան,
Մենք կ'պատրաստենք ձեզ համար ապագայ։

Գիւղացին ասում էր—լեզուդ լինիր գոց,
Սուտ խօսելու համար չ'գայիր փողոց,
Այնպէս գիւղ կայ ոչ թէ ուսուցիչ դպրոց,
Անգամ չունի մի դրավարժ քահանայ։

Քաղաքացին ասաւ--խաւար էք, խաւար,
Ձեր սկսած բոլոր գործն է անկատար,
Ամբողջ տարին աշխատում էք անդադար,
Հանգստութիւնն ի՞նչ է, երբէք չէք զգայ։

Գիւղացին ասում էր—ունինք մենք աւանդ,
Չըաշխատող մարդը կլինի հիւանդ,
Աշխատելով մարդս կստանայ եռանդ,
Դանդաղութեան մէջը մեռելութիւն կայ։

Քաղաքացին ասաւ—ես չեմ վարւում խիստ,
Պատուաւոր մարդոց հետ ունիմ կաց ու նիստ,
Ոտ ու ձեռս մաքուր, ապրուստս հանգիստ,
Նստած կրպակումս բաժինս կ'գայ։

Գիւղացին ասում էր—մեծ է անունս,
Շատ հոգեր է չափել ինձ իմ կանգունս,
Քառսուն մարդուց կ'բաղկանայ իմ տունս,
Համաձայն կ'նդունին ինձ իբրև արքայ։

Քաղաքացին ասաւ—ով յիմար, գդում,
Ոչ խաղաղ կեանք ունիք, ո՛չ մի կեր ու խում,
Ձեր արդեանց ընտիրը մենք ենք վայելում,
Ստեղծուած էք մեզի համար դուք ծառայ։

Գիւղացին ասում էր—սպարոն բանիմաց,
Մեր ձեռքերն են տալիս ձեզի մի ճոթ հաց.
Եթէ մենք չ'լինինք կ'մնաք քաղցած,
Ի՞նչ ես մեծ մեծ խօսում, եզուխտ, սատանայ։

Քաղաքացին ասաւ—թրջած ձեռ ու ոտ,
Ամառ շալակներդ կ'մնայ աղտոտ,
Տարին մի անգամ չէք առներ մսի հոտ,
Լոկ հացն ու ապուրը ի՞նչ օգուտ կուտայ։

Գիւղացին ասում էր—մեզի լաւ ծանիր,
Գիւղացու կեանքին է ցանկանում երկիր,
Ուտում ենք սեր, մածուն, իւղ, անքաշ պանիր,
Միսը մարդուն շատ վնաս է, մեր տղայ։

Քաղաքացին ասաւ—մեղքերդ է անթիւ,
Թէ թուելու լինիմ չի լինի հաշիւ,
Կոպիտ էք չէք գիտեր մարդկութիւն պատիւ,
Վատ գործերդ մի յիշել տար ակամայ։

Գիւղացին ասում էր - դուք էք անմեղը,
Հալել ու մաշել էք մեր սրտի եղը,
Եթէ քաղաքացին գալիս է գեղը,
Նորան ընդունում ենք, տալով օթախաննալ:

Քաղաքացին ասաւ — արդար և իրաւ,
Հիւրասիրութեան մէջ գիւղն ունի համբաւ,
Իմ ասած խօսքերս դու մի աներ ցաւ,
Մենք եղբայր ենք, ներէ, ես քեզի մեղայ:

Գիւղացին ասում — էր ոչ, ոչ մեծ եղբայր,
Ես եմ ասում մեղայ քեզի իբրև հայր,
Գիւղերը ծնունդ, են քաղաքն է իսկ մայր,
Ներէր շինականիս, ով մեծդ հսկայ:

Ջիւանի, վիճեցին առաջին նուագ,
'Ի վերջոյ յայտնեցին հաշտութեան փափագ,
Քաղաքն առանց գիւղ, գիւղն առանց քաղաք
Չէ կարելի ապրել, լսեցինք հիմայ:

261

ՈՒՂԵՐՁ ԱՌ ԶՕՐԱՊԵՏ ԼԱԶԱՐԵԱՆՆ.

Քաջ զօրապետ մեծահամբաւ Լազարեան,
Ալաճայի, Ղարսի հերոս քաջ իշխան,
Ընտիր արիւն, ազնիւ սերունդ հայկազեան,
Փառք հայերուս, որ դու ես մեզ ազգական,

Հայ սրտերից չես հեռանար յաւիտեան,
Դու քո ազգիդ փառք ու պարծանք պատուական:

Հարազատն ես դու մեր Կայսերն Ինքնակալ,
Ով գիւցազուն մեծ Լազարեվ գեներալ,
Անյաղթ ու վէհ, որպէս Վահան, Աննիբալ,
Քիչ զօրքերով շատին անող ձերբակալ,
Երեսդ պարզ, ճակատդ բաց, անխալ,
Տէրը պահէ քեզ յարաժամ անսասան:

Երբ դու էլար Ալաճայի կատարը,
Տաճիկ զօրքին պատեց մութն ու խաւարը,
Խափանեցիր Տաճկաց բոլոր հնարը,
Պաշարելով նոցա զօրաց գումարը,
Տեսաւ, չիլնի, քաջ հեռատես Մուխտարը
Թողեց, փախաւ, զօրք, թնդանօթ, հրացան:

Վեհ Լօրիսից դու առնելով օրինակ,
Գոռոզ Տաճիկ զօրքին արիր խայտառակ,
Հզօր ձեռքով բարձրացուցիր դրօշակ,
Անյաղթ Արծւոյն շատ մարդ դարձաւ հպատակ,
Սուրբ Խաչն առաւ Կիսալուսնին ոտքի տակ,
Փայլեց Փրկչի եկեղեցին սրբազան:

Ով դու քաջ Հայ, քաջ զօրապետ անդրանիկ,
Բարձրահասակ, կերպարանքով գեղեցիկ,
Հզօր կտրիճ, պատերազմող մէկ հատիկ,
Քեզպէսներով է մեր ազգը երջանիկ,
Տխուր Հայոց ուրախութեան աւետիք,
Քաջ հայերով կ'պարծենայ Ռուսաստան:

Կեցցէ այժմեան Շուշի քաղաքն հաստատուն,
Որ ծնել է քեզի նման բանիբուն,
Պատերազմի գործոց հմուտ և գիտուն,
Ուր որ լինիս քու թշնամիդ է նկուն,
Անվերջ մնայ շառաւիղդ միշտ կայուն,
Քաջեր ծնի գերդաստանդ քեզ նման։

Մեծ գործերուդ բոլոր աշխարհն է վկայ,
Քաջ անունդ հասաւ մինչև Եւրոպայ,
Թէ լինէի ինքս Գամառ-Քաթիպայ,
Շատ լաւ խօսքեր կ՛գրէի քեզ վերայ,
Խեղճ Ջիւանս հազիւ քանիմ խօսք գտայ,
Տէր իմ, խնդրեմ լեր այսքանով բաւական։

262

Դ Ի Ի Բ Է Ի Դ.

Օր ըստ օրէ զբաղմունքս
Շատանում է, իմ սիրական,
Տրտմելով՝ երիկամունքս
Վատանում է, իմ սիրական։

Այս աշխարհը չ՛կայ մէկ բան,
Որ չ՛լինի կենաց տանջան,
Կեանքս խախուտ ծառի նման
Տատանում է, իմ սիրական։

Ջիւանն եմ աշակերտ ջանքիս,
Ձափը չ՛կայ տառապանքիս,

Կամաց կամաց ուժը կեանքիս
Հատանում, իմ սիրական։

263

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Ականջ արէք ուրախալի և տխուր
Երկու հզօր պետութեանց պատմութեանը,
Յայտնեցին իրարու պատերազմի լուր
Ալէքսանդր Կայսրը, Համիտ Սուլթանը։

Ռուսաց Կայսրը գրեց Համիտ Սուլթանին,
«Թող տուր բարւոք ազգի՛ Բուլղարիստանը,
Յօժարացիր դու իմ գրած պայմանին,
Լաւ նշան չէ պատերազմի նշանը։»

Սուլթան Համիտն ասաց — «Ալէքսանդր Արքայ,
Չեմ կարող կատարել քո հրամանը,
Քեզ չեն կարգել հոգաբարձու իմ վերայ,
Դու մի կարգադրիլ իմ գործ ու բանը։»

Նորից Ռուսաց կայսրը խօսեցաւ մի ճառ,
Պետութեանն Օսմանեան գրեց բառ առ բառ.
«Համոզուիր, վատութեան մի լինիր պատճառ,
Ափսոս արի դու խեղճ մարդոց արեանը։»

Սուլթան Համիտն ասաց Ռուսաց կայսերը.
Թող փայլի իմ արենաբրու սուսերը,»

Չեմ կարող կատարել ես քու խօսքերը,
Գիտնամ թէ կ՚գերուի իմ գերդաստանը։

Ռուսաց կայսրն ասաց—մեղքը քեզ վերայ,
Որ պիտի շատ մարդիկ մեռնին անխնայ,
Մեր Տէր Արարիչը կանչում եմ վկայ,
Որ Նա է միշտ արդարութեան պաշտպանը։

Այնուհետև Ռուսաց Կայսրը համարձակ,
Առիւծի պէս բարձրացրուց աղաղակ,
Հրամայեց զօրքին մտնել զէնքի տակ,
Պէտք է որ նուաճեմ ես Տաճկաստանը։

Ողջ Ռուսաստանից միախումբ գումար
Հաւաքուեցան կարիճ մարդիկ անհամար,
Դանուբեան կողմի զօրքերուն հրամանատար
Եղաւ Նիկողայոս բարձր իշխանը։

Նորին Մեծութիւնը—Աղէքսանդրը քաջ,
Լօրիս-Մելիքեանին նա քաշեց յառաջ,
«Գնա Կովկաս, էլ մի նայիր ձախ ու աջ,
Հասիր, զոռով Տաճկին տուր պատասխանը»։

Հազար ութը հարիւր եօթանասուն եօթ
Թուին էր, որոտաց բազում թնդանօթ,
Ռուսք և Օսմանցիք աշխարհածանօթ,
Խանգարեցին խաղաղութեան պայմանը։

Լօրիս-Մելիքեանը եկաւ Շիրակուան,
Քաջ Տէր-Ղուկասեանը նորան օգնական,

Ախալքալաք ու Ախալցխա, Երևան,
Յանձնուած էր Լօրիսի իշխանութեանը։

Մեծ իշխան Միքայէլ արքայորդին,
Բոլոր զօրքի գլխաւորն էր առաջին,
Լօրիս-Մելիքեանին ասելով կրկին,
«Առ բանակդ անցիր Տաճկաց սահմանը»։

Աճապարեց Սուլթան Համիտ նոյնգունակ,
Ղրկեց ամեն նահանգ նա հրովարտակ,
«Իմացէք, պատրաստուէք, առէք սուր նիզակ,
Թող ձեզանից սարսի մեծ Ռուսաստանը»։

Ողջ նախարարներուն կանչելով ատեան,
Տուեց ամեն մէկին հաստատ հրաման,—
«Եթէ լինիք դուք հայրենեաց դաւաճան,
Թող ձեզ պատժէ Մուհամմէտի Ղուրանը»։

Սուլթան Համիտն ասաց-«քաջ Օսման փաշա,
Հայրենեացդ հաւատարիմ պաշտօնեայ,
Առ քո բաժին զօրքդ գնա Պլևնա,
Թող Մուխտարն էլ երթայ դէպ Կրդստանը։

Մուխտար փաշան իւր զօրքերով միասին,
Շտապելով հասաւ քաղաքը Կարին,
Պատուէր տալով Դարսայ միջի զօրքերին,
Ամրացուց Բայազիտ և Արդահանը։

Լօրիս-Մելիքեանը կանչելով Աստուած,
Անցաւ Գարէգետը անվախ, անկասկած,

Տաճկաց սահմանապահ փաշտը մոլորուած,
Քնաթաթախ յանկարծ ընկաւ կապանը։

Լորիս-Մելիքեանը մտաւ Շիրակը,
Բարձրացուց սուրբ Խաչ և դրօշակը.
Ճիշտ դէպի Արդահան քաշեց բանակը
Դեվելի հետ առիւծասիրտ Գէյմանը։

Երևանեան զօրախումբն էլ Նրբամիտ,
Անցաւ Տաճկաց հողը երեսը ժպիտ,
Առանց պատերազմի, բերդով Բայազիտ
Առաւ քաջ հայազգի Տէր-Ղուկասեանը։

Կարինից դուրս եկաւ արի Մուխտարը,
Քառասուն հազար էր զօրաց գումարը.
Սկսեց բանցնել խելքը հնարը,
Իմացել փաշան էր իւր օգնականը։

Լորիս-Մելիքեանը գրեց մի նամակ
Գէյմանին, Դեվելին տալով օրինակ,
«Քաշեցէք բանակը ազատ համարձակ,
Կանգնէք Արդահանի դէմ յանդիմանը։»

Քաջ սպարապետը հասաւ օգնութեան,
Իւր կորիճ զօրքերով եկաւ արդահան,
Հաղթող Գաբրիէլ հրեշտակի նման
Պիտի կորէր Տաճկաց զօրքի պատանը։

Մի մութ անձրևային գիշեր ժամանակ,
Կարծես երկինքից թափւում էր կրակ,

Երկու կողմից արձակւում էր շատ գնդակ,
Կ'գոռար թնդանօթ և հրացանը։

Լորիս-Մելիքեանի կորաւ համբերը,
Հնարներ մտածեց ամբողջ գիշերը,
Դեռ լոյսը չ'բացուած, Ռուսաց զօրքերը
Տիրեցին քաղաքի բերդ-պահարանը։

Այդ տեղ Ռուսաց զօրքը ստացաւ համբաւ,
Մինչ Սուլթան Համիտին պատճառեց մեծ ցաւ,
Մանր խոշոր հարիւր թնդանօթ առաւ
Արդահանի բերդի քաջ պահապանը։

Լորիս-Մելիքեանը գրեց այս թերթը,—
Պէտք է շուտ պաշարել անառիկ բերդը,
Արդահանը առանք՝ Կարսինն է հերթը,
Թող ցնծայ Մեծ Կայսրը Միահեծանը։

Դարձան բոլոր զօրքով Կարսի վիճակը,
Պաշարեցին բերդը տուին կրակը.
Ոչինչ մի բան չարաւ այնքան գնտակը,
Կարծես թէ պողպատին դիպնէր խթանը։

Մի օր Տաճկաց մի գունդ, իբր քաջարշաւ,
Առանց մտածելու բերդից դուրս ելաւ,
Ամբողջիցը քառորդն հազիւ յետ դարձաւ,
Գերեզմաննոց դարձաւ Հարամ-Վարդանը։

Լորիս-Մելիքեանը լուր առաւ հաստատ,
Թէ Մուխտարը կուգայ զօրութիւնը շատ,

Ջոկեց իւր զօրքերից քաջ ու անարատ,
Ուղղեց դէպի Զիվին իւր արշաւանը:

Ուրախ էր Մուխտարը, լաւ էր, չէր տխուր,
Կարծես յաղթութիւնը իւրն էր այն աւուր,
Պատրաստեց մարտկոցներ, պատնէշներ ամուր,
Զիվին տուած տեղն էր պատսպարանը:

Սուիններու փայլը շատ էր արևից,
Արճիճն առատ կարկտից ու անձրևից,
Ռուսը ներքևից, Թուրքը վերևից,
Ամենը ցոյց տուեց իւր դաւադանը:

Մեծին չլսելով Դէյմանն անհամբեր,
Բազում կտրիճներու եղաւ գլխակեր.
Դէմ տուեց խեղճ զօրքին սարը դարիվեր,
Պատրաստեց շատ մարդկանց նա գերեզմանը:

Այդ օր Թուրքերին չեղաւ մեծ վնաս,
Բայց Դէյմանի գունդը կրեց պատուհաս,
Լօրիս-Մելիքեանը չունէր այդտեղ մաս,
Պակասութիւն չեղաւ իրայ անու անը:

Երթալով շատացաւ զօրքը Օսմանեան,
Ամեն տեղից մեր զօրքերը յետ դարձան,
Տարածուեցաւ Ռուսաց զօրքերի վրան՝
Ղարայեալից բռնած մինչ Փալտրուանը:

Արիւնը կ՚վազէր խեղճ մեռածներու,
Հոսայէ հասակով անդ պառկածներու,

Վիրաւորուածներու և ընկածներու,
Սար և ձոր էր բռնել լաց ու կականը:

Տէր-Ղուկասեանից էլ տեղեկութիւն տանք,
Յաղթեց, չ՚յաղթուաւ՝ առաւ գովասանք.
Երեք հազար տունը բերեց անվտանգ,
Ալաշկերտից հասցուց նա Երևանը:

Մուխտար փաշան բերել տալով գերաններ,
Պատրաստեց պատնէշներ, փորեց դարաններ,
Կանաչ ու սպիտակ շարեց վրաններ,
Ալաճայ սարն արաւ նոր իջևանը:

Գնաց Տէր-Ղուկասեան քրտերին փանեց,
Հայերու վրէժը նորանցից հանեց,
Շէյխ-Ջալալէդինին տուեց սպանեց,
Շան պէս սատակեցաւ այն չար դազանը:

Ալէքսանդրապոլ էր մեծն փոխարքայ,
Այդ տեղից հսկում էր բանակի վերայ,
Ոգորմած քոյրերին յանձնել էր շատ նա
Հիւանդներու հոգսը, դեղ ու դարմանը:

Միշտ Ռուսաց զօրքը յառաջ կ՚գնար,
Յարձակուելով Տաճկաց վերայ կընթանար,
Թէև յաղթութիւնը անորոշ մնար,
Բայց իրարուց կ՚խլէին մայդանը:

Եկաւ Շոլկովնիկեան՝ թուրքաց դահիճը,
Ալխազեանը՝ որ ծամօղ էր արճիճը,

Հասաւ Դաղստանու հերոս կորիճը
Լազարեան՝ որ բռնեց այն Շամիլ-Խանը։

Լօրիս-Մելիքեանը սաստիկ ցնծում,
Բայց Մուխտարի սիրտը սաստիկ յոյժ տրտում,
Վերջինիշեալները զօրքերով բազում
Եկան, փախուեց կուռի բուն կեղտորոնքը։

Դովելի զօրքերի դղասուտթիւնը,
Չ'տեսնուած նորանց նուասաութիւնը,
Անթերի էր Ռուսաց պատրաստութիւնը,
Ամեն բանին ունէր ջոկ կարաւանը։

Լօրիս-Մելիքեանը գրեց Մուխտարին,
«Փասերից դուրս արի, տես չարն ու բարին,
Ի՞նչ ես ելեր Ալաճայի կատարին,
Դարձել ես մարդատեաց բուի նմանը»։

Մուխտար փաշան այս խօսքերից նեղացաւ,
Ջոկեց զօրքից մի մաս, սարից վայր իջաւ,
Դըզըլթափայ ասուած տեղը էլ առաւ,
Բայց չ'գիտացաւ Ռուսաց խոհեմ շրջանը։

Համարեայ մարեցաւ Մուխտարի մուխը,
Երբ լսեց որոտում, տեսաւ մեծ ծուխը,
Ելած էին Ալաճայի գլուխը
Սեպուհ Շուլկովնիկեան, քաջ Լազարեանը։

Ռուսաց զօրքեր, զօրապետներ բարեպաշտ,
Փախուցին Մուխտարը—թշնամին անհաշտ,

Զօրքով զօրապետով տասն և ութը փաշա
Տաճկաց զօրքը ընկաւ Ռուսաց ուռկանը։

Երբ լսեց—«առնուաւ լեառն Ալաճա,»
Երեսը շուռ տուեց Իսմայիլ փաշա,
Ցնանից Տէր-Ղուկասեան, զօրքերով հսկայ
Շատ քրդեր ուղարկեց սպանդարանը։

Միայան իրար հետ երկու հրամանատար,
Գէյմանի հետ Տէր-Ղուկասեան զօրավար,
Կալ ունէր կոլսելու գառոգն Մուխտար,
Դէվէբօյուն կանգնեց փախստականը։

Նորից սկսուեցաւ մեծ ճակատամարտ,
Կարծես գերանդուորը ճիշտ քաղում էր արտ,
Այդ տեղ էլ յաղթուաւ Տաճիկը հպարտ,
Ռուսաց ձեռքը մնաց ամբողջ Բասեանը։

Բազում գունդն առած Գէյմանը անձամբ,
Ագիզիէ ամրոցն առաւ յարձակմամբ,
Յաղթութիւնով դարձաւ իւր տեղը ողջամբ,
Հնչեց ազատութեան նուագարանը։

Լօրիս-Մելիքեանը, Լազարանն հմուտ
Յատուկ հանգամանքից քաղեցին օգուտ,
Պաշարեցին Կարսը։ Թափեցին կարկուտ,
Թուրքը նեղն ընկած չէր այս ատիճանը։

Խրոխտ Լազարեանը անյաղթ, անվեհեր,
Տասներկու ժամ աշխատեցաւ անհամբեր,

Բոլոր ամրոցները առաւ այդ գիշեր.
Տիրեց փոքր Ասիայի մասանը։

Բազում զօրքեր ու փաշաներ Օսմանեան
Գերի ուղարկուեցին դէպ Ռուսաստան,
Երեք հարիւր թնդանօթ, շատ հրացան
Մտաւ Մեծ Կայսերի շտեմարանը։

Նիկոլա Դուքսն էլ թուրքերին վանեց,
Վերջ 'ի վերջոյ Պլևնան էլ կործանեց,
Տաճկաց Պիպօդ հրացանին խափանեց
Ռուսաց գործարանից եկած Բերդանը։

Վեհ Լօրիս-Մելիքեան քաջ գեներալին
Յանձնուեցաւ Կարսայ բերդի բանալին,
Սուլթան Համիտ զիջաւ Մեծ Ինքնակալին,
Պատերազմը գտաւ իրայ վախճանը։

Սլաւեան ցեղերուն լցուաւ փափաքը,
Մանաւանդ Բուլղարաց վառուեց ճրագը,
Ութը ամսոյ չափ էլ Կարին քաղաքը,
Ընդունեց Ռուսաց նոր դատաստանը։

Զիւմն, կեցցէ Ռուսաց ազգը յարաժամ,
Նա է ընկած խեղճ ազգերուն բարեկամ,
Արարիչը պահէ միշտ ճոխ ու փարթամ
Ռուսաց Թագաւորը ու գանձարանը։

264

ՈՂԲ

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ.

Ողբա, Մայր իմ Հայոց Սիօն,
Կորուսիր անարատ Ներսէս,
Աստուածասէր-սրբակրօն,
Էլ ուր է հարազատ Ներսէս։

Ներսէսներ մեզանում շատ կան,
Բայց չեն նոքա Վարժապետեան,
Եզակի և անզուգական,
Չենք գտնիլ բազմաշխատ Ներսէս։

Եպիսկոպոսների միջին,
Մի հատիկ մարդն էր առաջին,
Ուշ կ'ծնի, Հայեր, կրկին
Ներսէսին համեմատ Ներսէս։

Ողբա, ազգդ Հայոց տխուր,
Քո ողբալդ չի գնայ զուր,
Երկու գահեր եղած թափուր
Կուլան-կուզեն հաստատ Ներսէս։

Աթոռը Սուրբ Էջմիածնայ,
Անհայրապետ նստեր կուլայ,
Պոլսումն էլ Պատրիարք չկայ,
Թողել է անապատ Ներսէս։

Լացէ՛ք ինձ հետ, ձորեր, սարեր,
Լացէ՛ք ծովեր, գետեր, քարեր,
Պիտի անցնեն որքա՜ն դարեր,
Որ մեզ ծնի մի հատ Ներսէս։

Հայոց արևն է խաւարել,
Հայ ազգի ճրագն է մարել,
Մեր սիրելին մահն է տարել,
Չ'կայ մեծ գովաշատ Ներսէս։

Կորաւ Հովիւն ազգային,
Կամքը այսպէս էր Երկնային,
Ծանօթ էր ողջ Եւրոպային
Վեհազն-պայազատ Ներսէս։

Մեր Հովուապետների միջում
Ներսէսների գործն է փայլում,
Վեց հատ Ներսէսների թւում
Չէ պատահել մի վատ Ներսէս։

Նա էր խելքի շտեմարան,
Շնորհքի, մտքի գանձարան,
Տարաւ հետը սև գերեզման,
Թողեց ազգին աղքատ՝ Ներսէս։

Ջիւա՜ն, երկնից սուրբ Անեղը
Հասցնող է վիրաց դեղը,
Ներսէս Պատրիարքի տեղը
Խնդրենք մեզ տայ մի զատ Ներսէս։

265

ՀԱՅ ԱՂՋԿԱՅ ԲՈՂՈՔ.

Ով որ ինձ չի սիրել, խնդրում եմ, ասէք,
Ես նորան ո՞նց սիրեմ, կամ լինիմ ընկեր.
Չէ՞ որ ստիպելով մեզ կ'մնասէք,
Շատ կ'թշուառանայ յետոյ կեանքը մեր։

Փեսան ինձի՞ է պէտք, թէ քեզի, հայրիկ,
Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ,
Երբ սիրով կապուած չեն աղայ ու աղջիկ,
Նշանը անհիմն է, պսակն անխաւեր։

Հա՛յրիկ, քո բաղձանքդ բարի բաղձանք չէ,
Այդ քո տուած կեանքդ ինձ համար կեանք չէ,
Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,
Փող շահելու առարկայ չէ օգտաբեր։

Տուր ինձ այն փեսային, որին կ'սիրեմ,
Գնամ ուրախ սրտով կեանքս նուիրեմ,
Այնուհետև հաստատ ես պարտադիր եմ
Քեզ համար աղօթել ցերեկ և գիշեր։

Դու ինձ մի՛ տար մեր թշնամու զաւակին,
Չեմ կարող դիմանալ ես այդ կրակին,
Ո՞նց թողնեմ իմ սրտի ընտրած Հայկակին,
Ո՞վ ունի նորա պէս գեղեցիկ պատկեր։

Ես չեմ զատուիր իմ Հայկակից յուխտեանս;
Ինձ Համար մեռած է քո ընտրած փեսան։
Կսպանեմ ես ինձի չեմ գնար նորան,
Ծնող ես, մի դառնար որդւոյդ գլխակեր։

Մի աղջկայ բերանից լսել եմ Հաստատ,
Այս խօսքերը Հոր դէմ խօսում էր ազատ…
Թէ տեղը չ'գտաւ մի աղջիկ արմատ,
Շուտով կ'թառամի որպէս վարդի թեր։

266

ԽՐԱՏ ԱԳՌԱՒԻՆ.

Տգեղ ագռաւ, նոր փետուրներ գտնելով,
Իզուր մի աշխատիր, սոխակ չես դառնալ,
Սիրուն թռչնոց երամի մէջ մտնելով
Չես փոփոխուիլ, նոյնն ես, տատրակ չես դառնալ։

Հանդերձը խելք չի տար, դարձեալ դու խև ես,
Ձայնդ տաղտկալի է, կերպով տձև ես,
Նորա ոտքերն է սև, դու ամբողջ սև ես,
Սիրամարգին անգամ մշակ չես դառնալ։

Թէ ուզում ես Հոգիդ լուսեղէն Հալաւ,
Ձայնդ քեզ մատնելով, ասում են ագռաւ,
Կող 'ի կող քայլելով չես լինիր կաքաւ,
Քեզ կ'ծաղրեն, լաւ օրինակ չես դառնալ։

Դու ձմռան խօսնակ ես, Հագիր տաք մուշտակ;
Խռպոտ ձայնով բարձրացրու աղաղակ,
Հոգիդ խարդախ, արդարութեան Հակառակ,
Դևի սեւ ես, դու Հրեշտակ չես դառնալ։

Ձիւանոս Հետ կասեն թռչուններն Համայն,
Սոխակի շնորհիւ ապրում ես միայն,
Ոչ նուագել ունիս և ոչ քաղցր ձայն,
Մեռնիս, տրաքիս, որ երգակ չես դառնալ։

267

ՕՏԱՐԱԿԱՆԻ ԶԳԱՑՄՈՒՆՔԸ.

Զաւակի և գերդաստանի տէր մարդը
Օտար երկրում բարեկենդաղ չի լինի,
Երբ որ կ'Հեռանայ որդեսէր մարդը,
Կ'տխրի, երեսում ծիծաղ չի լինի։

Պանդուխտ, աղքատ մարդուն կտրած է թևը,
Կարծես թառամել է կենաց տերևը,
Ամպի տակից դուրս չի գալիս արևը,
Խեղճի լոյսը անշամանդաղ չի լինի։

Աւելորդ է գերդաստանի տէր մարդուն
Հեռու տեղ գնալը, թողած տեղ ու տուն,
Ցերեկը անհանգիստ, գիշերն առանց քուն,
Ամենևին մի օր խաղաղ չի լինի։

Ջիւան, պանդուխտ մարդն է ալէկոծեալ ծով,
Բաղդ է, թէ որ մի օր մնայ անխռով,
Չնչին առարկայից կառնուի շուտով,
Երբէք նորա սրտի հետ խաղ չի լինի։

268

ՍԷՄԱՅԻ.

Ճակատդ բաց, գեղեցիկ, երկնանման նոր լուսին ցոյց տուր,
Լուսինիդ սփռէ լոյսը, խեղճ խաւարներուն բաժին ցոյց տուր,
Թխագոյն խոպոպիկներդ հեռացուր, ամփոփէ, չքնաղ,
Կ՚աղաչեմ, բաց արա արև երեսդ, գլխովին ցոյց տուր։

Հազար երկիրներից մարդիկ գալիս են ուխտ քեզի անկեղծ,
Դրախտդ բաց, նազելի, մշտադալար եղևին ցոյց տուր,
Ծոցիդ մէջ երկու նուռ կայ արքայական այգուց քաղուած,
Հասարակ ընծաներ չեն, ով դիցուհի թանկագին, ցոյց տուր։

Կոկորդդ ոսկեզօծ բիւրեղ, կզակդ չինական սկահ,
Մախսի ձեան նման կուրծքդ մօտեցուր ինձ. դիւրին ցոյց տուր,
Ազատ, անբիծ առանց որդի*) ծառ են եդեմական, քոյր իմ,
Ճկուն շիւղ, սպիտակ մասներիցդ խունկ ու ռետին ցոյց տուր։

Հերիք գաղտնի մթութեան մէջը ապրիս, մեծ լուսոյ որդի,
Գերագանց լինիլդ, խելքդ դու մարդկանց առաջին ցոյց տուր,
Ծովահէնները գամին խաւարի մէջ խորտակել նաւն իմ,
Հասիր, օգնէ Նէմօ նաւապետի պէս, լուսածին, ցոյց տուր։

*) Ծանօթ. որդունք.

Ջիւանին որ դրախտի հովտի մէջ քեզ պիտի գտնէ,
Սէրդ վայելելու համար մի անդ նորան դու, Կին, ցոյց տուր։

269

ԽԵԼՔԻ ԱՐԻ.

Բաւ է այլոց եղար գործիք,
Անմիտ գլուխ, խելքի արի,
Անշահ գործին լինիս հերիք
Դու ձեռնամուխ, խելքի արի։

Ում որ օգնեցիր ատակով,
Փոխարինեց նա ապտակով,
Այրուար այլոց կրակով,
Դարձար ածուխ, խելքի արի։

Զաւակներդ անհաց թողիր,
Կնոջդ աչքը թաց թողիր,
Այնքան քեզի դու բաց թողիր,
Գտար խաբուխ, խելքի արի։

Երեսիդ քեզ կասեն արդար,
Ետևիցդ անդէտ յիմար,
Սպիտակեց այլոց համար
Մազերդ թուխ, խելքի արի։

Ջիւանի, մարդն է ապերախտ,
Չի կենար խոստումին անխախտ,

Մտածես, կ'ճարես թոքախտ,
Կեր անմանուխ, խելքի արի:

270

ԵՐԳ.

«Ամեն մնաս մէկ խրատ է». ասել են,
Ոչ խրատն է հասնում և ոչ մնասը,
Ամեն մարդու էլ հարուածներ հասել են,
Դարձեալ չեն խրատուել, առնելով դասը:

Իր վիճակից գոհ չէ, ագահը անկուշտ,
Միշտ ուրիշի վերայ կարձակէ փամփուշտ,
«Ջրի ճանապարհում կ'կոտրի անշուշտ,»
Սուտը ասում է «ջրի կարասը»:

Առանց ուսում միտքդ խաւար Ջիւանի,
Նիւթեր չունիս գարին յարմար, Ջիւանի,
Որքան կուզէ ապրիս երկար, Ջիւանի,
Թէրի է, չի լրանալ քո պակասը:

271

«ԽԵԼՔԻ ԱՇԵՑԷՔ»

Նուէր Ալէքսանդրապօլցի պ. Յովհաննէս Խօջայեանցին.

Անմիտ ճընճղուկը բազէի ճանկից
Ուզում է որս խլել, խելքի աշեցէք,

Կարծես ձանձրացել է գլխից ու գանկից,
Պատերազմ է մտել խելքի աշեցէք:

Խելքին զօռ տալով է հիմայ ամեն բան,
Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան,
Նիհար հաւը, պարպրա մեծ սագի նման
Ուզում է ձու ածել, խելքի աշեցէք:

Ազնիւ մարդը անարգւում է գէշի հետ,
Երիվարը լուծ է քաշում էշի հետ,
Երկու տարուայ հորթը ցուլ գոմէշի հետ
Բերել, կամ են լծել, խելքի աշեցէք:

Գայլը վերան ոչխարի մորթի առած,
Գառներուն պահապան հսկող է դառած,
Աքլորը քարոզչի վերարկու հագած
Ամբիոն է ելել, խելքի աշեցէք:

Ուղտը մետաքսագործ, եզը նուագար,
Գայլը հովիւ դառած կարածէ ոչխար,
Ագուէսը հաւնոցի դրանն յուշարար,
Ի՞նչ հսկող են դրել, խելքի աշեցէք:

Փափուկ [illegible] է հասու գռեհիկը,
Ամբոխի գլուխն է խելքից բոպիկը,
Կենացը մէջ ծառ չտեսած ռամիկը
Այգեպան է եղել, խելքի աշեցէք:

Երեխան ձեռն առած փթած հին լարը
Բռնել կամի դարձող ջաղացի քարը,

Գաճած մուկը շրջել կուզէ մեծ սարը,
Կողքը դէմ է տուել, խելքի աշեցէք։

Ուրացողը խիղճ չունի ամենևին,
Զգալով, սպիտակ ասում է սևին,
Կոյրը չ'տեսնելով լոյսը արևին,
Աշխատում է ասել, խելքի աշեցէք։

Աւել հողը մնաս կուտայ իր անձին,
Ուրիշի ցաւերը տանելով մզին,
Գայլը յօշոտել է մարդացեց մէկին,
Խենթը սև է հագել, խելքի աշեցէք։

Գորտը մեծ պարանն է տաքուկ ջրհորին,
Դուրս ելաւ, բաժինն է միշտալի փորին,
Իրար հետ սուտ կռուել են ձին ու ջորին,
Էշը մէջ է ընկել, խելքի աշեցէք։

Ժլատն աշխատելու է շատ ընդունակ,
Իր հացը ուտելու չունի ախորժակ,
Խեղճ անձը զրկելով դիզել ստակ,
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէք։

Յանցաւոր հարուստը ոսկով խնդալով,
Մեղքից ազատուել է մեծ գումար տալով,
Խեղճ մարդը սխալմամբ մի հաւ գողնալով,
Բանտի մէջն է փթել, խելքի աշեցէք։

Մարդ կայ դերդաստանը պահում է ցամաք,
Ներթայ, դուրսը կուտէ մեղր ու սեր, կարագ,

Այլոց համար կանէ ձայնով պատարագ,
Իրան ժամ չի անել, խելքի աշեցէք։

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար,
Բնակիչները հայ մօտ քսան հազար,
Իրանց ծնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցէք։

Ինչ կենդանի ուզէ լինիլ շանսատակ,
Ներթայ ու կ'մտնի ծանր բեռի տակ,
Նապաստակը առիւծի դէմ համարձակ
Կռիւ է սկսել, խելքի աշեցէք։

Ցորենը մի անգամ լինելով ակար,
Այնպէս բոյս չեն գտել, որ անեն նշխար,
Կորեկ հացը իրան կարծելով յարմար
Սեղան է բարձրացել, խելքի աշեցէք։

Ոչ մի գիտուն չի հասել իր փափագին,
Սպառելով լոյսը կենաց ճրագին,
Խենթի մէկը հազար տարուայ քաղաքին
Կուզէ նոր կարգ դնել, խելքի աշեցէք։

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,
Ասպարէզը համբակներուն են թողած,
Ջիւանն էլ կաղ իշով կարաւան մտած
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէք։

272

ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ.

Յիսուն տարի ծառայել է Հայ ազգին
Անյողդ քաջի նման Հայր Ալիշանը,
Նուիրել է Հայոց պատւը գրչին,
Բանաստեղծ, պատմաբան, Հայր Ալիշանը:

Արժէ, որ նա ունի այդքան մեծ համբաւ,
Հայոց լեզուին հաղցրել է նոր հոլաւ,
Դարուս քերթողահայր Մովսէսն է իրաւ
Յարգելի գիտնական Հայր Ալիշանը:

Գրականութեան մէջ մի մեծ հսկայ է,
Ազգ ազգից յարգուած մէկ աբեղայ է,
Ծիսով կաթոլիկ է, բայց հոգով հայ է,
Սիրում է Հայաստան Հայր Ալիշանը:

Եւրոպայի մէջը մեծ պարծանքն է մեր,
Թողել է հայ ազգին զանազան երկեր,
Գրել է «Այրարատ», «Շիրակ», այլ գրքեր
Եւ գրել է «Սիսուան» Հայր Ալիշանը:

Անկեղծ, հայրենասէր, ժրաջան, արի,
Լաւ ծնողաց զաւակ, ծնունդը բարի,
Մաղթենք ես ապրի մի քանի տարի,
Թողնի մի այլ նշան Հայր Ալիշանը:

Նորա մեծ խելքից օգտուիր, Ջիւանի,
Կենսատու գրքերից բազմակողմանի,
Սիւնեաց պատմութիւնն էլ գրէր երանի,
Չ'մտած գերեզման Հայր Ալիշանը:

273

ՀԱՅՐ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ:

Հայ-Կաթօլիկ համայնքից պակասեց մի փայլուն ակ,
Հայասէր և բարեպաշտ, քաջ բանաստեղծ-հեղինակ,
Աղէքսանդր վարդապետ բուն Արարատեան զաւակ,
Այսպիսի ազգ-անունով ստացել էր նա հռչակ,
Դաժան մահը մեզանից խլեց մի այր ընդունակ,
Որ չ'կայ փոխարինող այժմ նորան նմանակ:

Ինչպէս որ ջերմեռանդ էր նա Կաթօլիկութեան շահին,
Այնպէս էլ սուրբ էր նորա գաղափարը ազգային,
Հայոց լեզուին քաջ ծանօթ, բարին ցանկացող հային,
Ազգատեաց եղուխտներին նման չէր բոլորովին,
Ընկճուիլ չէր իմանում նորա ազնիւ վեհ հոգին,
Իւր կրօնակիցներից կային նորան հակառակ:

Ինչ որ անցնում էր ձեռը նա տալիս էր աղքատաց,
Երբեմն պատահում էր, որ չէր ունենար չոր հաց,
Նորան շատ յարգում էին այլ մարդիկը բանիմաց,
Ինքը վարուող, խելացի, հեռատես, շրջահայեաց,
Առատասիրտ, գթացող խեղճի համար ձեռքը բաց,
Նա պճնուիլ չ'գիտէր, հագնում էր շատ հասարակ:

Պատկառելի գիրք ունէր այդ ծերունի աբեղան,
Երբ մահացու կ'լինէր եօթանասուն տարեկան,
Նա պահում էր մի համեստ հոգևոր ուսումնարան,
Բազում քահանացուներ այդ դպրոցից դուրս եկան,
Ախլցխա, Ախալքալաք, Լոռի և Շիրակուան,
Հանգուցեալն էր կաթօլիկ Հայերուն փառ աշտանակ:

Իւր ժողովրդի համար նա ահագին բան թողեց,
Պարսպապատ՝ մեծ գետին, այգի բուրաստան թողեց,
Հայակապ եկեղեցի, փառաւոր նշան թողեց,
Բարեպաշտ սրտերու մէջ կենդանի արձան թողեց,
Իւր անգը թափուր մնաց գործերը խափան թողեց,
Այնպիսի գործունեայ մարդ դեռ ուշ կ'ծնի Շիրակ:

Ջիւանի, օրհասական կեանքը խլող հրեշտակը
Տապալեց մի կաղնի ծառ, դրեց սև հողի տակը,
Անթերի է կատարում բարի մարդկանց կտակը,
Օրհնուած է արդարոց անմոռաց յիշատակը.
Անդադար հարուածելով դաժան մահի գնդակը,
Հայ Կաթօլիկ ամբոցից տապալեց մի աշտարակ:

274

ՊԱՆԴՈՒԽՏ ԵՂԲԱՅՐ.

Պանդուխտ եղբայր, քաշուէր, գնա երկիրդ,
Քանի որ չես եղել անպատիւ այստեղ,
Լաւ համարէ դարի հացդ ու պանիրդ,
Այն էլ ձեռք չես բերել դու լիւ այստեղ:

Պանդուխտները էլ դեր խաղալ չեն կարող,
Տեղացոց հետ մրցել, տակալ չեն կարող,
Ընկել մնացել են, դառնալ չեն կարող,
Լի են քեզի պէսներ շատ անթիւ այստեղ:

Դարձիր տունդ բաղդը վերադ բարկացաւ,
Սիրտդ մաշուեց, հոգիդ արդէն տաղտկացաւ,
Օտար երկրում տուտուրդ վերջացաւ,
Այլ ևս մի փնտռիլ դու հաշիւ այստեղ:

Երկրիդ մէջ դուցէ անյաղթ Սամփսոն ես,
Խելքով Արիստոտել կամ Պղատոն ես,
Ետին մարդն ես, եթէ բաղդ կ'որոնես,
Թէկուզ եղիր իշխան կամ ազնիւ այստեղ:

Տեսնում է Ջիւանը բախտ չունիս բանուկ,
Օտարութեան մէջը տաղդ չէ կորուկ,
Փոքրանալով շուտ կ'լինիս ճնճղուկ,
Իսկապէս էլ լինիս դու արծիւ այստեղ:

275

ԷՐԶՐՈՒՄԻ ԿԻՍԿԻՄ ԳԱՒԱՌԻ ԽՈՏՐՋՈՒՐ ԱՒԱՆՈՒՄ ՊԱՏԱՀԱԾ ՄԻ ԱՆՑՔ.

Նուէր պ. Յովհաննէս Կապլանեանին:

Հազար ութը հարիւր ութսուն վեց թուին,
Յունիսի երեքին գիշեր ժամանակ,
Ասին պաշարել են Մախուրկուտ գիւղին,
Խոտրջրում բարձրացաւ մի աղաղակ:

Խղճուկ ժողովուրդը փոյթ տէր է կանչում,
Բայց Աստուած ջոկ տէր ո՛ւմ է ճանաչում,
Երկու հազար ռուբլու փող են պահանջում
Այդտեղ գալով տասներկու թուրք աւազակ:

Խառջրում տղամարդիկ շատ քիչ կան,
Մեծ մասը մաշւում է մէջն օտարութեան,
Անտէր թողած կին և զաւակ օթևան
Դառն պանդխտութեան եղել են ճարակ:

Այնպէս որ տան գլուխ մէկ տղամարդ կայ,
Այդտեղ եղողներն են կին և երեխայ,
Կան մի քանի հատ էլ գիւղի քահանայ,
Չեն կարող գիւղից դուրս մանգալ համարձակ:

Բայց կար այդտեղ մի հազուագիւտ տղամարդ,
Քերոբէ անունով քաջ երիտասարդ,
Քսան հինգ տարեկան առոյգ և զուարթ,
Ժողովրդի մէջը ունէր մեծ հռչակ:

Ցիշեալ քաջը երբ իմացաւ ամէն բան,
Պատրաստուեց,—ձեռքն առաւ զէնք ու հրացան,
Ասաւ «գնանք մեր եղբարցը օգնութեան,
Զանենք աւազակաց խմբին մի սատակ:»

Լուսուն երկու ժամ կար լուր հասաւ տխուր,
Թէ աւազակները կուգան Խառջուր,
Տէր Սէրոբը եղբօր մէջքին կապեց սուր,
Ասաւ- «գնա կռուիր, քաջ հայի զաւակ»:

«Թող քեզ օգնէ Քրիստոսի բերանը,
«Սուրբ Խաչը միշտ լինի քու պահապանը,

«Բազուկներումդ ոյժ տայ անմահ Վարդանը
«Ցրուես ու կարծանես խումբը եղուզակ:»

Բայց Քերոբէն ուրախացաւ, սիրտ առաւ,
Տէրտէրի խօսքերը նորան կեանք տուաւ,
Համբուրեց տէր եղբօր ձեռքը, հեռացաւ,
Տէրտէրը աչքերից թափում էր կայլակ:

Կանչեց իւր կնոջը ասաւ, «Սիրելի՛,
«Եթէ մեռնիմ, մի՛ արտասուի, մի տխրի...»
Կարծես սառցել էր երկնային հոգի,
Երեսը փայլում էր, որպէս արեգակ:

Խեղճ մանկամարդ կինը ասաւ, «Սիրական
«Մի գնալ, մի թողնիլ ինձ առանց պաշտպան,
«Աստուած ոչ անէ, ենթարկուիս մահուան,
«Ո՞ւմով մխիթարուիմ չունիս յիշատակ:»

Եկաւ Տէր-Անտօնը, հայրը Քէրոբին,
Մայրը, երէցկինը վազեց ընդ նմին,
Երկու ծերունին էլ ողբով լալագին,
Ասին... «ո՞ւր ես գնում սիրելի որդեակ:»

Սառնասիրտ Քէրոբէն ընկաւ ճանապարհ,
Թողեց թշուառ կինը խեղճ, անմխիթար,
Համբուրեց ծնողաց ձեռքերը արդար,
Առաւ նորանց օրհնութիւնը սուրբ, խատակ:

Բարձրահասակ գեղատիպար Քէրոբէն,
Առաքինութեան սիրահար Քէրոբէն,
Հագած կապած զէնք ու ասպար Քէրոբէն,
Գնում էր առնելու երկնային պսակ:

Իւր դրացիներից դեռ չեկած ոչով,
Քէրօբէն գնում էր միտքը անխռով,
Մինչև կէս ժամ գնաց անհոգ, ապահով,
Նա պատահեց թշնամեացը միայնակ։

Անդաձորից երբ որ միջին թաղն հասաւ,
Այդտեղում սրտակից երկու մարդ գտաւ,
Աւետիս և Յարութիւնը հետն առաւ,
Դարձաւ կրկին աւազակաց աջողակ։

Աւետիս և Յարութիւնը Սալոնջեանց,
Գրգիռ տուին Քէրօբէին չափազանց,
Երկու ոսոխք երբ հանդիպեցին միմեանց,
Սկսեցին սպարպել մէկ մէկու գնդակ։

Ձորօրք ասուած տեղում երբ գտան իրար,
Երկու խումբ քաջերը կռուեցին երկար,
Գցում էին իրար վերայ անդադար
Կարկտի պէս գնդակները շարունակ։

Ձորօրքից վայր իջան հարթ դաշտի վերայ,
Ձորի մէջը կանաչ արտերում նոքա,
Խալամացած մի խումբ լոզեր անզգայ,
Քրիստոնեայ Հայոց դարձել են նիրհակ։

Քէրօբէի ընկերի մէկը փախաւ,
Մէկն էլ կռուի մէջը յանկարծ բռնուաւ,
Երբէք փախենալու տեղիք չ՛տուաւ,
Քէրօբէն դարձել էր մի բուռն կրակ։

Այս անգամ Քէրօբէն մեծ հարուած տուեց,
Նորանց գլխաւորին գնդակը ուղղեց,

Աւազակաց խմբապետին սպանեց,
Թոլլ օղլի Տուրսունն էր եղաւ շանսատակ։

Երկու հայ գերի կար Քէրօբն արաւ ջանք
Ազատեց իսկ նորանց նորից տուեց կեանք,
Հարիւր լխուռն ոսկի կուզէին փրկանք,
Զատացան մի կոպէկ եղան խայտառակ։

Աւազակաց խումբը կատաղեց կրկին,
Սկսան արձակուել խմբով միասին,
Միայնակ Քէրօբէն նայում էր չորս դին,
Օգնութիւն էր կանչում, չ՛կար օժանդակ։

Հետզհետէ ծէգը բացւում էր արդէն,
Լոյսն էր տիրում մութ գիշերի փոխարէն,
Վանդակում բռնուեց քաջ անյաղթ բազէն,
Պաշարեցին մի քանի հատ կաչաղակ։

Խղճուկ Քէրօբէի վատացաւ բանը,
Դէպի ձախը թեքուեց բաղդի շրջանը,
Եթէ չ՛որաքուէր իւր հրացանը,
Կենդանի չէր մնալ մի հատ հրոսակ։

Քէրօբէն չ՛դարձաւ կրկին դէպի տուն,
Թշնամիքը մահացրին խղճալուն,
Մեռաւ մարդու նման, թողեց քաջ անուն,
Բարի գործի համար դարձաւ նահատակ։

Թէ Քէրօբէն զոհեց իւր անուշ կեանքը,
Վտանգից ազատեց բոլոր համայնքը,
Զ՛կատարուեց աւազակաց բաղձանքը,
Իրանց մեծին տուրը տուին հակառակ։

Խոտրջրում Քէրօբի մահն իմացան,
Դրացի ազգականք թափուեցին եկան,
Շատ փառաւոր կերպով դրին գերեզման,
Հոգին թռաւ երկինք, որպէս հրեշտակ։

Քէրօբի կորուստը մեծ էր· զգացին,
Բոլոր ժողովուրդը ողբացին, լացին,
Շատ ժամանակ քաջի համար սգացին
Թէ իշխան, թէ քահանայ, թէ հասարակ։

Ջիւան, Քէրօբէի անվեհեր հոգին,
Քաջութիւն սերմանեց մէջը ամբոխին,
Իր մահով կսկիծ տուեց ամենին,
Եղաւ ժողովուրդին հաստատ օրինակ։

276

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ.

Ողբացէք, ով Արամեանք, ձեր բարձր Մասիսն չ'կայ,
Հայերուս մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիպան չ'կայ,
Մեր ազգի Հոմերոսը աննման հսկան չ'կայ,
Ուրախութեան լուր տուող, ցնծութեան վկան չ'կայ,
Հայոց գրականութեան անգին շափիւղան չ'կայ,
Աշխարհական վարդապետ ընտիր աբեղան չ'կայ։

Հարազատ հայի զաւակ Ռափայէլ Պատկանեան,
Իւր քնարի ձայնովը բազում մարդիկ կեանք առան,
Ջնաշխարհիկ բանաստեղծ հոգի կրթող վիպասան,

Արգասաւոր գրիչը եռանդ տուող կայծահան,
Կռուելով խաւարի դէմ մեռաւ հերոսի նման,
Աղիողորմ լալիս է Նուարդը, Արան չ'կայ։

«Մայր Արաքս» երգի գրող հեղինակին ողբացէք,
Քաղցրահնչիւն, քաղցրախօս, Հայ սոխակին ողբացէք,
Մեր մտաւոր աշխարհի արեգակին ողբացէք,
Արփիափայլ լուսատու աշտանակին ողբացէք,
Չունեցող համանման անգին ակին ողբացէք,
Տարաւ ծէր Կռոնոսը ազնիւ անթիքան չ'կայ։

Թէ մտքով, թէ մարմնով յատուկ ծնող բազմածին,
Ինն երեխայի հայր նահապետ բոլորովին,
Լրիւ քառասուն տարի ծառայել է իւր ազգին,
Մի տեսակ ուղղութիւնով չէ փոխել գոյնը, հոգին,
Իւր բանաստեղծ պապերը, հայրը երկինք կանչեցին,
Հայ քերթողաց կաճառի հայրը և աբեղան չ'կայ։

Ջիւան, ո՛ւր է երգիչը, բարութիւնը հռչակող,
Ճշմարտութեան ջատագով, ստութիւնը մտրակող,
Իւր գրչի սուր շանթերով մոլիներին ապտակող,
Առանց վախի մարդկութեան ցեցերին խայտառակող,
Ժողովրդին յոյս տուող և ապագան գուշակող,
Հայերու մեծ մարգարէն Հայոց Եղիան չ'կայ։

277

Բ Ա Ղ Ձ Ա Ն Ք.

Տեսայ մի հատ սիրունիկ,
Ձերդ սիգաճեմ կաքաւիկ,

Ձեռքին ունէր վարդի փունջ,
Ինքը վարդից գեղեցիկ։

Կարմիր, ճերմակ այտերուն
Մօտիկ տայի օրն 'ի բուն,
Ինձի պահապան կարգէր
Ծոցի երկու նռներուն։

Նա ինձ լինէր կենակից,
Այգին ինձ տար բարելից,
Դիեցիկ մանուկի պէս
Կշտանայի նռներից։

Սիրտս տայի ես նորան,
Նա ինձ սիրէր մշտական,
Սիրով կապուած իրար հետ,
Կեանք վարէինք անբաժան։

Մեր սէրերը բազմանար,
Որ լաւ օրէ քաղցրանար,
Ոչ ես նորանից լայի,
Ոչ նա ինձնից նեղանար։

Կազմէինք ընկերութիւն
Ունելով համբերութիւն,
Ջուխտ ապրէինք իրար հետ
Մինչև խորին ծերութիւն։

Եկեղեցու յարկի տակ
Ընդունէինք սուրբ պսակ,

Աշխարհիս մէջ շատերուն
Լինէինք լաւ օրինակ։

278

ԶԱՏԻԿ.

Կերպդ դուր չի գալիս ինձի այս անգամ,
Տրտում ու տխուր ես, անծիծաղ, զատիկ,
Գարունդ եղկելի, արևդ անհամ,
Օրերդ ամպամած ցուրտ ու պաղ, զատիկ։

Հայրդ հիւանդոտ էր, մայրդ նոյն գունակ,
Հարկաւ կ'ծնէին քեզ նման զուակ,
Անդադար անում ես լաց ու աղաղակ,
Քուն ու հանգիստ չունիս անխաղաղ, զատիկ։

Յիսուն օր ծում ու պաս պահեցին մարդիկ,
Որ քեզանով գոնէ լինին երջանիկ,
Աւելացաւ հոգս ու ցաւերն հինգ պատիկ,
Ոչ խնդում ցոյց տալիր և ոչ խաղ, զատիկ։

Քու շնորհքդ կարմիր ձուն է, այն էլ սուղ,
Հաւ չ'կայ, եղածն էլ մնաց անպտուղ,
Բարիքներից թափուր կարաս ու բղուղ,
Տուն կայ որ չունի դեռ հաց ու աղ, զատիկ։

Մթերքներդ խիստ թանկ, փողը սև աղուէս,
Աշխատանքի աղբիւր չ'կայ մշտապէս.

Խեղճը ինչով սարքէ կեր ու խում, Հանդէս,
Փոխան գառի չունի աքաղաղ, գատիկ։

Պապերդ ունէոր Հայրդ միշտ աղքատ,
Իսկ Հօրդ պատճէնը ճուտն ես Հարազատ,
Տարիս քառասուն ու վեց ապրել եմ լաւ վատ,
Չեմ տեսել քեզ նման խեղ ու կաղ գատիկ։

Կերդաս Հրապարակ ոչ մի բան չ՚կայ,
Պաշար բերող գիւղացիք են բացակայ,
Իրանց Համար ապրուստ չունին առօրեայ,
Ո՞րտեղից ցոյց տան մեզ լաւ կենցաղ, գատիկ։

Երեսները թթուած, աչքերը պղտոր
Մարդիկ ման են գալիս, բայց մտամոլոր,
Դու անբաղդ ես թէ ամբոխն է չքաւոր,
Այս տարի չեն անում շատ մատաղ գատիկ։

Քեզնից կսպասէինք ծաղկեալ Նոր գարուն,
Յորից ազատուէինք մարդ թէ անասուն,
Հակառակը ինքդ եղար ցրտի բուն,
Ոտքդ ու ձեռքդ սառած ձիւնաթաղ, գատիկ։

Ոչ արեգ տաք է, ոչ օդդ պայծառ,
Ոչ ծաղկեալ դաշտ ունիս և ոչ կանաչ ծառ,
Գանգատում է ամեն նպարավաճառ,
Այս տարի շատ թոյլ ես ու դանդաղ, գատիկ։

Ամեն ոք մի տեսակ ցաւով կ՚ոքայ,
[illegible] թէ Հարուստ ամենը կուլայ,

Իսկապէս ոչ մի մարդ ուրախ չ՚գտայ,
Ման եկայ տնէ տուն, թաղէ թաղ, գատիկ։

Այսօր քրիստոնեայ աշխարհն ընդհանուր
Իրար կ՚Հաղորդէն մեծ աւետալուր,
Մեր մեռած գործերուն կենդանութիւն տուր,
Որ մտել են վաղուց ի դագաղ, գատիկ։

Օգնէ Արարիչը ամենաբարի
Գիւղացոց դաշտերը ցանքսը դալարի,
Մեր Շիրակ գաւառը խեղճ է այս տարի,
Շատ ունի անանկ ու անսվաղ գատիկ։

Դու Յարութեան օրն ես Սուրբ Կենարարին,
Որ եղաւ Փրկիչը բոլոր աշխարհին,
Ջատարակաց Հօրը մեծ Բարերարին,
Տուր ոսկի ու արծաթ գանձ, մեծաղ, գատիկ։

Ջիւանս կ՚պահեմ մաքուր ծում ու պաս,
Որ չ՚խօսիս ինձ դէմ, չանես կամ ու կաս,
Խնդրում եմ միւս անգամ խեղճ չ՚գաս,
Գիտեմ պիտի դառնաս ուշ թէ վաղ, գատիկ։

279

1 8 9 2-ԹԻՒ.

Ախ իննսուն երկու թիւ գնաս ու էլ ետ չ՚գաս,
Դու մարդկային ազգութեան տուիր չափազանց վնաս,

Վեց աւուր ծնունդ էիր քու շնորհքդ ցոյց տուիր,
Հրաշալի սուրբ տօնը քեզանով դարձաւ զազիր,
Քառասուն մարդ Թիֆլիսում Կուր գետի մէջ խեղդեցիր,
Դրիր սև հողի տակը առանց հաղորդ և անմաս։

Քանի մեծցար օր աւուր բնութիւնդ փառացաւ,
Բարութիւնդ նուազեց, չարութիւնդ շատացաւ,
Զախորդութեան վառ սէրը բոյն առեց, արմատացաւ,
Ով քո յոյսով գործ բռնեց վնասուեց, աղքատացաւ,
Հիւանդութիւն և մահը բազմացաւ, առատացաւ,
Դարձար, ով նահանջ տարի, թիւնաւոր նեխուած կարաս։

Հրեշի ձև ստացար երբ եղար վեց ամսական,
Հնդախտ ծնաւ քեզանից մտաւ Մէշէտ, Խորասան,
Սկսեց կոտորել խեղճ մարդկանց ճանճի նման,
Այն տեղից էլ տարածուեց հասաւ մինչ Ռուսաստան,
Անխնայ հարուածեցիր դու մարդկային ազգութեան,
Գուցէ երկինքն ուղարկեց քեզ մեզ համար պատուհաս։

Այնուհետև սկսար հալածել Հայ ազգութեանը,
Գերանդիդ նոր սրելով մտար մեր բուրաստանը,
Նախ խլեցիր բանաստեղծ պաշտելի Պատկանեանը,
Յետոյ Նար-Բէյ բախտագուրկ, ողբացեալ գիտնականը,
Ապա Արծրունի-Գարեգին մեղրաշուրթ Սրուանձտեանը,
Կտրեց կենաց թելերը անգութ մահը փողահաս։

Մենք կարծեցինք այսուհետ հարուածիդ կուտաս դադար,
Ո՛ւմ մտքից էր անցկենում, որ նոր ցաւ կայ մեզ համար,
Ցաւ ու շատ անտանելի որ չի լինիլ դեղ ու ճար,
Հազար կայ որ մէկ չարժէ, մէկ կայ որ արժէ հազար,

Այդ տոկուն Արծրունին էր, «Մշակ» թերթի ղեկավար,
Նորան էլ մահացրիր էլ չ'թողիր բան պակաս։

Ձիւանս քեզ կաղաչեմ լաւութիւն արա արի,
Քու արած վատութեանդ վրայ զղջայ, դադարի,
Չարութեանդ փոխարէն աշխատիր գործես բարի,
Վեց օր ունիս կ'մեռնիս, վարուէ, քիչ մարդավարի,
Պատմութեան մէջ անունդ մենք կ'դնենք պիղծ տարի,
Եթէ այդ քու զէնքերդ գալոց նոր տարուն կուտաս։

270

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԵՐԷՆԻՑ.

Խղճուկ հօրից, մօրից գոյացայ անբաղդ,
Մի գիւղի անկիւնում աղայ եղայ ես,
Սկսեց հարուածել բաղդը ապերախտ,
Հայր ու մայրս մեռան, թշուառ ընկայ ես։

Որբութիւնով մեծացրի հասակս,
Տխրութեան սև հոգին նստաւ գաւակս,
Օր ըստ օրէ դառնացաւ իմ վիճակս,
Երբ որ կեանքի ասպարէզը մտայ ես։

Ոչ լաւ բաղդ ունեցայ ,ոչ յաջողութիւն,
Ոչ տաղանդ, ոչ ուսում ոչ ուսողութիւն,
Ոչ միջակ կայք ունիմ ոչ կարողութիւն,
Ապա ինչո՞ւ համար աշխարհ մտայ ես։

Ջիւանին եմ սիրոյ ծարաւ փափաքող,
Սիրոյ սեղանից փշրանքներ հաւաքող,
Ոչ բարձր գրող եմ, ոչ լաւ նուագող,
Հազիւ մի հասարակ աշուղ դարձայ ես։

281

ՁԱԽՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Կսկսէ տան կատուն պատառել իրան,
Մարդուն կ՚շինէ մուկ ձախորդութիւնը.
Ջրիցը դուրս գալով ընկնում է ուռկան,
Դարձնում է խեւ ձուկ ձախորդութիւնը։

Բախտից զրկուողը չի հագնում կոկ,
Գծուծ հանդերձներով ընկերները ջոկ,
Երբ կորչում է մարդուն էլ չի գալիս սոկ,
Իբր անմիտ տղրուկ ձախորդութիւնը։

Անյաջողութիւնը սեւ պառաւ կին է,
Պատկերը զզուելի հագուստը հին է,
Յիմար անասունի բաժին կ՚շինէ,
Ձերդ չորացած բազուկ ձախորդութիւնը։

Ջիւան, ձախորդութեան պտուղը սով է,
Նորա շունչը դաժան, խորշակահով է,
Անծին, առանց կաթի ճիշտ ամուլ կով է,
Չունի ուռ ու պտուկ ձախորդութիւնը։

282

ՊԱՆԴՈՒԽՏ ՀՕՐ ՄԱՍԻՆ.

Մէկ տարի է սպասում են տանեցիք,
Տանտէրը չի վերադառնալ հայրենիք,
Գերդաստանում զգացւում է մեծ կարիք,
Եկաւ գնաց, անցկացաւ սուրբ զատիկը,
Մանկունք կուլան, դեռ չէ եկել Հայրիկը։

Ո՞ւմ հարցանեն, ումից մի բան իմանան,
Ո՞ւմ մօտ բացուին խեղճերն իրանց ցաւը, լան,
Զունին մօտիկ արենակից ազգական,
Կայլէ մէջքը պանդխտութեան գօտիկը,
Գտնի բերէ իրանց սիրած Հայրիկը։

Լռութիւն է տիրել, խօսք անգամ չ՚կայ,
Մեծ հօր տեղը դարձեալ թափուր կ՚մնայ,
Ոչ ուքի յայտնի չէ, արդեօք երբ կ՚գայ։
Մարտն էլ անցաւ բացուեց գարնան ծաղիկը,
Հեռու երկրում դեռ մնում է Հայրիկը։

Ամուլ կինը ծնաւ բերեց մանչ զաւակ,
Փրթած կոճը ծաղկեց որպէս մանիշակ,
Մինչի լեզուն բացուեց խօսաւ համարձակ,
Թէւ սարքեց, թռաւ խեղ, կաղ հաւիկը,
Գամ-գամու սարն եղաւ, չեկաւ Հայրիկը։

Շատ անցկացան առաւօտ ու իրիկուն,
Հարսն սպասեց անբաղդ փեսան չեկաւ տուն,
Սև քօղի տակ թառամեց սուրբ հարսնացուն,
Մեծացաւ այր եղաւ փոքր մանկիկը,
Սպասէ որ պիտի տեսնի Հայրիկը։

283

ՄԻ ԱՍՏՂ.

Մի աստղ ծնաւ արևելքէն, լոյս ունէր առատ,
Բոլոր աստղերի մէջ մէկ էր, չունէր համեմատ,
Սև սև ամպեր շուտ պատեցին չ'թողին ազատ,
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց։

Այդ աստղերը հինգ քոյր էին, մէկը չունէր լոյս,
Զորսը արևի շնորհիւ առան խրախոյս,
Առաջինին ոչ մի տեղից տուող չեղաւ լոյս,
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց։

Եօթը փայլուն, մեծ-մեծ աստղեր ժողովան գումար,
Լուսնից ապարէզ ուզեցին չորս աստղի համար,
Արևելքէն ծնուող աստղը մնաց 'ի շուար.
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց,
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց։

284

* * *

Երեսը մի՛ տեսնիր նախանձ տմարդին,
Գլուխդ առ նորա մօտից հեռացիր.
Բարի, ընկերասէր երիտասարդին
Պատուէ, սիրէ և արժէքը իմացիր։

Նախանձոտը երբէք օր-արև չունի,
Մարդ է ծնուել, բայց մարդկութեան ձև չունի,
Երբ տեսնում ես մի ծառ որ տերև չունի,
Մի՛ մօտենալ դու, շատ հեռուից անցկացիր։

Ներսից էլ նրա հոգի տակը յատակ կայ,
Զգուշացիր, մոխրի մէջը կրակ կայ,
Կեանքի մէջը հազար ու մի առակ կայ,
Մտիր նորա խաւերի մէջ, հասկացիր։

Ճիշտ որ մարդը ծառ է, աշխարհն է սղոց,
Անպաշտպան կտրում են, թէ ունենայ խոց.
Թէ խելք ունիս, ցաւդ մի տար այլոց,
Դու սիրով տար, համբերելով դիմացիր։

285

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն.

Լսիր իմ խրատս, սիրահար սոխակ,
Մի խանգարել այլոց բուրաստանը դու,
Անհրաման մի քաղել վարդ, մանիշակ,
Վրդովել մի խղճակ պարտիզպանը դու:

Ձեռք մի բարձրացնել օտարի վերայ,
Երբէք մի ծիծաղիլ յիմարի վերայ,
Ամեն մարդ էլ՝ մարդ է աշխարհի վերայ,
Պէտք է լաւ իմանաս այսպէս բանը դու:

Ամեն մի ազգ ունի իրան մի հաւատ,
Չէ կարելի երբէք ասել մէկին վատ.
Մի են Արարչի մօտ հարուստ թէ աղքատ,
Հաւասար հասկացիր դատաստանը դու:

Հեռացիր արբեցող, խելագար մարդուց,
Մանաւանդ ուրացող, սիրտը չար մարդուց,
Շնորհ մի սպասել անկատար մարդուց,
Հասուն մարդ մի սեպել անհաւանը դու:

Արարքդ արել է քեզի կիսամարդ,
Խամրել են այտերդ կարմիր գեղազարդ,
Այդ քու վարմունքովդ, ով երիտասարդ,
Մտել ես դժոխքի վառարանը դու:

Ծաղիկ հասակիդ մէջ մաշուել է կեանքդ;
Փոխուել, թառամել է վառ կերպարանքդ;
Ի՞նչ է քու այս քաշած զուր չարչարանքդ;
Ընկել ես նեղութեան ձորանը դու:

Ցաւը բարակ կանէ մարդուն ասեղից;
Ո՞վ է օգուտ տեսել սիրոյ հեղեղից;
Հոգիդ ազատ արա, գնա այստեղից,
Դարձիր քո հայրենի օթևանը դու:

Թէ ուզում ես լինիլ հոգեպէս պայծառ,
Լաւ բարոյական քարոզ ընտիր ճառ,
Առ քեզի իմ տուած այս ապրանքս առ,
Թէ սիրում ես խօսքի պատուականը դու:

Անղեկաւար նաւ ես խեղճ ալեկոծեալ,
Այլոց մի վրդովել և վնաս մի տալ,
Շարքից մի ջոկուիլ ու ետ մի մնալ,
Այլէս չես գտնել կարաւանը դու:

Արի քամու դէմը մի գցել բամպակ,
Որ չանէ թշնամին քեզ այպ ու ծանակ,
Թէ ուզում ես լինել հարազատ զաւակ,
Կատարէ քու հօրդ հրամանը դու:

Լոյսը թողած դու մի սիրել խաւարը,
Գուցէ խանգարուած է քու գաղափարը,
Թող այդ կորուստ տանող վատ ճանապարհը,
Դեռահաս մի մտնել գերեզմանը դու:

286

ԱՌ ՆՈՐԸՆՏԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏՆ.

Յնձա՜, խնդա՜, Էջմիածին սուրբ Տաճար,
Քեզ գալիս է նոր նաւապետ ղեկավար,
Թէեւ ծեր է, բայց ունի թարմ գաղափար,
Մեծ Ներսէսին եւ Սահակին հաւասար,
Հինգ միլիօն հայ ազգից սիրուած, թանկ գոհար
Խրիմեանին սպասում ենք անդադար։

Որ հայութեան մեծ Հայրիկն է յիշեալը,
Քրիստոսի-Աստուծոյ առաքեալը,
Անյիշաչար, աննենգ, անոխակալը,
Վարուք-բարուք ամենից կատարեալը,
Արեւի պէս մինչ նորա երեւալը
Հորիզոնում չի մնալ ամպ ու խաւար։

Կեցցէ՜, տարի այդ բարի ալեւորը,
Հասակով հին, բայց հոգով նորից նորը,
Սրբութինով ամենից գլխաւորը,
Հանրահռչակ, ազգի մէջ բազդաւորը,
Նորան կը հաստատէ մեր Թագաւորը,
Նորան ընտրեց մեծ ժողով համագումար։

Եկեղեցիդ Հայոց տխուր, վշտալի,
Ուրախացիր, պետ ունեցար ցանկալի,
Իմ սիրասուն, իմ կաթողին, անձկալի,
Կ'քաւուրքիս, դու չես մնալ խղճալի,
Ժողովրդիդ քմքին հաճոյ բաղձալի
Դու դէտ գտար հայրենիքդ սիրահար։

Հայի Աստուած տուր Հայերուն ջերմ հաւատ,
Սիրեն իրանց եկեղեցին հարազատ,
Ցարգեն մեծին ծնողներին համեմատ,
Զ'գատցնեն չէն տները անապատ.
Քանի որ կայ ծերունին մեծն Արարատ,
Ցոյս մեծ ունի՜ Հայք կ'մնան անվթար։

Նա սուրբ գրոց հոգին պաշտող հաւանող,
Ընկածներու ձեռքից բռնող վեր հանող,
Բարին սիրող, չարութիւնը խափանող,
Նեղութեան մէջ համբերատար դիմանող,
Հեզաբարոյ խաղաղութիւն պահպանող,
Խրիմեանն է մեծ դատաւոր հաշտարար։

Հայրի'կ կուզես՝ եկեղեցիդ որբացած,
Գրիգորեան Գահի վերայ բազմացած,
Կրօնասէր, արթուն, խոհեմ, զարգացած,
Նա պիտի տայ զաւակներուդ կենաց հաց,
Մայր իմ անոյշ՝ էլ չես անիլ սուգ ու լաց,
Դու քու վէրքիդ դեղ կ'գտնիս փրկարար։

Քու Բժիշկդ սուրբ երկրումն է հիմա.
Ցերեկ գիշեր մտածում է քեզ վերայ,

Արշեօք նորա գալու օրը նրբ կուգայ,
Դիմաւորեմ, ոտքը համբուրեմ նորա,
Ընտրուած է, Հայրապետ է աներկրայ,
Մնալու չէ մեր խղճերը անկատար։

Ես, Ջիւանս, Հայոց զաւակ խակական,
Երկար, արեւ, կեանք կ'ցանկամ Հայութեան,
Սիրել Պետիս իմ հարազատ հօր նման,
Սա թող լինի ինձ առաջին պատուիրան.
Կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ յաւէրժ ԽՐԻՄԵԱՆ,
Լինի Հայոց եկեղեցուն օգտակար։

Վ Ե Ր Ջ։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ИМ. А. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

ԵՐԳԱՐԱՆԻՍ.

Երես.

Աղայն ու կարգածը նստած մի . . . 49
Ազգաւ Հայ կաթօլիկ, բողոքականին . . 63
Ազգ իմ, որքան նկուն մնաս . . . 73
Ազնիւ բարեկամ անունդ ակ չի լինիլ . . 121
Ախպար, արի աօր էրժանք մեր . , . 200
Ա՜խ ժամեր, ժամեր թանկագին . . . 95
Ա՜խ իմ պարտէզ պտղատու 100
Ա՜խ իմ քաղցրախօս Արուսեակ . , . 104
Ա՜խ իննսուներկու թիւ, գնաս . . . 327
Ա՜խ, կորան փողերս, կորան . , . 216
Ա՜խ, պիտի չմա՛ ապասեմ իմ 73
Ականջ արէք ուրախալի և տխուր . . . 293
Ամբոխի սուտ փայփայանքը 24
Ամենագեղեցիկ, ընտիր սիրուհի . , . 68
Ամենասաստիկ ցաւերը ինձ վերայ . . . 120
Ամեն մարդ մի բանով մխիթարւում է . . 313
Ամեն վնաս մէկ խրատ է, ասել են . . 110
Ամպերով պատած է մտքիս երկինքը . . 14
Այլոց տունը քեզ օթևան չի լինի . . . 111
Այն ո՞վ էր, որ թողեց երկնային գահը . . 123
Այսուհետև ինձի լոյս չէ 66
Այս բոլոր աշխարհի միջին չ'կայ . . . 106
Այս ինչ դարի հասանք, ով Աստուած . . 110

Այս տարի ինձ դուր չեկար ով . . . 134
Այս ցաւերը քո երեսից գտայ ես . . . 83
Անգործ պարապ ման եկող . . . 107
Անգութ սիրուն, ես քու ձեռքից . . . 98
Անդադար վատ վատ լուրեր . . . 130
Անզգամ ու անխիղճ մարդու . . . 43
Անկիրթ մարդը իւր բանը չը . . . 58
Անհարազատ ընկերից հաւատարիմ . . . 131
Անհոգ ես չես գիտեր ինչ կայ քո . . . 102
Անմիտ ճնճղուկը բազէի ճանկից . . . 310
Անմտածել վեր վարող սուտ . . . 90
Անմտածել վեր վարէ խօսքերդ . . . 81
Աննման ծնողդ ես ազնիւ . . . 111
Անպակաս շողշողում է սրտիս . . . 64
Անցաւ օրերս լացով ու հառաչելով . . . 179
Անցած բանի համար ցաւելն իզուր է . . . 87
Աշխատիր կեանքիս հատոր . . . 113
Ախատիր քո հօրդ տունը շենացուր . . . 140
Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ . . . 74
Աշխարհն ինչ կայ շատ փիշտ ու . . . 112
Աշխարհումս ում որ բարեկամ . . . 62
Ապրիս հաստակագեղ խօսքերդ . . . 199
Առաւօտեան քաղցր հովիկ գնա . . . 122
Առանց ցաւ աշխարհը չի լինի . . . 64
Առակախօս նախնի հեղինակները . . . 114
Առաւօտը շատ մօտ է լոյսը . . . 3
Աստուած չանէ մարդուն ապիկար . . . 20
Արի հայրիկ արի իմ կեանք . . . 202
Արի սիրեկան ինձ կառավարէ . . . 117

Արի, իմ նազելի բամբիշ . . . 37
Արդարութեան արեւ արդարութեան, . . . 119
Արջն անտառից խռով է . . . 130
Աւաղ ձեզ իմ անցած օրեր . . . 118
Աքլոր եղբայր, ձանձրացուցիր . . . 61
Առանց քեզ կեանք չունիմ, սիրելի . . . 65

Բանաստեղծի բնական ձիրքը միշտ . . . 178
Բանաստեղծի մէկը այսպէս սիրուն . . . 55
Բարոյական ճանապարհից շեղուողին . . . 125
Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը . . . 146
Բարձրացիր, ով լուսաբեր աստղ . . . 139
Բացի քեզնէն բաժին չունիմ . . . 147
Բու է այլոց եղար գործիք . . . 309
Բերանս համ դրեց սրտիս մէջը . . . 226
Բնական ձիրքերը մարդկանց, . . . 147

Գարուն, դու գարուն սիրուն, . . . 136
Գարունդ անցել է աշնան ծաղիկ ես . . . 82
Գարունն անցաւ եկաւ ամառ . . . 189
Գերյարգոյ հայր սրբազան . . . 150
Գետնաուխծին նմանութիւն շատ . . . 56
Գիշերի պէս կանցկացնէ իւր տիւը . . . 148
Գիտունը տգէտի բանից չի ցաւի . . . 152
Գիտութիւնը մշտապէս ով մարդ . . . 278
Գեղեցկութեանդ չափ շնորհք չունիս . . . 198
Գթա հոգեակ, այս է խղձս քեզանից . . . 215
Գնաց վրէժ առաւ Հաչէ . . . 77
Գունդագունդ և դասադաս . . . 219

Դեռ գիշեր է առաւօտ չէ 84
Դեռ ինքս չ'ծերացած դուն 21
Դժնիկ փուշը վարդը խլեց 99
Դժուար է դիմանալ 156
Դու քեզ համար եղար, ես էլ ինձ. . . . 259
Դուն էլ ինձի նման սիրահարուած . . . 153
Դու այս աշխարհից ի՞նչ պիտի . . . 154
Դու այն երկրէն մի հեռանար . . . 5
Դու մեր ժողովրդին նոր օր . . . 25

Եթէ մեղաւորը մնայ անպատիժ . . . 80
Եթէ մի սիրտ սրտի չի սիրեր . . . 172
Երանելի կին գեղեցիկ, ով տիկին . . . 166
Երբ որ կ'լսեմ իմ նազելույս . . . 143
Երբ տեսնիմ պատկերդ սիրուն . . . 155
Երբ որ Աստուած կամենայ . . . 167
Երբ որ գլխատաւից հասարակ . . . 169
Երբ որ լինի գարնանամուտ . . . 179
Երկնային ճանապարհը հարթողը . . . 171
Երկու աղքատ քաղաքացի աղջիկներ . . 158
Երեսը մի տեսներ նախանձ . . . 333
Եռանդը կ'սառի սիրտը կ'կոտրի . . . 18
Ես մի համեստ կին տեսայ . . . 95
Ես քեզ տեսայ մէջը այգուն. . . . 257

Զաւակի և գերդաստանի տէր . . . 307
Զարմանալի կայ մի բան . . . 173

Էլի սև սև ամպերն եկան պատեցին. . . 138

Ընկած մարդը չունի հաստատ օգնական . . 173

Թէ կ'նեղանայիր քեզ սիրողներից . . . 174
Թէ ուզում ես քեզ գիտնական . . . 99
Թէ քու աչքդ ու ունքդ սև են . . . 83
Թշուառ պանդուխտ հայրենիքիդ . . . 170
Թորկել եմ խեղճ տկլոր զիմ ճժեր. . . 201
Թող մնայ մէկ ժամանակ 30

Ժուժեայ սիրտս և համբերէ 275

Իմաստութեան փափաք ունեցող . . . 205
Իմ գուլթանիս խափը դէմ տուա . . . 10
Իմ անցած օրերս, անցած տարիքս. . . 181
Իմ սիրուն, հագած հալաւդ . . . 182
Իմ բնութեանս համեմատ . . . 184
Իմ կարողութեան չափ. 185
Իմ տուած յարգանքս 192
Ինձանից մի հեռանար. 183
Ի՞նչ վատ ժամանակի հասանք . . . 193
Ի՞նչ բան է երկնքից կիջնի . . . 180
Ինչ կամենաս քո ընկերիդ . . . 47
Ինչ ազգ. չունի իրան համար . . . 128
Ինչպէս մեր հներն ասել են . . . 161
Ինչո՞ւց է բան հասկացող մարդոց . . . 176
Իսկ Արարչից ամեն մարդու . . . 181

Լաւ է բոլորովին ոգէտ յիմարը . . . 209
Լայն օրերուս ուրախացող . . . 229

Լինահանճար անարատ 206
Լոյս նուազել է գիշերի նման . . . 8
Լեր աշակերտ խելահաս 209
Լսիր իմ խրատս սիրահար 334
Լսիր սիրելի իմ աղաչանքս 208

Խաբեբայ աշխարհը թէ լաւ նկատես. . . 210
Խաղաղ առանց ցաւի երջանիկ . . . 81
Խեղճութիւնը մարդուն ամեն բան . . 212
Խղճալի մարդկանց համար 211
Խղճալի կոշտ քեզի լաց 29
Խղճուկ հօրից մօրից գոյացայ . . . 329
Խելացի և ուժեղ հարուստ 31
Խղճա դրութեանս խղճա 36
Խնդա՛ սիրուհիս քեզ բարի 72
Խնդրում եմ Տէր Աստուած 129

Ծեր Կռոնոսը սրեց գերանդին 92
Ծոյլ անպիտան անգործ մարդը . . . 21

Կաղաչեմ ով սիրտս մի մնալ յամառ. . . 137
Կատարեալ լինելու համար 222
Կեանքիս թռչունը, մազերդ կալեցին . . 220
Կեանքդ բարւոքելու աշխատիր . . . 221
Կենացս մէջ իմ Հմայեակ . . . , 227
Կերպդ դուր գալ ինձի այս 325
Կ՚սկէ տան կատուն պատուել . . . 330

Հազար ութը հարիւր ութսուն . . . 317
Համընթաց կեանքիս յարմար. . . . 232

Համ լաւ է համ շատ վատ է . . . 33
Հայը հային կ՚վնասէ օտարք . . . 46
Հայոց քաղցր և ճոխ լեզու 176
Հայի տղայ զգուշացիր 229
Հայ-կաթօլիկ համայնքից 315
Հարազատ զաւակը լաւ 89
Հարազատ փեսայիդ հաւատարիմ . . . 232
Հեռացիր ով պատանի դուն 227
Հինգ տարի է որ չեմ տեսեր . . . 38
Հիւսիսից փչեց սառն հով 9

Ձախորդ օրերը ձմրայ նման 15
Ձախորդութեան վերջը յաջողութիւն . . 157
Ձայնդ ինձ գրաւեց ինձ վերայ . . . 141
Ձմեռն եկաւ ձիւնը ծածկեց. . . . 163

Ճակատդ բաց գեղեցիկ 308
Ճարտարապետ աւազի վերայ . . . 233

Մարդ կայ որ միշտ խօսում է. . . . 144
Մարդ քեզի կաղաչեմ զուր 238
Մատռուակ բեր ինձ գինի տուր . . . 261
Մարդ ինչ առարկայից որ քաշէ . . . 239
Մարդ քեզի կատեն վատ 237
Մարդու և կնոջ մէջ որոմ 94
Մարմինդ մերկ երեսդ պաղ 5
Մեր նահանգի թագուհին ես . . . , 22
Մինչև ե՞րբ չարչարես անբաղդ . . . 240
Մինչև ե՞րբ սպասեմ քո ճանապարհը . . 275

Մինչ երբ գովելի իմ պաղատանս . . . 236
Մէկ գեղեցիկ տեսայ և կորուսի . . . 27
Մի՛ լինէր ով բնութիւն կեանքիս . . 239
Մի առաւօտ ես տանիցը 234
Մէկ կողմս սատիկ ցուրտ 32
Մէկ տարի է սպասում են 331
Միամիտ ու անփորձ երիտասարդը . . 31
Մի քանի ամիս է գարբին եմ . . . 17
Մի աստղ ծնաւ արևելքից 332
Մի ալյալուիր իգուր տեղը 70
Մթնեց երկինքը օդը վառացաւ . . . 71

Յիսուն տարի ծառայել է Հայ ազգին . . 314
Յօժար եմ, ինչ որ կուզէ թող անէ . . 103

Նազելույս ամպ է իջել արևի պէս . . . 26
Նազելի թագուհի չէ քեզ համեմատ . . 244
Նախախնամութիւնը քեզ տայ . . . 54
Ննջէ, գառնուկ, սիրուն զաւակ . . . 242
Նոր բացուած ծաղկի պէս բացուել ես . . 241

Շատ քնեցար, սիրելի, լոյսը կտուրից . . 97
Շտապիր ով սուրբ ուսում 199

Ողբա, մայր իմ Հայոց Սիօն 303
Ո՜հ, ոհ, Արարիչ, աշխարհը 52
Ողբացէք, ով Արամեանք 322
Ով դու ամբարտաւան 16
Ով Արարիչ, օգնէ ինձ 101

Ով անիրաւ, անխղճմտանք 133
Ով չի սիրել անձը իրան 218
Ո՞վ ունիմ որ կամ ով ցաւի 245
Ով գռոզ մարդ, բաւ է 245
Ով գեղեցիկ աննման 246
Ով Տէր Աստուած քաց մեր 249
Ով Աստուծուց վախենում է 250
Ով վարդ արևելեան, բոյս 252
Ով ամենակարող արարիչ Աստուած . . 253
Ով դու զբօսմունքի ցաւի 254
Ով անզգայ, անխղճմտանք 255
Ով պարախզատէր, ինչո՞ւ 255
Ով մարդ հեռացիր խորերայ 256
Ով որ ինձ չի սիրեր, խնդրում եմ . . . 305
Ո՞վ էր տեսել այսպէս տարի 262
Որ մի մարդ բնական լինում է . . . 253
Որ նաւը ծովն ընկղմի 248
Ո՞ր մի դաշտի ծաղիկը 28
Որդեակ, առ խրատս 155
Ո՞ւր գնաց արդեօք 4
Ո՞ւր տեղ ես, ով յաջողութեան . . . 90
Ունիմ, փառք Աստուծոյ 247
Ով մարդ իմաստութեան 249

Ջարասիրտ նախանձոտ մարդը . . . 264
Ջր կամ մաղձոտ սրտից ծնած . . . 170

Պաղպաղակ ես մանուկ փարելի . . . 97
Պաղ աղբիւրի մօտը կանգնած . . . 204
Պարոն Հարուստ, ինչու այդքան . . . 35

Պարսկաստան, Պարսկաստան 223
Պանդուխտ եղբայր քաշուիր 316
Պիտի գովեմ քեզ տիկին գովելու 86

Սայեաթ-Նովի ասածի պէս 45
Սիրահար, թէ սիրեկանիդ սիրում ես . . 37
Սիրուն կնոջ եթէ չեղաւ բարքը . . . 48
Սէվկիւլի ախպէրս ջանս, ջիկեարս . . 191
Սիրեկանս պիտի շուտ գայ 271
Սիրեկանի մօտ գնալը դիւրին է . . . 265
Սիրեկանս քեզ ինչ ասեմ պարապ . . . 296
Սիրել եմ, չեմ գղջար ով իմ 271
Սիրելի բարեկամ անցաւ 272
Սխալ է այն մարդը որ քեզի . . . 40
Սխալուեցայ, տեղիք տուի 68
Սուգ պահելով դու մեր տունը . . . 14
Սուրբ Բագոսի ինձի տուած 266
Սրբուհի սուրբ, ով տուեց 277
Սրտիդ չարութիւնը երեսիդ 34
Սեւ աչերուդ, աղեղ ունքերուդ . . . 265
Սեւ հօրից սեւ մօրից ծնուեցայ . . . 142

Վարդ վարդ ասելով կեանքը 279
Վերջացաւ մեր այգին վերջ 77
Վրդովեցիր խաղաղ կեանքս 104

Տեսայ մի հատ սիրունիկ 323
Տգեղ ագռաւ նոր փետուրներ . . . 306
Տգէտ գլուխ պատիւ չը 78
Տէր, տուր նախանձողիս 44

Տիրուհի ակնարկող մարդկանց . . . 132
Տրտմութեան օթեւան սգոյ տուն . . . 282
Տրտում ու տխուր կեանքը 283

Ցեցերը թրթուրները չ'լինին 53
Ցնծա՛, ցնծա՛ Էջմիածին Սուրբ Տաճար . . 336

Փորձուած առարկայ է 217
Փողի կամ կնոջ համար 258
Փորդ քաղցած հագուստդ հին . . . 285
Փորձը մարդուն կ'դարձնէ 284

Քաղաքացին ու գիւղացին 287
Քաղցր մայրիկ հոգոյս հատոր . . . 203
Քանի ժամանակը ձեռքդ է 263
Քաջ արծուի ճուտերը 6
Քաջ զօրապետ մեծահամբաւ . . . 290
Քեզանից ո՛ւր գնամ ո՛ւմ 286
Քո փափաքով վառւում եմ 79
Քոյրերիս մէջ միշտ սգազգեաց . . . 29
Քսան տարի քեզի համար 7

Օձի ձագը ընտանենալ չի գիտէ . . . 19
Օտարութեան մէջը զուր անցաւ . . . 276
Օրըստ օրէ զբաղմունքս 292

„ՇԻՐԱԿ“ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ, *աշխ. Գ. Ձ. Լեւոնեանցի* . . . . 30 կ.
ԱՇԸՂ ՂԱՐԻԲԻ ՀԵՔԵԱԹԸ, *աշխ. Աշըգ-Ջիւանու* . . 40 կ.
ԱՇԸՂ ՋԻՒԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ . . . . 1 ր. 20 կ.

Նոյն գրավաճառանոցում վաճառւում են.

ՔԵԱՐԱՄԻ և ԱՍԼԻԻ ՀԵՔԵԱԹԸ, *աշխ. Աշըգ-Ջիւանու* . 60 կ.
ՊԱՏԿԵՐՆԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ, *աշխ. Շերամեցի* . . 5 կ.

Գումարով առնողներին զիջում կը լինի։

Հասցէն. *Александрополь.*
Книжная торговля „ШИРАКЪ“ К. С. Сапоянца.

17154 - 17158

2013